Սարգիս Մելքոնյան

[illegible]

Բեյրութ, 1957

2004

9(47.925) 12
3866-43
40
572-44

# ԳԻՐՔ

Որ կոչի

# ԵՒՐՈՊ ՊԱՏՄԱԳԻՐՔ.

շարադրեալ գիտնական և խստակրօն. սուրբ
վարդապետին Եղիշէի աշակերտի սրբոյ Թարգ-
մանչացն մերոյ Սահակայ և Մեսրոպայ.

Յորում ընդ [illegible] պատերազմն [illegible]
Վարդանանց զօրավարացն հայոց և Ղևոնդեանց երիցանց
Քահանայից.

Առաջին տպագրութիւն գրքոյս եղեւ ի Կոս-
տանդնու պօլիս քաղաքին ի Թուին Հայոց 1213

Իսկ վերստին տպագրեալ արդեամբ և ծախիւք
[illegible] ազգին մերոյ [illegible].

ի Հայրապետութեան տեառն Եփրեմի [illegible]
ամենայն հայոց կաթուղիկոսի.

[illegible] նոր Ջուղայու [illegible]
[illegible]

[illegible]

Յամի Տեառն 1816

ԿԱԼԿ[illegible]Թ[illegible]

ի Տպարանի Ա[illegible]

# Նախերգանք.

Զոր օրինակ որպէս 'ի նաւաստեաց
նշմարել. որք թէ զարկեալն խա-
րիսխ յանանդորրմանէ ծովուն ծփմա-
նաց միաբանութբ չելուզանիցեն, ոչ միայն զըն-
թացս ոչ գործեն, այլ և յեկելոյն ալեկոծու-
թեանց գուցէ նաւորդօք ծովամոյն լինիլ զան-
ձինս հնարեն. Նմանապէս իբր զսեպհական
զանունելն մեր զայն տեսանել Աստուծոյ 'ի զգու-
շութն յարկածից անտի առ մեզ հասելոց ձայնէ
առակալի. Դադարեցէք 'ի չարեաց ձերոց և
ուսարուք զբարիս գործել: Եսայ I. 16. Արդ
որպիսի բարի քան զԱծային միաբան կալն
ուխտի. որում և համայն բարիք առաքինութ
անձնողոպրելի են յառաջեալք. Քանզի զինչ
միաբանութն եթէ ոչ համակամութեն խոնարհու-
թիւն ընդ անկեղծ սիրոյ: որոց հետևին և
այլքն ըստ կարգին: Վ՛ո զի գլուխ ամ՛ առաքի-
նութեանց միաբանութն է ցուցանի: I Պետ. 3. 8.
Որպ և երանելին Պօղոս՝ Ամենայն խոնարհու-
թբ և հեզութբ և երկայնմտութբ անսալ միմեանց
սիրով. փութալ պահել զմիաբանութի զմե-
յորդորէ. Եփես. 4. 2. Զի կարասցուք
հերունհետէ անտառացէլ ցոփութե բա-
ընձիւղսն՝ յատել պատուաստել 'ի դարման
նիս սբ եկեղեցւոյս 'ի տնկել ծառոյն ամա-
ձոյ մ[illegible]նութե. Որ զվայելչերանգ ծաղիկս
ազնուա[illegible]առաքինութեանց բերելով զարդասա-
[illegible]եալ [illegible]րհայն պտուղ 'ի ժամու տայ. զի

...ՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
...с. Библиотека
...ՍՍՀ

12269-Ջ

զնոյնականն է զգեցեալ տէրն. մշտակայ ունելով
զարմատս 'ի գնացս Հոգւոյն վտակայ։ Ցորմէ
լինել հայթայթեմք քան թէ խորհուրդ զպակա-
սութիւն քաղցրութեան ըղձից, և ունել զապահովութիւն ըզ
հոլանեաւ նորին սաղարթի միշտ պատսպարեալ։
Զորպիսւոյն ասէ 'ի ձեռն Երեմիայի Եղիցի
ծառն նր̅ անտառացեալ շուրջ զնովաւ յամի
երաշտութե՛ մի՛ երկիցէ. և մի կասեսցի 'ի տալոյ
զպտուղ։ 17. 8։ Զի և Առաքեալքն մեք մինչ
էին ամենեքեան յապաս Մխիթարչին ան-
եռեայ. ( ըստ Տն̅ բանի թէ ուր ժողովեսցին'
միաբանեսցին յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նց̅.)
լցան Հոգւով սրբով։ Գործ 2. 1. 4։ Իսկ թէ
զհակառակն ունիցի ժպրհիցիմք, սա ը̅ կաղալ
առաքինութեանց այնց հոգեւորց արդեանցն' ոչ
միայն յաղաւաղմանէ զկենդանագործ բարս բե-
դեկս ոչ յօրինէ, այլ նաև համանգամայն զսաստ
կագոյն թշնամութիւն 'ի մէջ սպրդեալ զբաղ-
մնպատիկս հնարելն զմահու զաղէտս երկո-
յունց կողմանց աստ մարմնոյ և անդ ևս հոգւոյ
չելով 'ի ծածուկ, չէ աստ կարևոր միջամիջէ
մանրամաղ առնել։ Վկանզի յայտ է. 'ի բնաւ
հաստատութեանն յօդեալն 'ի գլուխն' այն ինքն 'ի
փրկչին տիրապ̅ մի անձն գոլով' եթէ ըստ իւր
հաստուածի, սնդ է չռնառութիւն յոյժ անտա-
նելի։ որք ամ̅ թագաւորութի բաժանեալ յանձն
իւր' աւերի, ըստ բանի Տրունականի։ Ուրեմն
պարտ և արժան է հանդիսաւոր և պատկան
պատուով պանծաբանել զնահատակայն մեզ
Վարդանանցն։ Որք քան զամ̅ սպառապէնսն յըն

Թանալն յասպարիզի գտան պերճաղանց մի ուխտի
միաբանութե. Յորում ժուժկալեալք ծարգ
Հարկի և տրտնջման Յանուն Տերունեան.
( յորմէ և հանճարացլք չհաշուելով լուսա-
գոյն ՚ի կենցաղս այլինչ. քան թէ չքնաղափառ
իսկ երանութե տանիլ զարուեն զբարեհուշակ,
և Թողուլ իբր օրինակ իմն ամյն յապառնիս
զինուորայ յերկինս գրելեայ մի Եկեղեցւոյն
անդրանկայ. ) զանեղծանելին առին զպսակ.
Ուստի երգի զսոցանէ յԵկեղեցիս ՚ի շարա-
կանի, Պայծառացան այսօր մի Եկեղեցիք Լու-
սաւորչօք կենդանեօք. որք ի գոլ ծոց իւրեանց
ծաւալեցին զլոյսն անստուեր հայելի աշայ
զՏէր սիրողայ. Ապա Թէ ՚ի հինս զՅուդա
Մակաբեանս ՚ի կտակարանի արդարև ՚ի նորս
զմի Վարդանեանս բերել ՚ի կարգի՝ իսկ է ար-
ժանի. Զորոց մի վայ դասպետն Եղիշէ հարա-
զատ որդին Հոգևոր մեր Թարգմանչայն մերոյ
Սահակայ և Մեսրոպայ՝ արձանացուցել է ՚ի
յուր լռելեայ քաղցրալուր բանիւք յապա եկե-
լոյ՝ գիրքս հոգելից. Ով զի որդիք ընթեր-
ցեալ պատմեսցեն որդւոց իւրեանց. զի անմոռաց
ունելով զերանելի գործս քաջութե որ զհամառոյ
խրախուսեալք ՚ի նոյն միտս վառեսցուք. Զորոյ
զհանճարեղութեն զառ հաւաստեայն նկատեմք
աստէն. Իսկ որք ընթերցեալն են զայլ գրեանս
նորին. Նոքին քաջ գիտեն. Զի բաց յայսմանէ
զոր վիպելով է այլոյ Շնորհալին տաղաբանէ
լեալ ՚ի սմանէ. են շարադրեալք ՚ի սորոյս այլ և
Ճառք բազումք, նաև մեկնութի Ծննդոց գրոց

լուսաւոր բանիւք, Զորս և զառաջիննալ ենյաղ-
ընթայսն խստակրօն ճգնութե համեղաբան սբ
Վրդպտէս՝ պատմէ և յայսմաւուրն ՚ի փետրվա
րի ԻԵ. ին. որոյ յիշատակն օրհնութբ եղիցի ամէն.
Եւ արդ՝ որովհետև և լաւ ասեր սբյ հօրն մե-
րոյ Գրիգորի Լուսաւորչին Միաբանութի հա-
ւատոյ և սբ վարուց աղբիւր է գիտութէ, Ցուց·
ե. ա. Ժա. և մեք աղէ խրատեալ ՚ի նմանէ,
ուրեմն սթափեցարուք ՚ի թմբրած տխրութէ, և
արիք անշուշտ սատանալ զայն որով լնուլ ամէ
նեւանելին Պղոս խնդութիւնն անձկի. զնոյն
խորհելով զնոյն սէր յանձին, ունելով Փիլ. 2.
2. Քանզի եթէ միանգամ զճաշակն այդր խնդ-
դութե ընդամբ յուսոյ և շրթամբք ճմանալեօք
առնուլ դիպեսցի յուսամ աներկբայաբար,
թէ նովաւ զամ նետս մուխս չարին զկնի շիջու-
ցանելոյ՝ զմահահրաւէրս ապաքինեալ վէրս ՚ի
խանգարմանէ այգիս հայկազեան կառավա-
րութէ. յայնժամ յածէ զմեզ յանդորրութի հոգւոյ
հեշտութէ ընդ մարմնականին ՚ի տարժամանեայ,
մինչ զի զամենիւք սստունգանեալ քաղցրահա-
մենիւք՝ զնա միայն ախորժեմք. նմա միայն
տուփեմք. և զայնու միայն փարիմք: Զի անդ
պատրաստեայ Տր զօրհնութի. և զկեանս յաւի-
տենից: Սաղ 132. 3. Նա զի և անդ է ծայրա-
գոյնն Քաղցրութի Տն համայնից. ուր խոստա-
ցաւ ՚ի միաբանեալսն լինիլ յանուն իւր: Ցոր-
ում զինչ և խնդրիցէք, եղիցի՝ առ ՚ի Հօրէն:
Մատ 18. 19: Բայց թէ զաղերսականն սատունգա
նեալ ձայն՝ աղախտ առնիցեմք զայնու մինչ եմք

է չափու ՚ի յանդորրութե՝, և նա ՚ի ժամու նեղու-
թե։ Որով իսկ անձամբ զսպառնալիսն յանձինս
ձգեմք թէ Տայ ձեզ սով ոչ հացի. և ծարաւ՝
ոչ ջրոյ. այլ լսելոյ զբան Տն։ Ամովս 8. 11։
Որ և աստանօր եմք զայն ՚ի մեզ ախտ գրեթէ
կամակորութբ պատիժ վայելեալ. մինչ զի այնու
ծարաւի երիթայեալ հոգւով և մարմնով՝
աւասիկ ունիմք առ դրունս զեղեռնապաս-
քումն։ Իսկ այս՝ ոչ առ ՚ի չգոյէ, այլ յոչ ու-
նելոյ առ ձեռն պատրաստ. մինչ հազիւ գտանի
ելով յանկիւնի։ Քանզի շնորհեալ է մեզ առ
՚ի յԱստուծոյ է ժամանակս ժամանակս ՚ի
ձեռն նախնեաց հոգևոր ծնողաց բազմական առ-
մերս գրեան. որք կարօղք են ըստ երանելւոյն
Պօղոսի իմաստուն առնել զմեզ ՚ի փրկութի ՚ի
ձեռն հաւատոյ՝ որ ՚ի Քս Յս։ 2 Տիմ 3. 15։
Յորոց և մի պարէնս իսկ կենի՝ անանիկ նորոգ-
տպեցմամբ մեզ պատրաստեցեալ ՚ի խրախու-
սութի մերոյս հաւատոյ՝ և ՚ի յարգումն Զօրա-
գլխոյն Յի Փրկչի. Որ արդարև ուղղութ յօժա
րութբ ընթերցողայն ինքեն զսիրտ պարարէ
Ածային հաւատով յուսով և սիրով՝ իբր զջահ
վառեալ, տայ բաղձալ բերելոյ յինքեն զհանգա
մանս ամենից առաքինութեց։ Որովք թևաւո
րեալքն անսայթաք յերկինս ժամանեալ՝ զարքայ
ութեն վայելեն զգերագոյն բարիս Ամէն։

Աշխատասիրութբ ջերմ Հնազանդ ծառայ
Ստեփաննոս յԱկնայ Պետրոսեան։

Յիշատակարան։

Օժանդակութեամբ և շնորհիւ ամենայն Երրորդութեան Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ և բարեխօսութեամբ Ամեներանուհւոյ կուսին Մարիամու. յանգ եղեալ՝ աւարտեցաւ տպագրութիւն այս գեղեցկաբան գրքոյս որ կոչի Եղիշէ պատմագիրք առաջին տպագրութիւն եղեալ էր 'ի Կոստանդնուպօլիս քաղաքին 'ի Թուին Հայոց 1213. իսկ վերստին տպագրեցաւ 'ի Կալկաթայ քաղաքիս արդեամբ և ծախիւք Ջոմարթամիտ և առատաձեռն ազգիս մերոյ։

Արդ՝ որք հանդիպէք ընթեռնելով և վայելելով զքաղցրագոյն պատմութիւնս յիշեսջիք 'ի մաքուր յաղօթս ձեր Օժանդակքն գործարանիս իմոյ հանդերձ կենդանեօք և հանգուցելովքն որք յանուանէ յիշեցեալ կան 'ի ներքոյ։

Յովհաննէս Սարգիս և Կումիպանի.
Սիմոն և Գէորգ փանոս. Բաղրամեան.
Կարապետ Մկրտիչ Մուրատեան.
Զաքարեա Յովհաննէս Խիրխոսեան.
Միքայէլ Զաքարեա Խիրխոսեան.
Աւետ Աղարէգեան.
Յարութին Պետրոսեան.
Մարտիրոս տէր Ստեփանոսեան.
Սարգիս Յօվանեան.
Սահակ Մօսէս Շմայոնեան.
Անտօն Բաբիկեան.
Մելքում Մանուկեան.
Նիմին և Միքայէլ յովսէփ Եմինեան.

Խաչիկ Յարութիւնեան։
Ծատուր Աճաքեան։
Մանուէլ Պետրոս Գէրաքեան։
Յովսէփ Եփրեմեան։
Մկրտիչ Յարութի աղանուրեանց։
Գէորգ Զօրաբեան։
Մաղխաս Սահակեան։
Գրիգոր, Ղազար, և Յովհաննէս Սէթեան։
Կարապետ Խաչիկ Նիաղեան։
Գաբրիէլ Եվլաղեան։
Գէորգ Աճատրեան։
Նիկողայոս Յարութիւնեան։

Հուսկ յետոյ ՚ի վախճանի յիշեսջի՛ք աշխատասէր գործարանիս յետնեալ ծառայն ձեր, Զլնթլում Աճեմեանն՝ որ հարազատօրէն աշխատութբ ջանիւ ՚ի յայս գործ. ( ուստի և հայցեմ եթէ, սխալանք ուրեք գտանիցին ՚ի սմա հայելով զմիայնակութի և զծանրութի պաշտօնի իմոյ ներումն շնորհեսջի՛ք.) Արդ՝ զտուրսն սիրելի ազգիդ իմոյ և զուարթամիտ առատաձեռնութ յայս գործ ազգաօգուտ, ինքնակամ օգնողացն. ամենամեծն Աճ ՚ի փառս՝ և ՚ի պատիւ իւր ընկալցի, զբարի նպատակն յուսոյ՝ և ակնկալութեն ամենիցն ՚ի յանկ հանցէ. և բարի յիշատակս իւրաքանչիւրոյն՝ ՚ի յանջնջելի երանական մատենի իւրում գրեսցէ Եւ՛ ձեզ բարեմտութ յիշողացդ՝ մասն բարեաց պարգևեսցէ, ամէն։

Մնամ յեղամ Յարգութէն
Խոնարհ Ծառայ։
Զլնթլում Աճեմեան։

Օգնեա՛ Տր

Պատմութիւն նահատակութեան Վարդանանց ազգի՝ Հայոց
Սպարապետին՝ որդւոյ Վաչային զքն այ սրբոյ։
Արարեալ սրբոյն Եղիշէի՝ գերանուան Վարդապետի.
Աշակերտի սրբոց Թարգմանչացն սրբոց Սահակայ և
Մեսրոպայ։

## Գլուխ Ա.

ԲԱՆՆ՝ ԶՈՐ ՊԱՏ ուիրեցեր, արարի ով քաջ. որ վն Հայոց պատերազմին հրամայեցեր. որոյ բազումք առաքինացան քան թէ մա– կաւք. ահա նշանագրեցի յայամ եօթն յեղանակ։ Առաջին՝ զժամանակն. Եր– կրորդ՝ զերայն պատահումն յիշխանէն

արեւ

արեւելեայ։ Երրորդ՝ զմիաբանութիւն եկեղեցեայն։ Չորրորդ՝ զերկպառակութի ՚ի նմին ուխտէն։ Հինգերորդ՝ զյարձակումն արեւելից։ Վեցերորդ՝ զխմանալ զհայոց պատերազմէն։ Եօթներորդ՝ զերկարումն իրայ խռովութեան։

Յայսմ եօթներորդ գլուխս՝ կարգադրեալ եդեալ ծայրալիր պարապմամբ զսկիզբն, զմիջոյն, և զկատարածն։ Զի որք համապագորդք ընթեռնուցուն՝ լսելով զառաքինեայն զքաջութի, և զյետս կացելոյն զվատութիւն, ոչ յանձին կարօտութի երկրաւոր առատ գիտութեան լրման, այլ այցելութի երկնաւոր տնօրինութէն. զհատուցումն երկոցունց կողմանցն, որ երեւելեօքն՝ զաներեւոյթսն գուշակէ։ Այլ դնելով մեծի գիտութե այ՝ առ ինչ արդեօք հրամայեսցես, քան թէ հրամայեսցի։ Լաւագունայն (որպ երեւի ինձ) այնոցիկ՝ որ դեգերեսցին յիմաստութի. երկնաւոր սիրոյն է նշանակս այս, և ոչ երկրաւոր սիրոյս փառասիրութիս. որպ ասէին իսկ ոմանք ՚ի քաջ պատմագրայն, զուգաւորութի՝ է մայր բարեաց. անզուգութի՝ ծնօղ չարեաց։ Որպ և մեր իսկ հայեցեալ ՚ի մե սէր քոյոյ՝ հրամանիդ, ոչ ինչ դանդաղեալ վերջացաք, հայելով ՚ի մեր տգիտութիս, քանզի բազում ինչ է սրբութի՝ սատար լինել տկարութե. որպ

աղօթք

աղօթք՝ գիտուն. և սէր մեր՝ միաբան օգ-
տիցէ։ Զոր և մեր լսող հրամանի քում ըն-
կալեալ՝ յօժարութեամբ ձեռնարկեցաք զայն
ինչ որ է մխիթարութիւն սիրելեաց, և յոյս
յուսացելոց. քաջալերութիւն քաջաց՝ կամա-
կարութեամբ յարձակել՝ի վերայ մահուան՝
առաջի տեսանելով զզօրագլուխն յաղ-
թութ, որ ո՛չ ումեք ոտնհար լինի թշնա-
մութեան. այլ՝ ուսուցանէ զնոր անպարտելի
զօրութիւն։ Եւ ահա՛ ո՛ որք կամեսցի ընդու-
նել իբրև զառաքինի նահատակ։ Եւ քանզի
բազմադիմի է առաքինութեան անուն, և նա
բազմադիմի շնորհս բաշխեաց ամենեցուն.
զոր և մեծ իսկ քան զամենայն՝ սէր մեր յաննենգ
միոյ։ գիտեմք զի այս պարգեւ զվերնոյն
բերէ զնմանութիւն. զոր և մեր՝ի քեզ տեսեալ
մոռացաք զմեր բնութիւն։ Եւ ահա վերա-
բերիմք ընդ քեզ, ճախրելով իբրև բարձ-
րաթռուիչ եղեալ, զամենայն վնասակար մր-
րրկածին օդոյքն անցանիցեմք. փոքր՝ի
շատէ ծածկելով յանպակաս վերին օդոյն,
առնույումք զգիտութիւն փրկութեան անձանց
մերոց,՝ի փառս ամենայաղթ Եկեղեցւոյ։
Որում բազում պաշտօնեայք մեք՝ զոհար-
թութ կատարեսցուք զպաս վիճակի ու-
րեանց՝ի փառս Հօրն բոլորեցունց. որ է
նմին մեր Երրորդութիւն ցնծայել բերկրեսցի
յանտրտմական խորում էութեան։ Արդ՝
որով

որովհետեւ ընկալաք զհրաման պատմե-
րանին յաննախանձ քոյոյ բարուց բնութեցդ
սկսցուք ուստի արժան է սկսանել. թէ-
պէտ եւ ոչ յօժարեցեմք զթշուառութի
ազգիս մերոյ ողբալ: Այժմ ոչ ըստ կամաց
արտասուալի ողբովք ճառագրեմք զբա-
զում հարածան, յորում պատահեցաք եւ
մեք խիկ ականատես եղեալ։

Քանզի 'ի բառնալ ազգին Արշակունեաց՝
տէրեցին Ծիս Հայոց ազգն Սասանայ
պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւն
օրինօք մոգուցն։ Բազում անգամ մարտըն
չէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նոյին օրինօք
մտսանէին։ Սկիզբն արարեալ 'ի յամայն
Արշակայ արքայի՝ որդւոյն տիրանայ, եւ
կռուէր մինչեւ յամն վեցերորդ՝ Արտա-
շէսի արքայի Հայոց՝ որդւոյն Սոսահրա-
շապհոյ։ Իբրեւ զնա եւս մերժեաց 'ի թագա-
ւորութենէ, 'ի նախարարաց Հայոց անկանէր
թագաւորութի։ Զի թէպէտ գանձն յար-
քունիսն երթայր, սակայն այրուձին բո-
վանդակ 'ի ձեռն նախարարայն Հայոց ա-
ռաջնորդէր 'ի պատերազմին։ Վոյ եւ մե-
ծապաշտօն բարձր 'ի գլուխ կամակարութե
երեւեալ լինէր յաշխարհիս Հայոց։ 'Ի
սկզբան տէրութեանն Շապհոյ արքայից
արքայի՝ զոր եգիտ իւր գործակից սատանայ
եւ զհամ թոյնն 'ինա թափեաց, եւ էլից ըղ-

նա

նա իբրեւ զպատկանդաւորան դեղով. եւ սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ, եւ գոռալով հողմ հանէր ընդ չորս կողմանս երկրի, եւ թշնամի եւ հակառակորդ իւր, ցուցանէր զհաւատացեալս՝ իւրն, եւ նեղէր տագնապէր խաղաղասէր կենօք։

Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն եւ արիւն հեղութիւն, վն այսորիկ յանձն իւր տարաբերէր թէ յո՛ թափեսցէ զթոյնս դառնութե. եւ կամ ո՞ւր բայստեսցէ զբազ-մութի նետոյն։ Եւ առ յոյժ յիմարութեն իբրեւ զգազան մի յարձակեցաւ ՚ի վերայ աշխար-հիս Հայոց եւ Յունաց, մինչեւ ցքաղաքն Մծբին։ Եւ զբազում գաւառս Հոռոմոց աւերեաց ասպատակաւ. եւ զնմ Եկեղե-ցին հրձիգ արար. եւ ահաբեկ արար զամ զօրս աշխարհին։ Իսկ Թէոդոս կայսր երանելի՝ զի էր խաղաղասէր ՚ի քս, ոչ կամեցաւ ընդ առաջ նր ելանել պատերա-զմաւ, այլ այր մի Անատոլի անուն՝ (որ էր նր սպարապետ) յարուցեալ առաքեաց առ նա բազում գանձիւք. եւ արք պարսիկք՝ որք փախուցեալ էին վն Քրիստոնէութեն եւ կային ՚ի քաղաքն կայսեր, կալաւ եւ ետ ՚ի ձեռս նր. եւ զամ զոր ինչ աստ ՚ի ժա-մանակին, կատարեաց ըստ կամաց նր, եւ արգել զնա ՚ի բազում բարկութեն, եւ դար-ձաւ անդրէն յիւր քաղաքն Տիզբոն.

Եւ

Եւ իբրեւ ետես անօրէն իշխանն եթէ աջողեցաւ չարութիւնն, սկսաւ այնուհետեւ խորհուրդ յաւելուլ իբրեւ թէ ոք զի ՚ի հուր բորբոքեալ՝ յաւելու ՚ի բազում նիւթս փայտի. Քանզի՝ ուստի սակաւ մի կասկած ունէր, անտի աներկիւղ հաստատեցաւ. վճռիկ գրգռեցոյց զբազում ՚ի սէր ուխտէն քրիստոնէից. Էր՝ զոր բանիւք. եւ էր՝ զոր սպառնալեօք. եւ էր՝ զոր կապանօք տանջէր. եւ զոր չարաչար մահուամբ վախճանէր, յափշտակութիւն առնէր ընչից եւ ստացուածոց, եւ մեծաւ անարգանօք տանջէր զնոսին. Եւ իբրեւ ետես եթէ վարատեալ ցրուեցան ՚ի բազում կողմանս, ՚ի խորհուրդ կոչէր զձախակողմեան պաշտօնեայսն՝ որք կայեալ էին ՚ի կռապաշտութի անլուծանելի կապանօք. վառեալք եւ ջեռուցեալք իբրեւ հնոց՝ առ ՚ի այրել զուխտ սուրբ Եկեղեցւոյ. Քանզի էն իսկ այնպիսիքն՝ բնակեալ ՚ի կեանս իւրեանց իբրեւ ՚ի թանձրամած խաւարի. եւ ոգիքն արգելեալք ՚ի մարմինսն իբրեւ զկենդանի ՚ի գերեզմանի՝ յորս ամենեւին ոչ ծագէ նշոյլ սուրբ լուսոյն Քի. նաեւ արջք օրհասականք՝ ընդ վախճանել շնչոյն՝ հզօրագոյն կռուին. յորոց իմաստունք՝ տեղի տուեալ փախչին ՚ի նոցանէն.

Այսպիսի իմն եկեալ հասեալ էր վախճան

տէրու-

տէրութեն, եթէ հարկանին, չոգան. և եթէ զոք հարկանեն, չիմանան. իբրև ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտեալ կռուին։ 'Ի դէպ իսկ ելանէ բանս մարգարէին 'ի վր նց, Այր՝ առ-քաղցի իւրոյ շրջեսցի, և կերիցէ առ զկէս անձին իւրոյ. նմին, և Տր իսկ առէ, թէ ամ տուն և թագաւորութի յանձն իւր բաժանեալ, ոչ կայ հաստատուն։

Արդ՝ զի՞ կոծիս. զի՞ մրչիս. զի՞ այրիս. զի՞ բորբոքիս. զի՞ չչիջանիս. զի՞ կոչես 'ի խորհուրդս զայնոսիկ՝ որոց զոգիս 'ի ձէնջ հանեալ և քաղեալ է զանապականութի, և զապականելի մարմինդ՝ գիշաքարշ արարեալ իբրև զաղիր մեռելատիս 'ի բաց ընկեցեալ։ Ապաքէն զայդ կամիս զի ծածկեսցես զգ-խորհուրդս ամբարշտութե, տեսջիր յոր-ժամ յայտնեսցի, այս գիտասցես զելս կատարածի դորա։

Ասեն մոգքն արքայ քաջ՝ աստուածքն ետուն քեզ զտէրութի զայդ և զյաղ-թութի. և ոչ ինչ կարօտին նոքա մարմնա-ւոր մեծութեան. բայց եթէ 'ի մի օրէնս դարձուցանես զամ ազգս և զազինս՝ որ են ը տէրութբ քո, յայնժամ աշխարհն յունայ՝ մնայէ ընդ օրինօք քոյք. Արդ՝ զբանս մեր վաղվաղակի կատարեա արքայ. Զօր գումարեա, գունդ կազմեա, խաղա

գնա

զնա՛ դու յերկիրն քուշանայ, և զամ ազգս հաւաքեա՛, և անցի՛ ընդ պահելոյ դուռն ՚ի ներքս. և դու քեզ անդէն առա բնակուի։ Յորժամ փակես և արգելուս զամսն ՚ի հնոամոր օտարուի, կատարին խորհուրդք կամաց քոյ, որպ երևիս դու երկրին քուշանայ։ և ոչ յոյնք ելանեն ընդ քո իշխանուիդ։ բայց միայն զաղանդն քրիստոնէից բարձ ՚ի միջոյ։

Եւ հաճոյ թուեցաւ բանն՝ Թագաւորին և մեծամեծացն՝ որ էին ընդ նմին դրանն։ Հրովարտակ գրէր պնդով. դեսպան արձակեաց յամ կողմանս տէրուէ իւրոյ

Եւ այս էր Հրովարտակին Պատճէն։

Ա֊ու ամ ազգս տէրուէ իմոյ՝ արեաց և անարեաց՝ բազմաց ի առ ձեզ ողջոյն մարդասիրուէ մերոյ. և դուք ողջ լերուք. և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականուէ։ առանց ինչ զձեզ աշխատ առնելոյ՝ խաղացայք գնացայք յերկիրն Յունաց՝ և առանց գործոյ պատերազմի՝ սիրով մարդասիրուէ նուաճեցաք զամ՝ երկիրն մեզ ՚ի ծառայութիւն։ և դուք զբարի զմտածէք, և անպարտ լերուք յուրախուէ։ բայց զբանս զայս կատարեցէք վաղվաղակի զոր ասեմքս։ Եւ անվրէպ խորհրդով ՚ի միտ եդաք խաղաղ յաշխարհն արևլից՝

չաստուածոցն օգնականութբ դարձուցանել ՚ի մեզ զտէրութիւնն քուշանայ. դուք իբրև զհրովարտակս զայս տեսանէք, անխափան վաղվաղակի այրուձի գումարեցէք. յառաջ քան զիս յանդիման լինիցիք ինձ յաղագ աշխարհի. Ըստ այսմ պատճէնի հրովարտակին էհաս յաշխարհն Հայոց. ՚ի Վրաց և Աղուանից. ՚ի Լփնաց և ՚ի Ծօդէից. ՚ի Կորդուաց և Աղձնեաց. և ՚ի բազում այլ տեղիս հեռաւորս՝ որոց ո՛չ էր օրէն երթալ զայն ճանապարհ յառաջ ժամանակաւ. Գունդ կազմէր ՚ի Հայոց մեծաց զազատ և զազատորդի. և յարքունի տանէ զոստանիկ մարդիկք. Ըստ նմին օրինակի ՚ի Վրաց և Աղուանից, և յաշխարհէն Լփնաց. և որ եւս յայլ կողմանց կողմանց հարաւոյ. և մերձ ՚ի կողմանց Տաճկաստանի, և ՚ի Հռոմայեցւոց աշխարհէն: ՚ի Կորդուաց, և ՚ի Գթաց, ՚ի Ծօդէից, և Արզնաբաղուն. որք էին ամենքն հաւատացեալք և մկրտեալք ՚ի մի կաթուղիկէ առաքելական Եկեղեցի. և անմեղութեամբ ո՛չ գիտացեալ զերկդիմի միտս թագաւորին, խաղային գնացին յիւրաքանչիւր աշխարհաց լրջմտութբ տիրասէր խորհրդով կատարել զպայմանս զինուորութեան. Աներկբայ հաւատովք բարձին եւս ընդ իւրեանս զԱծային զօթ Կտակարանին՝ բազում պաշտօնէիւք և քահանայիւք. բայց հրամանն տուեալ աշխարհի, ո՛չ

իբրև

իբրև յանկընկալումն կենաց, այլ իբրև վճարումն վախճանի, յանձն առնելով միմեանց զոգի և զմարմին։ Զի թէպէտ և խորհուրդ թագաւորին չէր յայտնեալ նոցա, սակայն կարծիք ՚ի մտի էին ամենեցուն. մանաւանդ իբրև բեկեալ տեսանէին զզօրութիւն յունաց առաջի նոցա, յորժամ հարեալ խոցեցան ՚ի խորհուրդս իւրեանց։ Բայց քանզի պատուիրանապահք էին սուրբ Կտակարանացն Աստուծոյ, հանապազ յիշէին զպատուիրեալսն ՚ի Պօղոսէ, թէ ծառայք հպատակ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց մի սուտակասպասք և առաչս աչառուելով. այլ՝ սրտի մտօք ծառայեցէք իբրև Աստուծոյ, և մի իբրև մարդկան. զի ՚ի Տեառնէ է հատուցումն արդար վաստակոյն ձերոց։ Եւ այսու ամենայն բարեմտութեամբ յուղարկեալք յաշխարհէ, և յանձն եղեալք սրբոյ Հոգւոյն, յանդիման լինէին փութով կատարել զհրամանն զամենայն՝ արարեալ ըստ կամաց նորա։ Յորժամ ուրախ լինէր թագաւորն իբրև այն թէ, կատարեցան կամք կարծեաց նորա. և ահա՛ առնէր ընդ նմա զայն ինչ՝ զոր պաշտօնեայք ամբարշտութեան խրատեցին զնա։ Այլ իբրև ետես թագաւորն զամենայն կամութիւն և զբազմութիւն գնդին բարբարոսաց՝ որք սրտիմտօք եկեալ էին ՚ի վաստակ արքունի, առաւել ևս ուրախ լինէր առաջի մեծամեծացն և ամենայն բազմութեան զօրաց իւրոց ՚ի վերին երեսս թաքուցանէր զկամս մտաց իւրոց, և ակամայ առատապէս պարգևէր զնոսա։ Խողայ

գնաց միանգամայն՝ի վե՛ր տէրութե Հռոմայ աշ-
խարհին, (զոր քուշանս անուանեն) և զեր-
կեամ մի կռուեալ՝ ոչ ինչ կարաց ազդել նց։
Այս արձակեաց զմարդիկն յիւրաքանչիւր տե-
ղիս. և զայլս՝ի նց տեղիս փոխանակ առ՛ իւր
կոչեաց նովին պատրաստութ. Եւ այսպէս ամ
յամէ սովորութիւն կարգեաց. և իւր անդէն
քաղաք բնակութե շինեաց. սկսեալ՝ի չորրորդ-
ամէ տէրութե իւրոյ, մինչև յամն մետասան

երորդ թագաւորութեան։

Եւ եսես իբրև եթէ՝ հաստատուն կային
Հռոմք յուխտին իւրեանց՝ զոր եդին ընդ-
նմա, և դադարեցին հայել ընդ պահակն Ծորայ,
և յամ կողմանց խաղաղութ բնակեաց աշխարհ
նր, և՝ի նեղ եւս էարկ զթագաւորն Հռոմայ,
(քանզի աւերեաց զբազում գաւառս նր և
յաջողեցաւ տէրութե նր.) աւետաւորս առա-
քեաց ընդ ամ ատրուշանս աշխարհին իւրոյ.
ցլուք սպիտակօք՝ և գիսաւոր նոխազօք՝ ա-
ռատացոյց զզոհս կրակի. և խիտ առ խիտ
թանձրացոյց անդուլութ զպաշտօնն պղծութե
իւրոյ. պսակօք և պատուօք մեծարեաց զբա-
զումս՝ի մոգուց, և զբազմագոյնսն՝ի մոգպետաց
և ետ հրաման եւս յափշտակել զամ ինչ քրիս-
տոնէից և զստացուածս՝ որք էին՝ի մէջ պար-
կաց աշխարհին. Եւ այսպէս հպարտացաւ
բարձրացաւ՝ի միտս իւր.՝ի վեր քան զմարդկային
բնութիւն անդր վաղէր ամպարթաւանէր. ոչ միայն

յիր

յիրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ոմն զինքն կարծէր քան զընտանի հայրենի կարգին· վասն այնորիկ կեղծաւորութեամբ թագուցանէր զինքն ըստ կարծեացն, և ոչ երևէր իմաստնոց՝ յանմահից իմն կարգելոց դնէր զինքն։ Եւ յոյժ էր ցասուցեալ ընդ անուանն քրիստոսի յորժամ լսէր թէ տանջեցաւ խաչեցաւ մեռաւ և թաղեցաւ։ Եւ իբրև այսպէս օրըստօրէ՝ ի նոյն միտս ցնորէլ դանդաչէր, մի ոմն մանկագոյն՝ի նախարարացն հայոց՝ ել դէմ բանս եւ և ասէ, արքայ քաջ դու ուստի՞ գիտես այդպիսի բանս խօսել ըղ-Տէ։ Եւ պատասխանի թագաւորն և ասէ իմ իսկ առաջի ընթերցան զգիրս մոլորութեան ձերոյ։ Եւ պատասխանի անդէն պատանեակն և ասէ, ընդէ՞ր արքայ՝ ցայդ վայր միայն եկուր ընթեռնուլ։ այլ յառաջ ևս մատո զկարդայունն, և լսես անդ զյարութենէ և զյայտնութենէ առ բազումս, և զվերացումն յերկինս և զնստիլ ընդ աջմէ հօրն զխոստումն երկրորդ գալստեան զհրաշակերտ յարութեան առնելով բոլորեցունց, զհամառօտ հատուցմունս արդար դատաստանին։ իսկ իբրև լուաւ զայս թագաւորն, ՝ի խորխոցեալ՝ վեր՝ի վերոյ ծիծաղեցաւ և ասէ, այդ ամենայն խաբէութիւն է։ Եւ պատասխանի զինուորն քրիստոսի և ասէ, եթէ հաւատարիմք են քեզ մարմնաւոր չարչարանքն նորա, հաւատարմագոյն ևս լիցի քեզ երկրորդ գալուստն նորա։ Եւ զայս լսելով թագաւորին՝ բորբոքեցաւ իբրև զհուր հնոցին

բարկ

թափելոյն, մինչև ինքն իսկ անդէն իբրև զքաղ
դէպսին այրեալ լինէր. յայնժամ զբոլոր բար-
կուի սրտմտութիւն էհեղ յայրն երանելի որում
անուն էր Գարեգին։ Եւ հրաման կապեալ
ոտիւք և կապեալ ձեռօք զերկեամ մի տուեալ
՚ի չարչարանս. և հանեալ ՚ի բաց զտէրութի
՚ի նմանէ, ընկալաւ զվճիռ մահու. և փոխի
փառօք յաւիտենանս ամէն։

---

## Գլուխ Բ.

Եւրիդէ՝ շիրոյն պատահմանն յիշատակէն աւետելոյ.

Որոց ոգիքն թողեալ են յերկնաւոր
առաքինութիւն, յորժ ընդաճիւ անկեալ
է ընթացին մարմնոյ. յամ հողմոյ շարժի. յամ բա
նէ խռովլի. յամ իրաց դողայ. երաղագէտէ այն
պիսին ՚ի կեանս իւրում. և յանգիւտ կորուստ
յուղարկի ՚ի մահուանն իւրում։ Ով և աւաղ
՚ի հնումն, Մահ ոչ իմացեալ՝ մահ է. մահ
իմացեալ՝ անմահութիւն է. որ զմահ ոչ գիտէ,
երկնչի ՚ի նմանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ եր
կնչի ՚ի մահուանէ։ Եւ այս ամ չարիք մտանեն
՚ի միտս մարդոյ յանուսումնութենէ։ Կոյր՝ զրկի
՚ի Ճառագայթից արեգական. և տգիտութի
զրկի ՚ի կատարեալ կենաց։ Լաւ է կոյր աչօք,
քան կոյր մտօք։ ով մեծ է ոգի քան զմարմին,
այնպէս մեծ է տեսանողութի մտաց, քան զմար
մնոյ

ծոյ։ Եթէ ո՛ք առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ՝ եւ ՚մտօք աղքատագոյն, ողորմելի է քան զբազումս. որպէս եւ տեսանեմք. իսկ ոչ միայն ՚ի չափաւոր մարդիկ, այլ որ մեծն է քան զամենայն. Թագաւոր՝ եթէ ոչ ունի զիմաստութիւն, աթոռակից իւր ո՛չ կարէ ՚ի վիճակին իւրում վայելուչ կալ։ Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, ո՞րչափ եւս առաւել առ հոգեւորն. Բոլոր մարմնոյն՝ հոգին է կենդանութիւն. իսկ մարմնոյ եւ հոգւոյ՝ միտք են կառավար. եւ որպէս առ մի մարդ, այսպէս եւ առ բոլոր ազգս. Թագաւորն ոչ միայն զիւր տայէ պարտիս, այլ եւ որոց եղեն պատճառք ՚ի կորուստ. բայց մեք թէպէտ եւ չունիմք հրաման բամբասել զիշխանս եւ ո՛չ գովօղք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուածամարտն լինին. այլ զանցս իւրեանց պատմեմ, որ ՚ի նմանէ ընդդէմ եկեղեցւոյն եղանց, եւ ո՛չ դանդաղեմ. ո՛չ բամբասանէր մտօք, այլ՝ ճշմարտութեամբ զեր իւրեանց ասելով ո՛չ լռեցից, ոչ ՚ի կարծ ընդդատուցեալ, եւ ո՛չ ՚ի լուր զարթուցեալ. այլ ես ինքնին անձամբ անդէն ՚ի տեղւոջն պատահեցի, եւ լուայ զձայն բարբառոյն յանդգնաբար խօսելով. իբրեւ զհողմն սաստիկ՝ զի բախեալ է ծով մեծ, այնպէս շարժէր եւ տատանէր զամենայն բազմութիւն զօրաց իւրոց, եւ հանդէս առնէր ամենայն ուսմանց, եւ ընդդաճէր զմոգութիւն եւ զամենայն ուսմունս աշխարհին իւրոյ։ Արկանէր ՚ի ներքս եւ ըզքրիստոնէութին կեղծաւորութեամբ, եւ առնէր զայ

րացեալ

լուցեալ մոմօք, հարցէք տեսէք. Թո՛ղ որ լուն է ընտրեալ կայլուք. և փութայր որ ինչ 'ի մտին էր՝ զի վաղվաղակի կատարեսցէ ։ Իսկ 'ի կողմանց կողմանց քրիստոնեայք որ 'ի զօրուն էին իմացան զհուրն՝ որ 'ի ծածուկ վառեալ բորբոքէր. և կամէր հրդեհել զլերինս և զդաշտս առհասարակ ։ Ջեռնուին և նոքա անծախական հրովն, և սաստկապէս պատրաստեցան առ 'ի փորձութիւն գաղտնի մեքենայիցն ։ Սկսան այնուհետև բարձր բարբառովն՝ սաղմոսիւք և երգօք հոգևորօք և մեծապայծառ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին զպաշտօնն յուսանէին աներկիւղ և առանց զանգիտելոյ ։ Ո՛ ոք և երթայր առ նոսա, ուսուցանէին կամակար՝ և տէր յաջողէր նոցա նշանօք և արուեստիւք. քանզի բազում հիւանդք ընդունէին զբժշկութիւն 'ի հեթանոսական զօրուէն ։ Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն և պատրաստեալ հուրն, մինչ չև ուրուք 'ի նա փչեալ վառումն նորա յայտնի իմացաւ երկիւղածայն Աստուծոյ, ընկրաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս չարութեան իւրոյ. և անբժշկական վէրս՝ յոգիս և 'ի մարմինս տեսանէր ։ Մերթ շանթէր գալարէր իբրև զօձ թունաւոր. մերթ պարզէր գոչէր իբրև զառիւծ զայրացեալ. գելոյր և տապալէր երկդիմի մտօք, և զխորհուրդս կամացն կատարել կամէր, քանզի ձեռն արկանել

և ունել ո՛չ կարէր. վ՟ զի ո՛չ էին համագունդ ՚ի միում վայրի առ նմա։ Սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրսերս, և զանարգս ՚ի պատուականաց, և զոգէտս ՚ի գիտնոց, և զանարիս ՚ի քաջ արանց։ Եւ զի ՚ մի մի թուեմ, այլ զո՟մ անարժանս յառաջ մատուցանէր, և զո՟մ արժանաւորս յետս տանէր. մինչև զհայր և զորդի քակէր ՚ի միմեանց։ Թէպէտ և ընդ ա՟մ ազգս առնէր զանկարգութի զայս, բայց առաւել ընդ հայոց աշխարհին մարտնչէր. քանզի տեսանէր զնոսա ջերմագոյն յա՟ծպաշտութի։ Որք էին յազգէ նախարարացն հայոց, և անմեղութ՟ ունէին զքարոզութի Առաքելոյ և Մարգարէից, պատրէր զոմանս ՚ի նոցանէ ոսկւով և արծաթով. և զբազումս այլով ևս առատ պարգևօք։ Իսկ զոմանս՝ ագարակօք և մեծամեծ գեղիւք. և զոմանս՝ պատուով և իշխանութ՟ մեծամեծիւք. և այլ ևս սնոտի յոյս ոգւոց՝ առաջի դնէր։ Եւ այսպէս հրապուրէր և յորդորէր համապազ, եթէ միայն թէ՝ զօրէնս մոգուն յանձին կալջիք, և զձեր մոլորութի սրտի մօք դարձուցջիք ՚ի ճշմարտութե երևելի մերոյ դիցաղնական օրինացս, ՚ի մեծութի և յաճագուխս հաստացից զձեզ հաւատար իմոյ սիրելի նախարարացս. առաւել ևս զանցուցից։ Եւ այսպէս կեղծաւորութ՟ խոնարհեցուցանէր զինքն առ ա՟մն՝ խօսելով ընդ նմ՟ ՚ի պատճառս սիրոյ, զի խորամանկութ՟ որսալ մարթասցէ զն՟,

ըստ

քնտ առաջին խորհրդական խրատ տուայն։ Եւ զայս առնէր սկսեալ 'ի չորրորդ ամէն մինչև 'ի մետասան ամն իւրոյ տէրութե՛. Եւ իբրև ետես եթէ ոչ ինչ յարգեցաւ ծածուկ հնարագիտուին, այլև դեմքն յոլովագոյն գործէին, (քանզի տեսանէր զքրիստոնէութին՝ որ օր քան զօր յորդորեալ տարածանէր ընդ ամ կողմանս հեռաւոր Ճանապարհին՝ ընդոր ինքն անցանէր.) սկսաւ հաշել և մաշել և հառաչելով յոգւոյ հանել. յայտնեաց ակամայ զծածուկ խորհուրդսն. եւ հրաման բարձր բարբառով ասէ, ամենայն ազգ և լեզու՝ որ են իշխանութե՛ն իմով, դադարեսցեն յիւրաքանչիւր մոլար օրինացն, և միայնոյ եկեսցեն յերկրպագութի արեգական, զոհս մատուցանելով և ամ անուանելով և սպաս տանելով կրակի, և 'ի վե՛ այսր ամի՝ և զմոգուե՛ օրէնս կատարելով. զի մի ինչ պակաս առնիցեն. Զայս առնելով քարոզ կարդայր 'ի մեծ կարաւանին, և պատուէր սաստիկ 'ի վե՛ դնէր ամենեցուն, և դեսպան ըստիպաւ արձակէր ընդ ամենայն ազգս հեռաւորս, զդոյն պատուէր հրամանի առ ամենեսեան արկանէր. Արդ՝՝ի սկզբան երկոտասան ամի թագաւորութե իւրոյ՝ գունդ կազմէր անհամար բազմութե. յարձակել հասանէր յերկիրն Խտալական. Զայս տեսեալ թագաւորին Քուշանայ, ոչ հանդուրժէր ելանել ընդ առաջնոր պատերազմաւ. այլ և խոյս տուեալ 'ի

կող

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

կողմանս ամուր անապատին, Թագստեամբ սպ-րէր հանդերձ ամ զօրօքն իւրովք. Իսկ սա՝ աս-պատակ արձակէր գաւառաց, տեղեաց, վայրաց, առնոյր զբազում բերդս և զքաղաքս, կոտորէր զգերի զառ և զապուռ, և զաւարն հաստա-նէր ածէր յերկիր տոհմին իւրոյ։ Եւ անդ այնու-հետև յընդունայն ելեալ՝ ի նոյն խորհուրդս՝ հաստատէր՝ ի կարծիս մոլութեն աճելով յպաշ-տօնեյս ամբարշտութեն, զի՞նչ հաստասցուք մեք զսոյն փոխարէնս այս մեծի յաղթութեանս՝ որ ոչ ոք կարաց ելանել ընդդէմ մեր՝ պատերազմաւ։

Յաղագս այնր պատճառի, որ չէ՞ արդ Պարսից Մոգոյն · Բանին, Շարժի Ռազմաւորն ՚ի Բաբելոնիա։

Յայնմ ժամանակի առ հասարակ մոգք և քրդեայք բարձին զձայնս իւրեանց և ասեն, որքն՝ որ ետուն քեզ զտէրութիւն վայդ և զյաղթութիւն՝ ի վերայ թշնամեաց քոց ոչ ինչ են կարօտ խնդրել՝ ի քէն յերևելի պատուականս. այլ զի բարձցես զամ ուսմունս մոլորութեն մարդկան. և՝ ի մի դարձուսցես օրէնս զրադեշական պատճիրանին։ Հաճոյ թուէր բանն առաջի թագաւորին՝ ամ մեծամեծացն. մանաւանդ որ էին առաջակայք օրինացն։ Խորհուրդ՝ ի մէջ ա-ռեալ՝ յաղթէր խրատն։ Ընդ էն՝ ի ներքոյ պահ դրանն արգելոյր զբազմութի այրուձիոյն հայոց, զվրաց և զաղուանից և զամյուն՝ որ էին հա-ւատա

ճառայել 'ի մէջ Ահետրանն վքի. Եւ սաստիկ
հրաման 'ի վերայ գոնապանայն առնէին. եթէ
որ յարևելս առ մեզ գայցէ: Թողցեն. իսկ
յարևելից յարևմուտս, անանց լիցի ճանապարհ.
Եւ իբրև արգել փակեայ զնա յամուր յանել
գաւառագլուխն, և իբրաւ ասացի անել և ամուր,
քանզի չիք անդ տեղի փախստի և թաքստի.
վասն զի շուրջանակի թշնամիք են բնակեալ. յայն
ժամանակի ձեռն արկանէր 'ի նոսա, և մեծաւ
չարչարանօք և պէսպէս տանջանօք վաթարէր
զբազումս 'ի նոցանէ, և ստիպէր ուրանալ
զՃշմարիտն Աստուած, և խոստովանել զերևելի
տարերքս. Իսկ զօրականքն առհասարակ
գեղեցիկ խորհրդով քաջասիրտ զօրութեամբ միաբան
աղաղակէին և ասէին, վկայեն մեզ երկինք և
երկիր; որ ոչ երբէք հեղգացեալ եմք յարգու
նի վաստակ, և ոչ խառնել վատութիւն ընդ արու
թիւ քաջութեան. 'ի զուր և անողորմ են հարուածս
'ի վերայ մեր. Եւ բազմանայր գոչումն աղաղակի
նոցա, մինչև ինքնին թագաւորն ականատես
լինէր իրացն յանդիմանութեան, և անդէն վաղվա-
ղակի երդմամբ հաստատէր և ասէր ոչ թողա-
ցուցից զձեզ, մինչև կատարեսջիք զամենայն կամս
հրամանաց իմոց. Եւ ահա իշխանութիւն առեալ
չարասէր սպասաւորացն, զի ընդ չորս զինուորս
'ի բուն յաւագայն մատուցեն 'ի փորձութիւն
տանջանաց. Եւ զառաջեաւ դատեալ բա-
զում հարուածովք, նոքին կապանօք անցուցին
'ի

՝ի տեղիս արգելանին ։ Իսկ այլոյն՝ խաբէ ութ̄ առ ժամանակ մի Թուլուի աղաղեալ, և զնմ՝ հնասուն պատճառս արկանէր զկապելոյքն ։ և զայս առնէր սատանայական խորատովն ։ Եւ յետ երկոտասան աւուր հրաման տայր ընթերս գործել առաւօտուց՝ աւելի քան զայլ աւուրսն տօնօրէն, և կոչէր զբազումս ՝ի զինուորական քրիստոնէից ։ Եւ ՝ի ժամ գահուն պատրաստութեան՝ զիւրաքանչիւր տեղիս շնորհէր նոցա զբազմականին և սիրով և խոնարհութ̄ խօսէր ընդ նոսա ըստ առաջնում կարգին, զի թերևս համանեսցին ուտել զմիս զոհեալ, զոր ոչ երբեք օրէն էր ուտել ։ Եւ իբրև ոչ կալան յանձինս ամենեքին, ոչ ինչ կարի ստիպէաց ։ այլ հրամայեաց մատուցանել նց̄ զսովորական կերակուրն ։ Եւ անտի ՝ի դուրս ելեալ ՝ի սրահն արքունի, արգելին զոմանս ՝ի նոցանէ՝ ձեռս յետս կապելով և զխոնջանոցան կնքելով, զգուշութբ̄ պահեալ ։ Էր՝ որ զերկու աւուրս, և էր՝ որ զերեք աւուրս ։ և բազում և այլ ևս՝ յանարժան հարուածս չարչարէին ։ զոր և ոչ ընդ գրով իսկ արժանի համարեցաք արկանել ։ Եւ զոմանս ՝ի նոցանէ հեռաւորութենէին յազնուական պատուոյն զարշեցուցանէին անարգեալ՝ գունդս գունդս դարձեալ գումարէին՝ ի նոցանէ յերկիր հեռաւոր յամուրս անապատին ՝ի մարտ պատերազմի թշնամեաց արքայի ։ և բազմաց անդէն իսկ հասանէր վախճան մահու սրով

բով։ Եւ զամենայն զկարգել թոշակն նուաճե-
ցուցանէին. և քաղցիւ և ծարաւով տառապե-
ցուցանէին զնս. և զձմերոյն տեղիսն՝ զդժնեայ
վայրան հրամայէին նց. և անարգս և վատթարս
յաչս ամնյն զնս ցուցանէին իսկ նք առ սէրն
Քի յոյժ խնդութբ ընդունէին զամ չարչա-
րանսն վս մեծի յուսոյն՝ որ ՚ի Քս. որ առ յա-
պա պատրաստեալ կայ պատուիրանապահ համ-
բերողացն Ո՞րչափ զչարութի և զանարգութի
բազմացուցանէր, նոքա ևս քան զևս զօրանային
՚ի սէրն Քի մանաւանդ զի բազումք ՚ի նցնէ
զգիրս սբս ուսեալ էին ՚ի մանկութէ, զանձինս
մխիթարէին, և զընկերս քաջալերէին. և իբրև
քշտարակ՝ զպաշտօնն առնէին ՚ի բազմութեա
նցն։ վասն որոյ և բազումք ՚ի հեթանոսաց՝
որոց հեշտ և ցանկալի ձայնքն թուէին, քաջա՛
լերէին զնոսա և առէին բանս մխիթարութե.
իբրև թէ լաւ իցէ մարդոյ մահուչափ ճգնել-
քան յայդպիսի օրինաց ուրանալ։ բայց սակայն,
թէպէտ և նոքա յոյժ զուարթութբ խնդային
ըստ ներքին մարդոյն, արտաքին տեսիլն կարի
ողորմ էր յօտարութեն։ այնպիսի պատուական
զինուորութին հասանէր ՚ի չարաչուք անար-
գութի. և հայրենի ազատութի չարաչար կայր ՚ի
ծառայութի մարդախողող բռնաւորին, որ և
ընդ հեթանոսաց օրէնսն անցանէր արենհե-
ղութբ. որ և ամենևին չկարծէր թէ գուցէ
յայոր ամի վրէժ խնդրութի յերկինից։ Նաև

ոչ

ոչ զերկրաւոր վաստակս ուրուք յիշէր, և որ մեծն է քան զամ՝ ըստ մարմնաւոր կարգի. քանզի գոյին ոմանք ՚ի նախարարացն՝ որոց զեղբարսն նր՝ սնուցեալ էր մայրենի կաթամբն իւրենց, առաւել ևս քան զամսն զնա պատէր.

---

Յաղագս այնր պատճառի, թէ որպէս ներշնչաւորեալն հայրապետաւն Սահակաւ աշխարհագիր արար թագաւորն ընդ ամ երկրին հայոց.

Ե՛ յայսր ամի վերայ՝ այլ ևս չարութի խորամանկեացն. զմի ոմն ՚ի հաւատարիմ ծառայից իւրոյ՝ առաքէր յերկիրն հայոց, որում անուն էր դենշապուհ. Որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի՝ զողջոյն բերեալ զմեծ թագաւորին. և խաղաղասէր կեղծաւորութբ՝ աշխարհագիր առնել ամ երկրին հայոց ՚ի թողութի հարկաց և ՚ի թեթևութի ծանրութ այրուձիոյն. Թեպէտ և ՚ի վերին երեսս զայս կեղծաւորէր, այլ ՚ի ներքոյ խորհուրդքն չարագոյն յուշանէին. Առաջինն՝ զազատութի եկեղեցւոյն՝ արկանէր ՚ի ծառայութի. Երկրորդ՝ միայնակեացք որ բնակեալ էին ՚ի վանորայս. ը նովին աշխարհագրով էարկ. Երրորդ՝ զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց. Չորրորդ՝ բանսարկութբ զնախարարսն էարկ ը միմեանս, և յամ տան արար խռովութի. Եւ՛ զայս ամ առնէր՝ թերևս զմիաբանութին քակեսցէ, և զուխտն եկեղեցւոյն ցրուեսցէ. և զմիայնակեացսն

կենացն փախուսցէ· և զշինականսն վատնեսցէ, և առ յոյժ աղքատութեան՝ ակամայ դիմեսցեն յօրէնս մոգուցն։ Հինգ երրորդ՝ ևս չարագոյն, քանզի որ հազարապետ աշխարհին էր, ( իբրև հայր՝ վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից.) գրգռեալ յարոյց զամբաստանութիւն՝ի վր նր, և հանեալ զնա՝ի գործոյն, փոխանակ նորա՝ պարսիկ ած յաշխարհն· և միւս ևս մոգպետ՝ դատաւոր եդին. զի զեկեղեցւոյն փառս աղաւաղեսցեն։ բայց սակայն՝ թէպէտ և ամենայն գործքս դժնեայ էին, չև էր ուրուք ձեռնարկեալ յեկեղեցին յայտնի· վն այնորիկ և ոչ ոք ը̅ դիմացաւ նմա, թէպէտ և էր ծանրութիւն հարկացն։ Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկանի չափ, կրկնէին և առնուին։ այնպէս և Եպիսկոպոսացն և Երիցանցն դնէին. ոչ միայն շինաց, այլ և աւերակաց։ Նաև՝ բնաւ իսկ ո՛չ կարէ պատմել վն մաքսից և սակից և բաժից և հասից և հարկաց· լերանց և դաշտաց և մայրեաց։ Ո՛չ ըստ արքունի արժանաւորութեան առնուին, այլ՝ հինաբար յափշտակէին· մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային, թէ ուստի՞ այս չափ գանձ ելանէ· զիա՞րդ չէն կայցէ աշխարհն։ իբրև տեսին թէ այսու ամենայնիւ չկարացաք ձանձրացուցանել, յայնժամ յայտնապէս հրաման ետուն մոգուց և մոգպետացն նամակ մի գրել ըստ ձախողակի դենին իւրեանց։

Եւ

Եւ էր Պատճէն Նամակին այս.

Միհր Ներսեհ՝ վզրիկ հրամանատար երան և աներան հայոց մեծաց ողջոյն. Դուք գիտասջիք, զի մարդ որ բնակեալ է ՚ի ներքոյ երկնի և ոչ ունի զօրէնս մազդեզանց, նա՝ խուլ է և կոյր, և դիւաց խարամանուոյ խաբեալ. Քանզի մինչչև էին երկինք՝ երկիր, զրուան մեծ ածն յաշտ առնէր զհազար ամ և ասէր. Թերևս լիցի իմ որդի մի որմիզդ անուն, որ արասցէ զերկինս և զերկիր. Եւ յղացաւ երկու՝ յորովայնի. մին վն աշտ առնելոյ, և միւսն ՚ի թերևան ասելոյ. Իբրև գիտաց թէ երկու են յորովայնի, ասէ որ վաղ ելեսցէ, նմա տաց զթագաւորութիւն. Իսկ որ էր ՚ի թերահաւատութենէն յղացեալ, պատառեալ զորովայնն ել ՚ի դուրս. Ասէ ցնա զրուանն, ո՞վ ես դու. ասէ՝ որդին քո որմիզդ. Ասէ ցնա զրուանն, իմ որդին լուսաւոր է և անուշահոտ. դու խաւարային ես և չարահոտ. Եւ իբրև կարի դառնապէս ելաց, ետ ցնա զթագաւորութիւն զհազար ամ. Իբրև ծնաւ միւս որդին, անուանեաց զանուն նր որմիզդ. եհան զթագաւորութիւն յարհմնէն, և ետ ցորմիզդն և ասէ ցնա, ցայժմ ես քեզ յաշտ արարի. դու արա արդ ինձ. Եւ որմիզդ արար զերկինս և զերկիր. իսկ արհմն ընդդէմ չար գործեաց. Եւ այսպէս բաժանին արարածքս

բանքս. Հրեշտակք՝ որմզդի են, և դևք՝ արհըմնոյ։ Եւ ա͞մ բարիք որ ՚ի յերկնից և այսր լինին, որմզդի են. և ա͞մ վնասք որ անտի և այսր գործին, զայն արհ͞մն արար։ Նոյնպէս և յերկինս որ ինչ բարի է, զայն որմիզդ արար. և որ ոչնչ բարի, զայն արհ͞մն արար. Եւ ա͞մ թշնամութի͞ք և պատահարքն որ լինին, և պատերազմունք դառնուն՝ չարին մասին արարածք են իսկ աջողութի͞ք և տէրութի͞ և փառք և պատիւ և առողջութի͞ք մարմնոյ՝ գեղեցկութի͞ք դիմաց և ճշմարտութի͞ք բանից և երկայնակեցութի͞ք ամաց՝ այդք ՚ի բարւոյն առնուն զգոյացութիւն. և ամենայն այդպէս է ՚ի նա չարին արարած՝ խառնեալ է։ Եւ ա͞մ մարդիկ մոլորեալ են, որ ասեն եթէ՝ զմահ ա͞ծ արար, և չար և բարի ՚ի նմանէ լինի։ մանաւանդ որպէս քրիստոնեայքդ ասեն թէ, Ա͞ծ նախանձոտ է. վասն թուզ մի ուտելոյ ՚ի ծառոյն, ա͞ծ զմահ արար, և զմարդն էարկ ընդ այնու պատուհասիւ։ Զայդպիսի նախանձ՝ և ոչ մարդ առ մարդ ունի, թող թէ ա͞ծ առ մարդիկ։ զի որ զայս ասէ, նա խուլ է և կոյր. և ՚ի դիւաց խաբամանեալ է խաբեալ։ Դարձեալ միւս ևս այլ մոլորութի͞ ասեն. ա͞ծ՝ որ զերկինս և զերկիր արար, եկն և ՚ի կնոջէ ումեմնէ ծնաւ. որում անուն էր մարիամ, և առն անուն՝ յովսէփ և զհետ այդպիսի մարդոյ՝ մոլորեալ են բազումք։ Եթէ աշխարհն հռոմոց ա-

յոյժ

յոյժ յիմարութեն՝ տգիտաբար մոլորեալ են և զրկեալ ՚ի կատարեալ դենէս, յանձանց պարմայեն զվրնասն իւրեանց. դուք ես ընդէ՞ր զհետ նց մոլորութեն ցնորիք. Այլ զոր օրէնք տէրս ձեր ունի, զնոյն և դուք կալարուք զի և կալարուք՝ մանաւանդ զի և առաջի այ համարս ունիմք տալ վասն ձեր. Մի հաւատայք առաջնորդաց ձերոց՝ զոր նազօրեցիոց անճանէք. քանզի յոյժ են խաբեբայք. զոր բանիւք ուսուցանեն, գործովք ոչ առնուն յանձն. Միս ուտել ասեն՝ ոչ է մեղք, և ինքեանք ուտել ոչ կամին. Կին առնել արժան է, բայց ինքեանք և հայել ՚ի նա ոչ կամին. Կարասի ասեն՝ որ ժողովէ, յոյժ մեղք են. բայց զաղքատութի առաւել գովեն. Յարգեն զթշուառութիւն, և պարսաւեն զաջողուածս. Ծաղր առնեն զանուն բախտի, և փառաւորուն յոյժ այպանեն. Սիրեն զանշքեղութին հանդերձից, և յարգեն զանարգս քան զպատուականսն. Գովեն զմահ, և պարսաւեն զկեանս. Ընարգեն զծնունդս մարդոյ, և յարգեն զանորդիութիւն. Եւ եթէ լսէք նոցա և ՚ի կանայս ոչ մերձենայք, աշխարհի վախճան վաղվաղակի հասանի. Այլ ես ոչ կամեցայ զամ ըստ մասանց ընդ գրով արկանել՝ զոր խօսին դոքա. Որ չարագոյն ևս է քան զոր գրեցաք. զան ՚ի խաչ ելեալ ՚ի մարդկանէ՝ քարոզեն. և նոյն՝ մեռեալ և թաղեալ և ապա յարուցեալ և վերա-

յեալ

ցեալ յերկինս։ Ոչ ահա ձեզէն իսկ արժան էն անդէն պատասխան առնել վ̃ այդպիսի անարժան ուսմանց․ Դուք՝ որ չարք էն, ո՛չ ըմբռնին և տանջին ՝ի մարդկանէ, թո՛ղ թէ ած̃ արարիչ ամ̃ արարածոց․ զոր ձեզ ամօթ է լսել, և մեզ կարի անհաւատալի բանք։ Արդ՝ երկու իրք կան առաջի ձեր․ կամ արարէք բան առ բան՝ նամակիդ պատասխանի, և կամ արիք եկայք ՝ի դուռն՝ յանդիման լերուք ՝ի մեծի հրապարակի։

### Անուանք Եպիսկոպոսացն՝ որք ժողովեցան Յայրարատ գաւառին և արարին Նամակին Պատասխանին։

Յովսէփ եպ̃կս Այրարատոյ․ Սահակ եպ̃կս Տարօնոյ․ Մելիտէ եպիսկոպոս Մանազկերտոյ․ Եզնիկ եպիսկոպոս Բագրեւանդայ․ Սուրմակ եպիսկոպոս Բզնունեաց․ Տաճատ եպիսկոպոս Տայոց․ Թաթիկ եպ̃սկս Բասենոյ․ Քասու եպիսկ̃պս Տուրուբերանոյ․ Երեմիա եպիսկոպոս Մարդաստանի․ Եւղաղ եպիսկոպոս Մարդուղւոյ․ Անանիա եպիսկոպոս Սիւնեաց․ Մուշէ եպիսկոպոս Արծրունեաց․ Բարսեղ եպ̃սկս Մոկաց․ Սահակ եպիսկոպոս Ռշտունեաց․ Գադ եպիսկոպոս Վանանդոյ․ Եղիշա եպ̃սկս Ամատունեաց․ Եղբայր եպ̃սկս Անձեւացեաց․ Երեմիա եպ̃կս Ապահունեաց։ Այս ամ̃ եպ̃կսք և բազում քոր եպ̃սկսք և Պատուական Երիցունք ՝ի տեղւոյ տեղւոյ հանդերձ Սբ̃ ուխտիւ Եկեղեցւոյ՝ միաբանք և միա

միահամանք միահամուռ ժողովեալք 'ի Թա-
գաւորանիստ տեղին յարտաշատ, հաւանութբ
մեծամեծ նախարարացն և ամ՝ բազմութբ աշ-
խարհին՝ արարին նամակին պատասխանի։ Յով-
սէփ եպիսկոպոս հանդերձ ամ միաբանելովքս՝ 'ի
մեծամեծաց մինչև ցփոքունս՝ Միհր Ներսեհի
մեծի հազարապետի արեաց և անարեաց՝ բա-
զում խաղաղասէր մտօք բազմացի ողջոյն առ-
քեզ, և ամ մեծի սպահիդ արեաց։ 'ի նախնեաց
ունիմք սովորութի ածատուր պատուիրանաւ՝
աղօթս առնել 'ի վր կենաց թագաւորի, և
անձանձրոյթ խնդրել յայ վն երկայն ժամանա
կաց դորա, զի խաղաղութբ վարեսցէ զՏիեզերա
կան իշխանութիւ՝ զոր աւանդեալ է դմա յայ.
զի 'ի դորա յերկար խաղաղութեն և մեք առող-
ջութբ և ածպաշտութբ կատարեսցուք զկեանս
մեր։ Վ ասն նամակին (որոյ քո 'ի մեր աշխարհս
տուեալ էր յառաջ ժամանակաւ,) մի ոմն 'ի
մոգպետաց՝ որ կատարելագոյն էր 'ի դենին
ձերում, և դուք առաւել քան զընութի մարդ-
կան 'ի վեր համարէիք զնա, հաւատայնա յած
կենդանի յարարիչ երկնի և երկրի, և բան առ-
բան ելոյծ և իմաստյսյ ձեզ զօրէնս ձեր։ և
իբրև ոչ կարացիք բանիւ զդէմ նր ունել, մե-
ռաւ քարկոծեալ յորմզդէ արքայէ։ Իսկ եթէ
հաւատարիմ համարեսջիս զմեր բանս լսել 'ի
բազում տեղիս այդրէն յաշխարհիդ ձերում
գտանիցին գիրք նր, ընթերցիր՝ և անտի տեղե-
կանաս

կանոն։ Այլ՝ օրինացս մերոցս ոչ ինչ աներեւոյթ
են, և ոչ յանկեան ուրեք յաշխարհիս քարոզին.
այլ՝ համատարած ընդ ամ երկիր. ընդ ծով և
ընդ ցամաք և ընդ կղզիս։ ոչ միայն յարևմուտս,
և այլ և յարեւելս, 'ի հիւսիս և 'ի հարաւ և 'ի
միջոցդ՝ լի է հոծութ. Ո՛չ է 'ի մարդ ապաստան
եթէ վերակացուաւ տարածեալ ընդ աշխարհ.
այլ՝ ինքն յինքենէ ունի զհաստատութի. Ո՛չ
առ այլովք վատթարօքն վեհ երևի, այլ՝ 'ի
վերուստ յերկնուստ ունի զանսուտ օրէնսդրու-
թիւնն։ Ո՛չ միջնորդաւ, զի մի է ած, և չիք
այլոք բայց 'ի նմանէ. ոչ երիցագոյն և ոչ կրսե-
րագոյն։ Ո՛չ սկիզբն առեալ յումեքէ լինել
ած, այլ՝ ինքն ինքեամբ մշտնջենաւոր։ Ո՛չ 'ի
տեղւոջ ուրեք, այլ՝ ինքն ինքեան տեղի։ Եւ
ոչ 'ի ժամանակի իմիք, այլ՝ ժամանակք 'ի նմանէ
գոյացան։ Ո՛չ միայն քան զերկինս երիցագոյն,
այլ և քան զկարծիս մտաց մարդկան և հրեշտա-
կաց։ Ո՛չ ձեռաց 'ի տեսիլ տարրեղէն. և ոչ
անկանի ընդ տեսլեամբ ականց։ Եւ ոչ միայն ձե-
ռին չզննի, այլ և ոչ ընդ միտս ուրուք հար-
կանի. ոչ միայն մարմնականաց, այլ և ընդ ան-
մարմին հրեշտակաց. բայց եթէ ինքն կամի, ի-
րաց արժանաւորաց մտաց իմանի. այլ ոչ աչաց
տեսանի և մտաց ոչ երկրաւորաց, այլ՝ որ
յած են հաւատացեալ Քսի. և անուն է
նր՝ արարիչ երկնի և երկրի։ Իսկ յառաջ քան
զերկինս և զերկիր՝ ուր ինքնագոյ է նոյնպէս և
ինքն

ինքն անտանուն է, ինքն անժամանակ է։ Իսկ արարածոցս՝ յորժամ կամեցաւ, սկիզբն արար լինելոյ. ոչ յընչէ, այլ յոչընչէ. զի ինչ ան միայն է. և այլքս ամ՝ ի նմանէ ընչացան։ Ո՛չ եթէ յետոյ իբրև իմացաւ և արար, այլ՝ մինչև արարեալ էր նր, ՝ի կանուխ գիտութեն իւրում տեսանէր զարարածս։ Որպ և յայժմ՝ մինչև է գործել մարդոյ բարի ինչ կամ չար, այ յայտնի է անգործ մարդոյն՝ սոյնպ և յանժամ մինչև էր արարել զանեղսն։ Այլ կարգել և յարմարել կային առաջի նորա՝ իւրաքանչիւր մասանցն տեսակք իւր. մարդկան և հրեշտակաց տեսակքըն՝ և որ ՝ի տեսակին լինելոյ էին։ Եւ քանզի արարող զօրութ՝ ոչ կարէ խափանել զնր բարերարութին՝ մեր չարութիւ. որպ և եղև իսկ։ Եւ ունիմք դատաւոր՝ զաջն արարիչ։ Զեւք՝ որ զերկինս և զերկիր հաստատեցին, նոյնք՝ և տախտակս քարեղէնս փորագրեցին և ետուն մեզ դըպրութիւ, որ ունի զօրէնս՝ խաղաղականս և փրկականս. զի գիտասցուք զմի ած արարիչ երևելեաց և աներևութից. ոչ այլ և այլ իբրև թէ ոմն բարի և ոմն չար. այլ՝ մի և նոյն և համակ բարի։ Բայց եթէ թուիցի քեզ՝ չար ինչ գոլ յարարածս այ, առ համարձակ, զի թերևս ուսցիս զճշմարիտ բարին։ Զդևս չար ասացեր. գո՛ն և դեւք բարի. զոր և դուք և մեք՝ հրեշտակս անուանեմք։ Թէ կամին, և դեւք բարի լինին. թէ կամին, և հրեշտակք չար լինին։

Այդ

Այդ և 'ի մարդիկ երևին. և առաւել 'ի միոյ հօր որդիս, է որ հնազանդ և հպատակ է հօրն՝ և է որ չարագոյն քան զսատանայ։ Նաև մարդն իսկ առանձինն՝ յերկուս բաժանեալ տեսանի. երբեմն չար, և երբեմն բարի։ և որ բարին էր, նոյն և չարացաւ. դէպ եղև զի դարձեալ անդրէն 'ի բարի շրջեցաւ. և բնութիւն մի է։ Բայց այն որ ասեսն թէ՝ վասն Թզոյ միոյ՝ մահ արար ած, վատթարագոյն է պատառ մի մնդալաթ քան զԹուզ. այլ եթէ բան թագաւորին նկարի 'ի նմա, ոչ պատուաէ զնա, մահու պատուհաս ընդունի։ Իսկ արդ՝ չա՞ր արժան էր ասել թագաւորին. քա՛ւ. ես ոչ ասեմ. այլ՝ խրատ 'ի գործ արկեալ՝ զայլս ուսուցանեմ։ Յայնժամ էր ած նախանձոտ, թէ չէր պատուիրել չուտել 'ի ծառոյ անտի. այլ թէ յառաջագոյն կդուշայոյց, զբնական գութ սիրոյն իւրոյ յայտնեց նմա, իսկ մարդն արհամարհելով, ընկալաւ զպատիժ մահուան։ Բայց այն զոր ասացեր թէ՝ ած 'ի կնոջէ ծնաւ, յայդմ չէ՞ր քեզ արժան խորշել և փախչել. զի արհմն և ոլիզդ՝ 'ի հօրէ ծնան և ոչ 'ի մօրէ. որում թէ քաջ միտ դնես, և ոչ դու յանձն առնուս։ Եւ՛ միւս ևս այլ ծաղրագոյն քան զայդ, մինչ ած՝ 'ի կնոջէ ծնանի. եթէ ոք ընդ իւրում ծնողին անկցի։ Այլ առակաւին մի թէ 'ի բայց Թողացուցանէիր ըղփքումն տէրունեզ. և ընկերաբար գայիր 'ի պայքար, ( դիտեմ զի իբրև այլովք ածին յոյժ իմաս

տուն

տուն ես ) և մի՛ ծնընդեան Տեառն մերոյ ՚ի մէջ կուսէն՝ ո՛չ աւելաբանութի՛ համարէիր. այլ առաւել քան զարարչութի՛ն յոչ ընչէ զաշխարհս՝ մեծագոյն փրկութի՛ զվերջինն ժամանակի. ազատութի՛ մարդոյն ՚ի յանյաւուրութէ դնէիր, և բարերարութե՛ն ա՛յ՝ զազատութիւն ՚ի ծառայութէ։ Քանզի յորժամ լսես թէ յոչ ընչէ արար ա՛ծ զաշխարհս, բանիւ ծնունդ իմաջիր զարարածս. Իսկ քանզի ա՛ծ որ զայս մեծամարմին աշխարհս՝ առանց չարչարանաց ծնաւ, ապաքէն ա՛պ զհայր՝ դութ ունի ընդ սմա. զի ո՛պ ինքն անապական է, և առանց ապականութե՛ ծնաւ. իսկ սա կամօք զլորեալ ապականեցաւ. և անձամբ ես ոչ կարէր կանգնել և կալ յոտից վերայ. վա՛ զի էր ՚ի հողոյ. և անձամբ անձին արարեալ, անդրէն ՚ի նոյն բնութի՛ դարձաւ. իբր ոչ եթէ յօտար զօրուէ չարին ինչ ուրուք ընկալաւ զպատիժ պատուհասին, այլ ՚ի յիւրմէ հեղգուէ չլսեց բարերարին պատուիրանին, խաւարեցաւ ծառայական մտաւ մահունամբն՝ զոր կրեաց յանձն իւր։ Արդ՝ եթէ զմահ՝ չար ա՛ծն արար, զի՛նչ է գոյացութի՛ մահու. եբեր ՚ի միջի և ոչ ինչ. բայց զի զբարւոյ ա՛յ զարարածն խանգարեաց. թէ այդ՝ է, նմա և բարի իսկ ոչ մարթի ասել. այլ՝ կիսագործ ապականութու։ և որոյ ա՛յ արարածք եղծանելիք են, նմա և անեղծ ա՛ծ չըմարթի ասել։ Տէր ո՛ն անդր թողէք զյիմարուէ բարբանջմունս. միոյ աշխարհի երկու դ. հայեաք

ոչ

ոչ լինին. և ոչ մի արարածոց երկու անձք. Եւ
եթէ ժողհեսցին և լիցին երկու թագաւորք
միոյ աշխարհի, աշխարհն աւերի և թագաւո-
րութիւքն եղծանին: Աշխարհ նիւթեղէն է. և
նիւթս՝ որիշ որիշ են և հակառակ ընդ դէմ
միմեանց: Մի է արարիչ հակառակորդացս.
որ ածէ զսոսա 'ի լինելութի հաւանութե: Ոպ մա-
լեալ կակղէ զջերմութիւն հրոյ՝ օդոյն հաւա-
նութբ, և զսպառումն բրտութեն օդոյն՝ հրոյն
եռանդմամբ, սոյնպէս և զմանրամաղ փոշխա-
ցեալ հողս՝ ջրոյն խոնաւութբ զանգանէ: Իսկ
զ'ի վայր ծորելի բնութի ջրոյն՝ սալայատակ տրա
մայեալ հողոյն կափմամբ: Ջի եթէ միաբանէին
տարերքս, գուցէ ոք 'ի կարճամտաց և ած անա-
պական զնա կարծէր. և թողեալ զարարիչն՝
արարածոյս երկրպագութի մատուցանէր: Վա
այնորիկ որ արար զնա, զգուշացաւ յառաջա-
գոյն. զի հայեցեալ մարդիկ 'ի յանդիմանութի
ապականացու տարերցս, միայն անապական զկա-
ռավարն սոցա խմասցին. զմի՝ և ոչ զերկու. և
զնոյն՝ արարիչ չորեքկին նիւթոցս, յորմէ ամքնս
ծննդագործին հրամանաւ արարողին իւրեանց.
և շրջագայութբ չորից յեղանակաց կատարել
գործեն զտարեւոր սպասաւորութիւն. և չորե-
քեանն հային կամաց անկնարկելոյ Արարչին իւր
եանց. և ակայութն լծեալ են 'ի գործ հարկա-
ւորութե՝ չյափշտակելով զկարգ պատուոյն
միմեանց: Եւ ահա սարդաբար տասցեալ դիւրա-

տար

տար լուսաւորութիւն յականջս մտացն։ Զի այն որ հուրն է, գոյացութիւն եւ զօրութիւն խառնեալ է յերկս եւ մասունս. իբրեւ գտանի ջերմութիւն յոլովագոյն, 'ի քարինս եւ յերկաթս, եւ սակաւագոյն յօդ եւ 'ի ջուր. եւ ինքն առանձին ուրեք ոչ երեւի։ Իսկ ջրոյն բնութիւն գոյառանձին, գոյ եւ 'ի խառնուածս երկուց եւ մասանցն. յոլովագոյն 'ի հողաբոյսս, եւ սակաւագոյն յօդ եւ 'ի հուր։ Իսկ օդն՝ թափանցանց է ընդ հուրն եւ ընդ ջուրն. եւ 'ի ձեռն ջրոյն է կերակուրս աճեցականաց։ Նոյն այսպէս խառնեալ են տարերքս այս եւ գոյացեալ իբրեւ զմի մարմին, եւ ոչ կորուսեալ զիւրաքանչիւր բնութիւն. եւ ոչ երբէք զկայան առեալ անհակառակութիւն հայելով 'ի մի խառնին, որ զխառնուածս յարմարեալ կազմէ առ 'ի բնակութիւն կենդանեաց մեծին. եւ տեւողութիւն յարակուէ բոլոր աշխարհիս է իսկ։ Եթէ առ անբան աշխարհս՝ այսպէս հոգացանի ԱԾ, որչափ եւս առաւել առ բանաւոր աշխարհս մարդս։ Զոր եւ ոմն 'ի ձերոց իմաստնոց ասաց թէ, միհրն մծ՝ մայրածին է 'ի մարդկանէ, եւ համ հայր գքաջ եօթներորդաց մծոյն։ Եթէ հաւատալ արժան է առասպելաբանութեանդ՝ զոր եւ դուք գործով իսկ կատարեալ ցուցանէք 'ի դիմին ձերում, մեք ոչ եւս առասպելեալ հաւատամք. այլ աշակերտ եմք մեծի Մարգարէին Մովսիսի, ընդորում ԱԾ խօսեցաւ 'ի մորենւոջն 'ի սինա, եւ դէմ յանդիման օրէնս՝ գրեաց եւ ետ նմա եւ

ծանոյց

ծանոյց զնիւթեղէն աշխարհս իբրեւ արարած,
եւ զիւր աննիւթ էութիւնն՝ արարիչ նիւթոյս
յոչընչէ ։ եւ զերկինս երկնաւորօքն ծանոյց նմա,
զի գործք ձեռաց իւրոյ են բնակիչք երկնի՝
հրեշտակք, եւ բնակիչք երկրի մարդիկ․ բա-
նաւոր՝ մարդ եւ հրեշտակ միայն․ եւ՚ի վեր քան
զերկինս եւ զերկիր՝ ած ։ Եւ ամ արարածք ան-
բաւութ կատարեն զհրաման պատուիրանի նր․
ոչ երբէք անցանեն ըստ եդեալ սահմանն իւ-
րեանց․ քանզի մտաւորք են ։ Եթէ կայցեն ՚ի
հրամանի նր, անմահք են եւ որդիք Աստուծոյ ։
զբոլոր արարածս տուեալ է ՚ի ծառայութի․
զերկիր՝ մարդկան, եւ զերկինս՝ հրեշտակաց ։
Այլ եթէ ստունգանեսցեն եւ անցցեն զպա-
տուիրանաւն, զընդդէմն աստուծոյ գործես-
ցեն, յիւրաքանչիւր պատուոյն ընկալցին զանար-
գանս, զի երեւեսցի տէրութին անբամբաս, եւ
յանցաւորքն յանցանաց՝ ամօթալից ։ Իսկ եթէ
դու տգիտութե վրիպեալ ես, ես որ հաստատուն
գիտեմ, ոչ կարեմ գալ զկնի քոյոյ մոլորութդ,
եւ երկոքեանս յանգիւտ կորուստն մատնիմք․
Թերեւս եւ ես չարագոյն քան զքեզ ։ Քանզի
վկայ ունիմ ինձ զինքնասաց ձայնն Աստուծոյ՝
որ ասէ, ծառայ որ գիտէ զկամս տն իւրոյ եւ
արժանի գանի ինչ գործ գործէ, ըմպել ըմպէ
գան, այլ ՚ի սակաւագոյն. իսկ որ տեղեկագոյն
է կամաց Թագաւորին եւ յանցանէ ինչ յառաջի
նր, եւ առաւել բարեխօսի բազմապատիկ տանջի ։

Արդ

Արդ՝ աղաչեմք զքեզ և զամենայն որ ընդ քոյով իշխանութեամբ են. մի դու ընդդէմ բազմապատիկ տանջէր, և ո՛չ ես ըստ քեզ սակաւագոյն. Այլ ես և դու և ամենայն բազմութիւնդ հանդերձ արի Թագաւորաւդ՝ այնպէս աշակերտեսցուք Աստուածային գրոց, զի՛ ՚ի տանջանաց ապրեսցուք, և յանշէջ հրոյն զերծցուք. և զարքայութիւն ժառանգեսցուք, և անպաճոյր կենօքս զանանց մեծութիւն անվախճան ունիցիմք: Բայց յորմէ դուդ զարհուրեալ ես, դիւրահաւան լեր և վաղվաղակի աշակերտիս Ճշմարտութեան. Որդին ՚ի Հօրէ շառաւիղ յանմահից գնդէ ստամբակել և ՚ի բաց գնացեալ յերկնից ՚ի մեր աշխարհ եկեալ՝ պատիր բանիւք և սուտ խոստմամբք զանլինելի յոյսս առաջի դնել իբր և տղայ մանկանց՝ անփորձ և անկիրթ նորթեք մարդոյն, ՚ի վեր հայեցուցանելով զմիտս նոցա, ուտելով ՚ի պտղոյ ծառոյն. յոր Հօրն հրամայեալ չէր թալ, զի լիցի Աստուած. իսկ նոցա մոռացեալ զպատուիրանն Աստուծոյ, խաբեցան զկնի մոլար խաբէութեան. կորոյս՝ զոր ունէր զփառս անմահութեան, և չեհաս երազոյս կարծեցն լուսոյ և մերժեալ ՚ի կենաց տեղւոյն, ընկեցան յապականելի աշխարհս, յորում դուքեք բնակեալ այժմ և ցնորեալ մոլեք զկնի նոցա խրատուն, ո՛չ ևս ուտելով ՚ի պատուիրեալ ծառոյ. այլ զարարածս Աստուած ասելով, և անխօս տարերցս երկիր պագանելով, և անորովայն դիւաց՝ կերակուր մատուցանելով: Եւ՛ յանդուգն արարչէն ՚ի բաց մերժելով՝ ո՛չ յաջի՛ ՚ի չար

խրա

խրատուն. այլ կամի զի քան զինքն չարագոյնս արասցէ։ Վասնզի դեղն ոչ եթէ բռնաբար զոք վարեն ՚ի կորուստ, այլ զմեղսն քաղցրացուցանեն ՚ի կամս մարդոյն. և ողոքանօք ուսան զանուսմունս ՚ի խաբէութիւն. որպէս և բազում մարդիկ զընկերս իւրեանց՝ ՚ի գողութիւն և յանառակութիւն. Իբր ո՛չ եթէ բռնի ինչ վարելով. այլ՝ պատիր խաբէութեամբ տան գործել անթիւ չարիս. զոմանս ՚ի կախարդութիւն, զոմանս ՚ի պոռնկութիւն, և զոմանս ՚ի բազում իրս աղտեղութեան. և արդար դատաւորօք վրէժ առնուն մահուամբ չարի. Իբր ոչ եթէ բարի այ̃ դատաւորք իցեն արարուածք, և չարին՝ չարագործք. զի բազում անգամ և ՚ի բարի մարդկան չարք լինին, յետոյ և ՚ի չարագործնից անտի կատարելագոյն բարիք, և դատաւորք ստոյգ՝ որ դատին զչարագործս. ոչ եթէ չարք անուանին և չարչարին, այլ յոյժ բարիք և բարեգործք. և բնութիւն մի է և ո՛չ երկու. իսկ ՚ի միոջէ անտի գործք երկու. երևին ոմանց սատակիչ, և ոմանց պարգևատու։ Եւ եթէ ՚ի մարդիկ այս պաշտի, ՚ի ձեռն Թագաւորական վիճակին խրատու՝ խնամ տանել իւրում իշխանութեան, որչափ և առաւել այ̃ բոլոր աշխարհս. որ է̃ ամենեցուն կենս կամի, և ո՛չ է̃ մահ. իսկ ուր բազմացաւ յանցաւորութիւն, տանջեաց զնմին մահուամբ. իսկ ուր եղև ունկնդրութիւն հնազանդութեան, շնորհեաց զպարգևս անմահութեան։ Ա՛յն է Ճշմարիտ ա̃ծ ՚բոլորեցուն

մեր

մեր արարիչ, զոր դու աներևութանակ արձակ բե-
րանով՝ անմահ աներկիւղ համարձակութ՟բ հայ-
հայես․ Թողեալ զՅ՟ս Ք՟ս փրկական անունն՝
փանդուրակայ որդի անուանես, և մարդ մոլորե
յուսիչ կրծես, և զերկնից փրկութ՟ին աղաւաղես
և անարգես՝ի կորուստ անձին և բոլոր աշխար-
հիս․ զոր տալոյ և հատուցանելոյ ես զանան-
ցական վրէժս տանջանաց յանշէջ հուր սպառ-
նալեաց դեհենին՝ հանդերձ ա՟մ գործակցօք
քովք․ առաջնովք միջնովք և վերջնովք։ Այլ
մեք այսպէս գիտեմք զա՟ծ, և՛ի նոյն հաւատամք
յաներկբայս։ Ա՟ծ՝ որ արար զաշխարհս, նոյն
եկն և ծնաւ՝ի ս՟բ կուսէն մարիամայ, յառաջա-
գոյն նկատելով Մարգարէից, առանց իրիք
պատճառանաց մարմնաւոր կարգի։ Որ՟պ յոչ
ընչէ զայս մեծամարմին աշխարհս, սոյն՟պ ա-
ռանց իրիք մարմնական միջնորդի էառ մարմին
յանփորձ՝ի կուսէն։ Ճշմարտիւ՝ և ոչ ստուե-
րագիր երևմամբ, էր ա՟ծ ճշմարիտ․ ոչ՝ի լինելն
մարդ՝ կորոյս զա՟ծութ՟ին․ այլ՝ նոյն և մի։ Այլ
քանզի ոչ ոք կարէր տեսանել զանտեսանելին,
և մերձենալ յանմերձենալին, եկն եմուտ ընդ
մերով մարդկութ՟բ, զի մեք մտցուք ընդ նորա
ա՟ծութ՟ն։ Ո՛չ ինչ անարգանս համարեցաւ զգե-
նուլ զիւր ստեղծուած մարմինս․ այլ՝ մեծարեաց
իբրև զա՟ծաստեղծ զիւրգործ։ Ո՛չ առ սակաւ
սակաւ շնորհեաց ինչ սմա զանմահութե պա-
տիւն իբրև զանմարմին հրեշտակաց, այլ՝

միայն

միայնգամայն զբոլոր բնութի մարմնով լինել
և հոգւով զգեցաւ և միաբանեցաւ ընդ աստուածու-
թեն միութի և ոչ երկուութի։ Եւ այսուհետև
մի գիտեմք զԱծութին որ էր յառաջ քն զյաւ
նոյն և այսօր։ Այս Յիսուս Քս որ մարմնով
փրկեաց զբոլոր աշխարհս, սա եկն կամաւ՝ ի
մահ. և ոչ ինքն Աստուածութին գիտէ թանձրացաւ
յանապատ կուսէն. ծնաւ և պատեցաւ՝ ի խան-
ձարուրս և եդաւ՝ ի մսուր. և շարժեաց էած
զմոգսն յարևելից յերկրպագութի. սնաւ իբրև
զտղայ կաթամբ. աճեաց և մեծացաւ ամս երե-
սուն. մկրտեցաւ՝ ի Յովհաննէ յամլորդւոյն
՝ի յորդանան գետ. արար նշանս և արուեստս
մեծամեծս՝ ի մէջ հրէից. մատնեցաւ քահա-
նայից. դատեցաւ ՝ի պիղատոսէ պոնտացւոյ.
խաչեցաւ. մեռաւ. թաղեցաւ. յարեաւ յաւուր
երրորդի. երևեցաւ երկոտասան աշակերտացն,
և այլոց բազմացն աւելի քան զհինգ հարիւ-
րոցն երևէր նոցա յանկ զաւուրս քառասուն.
վերացաւ՝ ի լեռնէն ձիթենեաց յերկինս՝ յան-
դիման իւրոց Աշակերտացն. եւ նստաւ՝ ի
հայրենի աթոռն. խոստացաւ երկրորդ անգամ
գալ ահաւոր զօրութբ յարուցանել զմեռեալս,
նորոգել զբոլոր աշխարհս, առնել դատաստան
արդար՝ ի մէջ արդարոց և մեղաւորաց, տալ
պարգևս արժանաւորաց, և հատուցանել պա-
տիժս չարագործաց։ Որ այսմ ամի բարեբարու-
թեյ ոչ հաւատան յայսմ հաւատոյ զմեզ ոչ որ
կարէ

կարէ խախտել. ո՛չ Հրեշտակք, ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր, ո՛չ ջուր, և ո՛չ ամենայն ինչ և են դառն հարուածք: Ամենայն ինչք և ստացուածք մեր ի ձեռաց քոց, և մարմինք մեր առաջի քո կան ըստ կամաց քոց. արա՛ զինչ և կամիս: Եթէ սովին հաւատովք Թողուս ո՛չ յերկրի այլ Տէր փոխանակեմք ընդ քեզ: և ո՛չ յերկինս այլ՝ Ած փոխանակեմք ընդ Յի Քի, որ չիք այլ ած բաց 'ի նմանէ: Ըստ եթէ յետ այսր մեծի վկայութեան՝ այլ ինչ հարցանես, աւասիկ կամք զբոլոր մարմինս մեր տուեալ 'ի ձեռս քո. վաղ վաղակի արա՛ զինչ և կամիս. 'ի քէն տանջանք, և 'ի մեզ համբերութիւնք. սուր քո, և պարանոց մեր: Չեմք ինչ մեք լաւագոյն զառաջինսն՝ որ յայսր վկայութեան վն եղին զինչս և զստացուածս և զմարմինս իւրեանց: Զի եթէ և անմահ իսկ էաք, մահ էր և մեռանիլ մեզ վն սիրոյն Քի. քանզի նա անմահ էր և այնչափ սիրեաց զմեզ, մինչև զմահ յանձն էառ, զի մեքն մահուամբն՝ յաւիտենական մահուանէն ապրեսցուք: Եւ եթէ նա՛ յիւր անմահութիւն ո՛չ խնայէր, մեք զի կամօք եղաք մահկանացուք, կամօք մեռցուք վն սիրոյ նր, զի կամօք յանձնառուցէ զմեզ յիւր անմահութիւն: Մեռցուք իբրև զմահկանացուս, զի ընկալցի զմեր մահն իբրև զանմահից: Այլ դու յետ այսր ամի՛ զմեզ բանիւ՛ այլ մի՝ հարցաներ. զի ո՛չ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոյ մերոյ եթէ պատրիցիմք իբրև ըզ-

տղայս

տղայս, այլ՝ անլուծութ է էր․ որում չէ՛ք հնա-
քակել և 'ի բաց ելանել․ ոչ այժմ և ոչ առ յա-
պայ և ոչ յաւիտեանս և ոչ յաւիտենից յաւի-
տեանս։ 'Ի սմին մեծի հաւանութ՝ ամ բազմու-
թեան միաբանեալ 'ի մեծամեծաց մինչև 'ի փո-
քունս․ անսուտ երդմամբ եդին վկայութի կենօք
և մահու 'ի նմին կալ հաստատուն։ Եւ՛ իբրև
եհաս նամակն յարքունիս և ընթերցեալ 'ի
մեծի խորհրդականին, բազումք այնոքիկ էին, որ
իբրև լուէին գողէին զպատասխանին։ Թէ-
պէտ և երկնչէին յահէ տէրութեն, սակայն
ծածուկ առ միմեանս զնոյն վկայութիս գովութեց
տային․ առաւել քան ընդ ճարտարաբանութին՝
և ընդ համարձակութի աներկիւղութեն զար-
մանային։ Եւ՛ բազումք ահաբեկեալ՝ սկսան
զրահել պնդապէս․ և զնոյն շշնջիւն լսէին յա-
մենայն շրթանց։

Յաղագս այնր պատճառի որ էր 'ի հաստատել պատասխանւոյն
նամակին հաւատացելոց, գրգռեալ թագաւորն 'ի մոգպետաց
պատճառանօք կոչեաց զնոսա յերկրպագութիւն արեգական։

Իսկ չարաշէր մոգպետն հանդերձ մեծ
հազարապետաւն՝ ընչեալ չարախօսութ
և բորբոքեալ զթագաւորն իբրև զհուր անշի-
ջանելի․ Եւ՛ սկսաւ կրճտել զատամունս իբրև
զօրհասական վիրաւոր, և յայտ յանդիման ձայն
արձակէր առ մեծ հրապարակն և ասէ․ գիտեմ․

Ես

ես զչարութի̃ բազմութե̃ մարդկանս՝ որ թերահաւ-
տեն ՚ի մերոց օրինացս, եւ զկնի կախարդու-
թեան՝ մոլորեալ անդարձուք, եւ իմ՚ եղեալ է
՚ի մտի, եթէ ոչ թողացուցից ՚ի մեծամեծաց
հարուածոյն, մինչեւ ակամայ ՚ի բաց կացցեն
յայնպիսի վրիպակ օրինաց. եւ եթէ կարի ոք ՚ի
մերձաւորաց իցէ, զնոյն անցս եւ ընդ նա անցու-
ցից. Յայնժամ ծերն դառնացեալ՝ բանս ՚ի
ներքս ընկէց եւ ասէ ցթագաւորն, առ ինչ է
քո այդ մեծ տրտմութիդ. զի եթէ կայսր ոչ
եղանէ ը̃ք քո հրաման, եւ հոնք կան քեզ ՚ի ծա-
ռայութե̃, ո՞ր մարդ է յերկրի՝ եթէ կարօղ է
ընդ դէմ դառնալ քում հրամանիդ: տիրա-
բար հրաման տուր ՚ի ներքս, եւ զա̃մ որ ինչ ա-
սես՝ վաղվաղակի կատարի: Ե՛ւ թագաւորն ան-
դէն՚ի ներքս կոչեցե̃լ զդպրապետն՝ հրամայէր
գրել հրովարտակ ոչ ըստ սովորութե̃ն, այլ
բանս զայրագինս խրրեւառ ասելիս եւ անպի-
տանս, չյիշելով ամենեւին մեծամեծ վաստակս
տիրասէր մարդկանն. այլ միայն կոչելոյ հրա-
ման տայր յականէ յանուանէ՝ զորս ինքն ճանա-
չէր: որոց անուանքն են այսոքիկ. ՚ի տոհմէն
Արծրունեաց՝ Ներշապուհ անուն: ՚ի տոհմէն
Սիւնեաց Վասակ անուն: ՚ի տոհմէն Ռշտու-
նեաց Արտակ անուն: ՚ի տոհմէն Խորխոռու-
նեաց Գադէշոյ անուն: ՚ի տոհմէն Մամիկոնէից
Վարդան անուն: ՚ի տոհմէն Մոկաց Արտակ
անուն: ՚ի տոհմէն Ապահունեաց Մանէճ անուն:

՚ի

՚ի տոհմէն Ամատունեաց Վահան անուն. ՚ի տոհմէն Վահեւունեաց Գիւտ անուն. ՚ի տոհմէն Ընծայեցւոց Շմաւոն անուն։ Զայս նախարարքս յականէ յանուանէ կոչեցին ՚ի դուռն արքունի. եւ կէսքն առ նմա իսկ էին անդէն ՚ի կարաւանին. եւ այլք՝ ՚ի կողմանց ՚ի հիւսիսոյ՝ ՚ի հոնաց պահակին թողեալ էր զոմանս ՚ի նախարարացն անդէն յաշխարհին Հայոց։ Արդ՝ թէպէտ ոչ համագունդ ՚ի միոջ վայրի դիպեցան ամ̃քն, սակայն յառաջագոյն գիտացեալ զխորհուրդ չարաբարոյ բռնաւորին, եւ զհեռաւորսն իբրեւ զմերձաւորս՝ ՚ի միջոյ վայրի առ միմեանս համարէին։ Եւ ՚ի ձեռն սբ̃յն Յովսեփայ Եպ̃կսի նոքին ուխտիւ հաստատեալ, խաղային գնային յիւրաքանչիւր տեղեաց ՚ի դուռն արքունի. Եւ յայնժամ փութային վ̃ եղբարց եւ որդւոց եւ սիրելի դայեկասուն բնակչացն՝ որ չարաչար կային ՚ի մեծի նեղութեան. Վ̃որոյ եւ նոքա զանձինս ՚ի մահ մատնեցին ոչ ինչ զանգիտելով իբրեւ զանարի վատասիրտս. այլ յոյժ քաջութ̃ պնդեցին զանձինս, զի թերեւս կարասցեն փրկել զն̃ ՚ի մեծամեծ հարուածոյն. Եւ իբրեւ հասին ՚ի դուռն արքունի, եւ ՚ի մեծի շաբաթու զատկին յանդիման լինէին թագաւորին. Բայց թէպէտ եւ տեսանէին զեղբարս իւրեանց ՚ի մեծ վիշտս տառապանաց՝ ( որ վ̃ անուանն Ք̃Ի ձգնեալք էին պնդապէս ) ոչ ինչ տրտում եւ տխուր զերեսս

ցու

ցուցանէին հրապարակին։ Եւ՛ որչափ նոքա զուարթագին երևէին ամ̃յն, առաւել զմար- մնային չարասէրքն։ Եւ՛ զի օրէնք էին յա- ռաջ ժամանակաւ, յորժամ 'ի Հայոց այլուձի 'ի դուռն երթայր 'ի ձեռն պատուաւոր զօրա- գլխի ուրուք, այր ընդ յառաջ յղէր և հար- ցանէր զողջոյն և զխաղաղութիւն աշխարհին Հայոց. և երկիցս և երիցս անգամ զնոյն առնէր և զհանդէս գնդին տեսանէր ինքնին. և յա- ռաջ քան 'ի գործ պատերազմին հասանել, զգալն առնա՝ մեծ շնորհակալութի̃ համարէր, և առաջի թագաւորայն և ամ̃ մեծամեծայն՝ գովութի̃ մատուցանէր, և յիշէր զնախնեայն վաստակս, և զառն առնքաջութի̃ պատմէրնց̃։ Իսկ այն օր և մի ինչ ամենևին յայնմանէ ոչ յի- շէր այլ իբրև զչարադև մի՝ ոչ դադարէր յա- զել և շարժել զբուք ձմերայնոյ որպ̃ և նմանէր խակ էր ծովածուփ ալեկոծ խռովութ̃. ոչ դուզ նաքեայ վէր 'ի վերոյ, այլ անդատին յանդնդոյ բարձրանալ փրփրալ կուտակել՝ վիշապաձայն որոտալով, գազանաբար գոչելով՝ առ հասարակ դողայուցանէր զտիեզերական զիւր իշխանու- թի̃ն, որպ̃ զի փլեալ տարածանիցի՝ համատարած ամ̃ 'ի վր̃ լերանց՝ խորոց ձորոց, ապականել միանգամայն և զլայնութի̃ դաշտայն վայելչութ̃։ Մոռնչելով բարբառ արձակեայ և ասէ, եր- դուեալ իմ յարեգակն 'ի մեծն ած̃. ( որ Ջա- ռագայթիւքն իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս

տիեզերս, և ջերմութբ կենդանանանէ զամենայն գոյացեալս ) եթէ վաղի՛ ընդ առաւօտս ընդ երևումն սքանչելւոյն՝ ընդ դէմ զիւրաքանչիւր ծունր նմա ո՛չ կրկնեսջիք խոստովանելով զնորա, ոչ ինչ թողացուցից ձեր զամենայն ներողութիս չարչարանաց 'ի վերայ ածելով, մինչ ակամայ կատարիցէք զկամս հրամանաց իմոց :

ՅԱՂԱԳՍ ԱՅՆՐ ՊԱՏՃԷՆԻ [illegible] 'Ի [illegible]
ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅՆ՝ [illegible]
[illegible] •

Իսկ հաւատացեալքն հաստատեալք 'ի Քս, ո՛չ 'ի սառնամանեաց ձմերայնոյն հողմնայնին, և ո՛չ 'ի տապոյ խորշակին ջեռնուլին, և ո՛չ յահագին ձայնէն սարսէին, և ո՛չ սպառնալեաց տանջանացն զանգիտէին, այլ 'ի վեր հայեցեալք՝ զօրութին Քի յօգնութին եկեղ տեսանէին. և զուարթագին դիմօք և համեստ բանիւք՝ յառաջ մատուցեալ տային պատասխանի թագաւորին : Խնդրեմք 'ի քէն արքայ քաջ. ունկնդիր սակաւիկ մի բանից մերոց, և քաղցրութբ լուր՝ զոր ասելոց եմք : Քանզի յիշեցուցանեմք քեզ զժամանակն Շապհոյ արքայից արքային, որ էր հայր հաւոյ քո յազկերտի և ետ նմա Ա̄Ծ զերկիրն հայոց 'ի ծառայութի. Այլին օրինօք՝ որով և եմք մեք և վարիմք այժմ, և հարքն մեր և հաւք հարանց մերոց կացին

պնդմամբ 'ի ծառայութե̃ վաստակս , և սիրով կա-
տարէին զա̃մ հրամանս բանի նորա, և բազում
անգամ 'ի նմանէ մեծապատիւ լինէին ։ Եւ յայնց
ժամանակաց մինչև 'ի քո հայրենի աթոռդ՝ և
մեք զնոյն ծառայութի ծառայեցաք՝ բայց թերևս
քեզ լաւագոյն քան զառաջնոյն ։ Զայս ասելով
ցուցանէին զքաջութի արուեց լաւագոյն քան զա-
ռաջնոյն՝ ըս̃ զինուորական կարգին ։ Իսկ զմոլց
և զաւակից և որ այլևս են հարկք Ծին, բազ-
մագոյն քան առ հարբն նր̃ երթայր յարքունիս
նաև 'ի սբ̃ եկեղեցւոյն՝ որ էր ազատ 'ի վքն̃
ըստ կարգի նախնեայն մերոյ իսկզբանէ, և դու
ըս̃ հարկաւ եդեր, և մեք առ սէր քոյոյ տէրու-
թեդ՝ ոչինչ ընդդիմացաք ։ Արդ՝ վասն էր յու-
զեալ իցէ պատուհաս այս ա̃մ 'ի վր̃ մեր. ասա դու
մեզ զպատճառ մնասուն՝ եթէ օրէնք մեր իցեն
պատճառք անվաստակ լինելոյ առաջի քո ։ Իսկ
չարադեն լի ա̃մ նենգութ՝ զերեսս 'ի մէս կողմն
դարձուցեալ ասէ, մնաս համարիմ ընդունել 'ի
գանձ արքունի զհարկ աշխարհին ձերոյ, և անօ-
գուտ զքաջութի արուե ձերոյ ․ քանզի տգիտա-
բար մոլորեալ էք 'ի մեր Ճշմարիտ օրինացս.
զա̃ծս անարգէք, և զկրակ սպանանէք, և զջուրս
պղծէք, և զմեռեալս 'ի հող թաղեալ՝ զերկիր
ապականէք, և քրտիկար չառնելով՝ ոյժ տայք
խաւարամանեայն, և որ մեծն է քան զա̃մ հանապազ
'ի կամսս ոչ մերձենալով ․ Մեծապէս լինի
դիւայն խնդութ՝ չխրատելով ձեր՝ չպահելով
զա̃մ

ջնմ կարգամ մոգայ։ Տեսանեմ զձեզ եղբարք
զխաշինս ցրուեալս և վարատեալս յանապատի.
և յոյժ զեղջ է մնայ խմոյ՝ եթէ գուցէ որդիք
բարկացեալ վասն ձեր ՚ի մէնջ վրէժս առնուցուն։
Այլ դուք թէ կամիք կեալ և կեցուցանել զան-
ձինս ձեր, և մեծարանօք անդրէն յուղարկել
զոր ասացի՝ վաղիւ վաղվաղակի կատարեցէք։
Ցայնժամ երանելի նախարարքն՝ առ հասարակ
զձայնս լուեալ բարձին և ասեն յանդիման
ամենայն. մի՛ դու արքայ՝ և մի՝ դու զայդ բանդ
այլ առ մեզ ասեր. քանզի ոչ է եկեղեցի շինո-
ւած մարդկան. ոչ դուդ այլ ոք այլոյ կարծես
թէ արեգակն որդի է. ոչ միայն զի որդի չէ, այլև
ոչ կենդանի. իսկ՝ եկեղեցիք ոչ են պարգևք
թագաւորաց և արուեստք ճարտարութեանց. և ոչ
գիւտք իմաստնոց և աւարք քաջութեան զինուորաց.
և ոչ պատիր խաբէութեան դիւաց. Նաև բնաւ իսկ
ամենևին զինչ և ասես յերկրաւորաց կամ՝
՚ի վերինց կամ ՚ի վատթարաց, բնաւ ուրուք ՚ի
նոցանէ եկեղեցի ոչ գոյի։ Այլ՝ շնորհք են
մեծին Աստուծոյ ոչ միում ումեք ՚ի մարդկանէ
տուեալ. այլ՝ ամենայն բանաւոր ազգաց՝ որք վիճա-
կեալքն ՚ի բնակութեան ներքոյ արեգական։ Հի-
մունք նորա եդեալ են ՚ի վերայ հաստատուն վիմի.
ոչ ներքինք շարժել կարեն, և ոչ վերինք դըր-
դունեցուցանեն, Եւ զոր երկինք և երկիր ոչ
դողացուցանէ, մի՛ ոք ՚ի մարդկանէ խորխտայի
յաղթել նմա։ Հապա, որով օրինակաւ զինչ
կամիս

կամիս առնել՝ կատարեսցես. պատրաստ եմք ամենեքեան առ ամ մեքենայս հարուածոց տանջանաց՝ զոր պատրաստայր. ոչ միայն ՚ի չարչարել, այլ և ՚ի մեռանել. և եթէ դարձեալ զնոյն բան հարցցես, ՚ի միոջէ միոջէ լուիցես առաւել քան զդոյն պատասխանի. Յայնժամ դառնացեալ թագաւորին քան զլեղի, փլուզանէր անդէն ՚ի փորի զծով կամաւոր մաղձոյն իւրոյ. և ընդ քիթն և ընդ բերանն առհասարակ գոլորշի ջերմախառն ելանէր՝ իբրև ՚ի սաստիկ հնոցէ՝ ծուխ թանձրացեալ. Եւ առ չհանդուրժել սրտին՝ կոտորէր զզօրութիւն մարմնոյն, և ծակոտի զբազմամ թեր աման խորհրդոյն. Ցրուէր և վատնէր զամ խորհուրդն նենգութեան. և զոր ոչ երբեք կամէր իւրոյ սիրելեացն յայտնել, ակամայ առաջի ծառայիցն ՔՆի մերկանայր և դնէր զամ կարգաւ. Երեքկնէր և չորեքկնէր զանասուն երդումն յարեգակն և ասէր այսպէս. ոչ կարէք աւերել դուք զանխաբ ամուրս իմ. և ոչ որում չանկայցեալ էք՝ վաղվաղակի տամ զատանել ՚ձեզ. այլ զամենն զձեզ և որ ՚ի գնդի իցեն՝ չարաչար կապանօք ՚ի սաստատան տամ անցուցանել ընդ անձանապարհ տեղիս, ուր և բազումք ՚ի ձէնջ ՚ի խորշակէ սատակեսցին յերթալն. և մնացեալքն անկցին ՚ի բերդս ամուրս և ՚ի բանտս անելս. Եւ ՚ի ձեր ՏՆ առաքեցից զօրս անթիւս հանդերձ բազում փղօք. և զկին և զորդիս ՚ի խուժաստան խաղացուցանել. և զեկեղեցիս և

զոր

չոր անուանէք վկայարանս, քակեցից քանդեցից և յապականութի դարձուցից։ Եւ եթէ ոք ըն դէմ դարձեալ գտցի, կոխան եղեալ գազանաց անողորմ մեռցի։ Եւ ես զայս տեսեալ արարից և կատարեցից առ ճնայորդս աշխարհին։ Եւ վաղվաղակի հրամայեաց հանել զպատուական նախարարսն մեծաւ անարգանօք յերեսաց իւրոյ, և զգուշութբ հրաման տուեալ պահպանել տին, առանց կապանաց յիւրաքանչիւր վանս պահել։ Եւ ինքն զառածեալ՝ անդրէն դառնայր անմխիթար տրտմութբ յօթևանս անկանէր։ Իսկ հաւատացեալքն ճշմարտութբ 'ի ք̄ս ոչ ինչ թերահաւատէին յառաջին խրատու սբ վարդապետացն իւրեանց. այլ տակաւին խնդիր էին հնարիցն, թէ որպ զանձինս և զսիրելիս հանցեն 'ի մեծ նեղութենէ։ Եւ բազում անգամ ջանալով, և մեծամեծայն՝ որ օգնական էին նմ 'ի դրանն արքունի, խոստմունս մեծամեծս առաջի դնէին նոցա՝ առ 'ի յոյս կարասոյ և ոչ տակաւ զանձս առ ժամայն ծախէին 'ի նոսա։ Եւ իբրև յամ կողմանց եկն փակեցաւ անել արգելանինց, յայնժամ զխորհուրդն աբրահամու 'ի մէջ առեալ աղաղակէին և ասէին 'ի սիրտս իւրեանց։ Ամենեցուն մեր նուիրեալ զեղբարս և զորդիս և զմ սիրելիս ընդ կապանօք իբրև դաշնակ 'ի վր սբ սեղանոյն. ընկալ տր զբանանոր պատարագս մեր. և մի' տար զեկեղեցիս քո յայսն կատականց անօրէն իշխանիս այսորիկ։

Յուդ․

Յաղագս այնր պատճառի ընդ ձեռն ղեկային ղեկերթին եւ որհաւոր տըրս չարին, յաստուածս ՚ի ԱՃ որ չարածալս գիտէ՝ աղաւսէն վասն որպէս ըստ կարգիս չնախս նորին յեր ևայնա: տասի պարագել չարին հեղոյր ասացի նոյա պարագել երկրպագութեան, և հրաման տայր մոգաց՝ ըստ ընծայաբերութեան յաղագս խորենայ.

Մի ոմն ներքինի ՚ի խորհրդակցաց արքայի՝ ի ծածուկ ունէր զանքակ սէրն ՔՐԻ. քանզի մկրտեալ իսկ էր յաւազանն կենդանի, և մեծապէս հոգտանէր հնարից կենաց վիճակելոյն: Եւ իբրև ըստուգեաց ճշմարտիւ եթէ զոր սպառնացաւ թագաւորն զամ չարիսն, կամի անցուցանել Ը ՏՆ Հայոց (թէպէտ և ոչ ամենեցուն, այլ՝ սակաւուց ՚ի նցանէ) խրատեա և ուսոյց ելս հնարից, զի անգամ մի ՚ի նեղութէ զանձինս ապրեցուսցեն: Եւ մինչ դեռ գունդն կազմէին որ զնս չկօթակ արասցեն յանդարձ օտարութի, ոք և բազում նախարարս ՚ի վերայ Տէն արարին) ՚ի նմին ժամանակի գուժկան հասանէր ՚ի կողմանցն քուշանայ, թէ գունդ հասաւ ՚ի թշնամեացն՝ որ ելին աւերել զբազում գաւառս արքունի: և այս լինէր մեծ օգնութի նոյա յերկնից: Եւ անօրէնն՝ ձեռնելով տագնապէր զայր ուձին յառաջ արձակել. և ինքն փութով ստէպ զհետ երթայր. և խոր խոցեալ՝ զխորհուրդն յրուէր զառաջին հաստատուն երդմունս.

Իսկ

Իսկ երկիւղածայն Տն՟ զայս տեսեալ, մեծաւ
յուսով աղօթս առնէին և ասէին միաբան. դու
Տր՟ ամի՟ որ գիտես զծածուկս սրտից մարդկան,
և յայտնի են առաջի քո ամ՟ աներևոյթք խոր-
հրդոյ, և ոչ ինչ խնդրես վկայութ՟ յերևելեաց,
որպ՟ զի և զանգործս մեր տեսանեն աչք քո.
Արդ՝ առաջի քո հեղումք զխընդրուածս.
ընկալ Տր՟ զծածուկ աղօթս մեր, և կատարեա
զմեզ ՚ի հաճոյս պատուիրանաց քոց, զի ամա-
չեսցէ չարն, որ խրոխտէր մարտնչիլ ընդ մեզ
իշխանութբ՟ անօրինին. Հարժեա Տր՟ զկամակոր
խորհուրդս Նենգաւորին և խափանեա զկամս
ամբարշտութե՟. և դարձո զմեզ խաղաղական
խորհրդով անդրէն ՚ի սբ՟ եկեղեցին, զի մի՝
յանկարծակի յափշտակեալ աւերեսցի չարա-
չար ՚ի թշնամեաց. Եւ անձամբ իւրեանց զայս
ուխտ եդեալ անքակութբ՟ ընդ ամ՟ հաստատուն
կային ըստ առաջին խորհրդոյն. պատգամ՚ի
ներքս յղէին զնոյն խրատ տուին իւրեանց իբրու
թէ կատարեսցին կամք անօրէնութեն՟ նր՟. Զայն
իբրև լուաւ, յոյժ ցնծայր բարձրացաւ թա-
գաւորն, կարծեցեալ զդիւն հասանել նմա
յօգնութ՟ շրջել և աւերել զհաստատուն խոր
հուրդս ծառայիցն Աստուծոյ. Եւ ահա մատու-
ցանէին երկրպագութ՟ արեգական՝ պատուեալ
զնա զոհիւք և ամ՟ օրինօք մոգութեն՟. Եւ զայս
ոչ կարաց իմանալ ցնորեալն, թէ անստուեր
լոյս արեգականն արդարութեն՟ սպառէր և մա-

չէր

չէր զխաւար խորհուրդս նր, և եղծեալ այսպ
կանէր զամ խեղաթիւր կամս նր ։ Եւ կուրա-
ցեալ ՚ի Ճշմարիտ յայտնութէն, ոչ իմացեալ
զպատրանս խաբէութեն՝ որով վրիպեալն, հե-
ղոյր առաջի նց զպարգևս երկրաւորս. և
վերստին զպատիւ և զգահս ամյն նորոգէր
յառաջ մատուցանելով երևելի առնել ընդ
ամ տիեզերական իշխանութն. և անբաւ առա
տութբ ագարակս և աւանս միում միում նց յար
քունիսն շնորհէր. և սիրելիս և բարեկամս
կարդայր զնս. և առ հպարտ յանդգնութեան
մտայն կամակորութե՝ կարծէր թէ փոխանա-
կեսցի Ճշմարտութն ընդ ստութե ։ Եւ զայս արա-
րեալ՝ բազում այրուձի գումարէր ըն նս. և ՚ի
մոգուց ոչ սակաւս աւելի քան զ 700 վարդա-
պետս յղէր ընդ նոսա. և զմեծ ոմն իշխան՝
մոգպետ կացուցանէր ՚ի վերայ նց ։ Խոստանէր
և աղաչէր պատուիրելով, եթէ մինչ ես ՚ի
պատերազմէս դարձեալ գայցեմ խաղաղութբ,
ձեր արարեալ և կատարեալ իցէք զամենայն զբ
կամաց իմոց ։ Եւ այսպէս շքով և պատուով
առաջնորդէր նց զերկայնութի Ճանապարհին
յանդրէն յերկիր հայոց ։ Եւ ինքն աւետիս
խնդալիս առաքէր յաթրուշանս բազումս, գրէր
և ցուցանէր մոգաց և մոգպետաց և ամ մեծա-
մեծ կողմանաց, կողմանց աշխարհաց, որպ դից
օգնականութբ զգործ քաջութե իմոյ յառաջ մա-
տուցեալ. Իսկ խորհրդականքն այնուհետև

յարու

յարուցեալք յիւրաքանչիւր խաւարայինս դարա-
նացն, իղձք լինէին վաղվաղակի զհրամանն կա-
տարել: Զայն արարեալ յաշխարհս հեռա-
ւորս, միանգամայն խաղալ գնալ յերկիրն արե-
մտից: Եւ մինչչեւ հասեալ էին յաշխարհն
մեծ հայոց, փայտս ընկենուին և վիճակս ար-
կանէին եթէ ո՞ր լեզու՝ որում դասու հասցէ
յաշակերտութի: զի առ հասարակ հրաման ա-
ռեալ էր յարքունուստ, որպէս հայոց աշխար-
հին, նոյնպէս վրաց և աղուանից և լփնաց.
աղձնեաց և կորդուաց և ծօդէից և առաստան. և
այլ և որ ևս ուրեք ուրեք՝ ի ծածուկ յիշխա-
նութեն պարսից ունէին գքրիստոնէութի: Եւ
անզգայ յորձակմամբ յաւարի առնուլ փու-
թային զգանձս սրբ եկեղեցեացն. և այնուհետև
միմեանց պատահէին իբրև զգեւս և լինէր
գունդ զօրաց բազմաց: Եւ չարաւէրն սատանայ՝
իբրև զզօրավար ՝ի մէջ նց երևէր, և անդադար
յորդորելով զամենեսեան ճեպեալ փութայո-
յանէր: Կէտ եդեալ զժամանակն զամիսն վեց
երրորդ՝ տագնապէին և սովայէին արքունի
հրամանաւ մինչև ՝ի նաւասարդէ ՝ի նաւասարդ
Աւէ. յամ տեղիս որ իցեն ընդ իշխանութբ
թագաւորին մեծի, բարձցին կարգ եկեղեցւոյ:
փակեսցին և կնքեսցին դրունք սրբ տաճարաց:
գրով համարեսցեն նուիրեալ սպասքն յարքու-
նիս: Լռեսցեն ձայնք սաղմոսաց. և դադարես-
ցեն ընթերցուածք անսուտ մարգարէիցն:

Քահա

Քահանայք մի՛ իշխեսցեն 'ի տունս իւրեանց
աստուածային զժողովուրդս։ Եւ հաւատացեալք
'ի քեզ՝ արք և կանայք՝ որ բնակեալ են յիւրաքան-
չիւր մենաստանս, փոխեսցեն զհանդերձս իւ-
րեանց՝ ըստ աշխարհական կարգաց։ Դարձեալ
և կանայք նախարարացն՝ կալցին զուսումն
վարդապետութեան մոգաց։ Ուստերք և դստերք
ազատաց և շինականաց՝ կրթեսցին 'ի հրահան-
գըս նոյնոյն մոգուց։ Կարձեսցին և արգելցին՝
օրէնք սր̅ աւետարանին, զոր ունին 'ի նախնեացն
ը̅ կարգի Քրիստոնէութեան։ Այլ՝ փոխանակ
միոյ կնոջ՝ բազում կանայս արասցեն ազգդ
հայոց։ Դստերք՝ հարց լինիցին. և քորք եղբարց
և մարք մի՛ ելցեն յորդւոց. այլ և թոռունք
ելցեն յանկողինս հաւուց. Պատրուճակք՝ անյաղք
մի՛ մեռցին. եթէ յօդեաց և եթէ յայծեաց
և եթէ յարջառոյ, եթէ 'ի հաւուց և եթէ 'ի
խոզից։ Հայրք առանց փանդանի մի՛ զանկցին։
Ծիրտք և քակորք՝ 'ի կրակ մի՛ եկեսցեն։ Ձեռք
առանց կովմիզոյ մի՛ լուասցին։ Ընջրիք և աղ-
ուեսք և նապաստակք մի՛ մեռցին։ Օձք և մո-
ղէզք՝ գորտք և մրջմունք՝ և որ այլ ևս խառ-
նաբնդոր բազմաձծիք են, մի՛ կայցեն. այլ
թուով և համարով՝ 'ի մէջ բերցեն ըստ ար-
քունի չափոյն։ Եւ՛ որ այլ ևս ինչ սպասք իցեն
կամ զոհից կամ ըսպանդից ըստ տօնականին
և ըստ կաղճաթիւ մոխրաչափ կարգին։ Զայս
ամ̅ զոր ասացաք, առաժամանակ մի մինչև 'ի
գլուխ

գլուխ տարւոյն կատարեցեն ամենեքեան. և զայն ամ՝ առ յայս պատրաստեցեն. իսկ՝ զայս ամենայն հրաման պատուիրանաց ասել մոգուց և մոգպետաց, զոր և զգիշեր փութային հասանել յՃն հայոց. և յոյժ խնդութեն՝ ոչ երբեք յագեին երկայնութ Ճանապարհին.

## Գլուխ Գ.

Երրորդ՝ վասն [illegible] Եկեղեցւոյ. Յաղագս այնր պատճառի՛ ի բռնութեան երրորդի գլխոյս [illegible] յանձնառութեան [illegible] Փրկութեան՝ [illegible].

Թէպ և ոչ կարեմք բաւական ասել զամ՝ չարիսն՝ որ անցք անցին անդէն ՚ի կարաւանին ընդ գունդն հայոց, սակայն և ոչ լռել կամիմք ծածկելով զվիշտս նեղութեն. այլ ասասցուք փոքր՚ի շատէ, զի ձայնակից լիցուք այնոցիկ՝ որք դառնացն զմեզ ողբայինզի և դու իբրև լուիցես, ոչ սակաւ արտասուս հեղուս ՚ի վերայ ազգիս թշուառութեն. Զի ահա անդէն ՚ի մեծ բանակին պարսից՝ յազգաց ազգաց որք էին հաւատացեալ ՚ի սուրբ աւետարանն քրիս-իբրև տեսին զչար յանձնառութին հայոց, յոյժ հարան ՚ի միտս իւրեանց. և կործանեցան անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց. Բազումք ՚ինչ թախծեալ ՚ի սուգ ծանրութ, հարեալ զգլուխ և դառնացեալ յարտասուս, եկին յանդիմանեցին

ցին կ՚նախարարսն. և յոյժ դըսրովեցին զուխտ
քահանայութեան Զզուեցին զամենայն և առեցին, զի՛
առնիցէք զմեզ կտակարանսդ. և յո՞ տանիցէք
զպապս տէրունեան սեղանոյ։ Մոռանայցե՞ք
տրդեօք զհոգևոր օրհնութիւնսդ. և կամ լուեալ
դադարիցե՞ք ՚ի մարգարէական ձայնիցդ։ կա-
փուցէ՞ք զաչս յընթերցուածոց. և խցէ՞ք զա-
կանջս ՚ի լսելոյ։ Մի՞ թէ զմտաւդ անմոռա-
ցութի ոչ յիշիցէք. զինչ առնիցէք զպատուի-
րեալն ՚ի տնէ, որ ուրասցի զիս առաջի մարդկան,
ուրացայց եղէց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ
յերկինս և հրեշտակաց նորա։ Վարդապետք
էիք առաքելական քարոզութեան. արդ աշա-
կերտք լինիցիք մոլար խաբէութեան։ Ուսուցիչք
էիք ճշմարտութեանն, արդ ուսանիք զպատիր
խաբէութիւն մոգուց։ Քարոզք էիք արարչա-
կան զօրութեան. արդ զտարե՞րս Աստուած խոստովա-
նիք։ Յանդիմանիչք էիք ստուեն. արդ և քան
զսուտն ստագո՞յնք լինիցիք. ՚Ի հուր և ՚ի հողի
էիք մկրտեալք. արդ ՚ի մոխիր և յաճի՞ւն թա-
ւալիցիք։ Կենդանի մարմնով՝ և անմահութեան
էիք սնեալ. արդ ՚ի ճենճերս և ՚ի շարաւս աղտե-
ղի՞ս մրճոտիցիք։ Տաճարք էիք Հոգւոյն սրբոյ.
արդ զոհարան դիւա՞ց լինիցիք. Քնազգեստք
էին ՚ի մանկունս. արդ մերկացեալ ՚ի փառաց,
դիւաբար՝ արեգական կաքաւիցէք։ Որդիք և
ժառանգ էիք արքայութեանն. արդ անձամբ
զանձինս արարե՞ք ժառանգս գեհենի։ Նոյա

էր

էր սպառնացեալ զհուրն անշէջ. ընդէ՞ր դուք
ընդ նմա այրեցեալ տոչորիք։ Նոյա պատրաստ
որդն անքուն. իսկ արդ դուք պարարիցէ՞ք
զմարմինս ձեր նմա կերակուր։ Խաւարն արտա-
քին թանձրացեալ պահի նոյա. դուք լուսա-
զգեստքդ ընդէ՞ր յուղարկեցայք ընդ նոսա ՚ի
նոյն խաւարն։ Նոքա ՚ի վաղնջուց իսկ էին
կուրացեալք. զհետ կուրացն և դուք կուրա-
ցայք։ Նոյա էր փորեալ զխորխորատն. դուք
ընդէ՞ր լցէք յառաջագոյն։ Երբ ուսանիցէք
զբազմաթիւ անուանս մեղաց նոցա, (այն՝ որ
չէք ուրեք ՚ի միջի և ոչ մի) թեթևացեալք ՚ի
ծանրբեռնանց՝ անձամբ անձին առէք զբեռն
ծանրութեն։ Ազատեալքդ ՚ի ծառայութենէ չար-
չար մտէք յանազատելի ծառայութիւն։ Եթէ
գիտէիք դուք և երևէր ձեզ յայտնի, սուգ-
առին երկինք ՚ի վ՟ր ձեզ. և թախծեալ երկիր
՚ի ներքոյ ոտից ձերոց։ Հրեշտակք ՚ի վերուստ
են ձեզ բարկացեալ. և յերկրէս՝ մարտիրոսքն
են ձեզ ցասուցեալ։ Ողորմիմ ողորմիմ սիրե-
լեաց ձերոց. և բազում անգամ ողորմիմ ան-
ձանց ձերոց։ Զի եթէ մարդոյ փրկեալ էր
զձեզ ՚ի ծառայութէ, և դուք անձամբ զանձինս
պղծում ՚ի ծառայութի արկանէիք, ՚ի մեծ բարկու-
թեդէիք զառաջին տո՞ւն ձեր։ Իսկ արդ՝ զի՞նչ
առնիցէք զԱ̄Ծ [illegible] հրամանն, ես եմ Ա̄Ծ, և
չիք այլոք բայց յինէն. և ոչ զկնի իմ այլ լիցի
Ա̄Ծ. Ա̄Ծ նախանձոտ եմ ես. Հատուցանեմ
զմեղ։

զմեղս Հարց յորդիս, մինչև ցերօթն դարս. Իսկ եթէ որդիքն արդարք վն Հարցն մեղաց ընդունին զպատուհասն, յորժամ ինքեանք իսկ որդիքն մեղիցեն, ո՞չ ապա միանգամայն զանձնինս և զՀարցն տայցեն ՚ի միասին։ Դուք էիք մեր ամուր ապաստանի. յորժամ աստի վտանգ հասանէր մեզ, առ ձեզ յանդորր եղանէաք. արդ մեծ ամուրդ այդ՝ հիմն ՚ի վեր տապալեցաւ։ Դուք էիք մեր պարծանք առ թշնամիսն Ճշմարտութե. արդ դուք եղէք մեզ նախատինք առ նոյն թշնամիսն։ Յայժմ վն ձերոյ Ճշմարիտ հաւատոյն՝ և ՚ի մեզ փոքր ՚ի շատէ խնայէին. արդ ՚ի պատճառս ձեր՝ և զմեզ անողորմ դատին։ Ո՛չ միայն զանձանց դատաստան տալոց էք առաջի ահեղ ատենին այ, այլև բազմաց ամցն, որ ՚ի ձեր պատճառս զնս ևս չարչարեսցեն։ Զայս և առաւել քան զայս՝ խօսեցան ընդ մեծամեծաւ աւագանոյն, և յաւելին ցաւս ՚ի ցաւոց վերայ. Յայտնել և ցուցանել նոցա զխորհուրդն ո՛չ կարէին. լռել և չառնել պատասխանի անհնար էր։ Հեղձամղձուկ աղել մեծապէս յարտասուս հարկանէին։ Ընդ նոյն դառնացեալ լսօղք և տեսօղք, յանմխիթար սուգ լինէին ամքն։

Յաղագս այնր պատճառի էր, [illegible] ուրացողա-
նին հաւատացելոց՝ ժողովեալ զօրութն հայոց ՚ի [illegible]
[illegible] և աղօթից յաղթեցին չարաց։

Յայնմ ժամանակի քահանայք՝ (որ էին
անդէն 'ի զօրուն) առ չժուժել
թրտից բարկութե՝ քակեալ որոշեցան 'ի նախա-
րարայն և յոյժ բազմուէն. և զմի ոմն դեսպան՝
ձիով փութանակ առաքեցին յաշխարհն Հայոց.
գոյժ 'ի բերան առեալ, և զօձիս պատառեալ՝
հասեալ 'ի ժողովս եպիսկոպոսացն, մեծապէս յար-
տասուս հարեալ կայր, և պատմէր զամ անցս
չարչարանացն, այլ ո՛չ յայտնէր նոցա զծած-
կութիւն խորհրդոյն. Յայնմ ժամանակի սփռե-
ցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր յիշխանութիւնս,
'ի գեօղս և յագարակս, և 'ի բազում ամուրս
լեռնային գաւառացն. գրգռեցին ժողովեցին
զբազմութիւն արանց և կանանց. զշինականաց և
զագարակաց. զքահանայից և զմիայնակեցաց.
խրատեցին պնդեցին և արարին զամենայն զինա-
ւորս Քի։ Եւ առաջին բան խորհրդին՝ այս
հաստատեցաւ։ Ձեռն եղբօր հարազատի՝ 'ի
մերձաւոր իւր լիցի, որ անցեալ է ըստ ուխտ
պատուիրանին այ։ Մի՝ խնայեսցէ հայր յորդի.
և մի՛ ակնն ածուսցէ որդի հօր պատուոյ. և
ծառայ՝ դարձցի ընդ դէմ տեառն իւրոյ. Օրէնք
Ածայինք կայցեն թագաւոր 'ի վր ամի. և 'ի նմին
օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժ դատա-
պարտութե. Եւ իբրև այս այսպ հաստատեցաւ
կազմեցաւ, երևեցան ամքեան զինեալք և սաղա-
ւարտեալք. սու՛ր ընդ մէջ և վահան 'ի ձեռ-

ռին

ուխն, ո՛չ միայն արանց քաջաց. այլև կանանց առնականաց։ Իսկ գունդն Հայոց՝ ամ օգնականօքն հանդերձ և ամ մոգուցն բազմութբ՝ յամենեանն չորրորդի եկին հասին յաշխարհն Հայոց. ՚ի գեղաքաղաք մի՝ որում անուն էր Անգղ՝ Բանակեցան բոլորեցան զետեղեցան յամ կողմանց անդր. Ժողովեցան և եղեն անթիւ բազմութի։ Եւ եղև յետ աւուրց քան և հնգից, մոգպետն ինքնին մոգօքն հասանէր մեծաւ զօրութ՝ քակել զդրունս եկեղեցւոյն յաւուր միաշաբաթուն. զփորձ առնուլ՚ կամէր զառաջարկութե գործոյն։ Իսկ՝ սրբն Ղևոնդ երէց միաբանութ առաջին խորհրդովն՝ բազում ուխտիւ ՚ի տեղւոջ անդ պատրաստական դիպեցաւ թէպէտ և ո՛չ էր տեղեկացոյն մըտացն ամյն նախարարացն, և ո՛չ ուժոյ մոգպետին զօրութե. Ո՛չ եկաց մնաց ամ եպիսկոպսն. և ո՛չ առ սակաւիկ մի համբերեալ՝՝ անօրէն իշխանին թուլացուցանել. այլ՝ բազում ամբոխիւ աղաղակի՝ զօրացն և մոգացն հասուցանէր։ Քանզի վերդս ՚ի ձեռս առել՝ զկառափունս մոգացն և մոգպետին ջարդէին, փախստական յիւրաքանչիւր վանս արկանէին, և ինքեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոջն՝ զՏէրունի կանոնն կատարէին՝ մինչև ՚ի նոյն միաշաբաթի անդադար լինելոյ։ Եւ յայս տագնապ խռովութեանց՝ ամ կողմանց յաշխարհէն Հայոց՝ բազմութի արանց և կանանց՝ ՚ի տեղւոջն

Հասա

հաստատէին․ Եւ մինչ էր տեսանել զմեծ աղէտ տարակուսին։ Ոմանք զպարտօսրն արձակելով յաչաց՝ իբրև աղբերականց հոսէին․ և այլք բարձրաձայն աղաղակաւ՝ իբրու մին թէ՝ զեր-կինս դողդողացուցանէին․ Իսկ կէսքն խիզախե-լով և՚ իղէն ընթանալով զմահ քան զկենս ընտ-րէին։ Իսկ ոմանք ՚ի բաց տխուր եկեղեցւոյն՝ զամենատարածն ՚ի ձեռն առեալ՝ աղօթիւք առ Ա̄Ծ կարդային․ Եւ այլք ըղձային զպատառուածս երկրին, զի անձանց լիցի գերեզման։

Յաղագս այնր զոր մի թէ, փոխանակեալ մոգպետին ՚ի զինուորացն [illegible] ՚ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] հայսմայնք [illegible] առ մորգաբանն. որ ոչ [illegible] յեալ [illegible] յամառի ՚ի նոյն։

Եւ այսպէս չարաչար տագնապի ՚ի մէջ մոգպե-տին հալածանէին։ բազում անգամ աղաչէր զօգնականն իւր, զի ՚ի մահուանէ կարասցէ զնա ապրեցուցանել, և անդէն յար-քունիս ողջանդամ հասուցանել։ Այլ մ̄ք գոր-ծոյն՝ (յոր եկեալն էր) ատեայէր զնա և ասէր, թող զբեմ և յուցանեմ մեծ թագաւորին, զի ՚ի բաց թողցէ զայսպիսի իրաց առաջարկութիւն։ Զի եթէ իմքեանք [illegible] մեր եկեսցեն մեզ յօգնութի. չէ՛հնար օրինաց մոգուց ՚ի հայս առնուլ զհաստատութի. ո՞չ զփորձ առի միա-բանութն ուխտին եկեղեցւոյն։ Զի թէ և էին

զօրք

զօրք աշխարհիս մոգ, ոչ ինչ խնայէին 'ի նոսա սատակմամբ, ոչ միայն զարտաքինսն, այլև զեղբարս և զորդիս և յա̃մ մերձաւորս իւրեանց. նաև ոչ յանձինս իւրեանց. Մարդք՝ որ ոչ 'ի կապանաց զանգիտեն, և ոչ 'ի տանջանաց երկնչին, և ոչ 'ի ստացուածոց պատկառին. և որ յետին չարն է քան զա̃մ չարիս, զմահ քան ըզկեանս ընտրեն: ո՞ է որ կարէ դոցա դիմակաց լինել: Լուեալ իսկ, էր իմ 'ի նախնեաց մերոց, եթէ յաւուրսն շապհոյ արքայից արքայի, իբրև սկսաւ ուսմունդ այդ աճել և բազմանալ և լնուլ զա̃մ երկիրն պարսից, և նա անդր յարևելս անցանել (իսկ որ վարդապետք էին օրինացն մերոց, յորդորեցին զթագաւորն՝ զի մի՛ բնաւ բարձցին օրէնք մոգութե̃ յաշխարհէն) ետ հրաման սաստիկ, զի լուեալ դադարեսցէ Քրիստոնէութե̃. Իսկ որչափ նոա կարծելով արգելուլ կամեցան, և ևս քան զևս աճեցին և բազմացան և հասին մինչև յաշխարհն քուշանաց, և անտի հարաւակողմն մինչև 'ի հնդիկս տարածեցան: Իսկ այսպէս աներկիւղ և համարձակ էին յաշխարհին պարսից, մինչև յա̃մ քաղաքս աշխարհին՝ եկեղեցիս մեծամեծս շինեցին, որ դանդուցանէր պայծառութբ̃ զթագաւորական արքունեօքն: Շինէին և վկայարանս իմն անուանեալ, և զնոյն զարդ՝ եկեղեցեայն զարդարէին և յա̃մ տեղիս և յնապատս միայնանոցս շինէին: Իբրև ոչ ինչ երեւէր օգնականութի̃ ուստեք,

յայտնի աճելով աճէին և բազմանալով բազմանային. և մարմնաւոր մեծութեք մեծանային։ Զպատճառս հարստութեան մեք ինչ ոչ գիտեմք. բայց այսչափ ինչ ճշգրտիւ իմանամք զի տիեզերք ած զկնի ուսմանն նց գնային։ Թէ պէտ և էարկ 'ի նս Թագաւորն զձեռս իւր խստութե, և զբազումս կալաւ 'ի նոցանէ և չարչարեաց, և զեւս բազումս մահուամբ սատակեաց, դառնացաւ և ձանձրացաւ յանձն իւր, և զնս ոչ կարաց նուազեցուցանել 'ի բազմութենէ. Դարձեալ թէպ փակեաց և կնքեաց զդրունս եկեղեցեաց ընդ ամ աշխարհն պարսից, նք զամ տուն եկեղեցւ արարին, և յամ տեղւոջ զիւրեանց օրէնքն կատարեցին. և զանձինս իւրաքանչիւր վկայարանս համարէին. և լաւագոյն զչինուածս մարդկեղէնս քան զհողեղէնս հաշուէին. Սուրբ պաշտողացն բթեցան, և նոցա պարանոցքն ոչ ձանձրացան։ Աւարառուք ըստացուածոց նոցա' աշխատեցան, և աւարն' օր քան զօր աճեցեալ բազմանայր. Արտմտեալ էր Թագաւորն' և յոյժ դառնացեալ դահիճք բարկուէ, իսկ նոքա արթունք և զուարթունք, և խնդալից է ունէին զամ հարուածս տանջանաց; և սիրով տանէին զամ յափշտակութի ընչից իւրեանց. Իբրև ետես Թագաւորն թէ գրոհ տուեալ դիմեցին 'ի մահ' իբրև խաշինք սրբ յաղն երկնաւոր, արգել և ճախրեաց 'ի նոցանէ զհարուածս տանջանացն. և հրաման ետ մնալ

և

և Մոգպետայ զի մի՝ ամենևին ոք խորհեսցէ զնա՛
այլ հաստատեալ կայցեն աներկիւղութ յիւրա-
քանչիւր ուսմունս. մինչ և անդիկն՝ հայն և
քրիստոնեայն՝ և որ այլ բազում՝ կեշտք են 'ի
կողմանս կողմանս Ճին պարսից։ Եւ այս էառ-
երկիրն զխաղաղութի հաստատուն, և լուեալ
դադարեցին ամ խռովութիք յուզմանցն։ Վասն
զի ընդ մեր աշխարհին շարժման՝ և արևմուտք
ևս մեծապէս շարժեցան, և ամ Ցաճկաստան
ընդ նո խռովեցան։ Զայն ահա 'ի լսելոյ գի-
տեմք, բայց այս՝ զոր ես ինձէն աչօք տեսի
թուի ինձ թէ մեծագոյն ևս լինի քան զառա-
ջինն։ Արդ՝ դու որ մարզպանդ ես աշխարհիս,
պարտ է քեզ փոյթ յանձին ունել՝ գրել և ցու-
ցանել յաւքունիս զմիաբանութի բնութես՝ թէ
ո՛վ աներկեղութ առ ոչ ինչ համարեցան զհրա-
մանս արքունի։ Եթէ չէր մեր անձապարեալ և
'ի փախուստ դարձեալ, 'ի մխում 'ի մէնջոյ տային
ապրել։ Եւ եթէ անդէն մարդիկք այսպէս
բռնեցան, եթէ յանկարծ՝ զինուորսն ևս ընդ
ինքեանս միաբանեցուսցեն, ո՛ կարէ կալ առաջի
դոցա յանդուգն յարձակմանդ։ Ես ահա՛ անտե-
ղեակ էի անքակ ուխտի եկեղեցւոյդ 'ի միմեանց
( զի այս է որ լսէ մարդ, և այս է զոր տեսանէ
հաստատուն իւրովք աչօք ) դու որ 'ի մանկութէ
յայդմ օրէնս սնեալ էիր և ճշմարտել գիտէիր
զպնդութի մարդկանդ, եթէ ուսանց բազում
աւեսան հեղլոյ՝ դոքա մեզ ո՛չ տան ձեռնար-

կանել

կամել յեկեղեցւոջ, Է էր ոչ զայդ ած՟ հա-
ճառատեան յանդիման չասայեր ցԹագաւորն։
Քանզի ած՝ նախարարայն անուգ՝ դու էիր, և
զբոլոր աշխարհս քեզ յանձն արարեալ էր
մարզպանութ՟. ընդէր ոչ մեծաւ՟ հոգ տարար
յանձն քո։ Զի յայլ ժամս իմաստուն էիր, և ես
գիտէի. զայս գործ՝ ոչ իմաստուն գործեցեր.
ապա թէ ոչ յայտէ թէ և դու ՚ի նոյա բանի ես,
և քո խորհրդովդ անցուցին զայս անցս ընդդէմ
և Է զօրս. Արդ՝ եթէ այդպէս է, և քեզ կամք
չեն ունել զմոգութի. մի՝ ինչ պատկառեր
դու երկիւղիւ՟ յարքայէ. Ես գրեմ և ցու-
ցանեմ ՝ի դուռն՝ մովպետան մովպետ և դեր
անդերձապետի և մեծ հազարապետին, զի ած-
ցեն զարքայ ՝ի հաւանութ՟ին, ոպ զի ՚ի բոյց թողա-
ցուսցէ ըստ առաջին հրամանին, և ՚ի կամս
մարդկան ապաստան արասցեն, զի առ սակաւ
սակաւ ընտելցին ընդ օրէնս մոգութ. Զի որք
կալցեն սիրով, երևեսցին կատարել զհրամանն
արքունի. Քանզի մեր ձեռն է յաշխարհս,
գուցէ յորժամ զհաս ինչ առնիցեն, և ինքեանք
ցրուեալ վատնիցին յօտարութ. Յորժամ աշ-
խարհս թափուր լինի ՚ի մարդկանէս, յայնժամ
քեզ իսկ գլխովին վիշտ հասանէ յարքունուստ
ետ պատասխանի մարզպանն մոգպետին և ասէ.
ած՟ բանք խրատուդ զոր դու ասացեր՝ Ճշմա-
րիտ են. բայց զառաջին զոր չիմացայք, տեսէ՞ք
և մեծաւ՟ զղջացայք այժմ. Բայց արդ՝ դու զոր

առեմ

ասեմս, բարւոք թուեսցի քեզ. սակաւիկ մի երկայնամիտ լեր և զխորհուրդս քո արգել 'ի բազմաց. բայց արանց որոց ես ասեմ՝ նշ յայտնեա, մինչև ես ինձէն ժողովեցից զօր 'ի թիկունս անելոյ. և զուխտ եկեղեցւոյդ թերևս կարացից երկփեղկել. Եւ եթէ զայդ այսպէս արարից, գիտեմ ապա թէ և զհրամանն արքունի կարօղ եմ կատարել: Եւ անդէն հրոս հանէլ 'ի սահմանեայ աշխարհէն, զիւր գունդն ստուարացոյց 'ի թիկունս օգնականութե մոգաց և մոգպետին: Եւ սկսաւ ասել, ա՛ղէ դու առ անգամ մի հրովարտակ 'ի դուռն արքունի տուր վասն այրուձիոյն՝ (որ 'ի յաղուանսն է տասն հազար) զի 'ի ձմերոց 'ի հայս եկեսցեն. և յորժամ զնո 'ի ձեռին ունիմք, չի՞ք ոք՝ որ եղծանել կարէ զհրամանն արքունի: Պատասխանի ետ մոգպետն և ասէ ցմարզպանն. այդ խորհուրդ դարձնել իմոյ բանից ընդդէմ է. քանզի յորժամ բռնութբ կռուեսցուք ընդ աշխարհիս, ծա 'ի բաց քանդի և մեք 'ի պատուհասէ չապրիմք. անձանց միայն, և արքունի մեծամ զեան: Եւ ոչ ինչ կամեցաւ ամենևին ունկն դնել նմա մարզպանն. զի սրտի մտօք ընկալեալ էր զպարկակցն օրէնսն: Սկսաւ այնուհետև պատրել զոմանս կարասեաւ, և զոմանս ողոքական բանիւք. զուամիկոն ամ ահեղ բանիւք սպառնացեալ՝ սրտաթափ առնէր: Զամապաղորդ առատացուցանէր զունձիկս տաճարին, և յերկարէր

զնուաղս

զնոճագս ուրախութեն մաշելով զերկայնութի գիշերայն յերգս արբեցութեան. և զկաքաւս լկտութ քաղցրալայլայլաներ ոմանց, զկարգս երաժշտական և զերգս հեթանոսականս՝ մեծապէս գովութիս մատուցանէր օրինաց Թագաւորին. Բերեալ և յարքունուստ բազմութ կարասւոյ, և միում միում կաշառաբար գաղտ խթէր՝ի պատճառս պատուէր և պարգևաց. և բազում նենգութբ զանմեղ մարդիկ հրապուրէր և յինքն արկանէր.

Յաղագս այնր պատճառի [illegible]

[illegible] Եկեղեցւոյն.

Իսկ զայս ամ իբրև տեսին սրբ եպիսկոպոսքն, և ս. քաջ յորդորել յորդորեցան ՝ի նոյն միաբանութի. և հնարագէտ իմաստութբ ընդ երկուս բաժանեցին զբանակն. Մանաւանդ իբրև հաստատեալ գիտացին ի միտս իւրեանց՝ եթէ անօրէն իշխանին սիւնեաց՝ զօրհասական վէրան յոգին ընկալեալ էր, խորշեցան մերժեցան և՛ի բաց փախեան՝ի նմանէ. խորհուրդ արարեալ ՝ի գիշերի միում ամ ուխտին բազմութբ, կոչեցին և զսպարապետ զօրուն ՝ի խորհուրդն, հարցին և քննեցին և ՝ի վերայ հասին մտաց անշարժութե. որոյ ոչ և ս. առ սակաւ մի թերացեալ

ցեալ էր 'ի սիրոյն Քի՟. Միաբան աղօթս արա-
րեալ 'ի վերայ նո՟ր, վերստին ընկալան զնա յա-
ռաքինութի՟, և նովաւ որսացան զբազում 'ի նոյն
միաբանութիւն, որք ո՛չ էին քակեալ յառաջին
միաբանութենէն. Եկին ժողովեցան գունդ զօրաց
բազմաց. և ևս հեռագոյն զատեան ի մոգայն
և 'ի մոգպետէն և յանօրէնն վասակայ. Իսկ
նա ա՛յն չափ յիմարեցոյց ափշեցոյց զմիտս մոգ-
պետին, մինչև չետ նմա իմանալ զեւս իրացն.
Սկսաւ բաշխել մոգս 'ի տունս նախարարացն,
և մեծամեծ ռոճիկս կարգել. զոհել պատրու-
ճակս, և բռնաբար կնքաւոր մարդկանն տան
ուտել միս յազածոյ և երկրպագանել արեգա-
կան. Իբրև սկսաւ բազմանալ է՟ ամ աշխարհն
այսպիսի պղծագործ խառնակութի՟, յանդգնե-
ցան ևս կանայք փշտիպանացն՝ յարուցին կիւրա-
կէի անցուցանել զծրագունս եկեղեցւոյն և
սպատառել զհանդերձս հաւատաւոր կանանց.
Զայս գուժկան իբրև տեսին միաբանեալ սք
եպիսկոպոսքն, զԱ՟ետարանն 'ի ձեռն առեալ
հասին և անկան առաջի հարցանելոյ 'ի վանս
պարապետին ուր ժողովէր էին զօրքն հայոց.
Համբարձին զձայնս իւրեանց և ասեն, աղա-
չեմք զձեզ զա՟մն սուրբ Աւետարանաւս, եթէ
ձերով խորհրդիւ գործեն զայն անօրէնութե՟
չարիս մարզպանն և մոգպետն, նախ զմեր
պարոնոյս, հատէք, և ապա յեկեղեցիսն ձեռն
արկէջէք. Ապա եթէ առանց ձեր կամաց նք
զայն

զայն չարիսն գործեցին, այսօր իսկ խնդրեսցի վրէժդ այդ 'ի նմանէ. իսկ որ էին 'ի ներքս 'ի վանս սպարապետին, յոտն կային համբարձին միաբան զձայնս իւրեանց առ Աստուած և ասեն, դու Տէր սրտագէտ ամենայն' ոչ ինչ պիտոյ է քեզ վկայութիւն 'ի մարդկանէ. եթէ խոտորեալ իցեմք 'ի քէն սրտիւ և մտօք, (զայն դու ինքնին քաջ գիտես) այսօր իսկ դու ինքնին պատեա զմեզ ըստ մեղաց մերոց. ապա եթէ հաստատուն կամք յուխտի սուրբ Աւետարանիս, դու Տէր լեր մեր օգնական այսօր և տուր զթշնամիսն ճշմարտութեան 'ի ձեռս մեր, զի արասցուք ընդ նոսա ըստ կամաց մերոց. Զայս իբրև ասացին, ամենեքին զգլուխս 'ի գետնի հարկանէին. և ողջունեցան յաւետարանէն և յեպիսկոպոսացն. Իսկ մի ոմն 'ի նախարարացն (որ անուն դիպեցաւ) էր 'ի նոր խորհրդի և ոչ միաբանեաց ընդ նոսա 'ի մեծ վկայութեան, և անդէն առժամայն 'ի տեղւոջն քարկոծեցաւ 'ի նոցունց և ահ մեծ անկաւ 'ի վերայ ամենայն. Յայնժամ ամենեքին 'ի նախանձ բարկութեան դրդեցան, մինչև ամենայն տեսողացն երկմտունք գոլ այլոյն. որք առ ոչինչ համարեցան զպարգևս արքունի. և առ ոտն հարկանէին զհրամանս ուհագինս. Ընթացեալ փաղփաղակի 'ի գէնս իւրեանց, վառեցան կազմեցան զգիշերն ամենայն, և ընդ ծագել արեգականն զգունդն յերիս մասունս բաժանեալ 'ի բանակն արկանէին. Գունդն առաջին յարևելից կուսէ, և գունդն երկրորդ'

յարևմ

յարևմտից կուսէ, և գունդն երրորդ՝ 'ի Հիւսիսոյ կողմանէ, շուրջանակի 'ի մէջ առեալ փակեցին զբազմութի բանակին. և զաս բազմագոյնս կապեցին զերևելի մարդիկ և արկին 'ի բերդս ամուրս ընդ իւրեանց իշխանութ. Եւ զառգապուր և զաւար բանակին 'ի մի վայր ժողովեալ պահեցին իբրև արքունի հրամանաւ. Իսկ զմարզպանն ձեռբակալ արարեալ. և միաբանէր ընդ նոսա երդմամբ հաստատուն կալ յուխտին. և զղջանայր զառաջին քակտումն 'ի նոցանէ անկանէր ապաշխարութբ յոտս եպիսկոպոսացն և աղաչէր խազապատելով զի մի՛ մերժեալ լինիցի առ 'ի նոցանէ: Կրկնէր և երեքկնէր զանսուտ երդումն առաջի բազմութեն 'ի սբ Աւետարանն. Գրէր և կնքէր զերդումն, և կապէր զաւետարանէն. և աղաչէր զի այ վրէժխնդրութին յայտնեսցի, և մի՛ նոքա մարդաբար ստախեսցեն զնա. Իսկ նոքա թէպէտ և հաստատուն գիտէին զնենգութի կեղծաւորութե նր, եթէ խաբէութ դառնայ անդրէն 'ի հին մոլորութն, ոչ ինչ փոյթ առնէին ձեռնարկել 'ի նմա վ̅ առաջին յանցանացն. այլ՝ սբ Աւետարանին թողին զվրէժխնդրութին: Իսկ որք եկեալ էին յաւարի առնուլ զսբ գանձս եկեղեցւոյն, ակամայ եդին զանձինս իւրեանց առաջի սբ եպիսկոպոսացն և այլ զօրացն. և եղծաւ ապականեցաւ հրաման թագաւորին. Եւ յաջողեալք զօրութբն այ, աղաղակեին և ասէին

ատէին գոհանալով արք և կանայք և ամ՟ ռամիկ բազմութին, պատրաստ եմք 'ի հալածանս և ի մահ և յամ՟ նեղութիս վս՟ սբ՟ եկեղեցեայ, զոր անանդեցին հարքն մեր առաջինք՝ զօրութբ՟ գալստեան Տն՟ մերոյ Յի՟ Քի՟, որով վերստին ծնաք 'ի մի յոյս հաւատոյ՝ մկրտութբ՟ 'ի Քս՟ Յս՟, ըստ նմին նմանուե՟ կամիմք չարչարանօք և արեամբ նորոգել զանձինս մեր։ Սբ՟ զԱւե-տարանն գիտեմք մեզ հայր. և զառաքելական կաթուղիկէ Եկեղեցի սբ՟ մայր։ Մի՝ ոք չար անջրպետ 'ի մէջ անկեալ զմեզ քակեսցէ 'ի սմանէ։ Ոչ այնուհետև երևէր տէր առա-ւել քան զծառայ. և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ՝ և ոչ ոք քան զոք նուազեալ 'ի յարութէ՟։ Մի սիրտ յօժարութե՟ էր ամ՟ց. արանց և կանանց, ծերոց և տղայոց, ամ՟ միաբանելոցն 'ի Քս՟։ Քանզի առհասարակ զմի զխոստովանութի՟ զխոստովանեցան. և զմի ագան զրահս հաւատոյ պատուիրանին Քի՟. և միով գօտեաւ Ճշմարտուե՟ն պնդեցին զմէջս արք և կանայք. Ընկեցեալ կայր այնուհետև ոսկի, և ոչ ոք առնոյր իւր առանձինն արծաթ, և ար-համարհեալ առանց ագահութե՟. անարգեալ պատուական հանդերձք առ 'ի զարդս մեծարա-նաց։ Նաև իւրաքանչիւր ումեք ստացուածք՝ ոչ ինչ համարէին յաչս ստացողաց իւրեանց։ Տեսանէին զանձինս իւրեանց իբրև մեռեալ դիակունս, և զիւրաքանչիւր գերեզմանս ինքեանք փորէին

փորձէին· և կեանք նորեանց ՝ի մահ համարէին, և մահք նորեանց անշուշտ կեանք: Բայց այս բարբառ՝ ստէպ ստէպ ընթանայր քաջութեան; միայն մտցուք՝ զանուն եղծողիս և եթ ժառանգեսցուք: զի կենդանիցէ ՝ի մեզ Քրիստոս· որում գիտելին է միանգամ նորոգել զմեզ ՝ի հողոյ, ( զմեզ և զմեր յառաջագոյն զննջեցեալսն ) և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւր· Զայս և առաւել քան զայս խօսելով և մխիթարելով զանձինս և զմիմեանս, դարձեալ միանգամ զինուորքն պատրաստեցին զզէնս իւրեանց· և աղօթականքն անդադար լինէին յաղօթս իւրեանց· և պահօղքն ճգնէին ՝ի պահս իւրեանց· Զայնք պաշտօնէից ՝ի տուէ և ՝ի գիշերի անհատ էին ՝ի պահս և ՝ի մէջ սաղմոսն ընթերցուածք Աստուածային կտակարանացն ոչ երբէք առնուին դադարումն յամենայն ժամ: Որպէս և մեկնիչք՝ ՝ի մխիթարութիւն երկնաւոր վարդապետութեան: Յայնմ ժամանակի դարձեալ յարձակէին ՝ի վերայ բերդից և աւանաց, ( զոր առեալ էին պարսիկք ՝ի տեղիս տեղիս յամրոցս աշխարհին ) տապալէին քանդէին զբնակութիւնս: Առաջին՝ զմեծն արտաշատ հանդերձ աւանօքն իւրովք· և առնուին զամենայն, ամուրսն՝ ըզդառնի քաղաք, զանի, զարտագերսն և զաւանսն, իւր զերկայնորդսն, զարխնին և զաւանսն իւր, զբարձրաբերդըն, զխորանիստն, զծախանիստն, զանկանկածելի զողականն՝ ընդ նմին և զաւանսն

իւր

ճուր, զգունեալն, զկապոյտն, զորտն, զարփիա-
նեալն, զվանն աւեան ընդ նմին և զաւանան խուր,
զվաստակաշատն. Զամեն զոսա խորաքանչիւր
դեղչիւք և ագարակօք՝ զօրօք և զօրագլխօք՝
'ի նմին ամի առեալ տապալեցին, և 'ի գերութի
վարեցին զարս և զկանայս ընչիւք և ստացուա-
ծովք համդերձ պատուական գանձիւք և նոցին
սպասիւք. Տապալեցին քանդեցին զշինուածսնց
այրեցին կիզուին զտունս պաշտաման կրակին, և
մրբեցին զպղծութի կռապաշտութն. և առնուին
զկահ և զկազմած ատրուշանայն, բերեին և
դնեին 'ի սբ եկեղեցեաջն, և 'ի ձեռն սբ քահա-
նայից նուիրեին 'ի սպաս սբ եկեղեցւոյն. Եւ
փոխանակ սնոտի պաշտամանցն՝ ( զոր տապա-
լեցին յամ տեղիս հեթանոսայն ) զփրկական
Խաչն Քի կանգնեին. զամենասբ սեղանն
ուղղեին, և զկենարար խորհուրդն կատարեին
սրբութբ. պաշտօնեայս և քահանայս 'ի տեղւոջն
կացուցանեին. յուսով հաստատելով խնդայր
ամ երկիրն առ հասարակ. Եւ մինչ դեռ յայս
մեծի առաքինուն կատարեալ գործեին զգործ
նահատակուն, երևէր իմն 'ի վր ամցն Ածային
շնորհք. քանզի առանց հրամանի՝ 'ի զօրացն
հայոց՝ յարևելից կողմանէ ծին յարձակեցան
ոմանք յատրպատական աշխարհ, 'ի տեղիս տե-
ղիս բազում մոգաց արարին, առնլով և աւերե-
լով և քանդելով զբազում ատրուշանս. Իսկ
որ 'ի մեծ ամուրան անկանեին, խաչանշան արա-
րեալ

ընդ՝ ՚ի վերայ զօրուն արձակէին. և երկու մեծամեծ թերդից պարիսպքն առանց ուրուք մերձենալոյ անկեալ կործանեցան. մինչև ամենայն բնակչաց երկրին զահի հարեալ՝ ՚ի մեծ նշանէն, ինքեանք ինքեանց ձեռօք զկրակատունսն այրէին. ուրանալով զօրէնս մոգութեան, խոստովանէին ՚ի սուրբ աւետարանն. Եւ այլ մեծամեծ զօրութիւնք և յաջողութիւնք կատարէին՝ ՚ի ձեռն զօրականին, քանզի ուր ոչ էր ակնկալութիւն եթէ զանունն Աստուծոյ ոք յիշեսցէ, արհաւիրք մեծ անկանէին՝ ՚ի վերայ նոցա, և ամենայն մարդ պատմէր ընկերի իւրում զտեսիլս նորա և զարմանալիս. Սոյնպէս և աստեղք յերկինս երևէին յոյժ լուսաւորք պայծառացեալ. զոր ոչ ունէին յառաջ՝ ՚ի բնութենէ. Եւ ամենայն տղայք աշխարհին՝ իբրև զայրս պատերազմօղս խիզախէին.

Յաղագս այնր պատճառի ըէր, վերստին ՚ի սահմանս աշխարհաց աղբ արարին համաձայնեալքն առ կայսրն Թէոդոս զի արասցէ ձեռնտուութիւն. յորոյ յանձնելն հարեալ ՚ի չենեա թագաւորէ անդրէն Մարկիանոս. Իսկ նա ունելով ձայն զաղօթսն նուաստ, և ս յաղթողք գտան.

Եւ ահա՛ յետ աւուրց բազմաց՝ եկն էհաս հազարապետն աղուանից՝ սուրբ եպիսկոպոսարանն աշխարհին. մեծաւ տագնապաւ փութացուցանէր զզօրսն և ասէր, գունդն պարսից՝ որ էր ՚ի կողմանս աշխարհին հոնաց, դարձաւ

դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհս մեր.
և բազում ևս այլ այրուձի որ 'ի դրանէ եկն. Եւ
թող զերկուսեն, այլ երեք հարիւր մոգ վարդա
պետ ածեալ էին ը՟ն իւրեանս. Պատուակտեցին զն՟ն,
և զոմանս զոմանս յինքեանս արկին, և կամին յեկե
ղեցիսն ձեռնարկել. Եւ հրամանաւ թագաւո
րին ստիպեն զա՟մն և ասեն. եթէ կամօք յանձն
առնուք զօրէնս, պարգևս և պատիւս գտա-
նէք 'ի նմանէ, և թողութի՟ հարկայն արքունի
լիցի ձեզ. ապա թէ կամօք զայդ չառնէք, հրա
ման ունիմք 'ի գեղս և 'ի քաղաքս շինել ատրու-
շանս, և զվռամական կրակն 'ի ներքս դնել, և
կացուցանել մոգս և մոգպետս օրէնսդիր ա՟մ
ծխի. Եւ եթէ ոք ստամբակե՟լ ը՟ դէմ դարձցի,
ինքն մահու պատուհաս ընդունի, և կին և
որդիք այնպիսւոյն անաշխարհիկք եղեալ՝ յար-
քունիս երթայցեն. Իսկ գունդն հայոց իբրև
լուաւ զայս գոյժ դառնութե՟, ոչ ինչ թուլացու-
ցե՟լ քան 'ի քաջ արութե՟ն. այլ դարձեալ համա-
գունդ ժողով լինէր ա՟մ աշխարհին վ՟ գուժա
բեր հրեշտակայն՝ որ հասին առ նոսա. Եւ
միաբան քաջալերս առեալ՝ արձակեցին զն՟ն.
զի առժամանակ մի զնոսա պատիր խաբէու՟թ
կալցեն. զի խափանեսցին 'ի չար կամացն, չը-
ձեռնարկել 'ի սբ՟ ուխտն եկեղեցւոյն. և ին-
քեան զօրութե՟ Աստուծոյ խորհուրդ 'ի մէջ
առեալ՝ հնարիւք ելս խնդրէին. Յայնմ
ժամանակի զմի ոմն 'ի մեծ նախարարացն 'ի

տոհ

տոհմէն Գնունեաց Ատոմ՝ առաքելին ձեպով յերկիրն յարեւմտից ցուցանել զայս ամ խորհուրդ զչարիմաց Թագաւորին արեւելից. միանգամայն պատմել եւ զիւրեանց քաջուց արանցն, զոր գործովք կատարեցին առ ոտս հարկանելով զանհեղ հրամանն եւ զմեծաց սատակումն ՚ի վր մոգուց հաստուցանել. խնդրել ՚ի նմանէ օգնականութ սատարութե. եւ եթէ նա կամեսցի նմա մտանել ՚ի ծառայութի.

Եւ այս է պատճէն Հրովարտակին, զոր գրեցին առ Թէոդոս Երկրորդ կայսրն.

Յովսէփ եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք իւրովք եւ ամ զօրօք հայոց՝ Վասակ մարզպան եւ Ներշապուհ Արծրունեան՝ հանդերձ սպարապետաւն եւ ամ մեծամեծ նախարարօքս առ մեծանունդ Թէոդոս կայսր. բազմասցի ողջոյն մեր առ քեզ եւ ամ զօրացդ քոց. Որ խաղաղասէր մարդասիրութ ձերով տիրեք ծովու եւ ցամաքի. եւ չիք ոք յերկրաւորաց որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնայ. ապ եւ մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանսն զառաքինի նախնեացն ձերոց. ունելով զեւրոպէ՝ անցին եւ տիրեցին եւ ասիացւոյ կողմանցն ՚ի սահմանացն սերաց մինչեւ ՚ի կողմանս գադերոնի. եւ ոչ ոք գտաւ ստամբակեալ եւ ելանել ըստ ձեռն նց. Եւ յայնչափ մեծ իշխանութե

դաս

դաստակէ՝ որ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս յանուանէին. Վ՜ որոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ 'ի տղայութենէ փախուցեալ 'ի Հայրասպան մարդախողխող Հօր եղբարցն իւրոյ, ապրեալ մնա՛ 'ի յերկրին յունաց. և 'ի ձէնջ թագաւորեցուցեալ տիրէր Հայրենի աշխարհիս. Սոյնպէս և պՀաւատամ որ 'ի Քս՜ ընկալեալ 'ի սբ՜ եպիսկոպոսապետէն 'ի Հռոմէ՝ լուսաւորեալ զխաւարային կողմանս Հիւսիսոյ. զոր և յայժմ կամին 'ի մէնջ կորզել և Հանել խաւարատէր որդիքն արևելից. Եւ՛ մեք 'ի ձեր քաջութիւն արութեդ խիզախեալ, էր ինչ՝ որ ընդդէմ պարձակք նոցա Հրամանացն. և բազում այն է՝ որ արդ առաջոյ պատրաստեալ եմք. Ընտրեցաք զմահ անպաշտութե՜, քան զկեանս ուրացութե՜. Եւ՛ եթէ դուք և 'ի ձեռն առջիք զմեզ՝ աՀա կրկին կենաց դիպեցաք, և ոչ միանգամ մահու. Եւ՛ եթէ սակաւիկ մի Հեղգայք գուցէ և այլոց աշխարհաց բազմաց Հասանիցէ տալ բոցոյ սորա. Եւ՛ իբրև յանդիման եղեն մեծի թագաւորին և ընթերցան զգիր պաղատանաց աշխարհին Հայոց, և զ յիշատակարանս նախնեացն, բազում մատեանք 'ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ գտանէին Հաստատութե՜. Եւ՛ մինչդեռ երանելին Թէոդոս Հարցանէր զնմ՜ զինկղխտոսան և Հնար իւրայն կամէր գտանել խաղաղութե՜, և Հոգ տանէր

մեծա՛

մեծաւ յօժարութեամբ, զի մի՛ եկեղեցիքն արեւելից յափշտակեսցին յանօրէն հեթանոսաց 'ի նմին ժամանակի անդրէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենացն նորա. եւ կարի չար խափանումն լինէր գործոյն օգնականութեան։ Եւ Թագաւորէր փոխանակ նորա Մարկիանոս կայսր. եւ 'ի ձեռն վատթար արանց խրատատուաց ծառայից իւրոց՝ անաստօլայ որ սպարապետն էր, եւ եփլարիոս ասորի, երկոքեանն անարգք եւ 'ի վատ արանց, միանգամայն եւ անմտք. 'ի նոցա բանս եղեալ Թագաւորին, ոչ կամէր անսալ միաբանել ուխտին Հայոց. որ ամենայն ուժով իւրեանց ընդդէմ կացեալ էին չարութեան հեթանոսաց։ Անարիս այս՝ լաւ համարէր զուխտն հեթանոսաց պահել ընդ մարմնական խաղաղութեան, քան պատերազմակից լինել ուխտին Քրիստոնէութեան։ Վասն այսորիկ փութացաւ արձակեաց դեսպան առ Թագաւորն պարսից զնոյն եփլարիոսն, եւ եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնթափ լինել 'ի զօրայն Հայոց՝ զօրու եւ զինու եւ ամենայն օգնականութեամբ։ Եւ իբր եւ այսպէս հաստատեցաւ եւ հատաւ օգնականութիւն յուսոյ նոցա 'ի մարդկանէ, դարձեալ սուրբ եպիսկոպոսքն քաջալերել սկսան զանձինս եւ զօրսն ամենայն։ Թէպէտ եւ հայէին յիւրեանց սակաւութիւն եւ յերկուց Թագաւորաց միաբանութիւն, ոչ ինչ վատասրտէին դողային. այլ ըստ առաջին ուխտին խիզախէին եւ ասէին, պատրաստ եմք 'ի սպանանիլ եւ 'ի

մեռա

մեռանել․ դիւրին է այ սակաւուք զբազմաց
գործ գործել, և անարգօք զմեծամեծ իրս կա-
տարել։ Մինչդեռ և ոչ ունէին Թագաւոր ա-
ռաջնորդ, և ոչ արտաքուստ օգնական զօրք
յօտարաց, սակայն անձամբ առաքինութբ և սր
վարդապետայն Մխիթարութբ՝ համագունդ ամ
նախարարքն զօրօքն իւրեանց յիւրաքանչիւր
տանէ ՚ի մի վայր գային․ հասանէին վաղվաղակի
բազում և այլ այրուձի, որ յարքունի տանէ ան-
տի էր։ Եւ զամ զօրսն յերիս գունդս բաժա-
նէին․ Զգունդն առաջին՝ տային ցՆերշապուհ
Արծրունեան, և գումարէին զնա պահապան Ծի՛
մերձ ՚ի սահմանս ատրպատական Ծէին, Զգունդն
երկրորդ՝ տային ՚ի ձեռն Վարդանայ զօրավա-
րին հայոց՝ անցանել ընդ սահմանս վրաց ՚ի վր
մարզպանին Խորայ որ եկեալ էր աւերել զեկե-
ղեցիս աղուանից․ Իսկ զգունդն երրորդ՝ տային
՚ի ձեռն Առակայ իշխանին սիւնեաց․ որ ոչ
էր ՚ի բաց կացեալ յուխտէն հեթանոսաց՝ ըստ
ներքին խորհրդոյ իւրոյ, ընտրեաց և էառ
ընդ իւր զայս՝ զորոց գիտէր զթուլութի հա-
ւատոյ նց զիշխանն բագրատունեաց՝ զօրօք
իւրովք․ զիշխանն խորխոռունեաց զօրօք ի-
ւրովք․ զիշխանն ապահունեաց զօրօք իւրովք․
զիշխանն վահունեաց զօրօք իւրովք․ զիշխանն
պալունեաց զօրովք իւրովք․ զիշխանն գաբեղենից
զօրօք իւրովք․ և զայլ բազում զօրս յարքունի
տանէ։ Եւ արկ յինքն և զսեպուհս ոմանս
յայլմէ

յայլմէ տոհմէ, և խորամանկ խաբէութե̄ դա-
րանամուտ լինէր յամուրս իւրոյ աշխարհին 'ի
պատճառս կեղծաւորութե̄, եթէ ընդ ճապուկ
անդր անցանէ 'ի վերայ գնդին պարսից՝ հալա-
ծական առնէ յաշխարհէն աղուանից։ Իսկ
նա յամրածածուկ հաւալոյցէն ճեպով դեսպանս
առաքէր առ գունդն պարսից, թէ ահաւադիկ
քակեսցի զմիաբանութի̄ ուխտիս հայոց, և ը̄
երիս կողմանս զգունդն քայքայեա̄լ բաժանեսցի։
Զգունդ առաջին՝ հեռացուցի 'ի կողմանս
խիրայ և զարաւանդայ. և զգունդն երրորդ՝
ընդ իմով ձեռամբ է, որոց ոչ ինչ վնաս տամ
առնել զօրացն արքունի։ Եւ զայլ ամ̄՝ որ այր
կուտոյ գտանէր յաշխարհիս, ցանեցի ցրուեցի
ընդ ամ̄ միջոց աշխարհիս։ Բայց զգունդն
երկրորդ՝ արարի ընդ Վարդանայ յաղուանս.
սակաւաձեռն և ոչ բազկաւ։ Եւ համարձակ
ընդ առաջ նր̄, և մի՛ ինչ զանգիտեր ամենևին
տալ պատերազմ. գիտեմ զի 'ի պարտութի̄ մատ-
նեսցի առաջի քոյոյ մեծի տէրութե̄։ Զայս գը-
րեաց և եցոյց մարզպանին սեբուխտայ։ Իսկ նա
իբրև լուաւ զայն քաջալերս 'ի վասակայ, և
ստուգեալ գիտաց 'ի միտս իւր, եթէ սակաւա-
ձեռն գնդի գայ սպարապետն հայոց 'ի վր̄ նր̄,
ոչ եկաց մնաց 'ի կողմանս ճորայ. այլ կուտեց
զամ̄ բազմութի̄ զօրու իւր, և փութանակի ան-
ցանէր ընդ մեծ գետն կուր անուն, և պատա-
հէր նմա մերձ 'ի սահմանս վրաց՝ հանդէպ

խաղխաղ

խաղխաղ քաղաքի՝ որ ձմերոց էր Թագաւորու-
թեան աղուանից։ Անյանէր բովանդակեր ամ
զօրօքն իւրովք՝ ուաղմ արարեալ՝ զբոլոր մե-
ծութի դաշտին ՚ի ներքս փակէր՝ զինեալք ամ
պատրաստութ ՚ի մարտ պատերազմի ընդդէմ
գնդին Հայոց։ Իսկ քաջն Վարդան և ամ զօրքն
որ ընդ նմա էին, իբրև տեսին զբազմութիւն
պատրաստութե գնդին Հեթանոսաց, Հայեցան
և յիւրեանց սակաւութիւն. թէպէտ և կարի յոժ-
նուազ էին քան զն, ոչ ինչ զանգիտեցին առ-
՚ի յոյժ բազմութեն. այլ առ Հասարակ միաբան
համբարձին յերկինս զձայնս իւրեանց, աղաղա-
կէին և ասէին, Դատեա Տր զայնոսիկ՝ որ դա-
տեն ընդ մեզ. և մարտիր ընդ այնոսիկ՝ որ
մարտնչին ը մեզ։ Զինու և ասպարաւ քով
օգնեա մեզ։ Շարժեա և դողացո զգունդա-
գունդն բազմութի անօրինաց։ Ցրուեա և
վատնեա զչար միաբանութի թշնամեաց առաջի
քոյոյ փրկական մեծի նշանիս. և տուր ՚ի ձեռն
սակաւուցս զքաջութի յաղթութե ՚ի վր անհնարին
բազմութեան։ Ոչ ՚ի պարծանս մնոտի փառասիրու-
թե անօգուտ վաստակոց ինչ աղաչեմք, և ոչ յա-
գահութի ընչասիրութի զնյաւոր մեծութե կապուե-
լոյ. այլ զի ծանիցեն և գիտասցեն ամքն այնոքիկ՝
որ հնազանդին սր Աւետարանին քարոզութե;
թէ դու ես Տր կենաց և մահու. և ՚ի քո ձեռս
է յաղթութի և պարտութի։ և մեք պատրաստ եմք
՚ի մեռանել վն քո սիրոյդ։ և եթէ սպանանել

և

եւս հասցէ զնա, եղիցուք վրէժխնդիր ճշմարտութե. Եւ զայս ասացեալ խումբ արարեալ յարձակէին. եւ զաջ թեւն բեկեալ՝ զձախոյ կողմամբն արկանէին, եւ սրոյ ճարակ զամն տային. ընդ երեսս դաշտին փախստական առնէին, մինչեւ յամուր տեղիս մայրեացն առխորագոյն դարուքն լոռնաս գետոյ: Ուր ընդ դարձեալ թագաւորազանց ոմանց բաղասական արքայի, ընկեցին ՚ի ձիոյ կոմն ՚ի նախարարացն Հայոց ՚ի գնդէն դիմաքսեան զՄուշն եւ սպանին. եւ զԳագրիկն վիրաւորեցին: Յայնմ տեղւոջ դէտակն ՚ի վեր ամբառնայր Արշաւիրն արշարունի գոչէր առիւծաբար եւ յարձակէր զիւրովն քաջ. զեղբայր թագաւորին լինայ եւ զբազում համհարզս նորին՝ ընդ նմին սատակէր. Եւ այնպ ամքն առհասարակ այր՝ զախոյեան իւր յերկիր կործանէր. Եւ առ յոյժ յանդուգն յարձակմանն՝ յոլովագոյն այն էր՝ զոր գետամոյնն առնէին, քան զանկեալսն սրոյ ՚ի ցամաքի. Եւ ՚ի բազմութէ դիակացն անկելոց՝ յստակ ջուրք գետոյն յարիւն դառնային. Եւ ոչ գտանէր ոք ամենեւին ՚ի նոցանէ ապրեալ եւ թագուցեալ յանտառախիտս մայրից դաշտաց. բայց մի ոմն ՚ի զօրաց թշնամեացն զինու հանդերձ՝ ելեալ ՚ի յուս երիվարին՝ անցանէր ընդ մեծ գետն, մազապուր ապրեալ ՚ի պատերազմէն. գոյժ արկանէր ՚ի մնացեալ բուն բանակին՝ որք փախստական անկանէին ՚ի մեծ շահաստանն Յայնմ ժա-

մանակի

մանկի զօրքն Հայոց՝ կատարելով զմեծ գործ պատերազմին, ժողովէին զբազում աւար բանակին. և կողոպտէին զանկեալ դիակունսն· և կուտէին բազում արծաթ և ոսկի. զզէնս և զզարդս զարի արանց և զքաջ երիվարաց. Դարձեալ յարձակէր ոչ սակաւ քաջութբ՝ 'ի վերայ բերդից և քաղաքաց, զոր ունէին պարսիկք յՅին աղուանից: Հզօրագէս մարտնչելով՝ այրէին զամուրս արգելանաց նց և զերամն երամս մոգուցն (զոր պատրաստական ածեալ աշխարհին 'ի գայթակղութի ) ուր և գտանէին յամուրս ամուրս այրայն, որոյ Ճարակ տուէլ գէշ դնէին թռչնոց երկնից և գազանաց երկրի: Արբէին զտեղիսն յամ պղծագործ զոհիցն և փրկեալ ազատէին զեկեղեցիսն յանհնարին նեղութենէն: Եւ բազումք 'ի նախարարացն աղուանից և յամ չինականացն՝ որք վասն անուանն Աստուծոյ ցրուեալ և վտանեալ էին յամուրս լերանցն կարկոխի իբրև տեսանէին զյաղթութի գործոյն, զոր կատարէր Ած 'ի ձեռն գընդին Հայոց, գային ժողովէին և նոքա և խառնէին 'ի զօրսնց, և միաբան հաւասարել՝ կցորդլինէին գործոյ նահատակութե նոցա: Խաղային գնային այնուհետև 'ի վր պահակին Հոնաց, զոր ունէին բռնութ պարսիկք. առնուին քանդէին զպահակն, և կոտորէին զօրսն՝ որ բնակեալ էին 'ի նմա. և զդուռն տային 'ի ձեռն վահանայ, որ էր յազգէ Թագաւորացն աղուանից: Եւ

յայսմ

յայսր մտ՟ քաջութե՟ վերայ՝ ոչ ոք անկեալ վի-
րաւորեցաւ ամենևին ի նոյանէ· բայց ՝ի մեր
երանելւոյս որ կատարեցաւ. նահատակութբ՟՝ի
մեծ պատերազմին ։ Եւ անդէն ՝ի նմին տեղւոջ
զայլն որում զդուռն յանձն առարին, զնոյն
դեսպան արձակեցին յաշխարհն հոնաց, և՝ի
բազում յայլ ազգս բարբարոսաց, (որ էին
համագործ հոնաց աշխարհին) բանս դնել ընդ
նոսա և ուխտ հաստատել անքակտութբ՟ ունել
զմիաբանութի՟։ Իսկ նոքա իբրև զայն մտ՟ լուան,
փութապէս վաղվաղակի հասանէին ՝ի տեղին,
և ականատես լինէին մտ՟ յաջողութե՟ գործոյն։
Ո՛չ ինչ յապաղեցին երդմամբ յուխտ մտանել
ըստ կարգի իւրեանց օրինացն· յանձն առնուին
և զերդումն քրիստոնէից՝ պահել ընդ նոսա
հաստատութբ՟ զմիաբանութի՟ ։

Յաղագս այնր պատճառի, թէ ընդէր Հայոց զէզլ անուն
վասնորոյ, առնէն ՝ի վերայ նորա ճակատում հարուածս. և
առաքէն զօրն ՝ի չափելոյն առ արքայն՝ ՝ի նահանգումն
յանիրաւութենէն ։

Իսկ իբրև զայս կատարեցին և առարին
իւրեանց մեծապէս հաստատութի՟, և դեռ
անդէն՝ի տեղւոջն զետեղեալ էին խաղաղութ՟,
գուժկան հասանէր յերկրէն Հայոց՝ զՃակատ
հարեալ և զօձիս պատառեալ մի՟ ապստամ-
բութե՟ վասակայ՝ յետս կալեալ յուխտէ քրիս
տոնէութե՟, և աւերեալ զբազում տեղիս Հայոց
աշխարհ

աշխարհին. մանաւանդ զձմերոցն արքունի, ուր կային զօրացն էին զպատունին և զերամայիս, զդրախտակերտն, և զվարդանաշատն, զփառախոտն, զարդէօնսն, զձողակերն աւան և զբերդն արմաւիր և զամուրն ուշական, զառուճն, զաշնակն, զկուճաշն աւան և զամ տանն արագածոտ և զնահանգն արտաշատու և զարտաշատն ինքնին գլխովին, և զա՛մ գիւղս և զաւանս որ շուրջ զնովաւ էին, առնել աւերել և հրձիգ արարել. և զամենայն ձեր զնոսին փախուցել մերժեալ յիւրաքանչիւր բնակութե՛ն. Զի ունարկեալ և'ի սբ եկեղեցին, տարեալ և զսպաս սբ սեղանոյն. գերիվարել զնոսանիս քահանայիցն, և զնոսին կապեալ և եդեալ 'ի բանդի և ինքն սկսեալ տարածել ասպատական աւերեր զերկիրն ա՛մ. Եւ գունդն՝ որ էր 'ի կողմանս ատրպատականի, ոչ ժամանեաց ձեռն տալ 'ի միջոցս աշխարհին. Եւ զօրքն՝ որ անդէն մնացեալ էին, խոյս տուեալ յանօրինէն՝ որ մերժեցան յեզր աշխարհին, և դեռ պահեն ընդ ձեզ զուխտ միաբանութե սիրոյն քի. Բայց այնք՝ որ ընդ նմա էին, են ոմանք որ փախեան յիւրաքանչիւր տեղիս. և բազումք այն են, որ զհետ նր ամբարշտութե՛ն մոլորեցան. Զու արարին 'ի տեղւոջէ անտի դառնալ անդրէն յաշխարհն հայոց մեծութ՝ անհատում ուրախութե երգս 'ի բերան առնել ասէին ձայնիւ, Խոստովան եղերուք տն՝ զի բարի է, զի յաւիտեան

տեան է։ Որ եհար զազգս բազումս և սղանս զի՛ շխանս մեծամեծս՝ զի բարի է, զի յաւիտենէ։ Եւ զայս սաղմոս երգելով մինչև 'ի վախճանն կատարեալ աղօթիւք, փառաւորութի սբ Երրորդութե՛ն մատուցանէին։ Ընդ յանձն յանձնէր՝ ածէր զօրավարն՝ եկաց և զմնաց զօրականին՝ առաջապահօք կողմնապահօք աջ և առողջ հաստուցեալ յաւուրս երեսուն. մերձ 'ի սահմանս հայրենի աշխարհին։ Ազդ եղև ուրացեալն վասակայ իշխանայն՝ (որ ընդ նմա էին) քաջու̃ի նահատակու̃ե գնդին վարդանայ՝ յծին աղուանից, ես և միաբանութիւն հայոց։ Մինչև յանդիման եղե՛լ էին միմեանց, զգիշեր մի օգնական գտեալ նո՛ր փախստեայ անկանէր յամուրս իւրոց յծին. և այնպէս տագնապաւ մերժեցաւ։ Ըզգերի աւարն՝ զոր առեալ էր յայրարատ գաւառէ, ակամայ և զիւրն ևս 'ի վերայ եթող և փախեաւ։ Եւ քանզի ժամանակն ձըմերայնոյ հասեալ էր և զուռծիկ թշնամեաց գնդին հարեալ էր, ոչ կարէր միով տեղեաւ համագունդ զօրսն դարմանել. այլ ուրուէր տարածանէր ը̃ գաւառս գաւառս ծխս առ 'ի հանգիստ ձմերոցին։ Պատուէր հրամանի տայր պատրաստական լինել կազմութե՛ առ ժամանակ գարնայնոյն։ Եւ զուակաւս 'ի գնդէն յաւագ նախարարացն՝ գործակից առ իւր թողոյր։ Բռնանայր 'ի վե՛ր ունելով զթագաւորանիստ տեղին. և գունդս գունդս արձակէր

յծի

յԾն սխունեայ. առնոյր և ածերէր զբազում գաւառս։ Եւ այնպէս ինեղ արկանէր զնա և զայլ զօրսն՝ որ ընդ նմա էին, զի զէշս և զձիս մեռելոտիս առ սովոյն վտանգի անխտիր ուտէին։ Եւ բազում հարուածս հասուցանէր՝ ի վերայ ուրացելոյն, մինչև ժողովս սուրբ եպիսկոպոսացն և այլ ուխտ քահանայութեան՝ գաւառնացս արտասուս իջուցանէին ի վերայ չարաչար վշտացելոյն. որ բուռն և հեռի վարէին զայս և զկանայս փախուցանս. և բազում տղայք զքարի հարեալ՝ ընկեցեալ յանդս Ճանապարհայ։ Իսկ այս այլ յաջողումն լինէր երկիւղածացն Աստուծոյ, այլ եպիսկոպք և երիցունք՝ պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ամենայն քաղոյ՝ պահօք և աղօթիւք առնել մեծապէս խնդրուածս յԱյ. և զտօն պատերազմացն յաջողութեան՝ խառնել ՚ի մէջ տօն յայտնութեան Քի, զի անխափան կայցէ մեծ յիշատակարանս այս ընդ Ածային անուանց տօնին։ Եւ զայն զայս այլ զայցելութիւն Աստուծոյ որ ՚ի վերայ հօնաց աշխարհին մեծապէս երևեցաւ, գրեցին մեք եպիսկոպոսքն և ետուն տանել յԾն յունուայ ՚ի մեծ քաղաքն առ սուրբ ուխտ եկեղեցւոյն, զի և նք աղօթս առնելով խնդրեսցեն յԱստուծոյ, որպէս սկսաք, ՚ի նմին և կատարեսցուք։ Եւ զոմն յառաջին կապելոյն պարսկայ՝ լուծեալ և ածեալ առաջի նախարարացն, խօսէին ընդ նմա և ցուցանէին զայլ վնասս, որ եղև. կամ աշխարհայն ածերէլ և կամ

կամ զօրայն արքունի հարկանել և կամ որ այլ
ինչ առաջոյ լինելոյ էին։ Եւ իբրև զամ
բովանդակ ցուցինն նմա, միաբան լինէր անբաս-
տանութին զերկոցունց կողմանցն· զառաքինեցն՝
և զ յետս կացելոյն, որք զուր և տարապարտուց
նեղեալ զնոսա ՚ի հայրենի օրինացն յետս կալ։
Եւ զխաբէութի ապստամբին վասակայ, որպէս
հայոց բանիւ խաբեալ զթագաւորն՝ յանձն
առնուլ զմոգութին, իբրև չէր ուրուք է նմա
բանս եդեալ, նա յանձնէ սուտասպանեալ լի-
նել· Եւ իբրև լուաւ զայս ամ իմացուցին նմա,
արձակեցին զնա հրեշտակութ յաղերս ապաբա-
նութ ՚ի հնարահայթաթանաց, թերևս կարասցէն
՚ինեղուէն գողանալ զեղբայր իւրեանց։ Այլ
առ նա՝ անօրէնն վասակայ գուժկանքն յառա
ջագոյն հասեալ էին պատմելով զաղէտս տարա-
կուսանացն՝ որ անցեալ էին է զօրսն արքունի։
և ամ անբաստանութի ՚ի սուտ ուխտ եկեղեցւոյն՝
կրթեալ էր. քանզի կամք անօրինին՝ այն իսկ
էին, թէ զմիաբանութի եպիսկոպոսացն քակտեսցէ ՚ի
նախարարացն։ Եւ զայն ոչ էր տեղեկացեալ նո
տակաւին, եթէ ուր և մարմին բաժանիցին առ
ժամանակ մի գոյ տեսանել ՚ի բնութես, այլ որ սի
րով յուխտ մտեալ է, այսմ անհնար է լինել։

Յաղագս այնր պատմէ, ըն խորագետ արքային շար ՚ի վերայ
հաւելոյն վկայից, պատերազմին գոլ զգուշացեալ զէ այնո
րոայցէ զնոսա ՚ի ծով անդրադարձեան. զորոց ՚ի գիտելն
զգործն յիրաւէն՝ պարծեալ նախանձէ։

Արդ՝ երթեալ այրն՝ի տեղի ձմերոցին, սպասմեայ զայս ամենայն յականջս Թագաւորին. շարժեալ դողացոյց, և յամենայն զօրութենէ պակասեալ գտաւ. մանաւանդ զի յարևելից պատերազմէն կոլակոր, և ոչ բարձրագլուխ էր դարձեալ. Իբրև ստուգեալ հաստատեաց ՚ի վերջին հրեշտակէն՝ որ եհաս առ նա, զամենայն վնաս իւրոյ գործոյն զխորհրդակցօքն արկանէր, և անդէն շրջանէր ՚ի բազմաբոյ բորբոքմանէն. Քանզի լուաւ բերան չար խրատատուացն, որ անդադար յորդորէին զնա ՚ի գործ դառնութեան. Խոնարհեցաւ ՚ի բարձր հպարտութենէն և զվայրենացեալ սիրտն դարձոյց ՚ի մարդկային բնութի. Հայեցաւ և ետես զինքն լի տկարութեամբ. Գիտաց եթէ զամենայն զոր կամի առնել, ոչ կարէ կատարել՝ վաղվաղակի և դադարեցոյց ՚ի յանդուգն յարձակմանէն, և լռեցոյց զմոլեգնաբար գոչումն. Եւ որ մեծաբարբառ ձայնիւ որոտայր, և ես ահագին հրամանօքն զհեռաւորս և զմերձաւորս առհասարակ դողացուցանէր, սկսաւ քաղցր և աղերս բանիւք ընդ ամենեսին, և ասել, զի՞նչ վնաս գործեալ էր. և ո՞ր յանցանս յանցուցեալ էր կամ առ ազգս, կամ առ լեզուս, կամ առ անձն իւրաքանչիւր. Ո՞չ ահա բազում ուսմունք են յաշխարհիս արեաց, և իւրաքանչիւր պաշտամունք յայտնի են. ո՞ երբէք նեղեաց ընտեաց դարձուցանել ՚ի մե

օրէնս

ծրէնս մոգուէ։ Մանաւանդ զի օրինաց Քրի-
ստոնէութե. որպ հաստատուն և ճշմարիտ կայել
ջիւրեանց դենին, սոյնպէս և ս առ մեզ լաւա-
գոյն քան զայլ կեշտսն նոքա երևեալ են։ Եւ
բին իսկ ոչ ոք կարէ դնել ընտրել օրինացն.
այլ՝ զըդ և հաւատար համարիմ դենիս մազդէ-
զանց. որպ և յարգել իսկ էին նոքա առ նախ-
նեօքն մերովք, զոր ես ես ինձէն իսկ յիշեմ առ-
հարբն իմ՝ որ նստէր ՚ի մեծ դահս յայս։ Յոր-
ժամ սկսան անդաձել, և քննել զմ̄ ուսմունս
և հաւատութ̄ ՚ի վերայ եհաս, առաւել վեհ
գտանէր զօրէնս Քրիստոնէից քան զամենե-
յուն։ Վասնզի մեծարեալ շրջէին ՚ի դրան ար-
քունի, և առատաձեռն պարգևօք երանք լին-
էին ՚ինմանէ. և համարձակութ̄ շրջէին ընդ
ամ̄ երկիր։ Նա և որ գլխաւորքն էին Քրիս-
տոնէից, (զոր և եպսք անուանեն) ընծայից և
պարգևաց արժանի առնէր զնս̄. և իբրև հա-
ւատրիմ ոստիկանս՝ յանձն առնէր զհեռաւոր
մարզն. և ոչ երբէք սխալ լինէր մեծամեծ
իրայն արքունի։ Եւ դուք մի զայն երբէք ոչ
յիշեցէք. այլ համապազօր ձանձրացուցէք
զլսելիս իմ խօսելով զնոյանէ զամ̄ չարութի։
Տեսանէ՞ք զի ետուք ինձ գործել՝ զոր ինչ ոչ
կամէի. և եղէն մեծամեծ վնասք ՚ի սահմանսն
՚ի մէջ երկուց անհաշտ թշնամեացն։ Եւ մեք
դեռ ՚ի հեռաւոր Ճանապարհի. և ոչ մի ինչ
գործ պատերազմիս ՚ի գլուխ երթեալ. և դուք
աստէն

աստէն յիմում տանս յարուցէք ՚ի վ(եր)այ իմ պատե-
րազմ, որոյ չարագոյն եւս լինելոց է կատարած
իւր քան զարտաքին թշնամեայն։ Զայս ած եւ
առաւել քան զայնս խօսէր ը(ստ) ամ աւագանին,
եւ զվնաս յանցանացն արկանէր զմոգօքն եւ
զմոգպետաւն։ Եւ ամ փղրուկքն եւ պատուա-
կան նախարարքն՝ (որ նստէին յատենին եւ ունկն
դնէին յեղեղուկ լուզումի նորա) ամաչեցեալ
կորանային եւ ընդ երկիր պշնուին եւ զգլուխս
՚ի վեր ոչ կարէին ամբառնալ։ Բայց սակաւք
՚ի նոցանէ՝ զմիտս հաճելով ասէին, այո քաջ եւ
մեծարքայ, այդ այդպէս է զոր ասացեր դու. եւ արդ՝
կարես զամ ուղղութ(եամ)բ վճարել. չիք այն ոք, որ
ը(ստ) քո կամս արտաքս կարէ ելանել. զի տուեալ
է քեզ յԱծոյն։ Զամ զոր կամիս կարես առ-
նել. մի՝ նեղել տագնապիր յանձն քո եւ հարկա-
նէր զմիտս մեր ամյուն. Թերեւս եւ դիւրին եւս
իցէ հնարք իրացդ կատարածի։ Երկայնամիտ
լեր եւ համբերութ(եամ)բ անդրէն թողայց զքրիս-
տոնէութ(ի)ւն մարդկանդ, եւ դոքօք զատամբակսն
ածես ՚ի հաւանութի։ Հաճոյ թուեցաւ բանն
առաջի թագաւորին. եւ անդէն վաղվաղակի
կոչէր զառաջեաւ յամ ազգացն՝ որ ՚ի զօրուն
էին եւ ունէին զքրիստոնէութիւն, եւ բռնաբար
արգելեալ էր զնոսա զի մի ոք իշխան՝ լինի յան-
դիման պաշտել զԱծ։ Վասնզի եւ որք ընդդի-
մացանն շարչարեաց եւ արգել ՚ի նոցանէ զյայտնի
պաշտօնն. եւ ոմանց ոմանց ակամայ եւս երկիր-

պագա

պագանել արեգական, և նմանոյ՝ի սուգ տրտմութե զա̃մ զօրականսն. Իսկ այն օր Հրամայեր՝ անդէն համարձակութ̃բ ըստ առաջին կարգին հաստատուն կալ յօրէնս Քրիստոնէութե։ Իսկ՝ որ յանցաւորքն էին, ոչ կամէին վաղվաղակի առանց մեծի ապաշխարութե գալ և խառնիլ՝ի կարգ Քրիստոնէութե, Հրամայեր Թագաւորն զի բռնի կալցին և տարցին յեկեղեցին իւրեանց։ Եւ երիցանցն համարձակէր. ոչ զի արդ եգիտցեն ը̃ս կարգին իւրեանց՝ արասցեն. և զՀաստատեալ ուղղիկսն կարգեր անդրէն իւրաքանչիւր. և զարգելեալ բազմականսն ՝ի նոյանէ՝՝ի տեղի Հրամայեր մատուցանել. և Հաղորդ յարքունիս մտանել՝ ոչ արգելոյր զնս̃. և զա̃մ որ զիարդ ինչ և կարգ էին յառաջագոյն, անդրէն յօրինէր. խոնարհէր և խօսէր ընդ նոսա սիրով ը̃ս առաջին սովորութե̃ն։ Եւ իբրև զայս ա̃մ արար և կարգեաց յանդիման ն̃ց, Թուղթ Հրովարտակ առաքէր ընդ ա̃մ երկիր իշխանութե տէրութե իւրոյ վ̃ս քրիստոնէից, եթէ ՝ի կապանս որք կայցէ, յարքունի հրամանէն արձակել լիցի. և եթէ ինչք ուրուք յափշտակեալ իցեն, դարձցին անդրէն։ Նոյնպէս երկիրք՝ եթէ հայրենիք եթէ պարգևականք եթէ սակաւագինք, և հանեալ ուրուք իցէ, շնորհեսցէ զի դարձցին։ Իսկ իբրև այսմ ա̃մի զնոսա տեղեակս առնէր, խնդրէր և՝ի նոցանէ վկայութի̃ հաստատուն երկրին Հայոց.

Եւ

Եւ երդմամբ յուխտ մտանէր առաջի նոցա՝ հաստատութեամբ ամենայն մեծամեծաց իւրոց, եթէ ոչ յիշեցից ամենեքին զքէն վրիժուցն խնդրելոյ։ Որպէս ունէիք յառաջ ճշմարտութեամբ զօրէնս ձեր առնել այսուհետեւ կալարուք․ բայց միայն ՚ի ծառայութենէս մերմէ մի՝ ելանէք։ Զայս ամենայն գրէր եւ ցուցանէր յերկիրն Հայոց եւ ՚ի բազում յայլ աշխարհս, որ ունէին զօրէնս քրիստոնէութեան։ Եւ ինքն գալով խոստմանն կալ, փութապէս դեսպանս արձակէր առ Մարկիանոս կայսրն։ Եւ իբրեւ ստուգեալ ճշմարտեաց եթէ Հոռոմք ՚ի բաց կային ձեռնատու լինել քրիստոնէութեան՝ ոչ զօրու օգնականութեամբ եւ ոչ այլ իրիք, դարձեալ անդրէն ՚ի նոյն կարծիս մոլորութեան շրջեցաւ զի դ յաջողութիւն իրացն ՚ի ձեռն իւրոց պաշտօնէիցն հրամայէր․ եւ այնպէս անէր զմտաւ, եթէ ըստ առաջին կարծեացն կատարեսցէ զամենայն։ Իսկ Հայք՝ թէպէտ եւ ընկալան զգիրն խաբեբայ ողոքանաց թագաւորին, (որ ՚ի վերոյ ունէր զաւետիս կենաց, եւ ՚ի ներքոյ զդառնութիւն մահու) զարմացեալ ընդ թերի խորհրդան ասէին ցմիմեանս, քանզի լիրբ է խորամանկ չարութիւն նորա․ զի երկիցս եւ երիցս զփորձ առեալ կշտամբեցաւ, եւ ոչ ամաչէ նա․ եւ տեղեակ եղեալ մերոյ անքակ միաբանութեանս, տակաւին լրբի եւ լկնի զհետ մտեալ՝ կամի զմեզ լքուցանել։ Իսկ մեք մի՝ հաւատասցուք անհաստատ հրամանի նորա․ զի զո՞ր բարեգործութիւն տեսաք սա ամ՟

եկեղեցին յաշխարհին պարսից. Զի որ ինքն իւր չար է, այլում բարի ոչ կարէ լինել. և որ ինքն ընդ-խառնար գնայ, այլում ոչ առաջնորդէ Ճշմարտութե լուսով. Ոպ զի չէք յանիրաւութե արդարութի և 'ի ստութե Ճշմարտութի, սոյնպէս և ոչ 'ի խռովասէր մոլար ակնկալութի խաղաղու-թե. Այլ մեք ապրեալքս զօրութբն Աստուծոյ և հաստատեալքս հաւատովն 'ի յոյսն Քի, որ եկն և էառ 'ի սրբոյ կուսէն մարմին ըստ մերոյ բնութեն, և միացեալ՝ անբաժանելի Ածութբն ըն-կալաւ զ չարչարանս մեղաց մերոց 'ի մարմինն իւր. և նովին մարմնովն խաչեցաւ և թաղեցաւ և յարուցեալ երևեցաւ բազմաց, և վերացաւ յանդիման աշակերտացն առ Հայր իւր, և նըս-տաւ ընդաջմէ զօրութեն, զնոյն հաւատամք Ած Ճշմարիտ. և նմին 'ն ակն ունիմք՝ փառօք Հօր զօրութբ գալ յարուցանել զամ ննջեցեալս, և նորոգել զհնութին արարածոյս. առնել հա-մառօտս յաւիտենից 'ի մէջ արդարոց և մե-ղաւորաց. Ոչ պատրիմք իբրև զտղայս. և ոչ մոլորիմք իբրև զանտեղեկս. և ոչ խաբիմք իբրև զտգէտս. այլ պատրաստ եմք ամ փորձութեց. Իւր աղաչեմք զԱծ և անդադար խնդրեմք 'ի բազում ողորմութե նորա, զի յորում սկսաքս իմին և կատարեսցուք քաջութբ և ոչ վատութբ. Քանզի արդ արևելք և արևմուտք գիտասցին վճեց ամմարտ լինել, և զմեզ զուր սպանա-նել 'ի վրէժ ամ վատասակոց մերոց. Պ կայ են մեզ

երկինք

երկինք երկնաւորօքս. եթէ չեմք ինչ մեղու-
ցեալ և 'ի միտս մեր անգամ. և 'ի վե՛ր պարգևաց
և բարիս առնելոյ մեզ. զճշմարիտ կեանս կամին
'ի մէնջ հանել որում չիք հնար, և այլ մե՛
լինել. Իսկ արդ մի՛ հաստատեսցուք անարժան
բերանոյ նր որ ասիպէր չարաչար յուրացուին
և այսօր առանց մի ինչ բարիս գործելոյ լինիցի
նա քարոզիչ աւետեաց. Որ հայհոյէրն զՔս.
և ուրացուցանէր 'ի նմանէ զամ հաւատացելոց,
այս որ ակամայ խոստովանութեանն ոչ կարեմք
վարվարակի յանձն առնուլ: Եւ որ երդնոյրն
'ի սնոտի պաշտամունս մոլորութն՝ անցուցանել
զամ չարաչարանս ընդ սբ պաշտօնեայս եկեղե-
ցւոյ, արդ եկեալ գովանալով գոհութ մատու-
ցանէր. և կամի զամ չարութն 'ի մեզ հեղուլ.
Ո՛չ այդմ հաւատամք. և ոչ ստուտ հրամանիդ
յանձն առնումք: Իսկ նա իբրև ետես եթէ ոչ
կարաց քակել զհաստատութիւն միաբանելոյն,
յայնժամ քակեաց յինքենէ զծերն լի դառնու-
թբ, յորում հանգուցեալ էր սատանայ զօրութբ
իւրով, և բազում գործեալ էր նր նախճիրս.
որոյ կերակուր կամաց իւրոյ էր 'ի մանկութէ
անարատ մարմինք սբց. և ըմպելի անյագուէ նո-
րին՝ արիւն անմեղաց: Յաւելոյր և 'ի վե՛ր նր չա-
րութն՝ և զխուր մահաբեր հրամանին. Գունդս
գունդս յամ աշխարհաց գումարէր ընդ նմա. և
բազում երամակս փղաց յղէր ընդ նմա. Հասեալ
մերձ 'ի սահմանս հայոց, մտանէր 'ի քաղաքն փայ
տակա

տակարան. և զզօրսն ըմ՝ ախուեր տարածանէց շուրջ զքաղաքաւն առ՝ ի զգուշութի պատրաստութե խուրոյ չարահնար խորհրդոյն. Եւ յամուր որջն մտեալ հին վիշապն չարաթոյն՝ բազում կեղծաւորութբ զինքն թագուցանելով յաներկխղուե, հեռաւորայն ահագին ձայնիւ սաստէր, և՝ ի մերձաւորսն աղելով իբրև զօձ փչէր։ Սա էր իշխան հրամանատար ըմ՝ տէրուեն պարսից. (որում անուն էր միրներսեհ) և չէր ոք ամենևին որ իշխէր ըստ ձեռն նորա ելանել. ոչ միայն մեծամեծք և փոքունք, այլ և ինքն իսկ թագաւորն հրամանին՝ անսայր. որոյ և ձախողի իրայն իսկ բուռն նր հարեալ էր։

---

## Գլուխ Դ.

Զրոյց՝ վասն նահատակութեն իշխանին [illegible] և ընկերաց նորա։

Մինչև ցայս վայր ոչ ինչ կարի զանգիտել և պատմել զհարուածս ազգիս մերոյ. որ յարտաքին թշնամեաց չմարտութ՝ն՝ չարաչար յարեան՝ ի վե՛ր մեր։ Որք սակաւագոյնք հարին զմեզ, յոլովագոյնք հարեալ գտանին իմենջ. Քանզի դեռևս միաբանք և հաւասարք էաք. թէպէտ և ոմանք՝ ի ծածուկ ունէին զերկմտութի նենգութեն, սակայն յաչս արտաքնոյն՝ ահաւոր երևէր միաբանութին. որպ յերկուս և յերիս

քերխ տեղիսն ո՛չ կարային կալ առաջի։ Ար-
յայտնեաց և անդր՝ (ուր սպրդեալ անկանի երկ-
պառակութիւն՝ի ներքս) է հակել միաբանութեան,
և երկնաւոր առաքինութիւն հեռանայ. և անձն-
ընտիրք լինելով՝ յո՜յժ բազմանայ լալումն ող-
բոյս. Վասնզի հատեալ անկեալ անդամքն (որ յա-
ռաջագոյն առորոն ընդ մարմնոյս էին) դառնայ
մարդ յարտաքս առաջի մերձակայ գիւղականն,
ևս առաւել ընտ դառնութբ ՝ի վր այնորիկ՝ որ
յոգի և՝ի մարմին առհասարակ դիւականայ։ Եւ
եթէ ՝ի վր միոյ անձին այսպ, որչափ և առա-
ւել՝ի վր ողջոյն ազգի միոյ։ Այլ յայտ տե-
ղւոջ ոչ միայն՝ի վերայ միոյ ազգի է ողբումն
մեր, այլ՝ի վր ազգաց և աշխարհաց. զոր և
յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէ-
պէտ և ո՛չ խնդութ մտօք։ Ահա՛ ակամայ ճառա-
գրեմ բազում ոք կորեան ոմանք առ ՝ի ճըշ-
մարիտ կենաց խուրեանց, և պատճառք եղեն
բազմաց կորստեան. ոմանց երևելեաց միայն,
և այլոց երևելեաց և աներևութից։ Եւ այն ևս
չա՛ր է քան զամ դառնութիւն զոր բայլին կորստեն.
ոչ միայն է կարողութիւն փակել զնա. այլ ըստ
մարդկան սահմանի անցեալ է հնարս։ Այս
անօրէն միրներահ քանզի յառաջագոյն սատու-
գեալ գիտէր զամբարշտութիւնն վասակայ, և
յայնմ ժամանակի ևս յղէր և կոչէր առ ինքն.
ոք և նորա խակ յառաջն զատեալ և հատեալ
էր՝ի միաբանութենէ հայոց։ Եկն և յանդիմանե

եղև

եղեւ, եւ ստուգէր նմա զիւր հաւատարմութիւն եւ զՀայոց անիրաւ ապստամբութիւն: Յաւել եւ պատմեաց եւս աւելաբանութե զոր ինչ ոչ էր գործեալ Հայոց. եւ կամէր ընտանեբար ընդ միտ մտանել անօրինին: Բայց նա թէպէտ եւ ՚ի ներքոյ յոյժ դարոլէր զնա, այլ արտաքին դիմօք մեծարեաց զնա, եւ եդ առաջի նր զմեծամեծ պարգեւս երկրաւորս, եւ խոստացաւ նմա իշխանութի աւելի քան զոր ունէրն. եւ հայեցոյց զնա ՚ի կարծիս սնոտիս, որ ՚ի վեր է քան զիւր տէրութիւն. իբրու թէ յանկ իցէ նմա հասանել մինչեւ ՚ի թագաւորական վիճակն. բայց միայն իւրայն հնարս խնդրեսցէ, թէ որպ քակտեսցի միաբանութի ուխտին Հայոց. եւ կամք թագաւորին կատարեսցի յաշխարհին: Եւ իբրեւ յանձն էառ զամ ինչ՝ երթալ զկնի կամաց նր, Գիտաց եւ ծերն դառնացեալ եթէ թմբրեալ եւ ցնորեալ եւ քակտեալ է ՚ի հաստատուն միաբանելոյն, յոյժ մխիթարեցաւ ՚ի միտսն տրտմեալս. եւ էած զմտաւ թէ զամն այսպէս կարիցեմ որսալ յանգիւտ կորուստ. եւ իւրոյ հնարագիտութեն տայր վկայութիւն: Եւ այնմ ոչ էր տեղեակ եթէ նա իւրով ՚ի զիւր անձն զատեալ եւ որոշեալ է ՚ի մէջ եկեղեցւոյն. Հեռացեալ եւ օտարացեալ ՚ի սիրոյն Քի. քանզի մոռացունք եղեն նմա գալուստ Որդւոյն Աստուծոյ: Ո՛չ յիշեաց զքաղցրութի մր Աւետարանին. ո՛չ ՚ի տպաւորեալ զանգիտեաց, եւ ո՛չ յաւիտենական

մխիթ

մխիթարեցաւ։ Ուրացաւ զամազանն՝ որ յղացաւ զնա. և ո՛չ յիշեաց զընկալուչ սբ Հոգին՝ որ ծնաւ զնա։ Անարգեաց զմարմինն պատուական՝ որով սրբեցաւն. և առ ոտն եհար զարիւնն կենդանի որով քաւեցաւն ՚ի մեղաց։ Ջնջեաց զգիր որդեգրութեանն, և իւրովք ձեռօք խորտակեաց զհաստատուն կնիք մատանւոյն։ Եւ ՚ի թուոյ երանելեաց, և ապստամբեցոյց Է իւր զբազումն։ Ձեռն եարկ կամակորութե՛, և եմուտ յորդեգրութե՛ դիմապաշտութե՛։ Եղև ամեն չարին, և ելից զնա սատանայ ամ՛ խորամանկութե՛։ ՚Ի ձեռն եառ իբրև զվահան, և ագաւ զնա իբրև զզրահս և եղև զէնուոր կատարեալ կամաց նր։ Մարտեաւ հնարիւք ընդ իմաստունս, և յոյժ խորամանկութե՛ ընդ գիտունս։ Յայտնի՝ ընդ անմեղս, և ՚ի ծածուկ՝ ընդ խորհրդականս։ Ձեռն եարկ և եհան զբազումն ՚ի գնդէն Քի՛, և խառնեաց ՚ի գունդն դիւաց։ Եւ ՚ի քաղաքն և յայլ տեղիս գողաբար սողեցաւ և եմուտ ՚ի մէջ ամբարշտելոյն, և խրամ հատեալ յափշտակեաց եառ և եւ յայտնի զբազումն յաղատաց, և զյոլովագոյնս ՚ի չինականաց, և զայլս ամենայն յանուանեալ քահանայից։ Որոց անուանքն են այս՝ գործակցացն նր։ Իշխանն Ըռշտունեաց՝ արտակ անուն. իշխանն խորխոռունեաց՝ գադիշոյ անուն. իշխանն վահունեաց՝ գիւտ անուն. իշխանն բագրատունեաց՝ տիրոց անուն. իշխանն ապահունեաց՝ մանէճ

անուն

մնուն. իշխանն գաբեղինայ՝ արտէն անուն. իշխանն ակէոյ՝ ընձուղ անուն. իշխանն ուրծայ՝ Ներսեհ անուն. իշխանն միւս ևս պալունեայ՝ վարաշապուր անուն. սեպուհ մի ամատունեայ՝ մանէն անուն։ Բազում և այլ ազատ մարդիկ զոր ոստանիկսն անուանէին՝ յարքունի տանէ։ Եւ բոլորովին զիւր աշխարհն ապստամբեցոյց յուրայուն. ոչ միայն ըստ աշխարհական բազմութեան, այլև զբազումս 'ի մէջ ուխտէ եկեղեցւոյն։ մանաւանդ սուտ երիցամբքն որով գործէր զչարիս։ Երէց մի զանգակ անուն՝ երէց մի պետրոս անուն՝ սարկաւագ մի սահակ անուն՝ զորս յղէր առ անմեղ մարդիկ, խաբէր և պատրէր սուրբ Աւետարանաւն. երդնուին և ասէին, եթէ 'ի թագաւորէն շնորհեսցի ամենայն քրիստոնէութիւն։ Եւ այսպէս խորամանկ խաբէութեամբ հանէին զբազումս 'ի մէջ միաբանութենէն, ածէին և խառնէին 'ի գունդս ուրացողացն։ Ժողովեալ զամենայն գայթակղութիւն, և արար գունդ զօր բազմաց։ Գրեաց և եցոյց մեծ հազարապետին զբազումս 'ի նոսանէ՝ յականէ անուանէ. և զիւր քաջութիւն արութեան մեծապէս պարծելով, որպէս աշակերտեալ 'ի մոլորութիւն խաբէութեան, և բաժանեալս և երկուցեալս երևեցոյց զզօրսն հայոց։ Եւ իբրև այս ամենայն չարիք յաջողեցան նմա, քակեաց և զմիաբանութիւն աշխարհին վրաց 'ի հայոց. և յաղուանից ոչ ետ յառաջ խաղալ։ և զձին աղձնեաց՝ ընդ նմին իսկ օրինակի

յետս

յետս կալաւ։ Գրեալ և հրովարտակս և յղեաց
յՅոն յունաց՝ ցուցանելով նց այլընդ այլ
սուտ՝ առ այր մի որում անուն փասակ. յայնց
մամիկոնեից, որ կան 'ի ծառայութեան յունաց, Եւ
'ի չուառութեան ժամանակին այրն այն սպարապետ
էր սորին հայոց. և հաւատարիմ էր զօրացն
հռոմոց 'ի սահմանին պարսից. և արտաքին էր
օրինացն այ գործովք իւրովք։ Եգիտ այս
փասակ զայն փասակ՝ իւր գործակից 'ի մեծամեծ
չարիսն, զոր միաբանեցին երկոքեանն։ Գրեր
և ցուցանէր հանապազորդ նա, իբրու թէ ամ
հայք զկնի իւր միաբանեցին։ և զնոյն գիր մե-
ծաւ զգուշութ՝ ներքին փասակն տայր տանել
'ի թագաւորանիստ քաղաքն կայսեր. մինչև
զութ եպիսկոպոսացն զմիտսն ուծայրցս 'ի նցնէ. և
զամ զօրսն յունաց յերկրայս արար յուխտէն։
Մանաւանդ զի 'ի ձեռն սուտ քահանայից
պատրէր. իբրև Ճշմարիտ մարդովք՝ Աւետա-
րան հանդերձ խաչիւ տայր տանել. և զամ
զիւր սատանայական սուտն՝ նոքօք ծածկէր։
Դնէր զինքն յածպաշտութե կարգի. և քան զամ
կողմն ուրացելոյն՝ առաւել զինքն հաստա-
տէր, հաստատուն քան զզօրսն ամ հայոց։
Երդնոյր և հաստատէր ևս և զամ հրամանս
թագաւորութեն յարքունուստ ցուցանէր։ Նոյն
էին և կամք յունաց Յոն լսել զայն ախորժութբ.
այլ 'ի ձեռն սորա առաւել ևս յեղեղեալ տա-
պալեցան։ Սոյնպէս առնէր և ընդ ամ կող-

մանս

Մանս ամբոխականաց աշխարհին. 'ի տմբրիմն և՛ն կոչրիմն. յարձակմն և յաղօթմնսն և 'ի վկլըս և յաշխարհն խաղտելոյ. յղեր պնդեր զի առպնջականութ որք արժանի մի՛ արասցէ. Եւ ըստ մեծի չարութեանն՝ առաւել ևս ժամանակն եբեր նմա յաջողութի խրայն. զի ամենևին արտաքուստ օգնական որք ո՛չ գտաւ գնդին հայոց բայց յայնց հոնայն որոց բանս եդեալ էր. Սակայն և ընդ նոյն կուտեալ զայրուձին բազում արեց. տրդել և փակեալ զպրունս ելինն. Քանզի ո՛չ տայր դադար ամենևին թագաւորին պարսից պլ. յղեր և կոչեր գունդս բազումս 'ի պահակն ձորայ. և զվըրայ աշխարհն բովանդակ անդր գումարեր. Զզօրս լեռնայ և ձղբայ և զվատն, զգաւռն և զգղունարն, զխրասնն, զհեճմատակն, զփասխն և զփոխսն և զփիւքօնան և զամ զզօրսն, թօսայարանն լեռնայինն և դաշտայինն, և զամ ամհրակողմն լերանցն. Եր՛ զոր կարասեա մեծաւ պարգևօք՝ առատաձեռն բաշխելով զգանձսն արքունի. և էր՝ զոր հրամանաւ թագաւորին սաստիւ տագնապէր. Զայս ամ խիբըև արար և կատարեալ ըստ կամաց թագաւորին. օրըստօրէ գրէր և ցուցանէր մեծ հազարապետին պարսից. որ ղօղեալ թաքուցեալ էր 'ի քաղաքն փայտակարան. Համարձակեցաւ ասպ այնուհետև նա՛ ցուցանել զինքն բազում ազգաց. Եր որոց ա՛հ արկանէր. և էր՝ որոց սիրով պարգևս բաշխէր. կոչէր

առ-

առ ինքն զՎասակ եւ որք ընդ նմա էին իշխանքն ամենեքին, բազում պարգեւս յարքունուստ շնորհէր նոցա եւ զօրացն, որ նոցա բանի էին. Տանէր զառաջեան եւ զուրացեալն երկուսեան. ցուցանէր եւ հաստատէր եւ յայտ առնէր, եթէ սոքօք որսա ցայց զնոսա քակտել ի միաբան ուխտէն քրիստոնէութեան. Իսկ հազարապետն իբրեւ զայն լսէր, յոյժ շնորհակալ լինէր երկոցունցն. եւ յոյժ առաջի դնէր նոցա, թէ լիցի մեր յաղթութիւն, զայլոց քահանայից կեանս դոցա շնորհեցից. եւ զմեծ վաստակս դոցա ցուցից թագաւորին. Եւ այսպէս շարժեալ եւ շփոթեալ զաշխարհն Հայոց, մինչեւ զբազում եղբարս հարազատս քակեալ ի միմեանց. Ո՛չ եթող միաբան զհայր եւ զորդի. եւ ի մէջ խաղաղութեան արկանէր խռովութիւն իսկ, Եւ անդէն իսկ յիւրում աշխարհին՝ երկու եղբօր որդիք էին նորա ի սուրբ ուխտին առաքինութեան. գրեալ եւ եցոյց վասն նոցա յարքունիս, եւ էառ իշխանութիւն ի վերայ կենաց նոցա. մերժեալ եւ եհան զնոսա յաշխարհէն, զի մի դարձցին անդրէն. Հալածեալ եւ փախոյց զնոսա միայնակեացս աշխարհին, ոյք հայհոյէին զանդարձ անբարշտութիւն նորա. Արար եւ կատարեաց զնոսա չարիսն ընդդէմ Ճշմարտութեանն, Եւ զոր ինչ ոչ գիտէին անօրէն հեթանոսքն, իմացուցանէր վասն ուխտին քրիստոնէութեան, թէ որպիսի հնարիւք կարասցէ բառնալ յձէն Հայոց. Զայս ամենայն չարիս իբրեւ ետես ի նմա Միհրներսեհ

քան

քան յանձն իւր, առաւել ՚ի նմա էր յուսացեալ։ Հարցանէր և ստուգէր եթէ քանի՞ այր կայ ի հայոց աշխարհին ՚ի գնդին վարդանայ ընդ նմա բազմութիւն․ Իբրև լուաւ ՚ի նմանէ թէ աւելի են քան զվաթսուն հազար, խնդրէր ևս տեղեկութիւն վասն իւրաքանչիւր անձին քաջութեան․ և կամ քանի՞ այնոքիկ են որ սպառազէնքն իցեն. և կամ քանի՞ այնոքիկ են որ մերկ առանց կինու-աղեղնաւորք իցեն․ սոյնպէս և վահանաւոր հետևակաց․ Եւ իբրև ուսաւ զանթիւ համարոյ բազմութեան, առաւել ևս փութացաւ ուսանել, թէ քանի՛ իցեն պարագլուխք քաջ նահատակացն․ զի երկսա՛ ընդ միոյ պատրաստեսցէ առ մի մի ՚ի նոցանէ․ թող զայն նմա․ Այլ և դրօշից անգամ իւրաքանչիւր տեղեկանայր ՚ի նմանէ․ Եւ թէ քանի՞ գունդ զօրք բաժանիցեն. և ո՞ք ՚ի նոցանէ սաղաւարտօք լինիցին. և ո՞ր զօրագլուխ յորմէ կողմանէ ՚ի ռազմ մտանիցէ. և զի՞նչ անուանք իւրաքանչիւր համհազարայն իցեն. և քանի՞ փողահարք ՚ի մէջ գնդին ձայնիցեն․

Դակի՞շ գործիցեն արդեօք, եթէ արձակ բնակիցեն․ Ճակատ առ ճակա՞տ գործիցեն, եթէ համագունդ ընդ մի տեղի դրդիցեն․ Ո՞րք ՚ի նոցանէ յերկրայս կայցէ․ և կամ ո՞ք զանձն ՚ի մահ գնելով գուն գործիցէ․ Եւ իբրև զայս նմա տեղեկացաւ ՚ի նմանէ, կոչէր զնա զօրագլուխսն; պատուէր հրամանի տայր նմին յանդիման նմա;

զի խրատու նո՟ լուծիցեն ամենեքեան. Եւ զա՟մ զօրան զօրագլխօքն հանդերձ՝ յանձն առնէր առն միում յաւագոյն, որում անուն էր Մուշկան Նիւսալաւուրտ. Եւ ինքն խաղայր գնայր յերկիրն արեւելից. և յանդիման եղեւ մեծ թագաւորին՝ պատմէր զա՟մ անցս իրացն՝ և զիւր հնարաւոր իմաստութի՟ն՝ և զվաստակս զխաբեբայ զպատրանս հայթայթանացն. ո՟չ զառաջինն զիւր ամբարշտութի՟ն կամեցաւ ծածկել. այնու զի քակեաց երկպառակեաց զգունդն հայոց, իբրեւ լուաւ թագաւորն զայս ա՟մ ՚ի բերանոյ մեծ հազարապետին, դառնացաւ յանձն իւր և ասէ անսուտ երդմամբ. եթէ ապրեսցի անօրէնն այն ՚ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանօք տամ ըմպել նմա զբաժակ դառնութե՟ մահու.

---

## Գլուխ Ե.

(Հինգերորդ՝ յարձակմանն յարեւելից.)

Վասն այնր պատմէ ՚ի սկզբան գլխոյս, թէ զօրոն զէն աւելեաւ նորոգին Վարդան, համօրէն զնոսա առ յաստուածոյն վկայեն.

Մեծ է սէրն Աստուծոյ քան զա՟մ մեծութի՟ երկրաւոր. և այնպ՟ աներկիւղ առնէ զմարդիկ իբրեւ զանմարմինս զօրս հրեշտակաց, որպ՟ և անդստին ՚ի սկզբանէ է տեսանել. ՚ի բազում տեղիս մարդիկ՝ որ սիրողք ա՟յ

բազում

բազում անգամ զինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին զանգիտելով իբրև անալի վատասիրտք կամ՝ ՚ի յափշտակութի՟ ընչից կամ ՚ի խողխողումն սիրելեաց կամ ՚ի գերութի՟ ընտանեաց՝ ելանել ՚ի հայրենի երկրէն և անկանել ՚ի ստրկութի՟ յօտարութե՟. առ ոչ ինչ համարեցան զայս ա՟մ անցս չարչարանաց. այլ միայն միաբան կալ ը՟ ա՟յ, զի ՚ի նմանէ միայն մի՛ գրել ՚ի մեծութենս։ Զնա՛ բաւական համարեցան ընտրել ՚ի միտս իւրեանց. և զուրախութի՟ն մեռելութի՟ վարկան. և զմահն որ վասն ա՟յ, անանց կենդանութի՟. և ծառայել յերկրի՝ ազատութի՟ կենաց իւրեանց. և ընկենուլ զանձինս յօտարութի՟ ընտանութի՟ ընդ Աստուծոյ գիտացին. ո՟պ յայսմ ժամանակի տեսանք աչօք մերովք. զի զնո՛յն նահատակութիւն նահատակեցա՟ և յաշխարհս հայոց. Քանզի իբրև ետես մեծն Վարդան զերկպառակութի՟ աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութե՟ զանգիտեաց. թէպէտ և ստուգեալ գիտաց զբազմաց այլոց ևս երկմտութի՟, որ դեռ ևս ը՟ նմա միաբանեալք էին։ Քաջալերեցա՟ յանձն իւր, և քաջալերէր զզօրս իւր. քանզի ինքն իսկ դեռ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղին միաբանութե՟ նախարարացն՝ որ ո՛չ քակտեցան ՚ի մե՟ ուխտէն. հրաման տուեալ ա՟մ զօրացն ժողովել յարտաշատ քաղաք։ Փոխանակ յետս կացելոցն որ էին զհետ իշխանին սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս՝ ՚ի

տեղիս

տեղեաց մատուցանէր, և զիւրաքանչիւր զօրսան-
նց. զի դեռ ևս ինքն ունէր զամենայն։ Եւ ամենքն
փութով 'ի տեղի պատերազմին եկեալ հասա-
նէին՝ իւրաքանչիւր զօրօք և ամ պատրաստութե-
նք և որ բունքն հաստատուն կայեալ էին 'ի տե-
ղւոջն։ Ներշապուհ արծրունի. և Խորէն խոր-
խոռունի. և ինքն Սպարապետն. և Արտակ պա-
լունի. և Վահան ամատունի. և Գունդն վահեւու-
նեայ. և Թաթուլ դիմաքսեան. և Արշաւիր արշա-
ռունի. և Շմաւոն անձաւացի. և Տաճատ գն-
թունի. և Ատոմ գնունի. և Խոսրով գաբեղեան.
և Կարէն սահառունի. և Հմայեակ դիմաքսեան.
և Գազրիկ դիմաքսեան. և Ներսեհ քաջբերունի.
և Փարսման մանդակունի. և Արսէն ընծայացին.
և Վրէն դաշրացի։ և Ապրսամ արծրունեայ.
և Շախուռապետն արքունի. և Խուրս սուանձ-
տեայ. և Քողեանքն. և Ակէացիքն. և Տրպա-
տունիքն. և զօրքն Ռշտունեաց. և ամ գոր-
ծակալքն արքունի։ Իւրաքանչիւր զօրու հան-
դերձ՝ որքա ամքն համագունդ հասանէին 'ի
գործ պատերազմի 'ի դաշտն աւարայր։ Եւ լինէր
հանդէս համարուն վաթսուն և վեց հազար
այր՝ ընդ հեծեալ և հետևակ։ Եկին ընդ նմա և
սբն Յովսէփ և Ղևոնդ երէց, բազում և այլ
ևս քահանայք, և ևս բազմագոյն պաշտօնեայք.
Քանզի ոչ զանգիտեցին և նոքա գալ ընդ նոսա
'ի գործ պատերազմին. զի ոչ եթէ մարմնական
համարէին զկռիւն, այլ՝ հոգևոր առաքինութե.

կան

յանկային մահակից լինել քաջ նահատակային.
ակսաւ Սպարապետն խօսել միաբանութ՟ նա-
խարարացն ը՟ զօրուն և ասէ. բազում պատե-
րազմունս մտեալ է իմ, և ձեր ը՟ իմ. է ուրեք զի
քաջա՟պ յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք զի
նք՟ մեզ յաղթեցին. և բազում այն է ուր յաղ-
թող գտեալեմք և ոչ յաղթելք. և միանգամայն
այն ա՟մ՝ մարմնոյ պարծանք էին. քանզի հրամա
նաւ անցաւոր թագաւորի մարտնչէաք. Եւ որ
փախչէր, վատ անուն յ՟լի երևէր, և անողորմ
մահ՚ի նմանէ գտանէր. իսկ որ քաջութ՟ յառաջ
մատչէր, քաջ անուն աղգի ժառանգէր. և
պարգևս մեծամեծ յանցաւոր և՚ի մահկանացու
թագաւորէն ընդունէր. Եւ մեք իսկ աւասիկ
յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէր և սպի
բազումս. և բազում այն. քաջութե՟ իցէ. վ՟ր
առեալ իցէ պարգևս մեծամեծս. Անարգ և
անօգուտ զքաջութիւն համարիմ, և առ ոչ ինչ
զպարգևսն բազումս. վ՟ զի խափանելոց են
ա՟մքն. իսկ արդ՝ եթէ վասն մահկանացու
հրամանատուին՝ զայն արութիւն կատարէաք,
որչափ ևս առաւել վասն անմահ թագաւորին
մերոյ, որ Տէր է կենդանեաց և մեռելոց. և
դատելոց է զա՟մ մարդ ը՟ գործոց իւրոց։ Այս
քէն թէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերա-
ցայց, սակայն ելանելոց եմք ՚ի մարմնոյ աստի, զի
մնայուք առ Ա՟Ծ կենդանի՝ որ ոչ ևս ելանիցեմք
՚ի նմանէ. Արդ՝ աղաչեմ զձեզ քաջ նիզակակիցք
իմ

իմ. մանաւանդ զի բազումք 'ի ձէնջ լաւագոյն
են քան զիս արութ̄, և գահու 'ի վեր ըստ հայ-
րենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք
և յօժարութ̄ առաջնորդ և զօրավար ձեզ կա-
ցուցէք, հեշտ և բաղձալի թուեսցին բանքս
իմ 'ի լսելիս մեծամեծաց և փոքունց. Մի եր-
կուցեալ զանգիտեսցուք 'ի բազմութենէ հեթա-
նոսացն. և մի' յահագին սրոյ առնն մահկանա-
ցուի զթիկունս դարձուսցուք. Զի եթէ տացէ
Տր յաղթութիւն 'ի ձեռս մեր, սատակեսցուք զօ-
րութիւն նց, զի բարձրասցի կողմն ճշմարտութեն.
Եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց
սբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խն-
դութբ սրտիւ. բայց միայն յարութ քաջութեան'
վատութիւն մի' խառնեսցուք. Մանաւանդ զի
անմոռանալի է ինձ յիշելով զիմ և զոմանց 'ի ձէնջ
ժամանակի' զի զանօրէն իշխանն խաբեցաք
պատրեցաք իբր և զմանուկ մի տղայ անպիտան'
իբրու այն թէ 'ի վերին երեսս զկամս նր ամ-
բարշտութեն կատարեցաք' բայց 'ի ծածուկ խոր-
հուրդս մեր' Տրն ինքնին վկայ է մեզ, թէ որ
անքան կայեալ 'ի նմանէ. Զոր և դուք ինքնին
իսկ գիտէք. վս սիրելեացն մերոց' որ 'ի մեծ
նեղութեն էին, հնարս խնդրէաք յանդորր հա-
նել. զի նոքօք հանդերձ մարտեդեալ կռուէի-
ցիմք ընդ անօրէն իշխանին վս հայրենի Ածա-
տուր օրինացն: Եւ իբր և նոցա ոչ ինչ կարացաք
օգնել. անհնար լիցի այս եթէ վս մարմնաւոր
սիրոյ

տիրոջ՝ զԱծ ընդ մարդոյ փոխանակեմք. Իսկ արդ՝ յերկուս և յերիս կուիւմ՝ Տրն ինքնին մեծաւ զօրութբ օգնեայ մեզ՝ ող զի զանուն քաջուե ժառանգեսցուք. զզօրսն արքունի չարաչար հարաք, և զմոգսն անողորմ սատակեսցուք, և զպղծութի կռապաշտութեն 'ի տեղեայ տեղեայ սրբեսցուք. զանօրէնն հրաման Թագաւորին եղծաք ապականեսցուք, զխուովութի ծովուն ցածուցուք. լեռնացեալ ալիքն դաշտացանն, բարձրացեալ փրփուրն սպառեսցուն, դաղանացեալ սրտմտութին դադարեայ. Որ 'ի վր ամպոյ որոտայր, նկուն եղեւ գտաւ 'ի ներքոյ քան զստորական բնութին ընդ մեզ խօսելով: Որ բանիւ և հրամանաւ կամէր կատարել զչարութին 'ի վր սբ Եկեղեցւոյ, արդ աղեղամբ և նիզակաւ և սրով կռուի. Որ իբրև զհանդերձ կարծէր մեզ ունել զՔրիստոնէութիւս, արդ իբրև զգոյն 'ի մարմնոյ չկարէ շրջել. Թէրևս և ո՛չ այլ կարասցէ մինչև 'ի կատարած. քանզի հիմունք սորա հաստատութբ եղեալ են 'ի վր վիմին անշարժութե. ոչ 'ի վր երկրի, այլ 'ի վեր յերկինս. ուր ո՛չ անձրևք իջանեն, և ո՛չ հողմք շնչեն, և ո՛չ հեղեղս յարուցանեն. Եւ մեք Թէպէտ և մարմնով յերկրի եմք, այլ հաւատովք յերկինս եմք շինեալ. ուր ոչ ոք կարէ հասանել յանձեռագործ շինուածն Քսի. Հաստատուն կայէք յանշուշտ զօրագլուխն մեր, որ ո՛չ երբէք մոռասցի զգործ նահատակութես. Ո՛վ քաջք՝ մեզ

մեզ այս մեծապէս է՝ զոր կատարեաց Ած ՚ի ձեռն մերոյ բնութեան, յորում և զօրութիւն Այ մեծապէս երևի։ Զի եթէ զայլս կատարելով՝ ՚ի վր Ածային օրինային պարծանս անձանց ժառանգեցաք, և զքաջ անուն ազգատոհմին մերոյ Թողաք եկեղեցւոյ, և վարձուց անկանելի ՚ի Տնէ է՝ որ պահի իւրաքանչիւր ումեք ՚ի մէնջ՝ ըստ յօժարութե սրտին և ըստ առաջարկութե գործոյ, որչափ ևս առաւել եթէ մեք մեռանիմք ՚ի վր մեծի վկայութե Տն մերոյ Յի Քի. որում և երկնաւորքն են ցանկացեալ եթէ գոյր հնար։ Եւ այս պարգևք՝ ոչ միայն են անկ, այլ որոց պատրաստի ՚ի բարերար Տեառնէն։ Եւ մեզ այս ոչ եթէ յարդար գործոյ ինչ պատահեաց, այլ յաննախանձ պարգևատուէն։ Ով և աւէ իսկ ՚ի սուրբ Կտակարանին. ուր առաւել եղեն մեղքն, անդէն առաւելան շնորհքն Այ։ և մեզ կարի քաջ ՚ի դէպ եկանէ հրաման առատախանւոյս այսորիկ։ Որպ և առաւելապէս երևեցաք մարդկան ամբարշտեալք, կրկին առաւելապէս երևեսցուք արդարացեալք մարդկան և հրեշտակաց և Հօրն միայն։ Զի որ օր լռան ապաքէն զմէնջ մարդիկ ՚ի գործ անբարշտութեն, արտասուք բազում հեղան ՚ի մեր եկեղեցւոջն. և ևս բազմագոյն ՚ի մէջ սրբելոց մերոյ։ Նաև ընկերքն մեր՝ սրով սրտմտեալ սպանանային մեզ, և մահ դառնութե ՚ի վերոյ կամէին հասուցանել, Եւ ծառայքն մեր մար-

տուցեալ՝

տուեալ փախչելին ՚ի մէնջ։ Եւ հեռաւորայ՝ որոյ լուեալ էր զանունն Քրիստոնէութե մերոյ, և քանզի ո՛չ էին տեղեակ խորհրդոյն մերոյ, որքս ՚ի բերան առեալ անդադար աշ- խարհէին զմեզ, և անգիտութիւ հայհոյութիւ բազում խօսէին զմէնջ։ Եւ որ մեծն քան զամ՝ ասայից. ոչ միայն մարդիկ յերկրի, այլ և հրեշ- տակք յերկինս զերեսս իւրեանց դարձուցին ՚ի մէնջ, զի մի՝ տխուր դիմօք հայեսցին ՚ի մեզ։ Եւ արդ՝ եկն էհաս ժամանակ՝ զի զամ զկեղտ անունդ ՚ի մէնջ ՚ի բաց բարձցուք։ Յայնժամ իբրև թախծեալ սգաւորք՝ յոգի և ՚ի մարմին էաք տրտմեալք, և այսօր զարթուցեալք՝ յերկո- սեանն առհասարակ եմք լրջացեալ. քանզի և զբարերար Տէրն ընդ մեզ տեսանեմք յառաջ- նորդուն։ Չէ մեզ մարդ զօրավար. այլ՝ զօրա- գլուխն ամ մարտիրոսաց, Երկիւղ՝ թերահա- ւատուն է նշանակ. զթերահաւատութիւն մեք ՚ի մէնջ վաղ մերժեցաք, ըստ նմին և երկիւղն փախիցէ ՚ի մտաց և ՚ի խորհրդոց մերոյ։ Զայս ամ առաքինի զօրավարն խօսեցաւ ընդ ամ բազ- մութեն. դարձեալ և զմի մի ՚ի նոցանէ ՚ի ծածուկ քաջալերէր և սրտապնդէր. և զամ պակասու- թի աղքատութեն՝ որոյ ոչ ինչ գոյր՝ զօրականին յանձնէ և ընկերայն մատուցանէր։ Որոյ զէն չգոյր, զէն պատրաստէր. և որում հանդերձ պիտոյ էր, հանդերձ զգեցուցանէր. և որում երիվար ոչ էր՝ երիվար տայր. և առատ ռոճկօք

ուրախ

ուրախ առնէր զա՟մն. և զուարթագին զինքն ցուցանէր ամենեցուն. Եւ ը՟ պատերազմական կարգին՝ զքաջաց արանց զիշխանակարանս Հանապազ երկրորդէր առաջի նր՟. զի և ինքն իսկ տեղեակ էր՝ ի մանկութենէ իւրմէ ս՟բ կտակարանաց. Զոր և՛ի ձեռն առեալ զքաջընկալագիրն մանկաբայեցւոյ՝ ընթեռնոյր՝ ի լսելիս ա՟մցուն. Եւ յորդառատ բանիւք գիտէր զելս իրացն իմացուցանել նր՟, թէ ո՟պ մարտուցէլ կռուեցան՝ ի վ՟ր Անատուր օրինացն՝ ընդ դէմ Թագաւորին անտիոքոսի. Զի Թէպէտ և՛ի նմին կատարեցան մահուամբ, սակայն անուն քաջութ՟ եկաց մինչև ցայսօր ժամանակի. ոչ միայն յերկրի այլ և յանմոռուայ յերկինս. Նաև զայն ևս յուշանէր զօրականացն, թէ ո՟պ ազգատոհմն Մատաթիայ՝ քակտեալ բաժանեցան՝ ի միաբանութէ նր՟, պարձան՝ ի հրաման Թագաւորին, չինեցին մեհեանս, մատուցին զոհս պղծութ՟. խոտորեցան յԱստուծոյ, և ընկալան զպատիժ պատուհասի մահուան՝ ի ս՟բ միաբանելոցն. Իսկ Մատաթի և որ ը՟նմայնեին, ոչ ինչ Թուլացէլ լքան. այլ ևս առաւել պնդեցան և ձեռնամուխ եղեն՝ ի գործ պատերազմին բազում ժամանակս. Զայս ասէր և անդէն՝ ի դաշտին զտեղի առեալ զզօրսն զետեղէր. և յա՟մ կողմանց տակաւ զայրուձին գումարէր.

Յաղագս այնր զպատմէ, թէ յառաջապահէլ ճորայն զօրաց՝ ինքեանց պարտեցան։ Իսկ առաւէն Ղեւոնդ ՚ի հանդէս հայոց՝ շահաշահն օրինակս և վայելչագեղ տեսլեամբ ՚ի առաւէ գրոց ներ անձն ՚ի չարաչարած գործոյն համարոյ։

Իսկ յետ բազում աւուրց զօրագլուխն պարսից՝ խաղայր գնայր ամ հեթանոսական բազմութբն. եկեալ հասանէր յաշխարհն հայոց՝ ՚ի հեր և ՚ի զարաւանդ գաւառ։ Անդէն ՚ի գաւառին զտեղի առեալ՝ և նոր բանակ բոլորէր փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրև զքաղաք՝ ամ պատրաստութբ։ Գունդ բազում հատանէր ՚ի զօրայն նր, ապստամբաւ արշաւէր յաւարի առնուլ կամէր զգաւառս բազումս։ Զայն իբրև լուան զօրքն հայոց, սեպուհ մի յազգէն ամատունեաց Առանձար անուն՝ ընտրելին յամ զօրականէն լի իմաստութեամբ և քաջութբ. Եւ ընդ յառաջ նր երկու հազարօք, եհար սատակեաց զբազմութ գնդին. և զմնացեալսն ՚ի նոցանէ՝ անդրէն ՚ի բանակն փախստական արկանէր. և ինքն ողջ անդամ այարէն դառնայր։ Եւ լինէր տօն ուրախութե յաւուրն մեծի՝ զօրայն հայոց։

Դարձեալ միւսանգամ ուրացեալն վասակ՝ անդրէն ՚ի հնարս հայթայթանաց մտանէր ըստ առաջին կեղծաւորութեն իւրոյ։ Արջէյաւ ՚ի ձեռն

Ձեռն սուտ երկեանցն՝ զոր յառաջագոյն ասա-
ցաք. նոքօք հրամանաւ արքունի՝ ՚ի պատգամա-
ւորութեան խօսէր, և երդմամբ հաստատէր ըզ-
քրիստոնէութիւն անդրէն. Եւ զայս արարեալ
բազում աւուրս՝ ոչ կարաց զմիաբանութիւն քա-
կել. մանաւանդ զի ուխտ եկեղեցւոյն, որ ոչ
էր հեռացեալ ՚ի զօրականացն. Որպէս երա-
նելին երէցն Ղևոնդ հրաման առեալ ՚ի նց ըն-
կերակցացն ՚ի մեծն Յովսեփայ և յայլ մեծամե-
ծացն՝ ՚ի քահանայից և ՚ի զօրագլխացն, եբաց
զբերան իւր և ասէ բարձր բարբառով առաջի
հրեշտակացն. Յիշեցէք ամ՟քն զհարսն մեր
զառաջինս, որք յառաջագոյն քան զծագումն
Որդւոյն Աստուծոյ՝ յիւրաքանչիւր ժամանա-
կի. Քանզի իբրև մերժեաց և ընկեց զմեզ
չարն յԱստուածային տեղւոյն, գտաք մեք անկեալ ընդ
անողորմն դատաստանօք ըստ մեղացն յանցաւո-
րութեան. Որ ՚ի կամս ազատութեան մերոյ գործեցաք
զանարժանս, և զարարչական զօրութիւն շարժե-
ցաք ՚ի վերայ մեր ՚ի ցասումն բարկութեան. Եւ զո-
ղորմած դատաւորն յուղեցաք վրէժ առնուլ
անաչառութեամբ յարարածոցս. մինչև հրաման տու-
եալ երկնային ծովուն՝ հեղուլ ՚ի վերայ ցամաքի,
և հաստատուն յատակք երկրիս ծածկեալ՝
ընդդէմ զհակառակն գործեցին. Վերինք և
ներքինք եղեն մեզ գործիք տանջանաց՝ առանց
բարեխօսի վրէժ առնուլ յանցանացն մերոց.
Այլ քէն արդարն Նոյ՝ միայն գտաւ կատարեալ
յազգի

՚յազգի մարդկութեա. որ յածոյց զսրտմտութի բարկութե տէրունեան յասմանն, և եղև սկիզբն առաջարկութե առ աճումն բազմութե մարդկային ազգիս ։ Դարձել և Աբրահամն ՚ի փորձութեն իւրում գտաւ առաքինի. և ընկալեալ պարգևան յԱստուծոյ՝ ինքեան ձեռօք փոխ անդրէն նմին մատուցանէր ։ Այսորիկ և առակս ընկալաւ զնա Այ. զի ինքն տպաւորեալ տեսանէր զաներևոյթ գալուստ Որդւոյն Աստուծոյ, և զմբռնումն անըմբռնելոյն, և զզենումն անմահին, որ իւրով մահուամբն խափանեաց զիշխանութի մահու ։ Եւ եթէ մահուամբ մահմեռանի, մի՛ երկիցուք մահակից լինել Քի. զի Է որում մեք մեռանիմք, Է նմին և կենդանանամք. Յիշեցէք առաքինիք զմեծն Մովսէս, մինչչև հասեալ էր ՚ի յարբուն հասակն՝ խորհուրդ սբ նահատակութեն ՚ի տիս տղայութե երևէր ՚ի նմա. և տուն Թագաւորին եգիպտացւոց՝ ՚ի ծառայութի մատնէր նմա, և ակամայ դայեկութ սնուցանէր զնա ։ Եւ ՚ի ժամ փրկելոյ զժողովուրդըն ՚ի նեղութեն՝ միջնորդ եղև երկնի և երկրի. միանգամայն և Ած անուանեցաւ ՚ի վր եգիպտացւոյն ։ Քանզի ուր գտաւ սբ խորհուրդն զօրացեալ, անձամբ իւրով առնոյր վրէժ յեգիպտացւոյն ։ Իսկ ուր Ածային յայտնութին ՚ի վր նորա լինէր ՚ի ձեռն գաւազանին գործէր զմեծամեծ զսքանչելիսն ։ Եւ վս սբ նախանձուն զոր ունէր, եհար զեգիպտացին և Է

աւա

ա՛ազեայ. վա՜յ մեծ անուն դնէր նմա, և առաջ նորա ժողովրդեանն զնա՛ կայուցանէր։ Եւ բազում ա՛յնէ, որ հեղման արեամբ արդարացաւ, և անուանեցաւ մեծ քան զամ մարգարէսն. ոչ միայն զարտաքին թշնամիսն կոտորելով, այլ զազգատոհմն իւր, որ փոխանակեցին զԱծ Է որթուն յանապատին։ Եւ եթէ նա՝ ի հեռուստ այնպիսի վրէժխնդիր էր գալստեան Որդւոյն Աստուծոյ, մեք որ ականատես եղաք և մեծապէս վայելեցաք յերկնաւոր պարգևս շնորհացն, ևս առաւել պարտիմք վրէժխնդիր լինել մօտակայ Ճշմարտութեանս, որ ետ մահուամբ զանձն իւր՝ ի վր մեղաց մերոց, և արդարացոյց զմեզ յանհնարին դատապարտութենէն։ Դիցուք և մեք զանձինս մեր մահուամբ՝ ի վր անուան զօրութեն, զի մի նուաղեալ քան զվրէժխնդիրսն գտանիցիմք։

Յիշեցէք և զմեծ քահանային Փենեհեզ, որ ըսպանմամբ երբարձ զպղծութին՝ ի ժամ պատերազմին, և ազգէ յազգ երդմամբ հաստատեաց զքահանայութին։ Մի մոռանայք և զսբ մարգարէն Եղիա, որ ո՛չ կարէր հանդարտել հայել ՚ի կռապաշտութին ախայաբու. և արդար նախանձու իւրով զութն հարիւրսն ինքեան ձեռօք կոտորեաց. և զերկու յիսունսն անշէջ հրոյն մատուցանէր լուցկի. և զածային վրէժ խնդրելով, անըմբռնելի ահագին կառօք յերկրէ յերկինս վերացաւ։ Դուք ևս մեծի մասին

վիճակի

վիճակի հասել էք. զի ո՛չ ես կամք առաքին ձեզ ՚ի վերայումն, այլ խնդրելն Տ՟ն կամայ եւ երիվարայ՝ հզօր զօրութ՟ եւ սրբովք հրեշտակօք ընդ յառաջ եկեալ ձեզ՝ խուրաքանչիւր թեւս բուսուցանէ, զի՛ նո՛ր ուղեկիցք եւ նմին քաղաքակիցք լինիցիմք. Եւ այլ զի՞նչ ես երկրորդեցից առաջի ձերոյ քաջ նահատակութ՟դ. զի քան զիս տեղեակ եւ հմուտ էք սր՟ կտակարանացն. Դաւիթ ՚ի մանկութ՟ ժամանակին՝ քարիւ կործանեայ բլուրն մեղէն, եւ ոչ ինչ զանգիտեայ յահագին սրոյ հսկային. Ցրուեայ զգունդս այլազգեայն, եւ ապրեցոյց զզօրսն իւր ՚ի մահուանէ եւ զժողովուրդն ՚ի գերութ՟է. Եղեւ անդրանիկ թագաւորայն խորայելի. եւ անուանեցաւ հայր Որդւոյն Աստուծոյ. Նա անուանեցաւ առ ՚ի պէտս ժամանակին, եւ դուք Ճշմարիտ ծնունդք սր՟ Հոգւոյն՝ որդի՛ք էք Աստուծոյ, եւ ժառանգակիցք Ք՟ի. Մի՛ ոք զձեր բաժինն ՚ի ձէնջ հատանիցէ, եւ զձեզ օտարս եւ խորթս արարեալ տարաբաժին հանիցէ. Յիշեցէք զամենայն զօրավարսն զառաջինսն Իէլի. զՅեսուն, զԳեդէօնն, զՅեփթայենն, եւ զայլսն զամենեսին որ Ճշմարիտ հաւատովք էին, հարին կոտորեցին զզօրսն հեթանոսաց, եւ սրբեցին զերկիրն ՚ի պիղծ կռապաշտութ՟ենէ. Եւ վս՟ հաստատուն արդարագործութ՟ն՝ (որ ոչ ինչ երկմտեցին ՚ի խորհուրդս իւրեանց,) արեգական եւ լուսնին առ անոյ ականջայ լուսան, եւ կատա-

րեցին

րեցին զբան հրամանի նր̅. ծով և գետք Ճա-
նապարհ գործեցին առաջին նր̅ ըստ ո՛չ սովո-
րութե̅, և բարձրացեալ պարիսպք քաղաքին երի-
քովն՝ ձայնիւ՛ լոկով անկեալ կործանեցան: Եւ՛
այլքն ամ̅՝ որ ըստ հաստոյ քաջութե̅ կատարե-
ցին ՚ի դարս իւրաքանչիւր, գովեցան ՚ի մարդ-
կանէ և արդարոյն յԱստուծոյ: Այսպէս
նոյն Տր̅ է ՚ի սկզբանէ և մինչև ցայսօր և առ-
յապա և յաւիտենից յաւիտեանս: Ո՛չ նորոգի,
զի ո՛չ հնանայ. ո՛չ մանկանայ՝ զի ո՛չ ծերանայ.
ո՛չ փոփոխի անեղեղուկ բնութի̅ն Աստուծոյ.
ոչ̅ և ինքն ասէր բերանով մր̅ մարգարէին.
Ես եմ Ես եմ նոյն. ես՝ ՚ի սկզբանէ մինչև յաւի-
տեան. ո՛չ տամ զփառս իմ այլում, և ո՛չ զքա-
ջութի̅ս իմ դրօշելոյ: Զայս գիտել եղբարք մի՛
թուլութ̅ լքանիցիմք. այլ՝ պնդութ̅ սրտիւ և
հաստատուն հաւատովք կամակա՛ր յարձակեա-
ցուք ՚ի վերայ թշնամեայն, որ յարուցեալ գան
՚ի վր̅ մեր: Մեր յոյսն մեզ կրկին երևի. եթէ
մեռանիմք, կեանք և եթէ մեռուցանեմք, մեզ
նոյն կեանքն առաջի կան:

Յի՛շեսցու՛ք զբանն առաքելոյն որ ասէ, թէ փո-
խանակ ուրախութե̅՝ ( որ նմա առաջի կայր )
յանձն էառ զհամբերութի̅ մահու և խաչի. վա̅
այսորիկ Ա̅ծ զնա բարձրացոյց և ետ նմա ա-
նուն, որ ՚ի վե̅ր է քան զամ̅ անուն. զի յանուն
Յի̅ Քի̅ ամ̅ ծունր կրկնեսցի՝ երկնաւորաց և
երկրաւորաց և սանդարամետականաց: Եւ՛
քանզի

քանզի ճշմարտութիւն միայն է ընդ սիրոյն Քրիստոսի հոգւոյ աչօքն տեսանէ զաներևոյթ յստակ լոյսն ճառագայթից իմանալի արեգական, որ յամենայն ժամ և յամենայն օր գեր 'ի վերոյ ծագեալ՝ երևի ամենեցուն. և սրբահայեացս անպղտոր յստակութեամբ ձկտեցուցանէ զհայեցուածս. և թափանցանց եղեալ է յերկինս՝ յանմատոյց տեսիլն մերձեցուցանէ. և կորովութեամբ կշռէ զերկրպագութիւն՝ զերից հաստուածոյն միաւոր զօրութիւն։ Եւ արդ՝ որ ընդ Աստուծոյ աստիճանն ոտնափոխ եղեալ իցեն, և բարձրութիւն յորքունիսն հասեալ, և զամենայն մեծութիւն բոլանդակ տեսեալ, նա միայն է որ ժառանգէ զանանց ուրախութիւն և զանտրտմական մխիթարութիւն։ Մի՛ տեարք իմ պատուականք՝ յետ այսչափ 'ի բարձունս վերանալոյ այսրէն յերկիր անկեալ թաւալիցեմք. այլ՝ զանէղի առեալ անդրէն 'ի բարձրունսն հաստատեսցուք։ Թէպէտ և հայեսցուք 'ի ստորին կողմն երկրիս, տեսանեմք զսա լի՝ ամենայն ապականութեամբ և ամենայն պղծութեամբք։ Քանզի զինչ աղէտք տարակուսի են որ ոչ գործին յերկրայինս. ախտաբեր թշուառութիւնք աղքատաց, անթիւ չարչարանք նոցունց. աղյաւոր ծանրութիւնք հարկահանաց. զզուանք և կոփանք 'ի բռնաւոր ընկերակցաց. քաղցր ծարաւ ըստ կարօտութեան բնութեան. սառնամանիք ձմերայնոյ, և խորշակք ամառայնոյ. հիւանդութիւնք տարաժամք և ախտք մահաբերք՝

հանա

հանապազ տանջեն զմարդիկ։ Երկիւղք ար-
տաքնոյ և ահք ներքնոյ՝ անդադար 'ի վե՛ր հա-
սանեն։ Ցանկան մահու յառաջ քան զժամա-
նակն, և ո՛չ գտանեն. և բազումք են որ փորեն և
խնդրեն, խնդալից լինին յորժամ գտանեն։ Իսկ՝
որ թուի՛ն մեզ եթէ յաջողեալք իցեն 'ի մեծու-
թի և փափկանան ուրախութբ, պակասեալ 'ի
կեանս՝ մեծամտեալ հպարտանան 'ի յանցաւոր
մասունս աշխարհիս, սոքա՛ են որ կուրացեալ են
'ի Ճշմարիտ կենացն։ Իսկ արդ՝ զի՞նչ այն չարիք
իցեն, որ 'ի նմ ոչ գործեցին։ ընդ մեծութի՝
խառնեալ է յափշտակութի ընչից աղքատաց.
ընդ սբ ամուսնութի գէՃ պղծութի. յորս վայե-
լեն ընտրութբ, նոյուն երկրպագութիս իբրև
Աստուծոյ մատուցանեն մոլորեալքն 'ի Ճշմա-
րիտ կենացն։ Ո՞չ ահա ամ Ծս՝ Արարչին բոլո-
րեցուն է գոյացութի. և զոր նոքայն պաշտեն և
պատուէեն, այլաքէն 'ի նմին նիւթոյ է մասն։
Իսկ արդ՝ մասունքն մասանցն կան 'ի ծառայու-
թի. զի եթէ մի մասն Ծիս ապականայու է,
հա՛րկ է թէ և ամ մասունքն ընդ նմին ապա-
կանին։ Նաև 'ի մասանց անտի՝ պա՛րտ է թէ
ընտրութիք երևեցին։ Իսկ արդ՝ որ լաւ է,
(յայտնի է ամնցուն՝ որ գիտեն իմանալ.) նա՛
է ընտիր 'ի մասանցն։ Ապա եթէ այդ այդպ է,
քան զամ պաշտամունս հեթանոսաց՝ որում եր
կիր պագանեն, երկրպագո՛ւքն են առաւելելք
քան զանբան տարերսն, որոց չարաչար կան 'ի
ծառայ

ծառայութ։ Եւ զԻն Ած՝ որ 'ի մարդ կերպա-
րանայ, արարածոյ տանին յերկրպագութ․ որոյ
մեղաց չի՛ք քաւութ յարդար ատենին։

Արդ՝ անդր 'ի բայց Թողյո՛ւք զխաւարային
խորհուրդս մոլորելոյն․ եղկելիս և ողորմելիս
քան զամ մարդիկ՝ զնոսա համարեսցուք․ մանա-
ւանդ զի կամօք են կուրացեալ և ոչ 'ի հար-
կէ, ո՛չ երբէք գտցեն զՃանապարհս Ճշմար-
տութ։ Այլ մեր բացահայտեայ աչօք տեսեալ
զԼոյսն երկնաւոր, մի՛ պատահեսցէ մեզ խա-
ւարն արտաքին․ զի ոյք էին 'ի խաւարին և
եկն առ նս լոյսն Ճշմարիտ, կուրացեալ վրիպե-
ցան 'ի կենաց․ Իսկ որք ընկալայքդ, հաւատովք
որդիք էք և ո՛չ օտարախորթք․ սիրելիք և ո՛չ
Թշնամիք․ բաժանորդք և ժառանգորդք վե-
րին իմանալի քաղաքին։ Ա՛նդ է առաջնորդն
փրկութե մերոյ․ աստ քաջութ նահատակեցաւ,
և զնո՛յն ուսոյց ամ նիզակակից գործակցաց
իւրոց առաքելոյն։ Յորում և դուք էք այսօր
կրկին երևեալք․ օրհնեալք հաւատովք ընդ
դէմ աներևոյթ Թշնամւոյն, պատենազէն
զրահիւքդ ընդ դէմ ընկերակից սատանայական
գործոյն, Եւ եթէ այսպէս և եթէ այնպէս,
զերկոսեան կողմանսն՝ իպարտութ մատնէր։
Ոչ և Տրն ինքնին իսկ արար աշխարհի Թուե-
ցաւ եթէ մեռաւ, այլ նա յայնժամ տարաւ
զկատարեալ նահատակութին․ զախոյեանն ընկէց․
զպատերազմն եհար․ զԹշնամին ցրուեաց․
զաւարն

զաւա՛րն ժողովեալ· զգերին դարձոյց· զպարգեւսն բաշխեալ ամ սիրելեաց իւրոց՝ 'ի ձեռն իւրաքանչիւր առաքինութե։

Գիտէք դուք ամք. յառաջ ժամանակաւ՛ հասեալ ձեր 'ի գործ պատերազմի, թէպէտ և էր ձեր սովորութի քաջանայից հանապազորդել 'ի մէջ բնակիս, 'ի ժամ ճակատուն յանձնէլ ձեզ 'ինչնէ աղօթիւք յամուր տեղւոջ ուրեք թողուլք զնա։ Իսկ այսօր Եպիսկոպոսք և Երիցունք և Սարկաւագունք՝ Սաղմոսերգօղք և Գրակարդայք՝ իւրաքնչիւր կարգէլ կանոնօք՝ իբրև վարէլք զինու և պատրաստէլք 'ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամիսն ճշմարտութե։ Եւ եթէ մեռանել ևս հասցէ 'ի նոցանէ, սակայն և յայնժամնէ ոչ են զանգիտելոց· քանզի լաւագոյն զմեռանելն կամին, քան զմեռուցանելն։ Որ զի կրկին աչս ստացէլ ունին· հաւատոյ աչօք զքարկոծանս մարգարէիցն տեսանեն, և մարմնոյ աչօքս զքաջութի ձերոյ նահատակութեդ։ Մանաւանդ եթէ 'ի ձեզ զերկոսեանն իսկ տեսանեմք· քանզի և դուք տեսանէք զչարչարանս սր առաքելոյն, և զսպանումն զամ սուրբ մարտիրոսացն· որոց մահուամբն հաստատեցաւ սր Եկեղեցի· և հեղումն արեանն իւրեանց՝ եղև 'ի պարծանս վերնոյ և ներքնոյ· Եւ արդ մինչև 'ի գալուստն երկրորդ՝ նոյն նահատակութի կատարի չարչարանօք։

Ցայս

Ցայս վայր խօսեցաւ՚ի գիրջերին այնմիկ սուրբ երեցն Ղևոնդ. և փառաւորելով կատարեաց զամենն ասելով։ Եւ սեղան ուղղելով զամենասուրբ խորհուրդն կատարեցին։ Եւ ուղղեցին աւազան. և եթէ գոյր ոք երեխայ՚ի բազմութեն զօրուն, զգիրջերն ամ մկրտեցին. և Ը տուաւօտն՚ի սբ խորհրդոյն հաղորդեցան. և այնպէս լուսազգեստք եղեն, որպ՚ի տէրունեան սբ Զատկին։ Եւ մեծաւ զուարթութբ և յոյժ խնդութբ աղաղակեաց ամ բազմութն և ասէ. հաւատարեսցի մահս մեր՝ մահուան արդարոյն. և հեղումն արեանս մերոյ՝ ընդ արիւն սբ մարտիրոսացն. և հաճեսցի Այ կամաւոր պատարագս. և մի՝ տացէ զեկեղեցի իւր՚ի ձեռս հեթանոսաց։

---

## Գլուխ Զ.

Վեցերորդ՝ կրկին անգամ ընդդէմ գալ հայոց պատերազմաւ՝ թագաւորին պարսից։

Յորում նաև ցուցանէ, թէ ոյք և որքան անձինք յերկրոցունց կողմանց մարտիրոսանալ ելով։

Յետ այսորիկ՝ իբրև ետես զօրավարն պարսից զնդին, եթէ հատան պատգամաւորքն՚ի միջոյ խաբել զնա, և թարձաւ յոյս ակնկալութեն իւրոյ՝ գրաւել զնոսա յանկարծ միաբանութեն, յայնմ ժամանակի յաւուր

ւաջ կոչէր զանօրէնն վասակ և զնմանուրա-
ցեալ իշխանսն՝ որ էին ընդ նմա յաշխարհէն
Հայոց. Հարցանէր զնոսա և ուսանէր ՚ի նոցանէ
զհնարագիտութիւն յաղթութեան։ Եւ իբրև ու-
սեալ տեղեկացաւ զառն առն իւրաքանչիւր
քաջութիւն, կոչէր և զբազումս ՚ի զօրագլխացն՝
որ էին ընդ իւրով ձեռամբ. և հրամայէր ածել
զառաջեաւ զերամակն փղացն. և ՚ի գունդս
գունդս զգազանսն բաժանէր. առ մի մի փիղ՝
երեք հազար սպառազէնք. Թող զայլ զօրսն
ամենայն։ Խօսէր ընդ մեծամեծս՝ արքունի հրաման-
նաւ և ասէր. յիշեցէ՛ք այր իւրաքանչիւր ըզ-
պատուէր մեծ թագաւորին։ Դի՛ք առաջի
զանուն քաջութեան. ընտրեցէ՛ք զմահ, քան զկեանս
վատութեամբ։ Մի՛ մոռանայք զերդն և զպսակն
և զթուռսն և զառատաձեռն պարգևսն, որ
շնորհի ձեզ յարքունուստ։ Տեա՛րք էք իւրա-
քանչիւր գաւառաց. և ունիք իշխանութիւն բա-
զում. դուք ինքնին գիտէք զքաջութիւն աշխար-
հին Հայոց և զառն առն իւրաքանչիւր նահա-
տակութեան արութեան. գուցէ ձեր ՚ի պարտութեան մատ-
նեալ, կենդանեաւ վրիպեցէք ՚ի մեծ կենացն՝
զոր ունիք։ Յիշեցէ՛ք զկին և զորդիս ձեր.
յիշեցէ՛ք զսիրելի բարեկամս ձեր. գուցէ
ոտնհար լինիցիք յարտաքին թշնամեացն և ող-
բալիցք ՚ի ներքին սիրելեաց։ Նա և յուշ ևս
առնէր նոցա՝ զբազում ընկերակիցս փախու-
ցեալս. որք թէպէտ և ՚ի պատերազմին ապրե-
ցան

յանս, առեալ ընկալան զվճիռ իւրեանց· ուս-
տերք և դստերք իւրեանց յանաշխարհիկս գե-
րեցան· և ամ Հայրենի գաւառաւքն հատան ի
նցնէ։ Զայս ասէր և առաւել քան զայսն՝
սաստկացուցանէր զհրամանն արքունի։ Կար-
գէր կազմէր զզօրսն ամ՝ և տարածանէր եր-
կայնէր զճակատն յերկայնութի դաշտին մեծի·
և իւրաքանչիւր գազանայն յաջմէ և յահեկէ
զերեք հազար սպառազինան պատրաստէր. և
զընտիր ընտիր նահատակսն՝ շուրջ զիւրև
գումարէր· և այսպ ամրացուցանէր զգունդն։
Եւ իբրև զաշտարակ մի հզօր, և կամ իբրև
զբերդ մի անմատոյց, նշանս բաշխէր· դրօշս
արձակէր· և՚ի ձայն մեծի փողոյ՝ պատրաստ
հրամայէր լինել։ Իսկ զգունդն զապարհայիկ
և զկատաշայ և զհոնայ և զգեղայ և զայլ ևս
ընտիր ընտիր մարդիկ զօրուն՝ ՚ի մի վայր ժողո-
վէր և հրաման պատուիրէր տայր ընդ աջմէ կող-
մանէ իւրոյ գնդին՝ պատրաստ լինել ընդ դէմ
Հայոց զօրավարին։ Իսկ արին Վարդան յա-
ռաջ մատուցեալ և զաւագանին հարցանէր· և
միաբան ամենեցուն խրատիւք՝ զզօրագլուխսն
կարգէր։ Զգունդն առաջին՝ տայր ՚ի ձեռն
իշխանին Արծրունեաց· և նիզակակից նմին՝ զմեծ
իշխանն Մոկաց· և զայլ ամ նախարարեանն
համահարցս երկոցունց՝ և զամ բազմութի
գնդին՝ Թևս աստի անտի կազմէր նոցա։ Եւ
զգունդն երկրորդ՝ տայր ՚ի ձեռն Խորենայ Խոր-

խոռու

խոռունոյ. և նիզակակից նմա՝ ընծայ լինէր Ներսեհ Վրաջբերունի։ Եւ զգունդն երրորդ՝ մատուցանէր 'ի ձեռն Թաթուլ Վանանդացւոյ. և նիզակակից նմա՝ Հրամայէր զՏաճատ Գնթունի. և պարագումն 'ի քաջ արանց աստի և անտի 'ի թիւս նոցա։ Յանձն իւր առնոյր ըզ գունդն չորրորդ. և նիզակակից իւր՝ զքաջն Արշաւիր և զՀարազատ եղբայրն իւր զՀամազասպեան։ Կարգէր և կազմէր զճակատն յորդորելով՝ ը̄ ա̄մ երեսս դաշտին, դէմ յանդիման արեաց գնդին առափին տղմուտ գետոյն։ Եւ իբրև այսպէս պատրաստեցան երկոքեան կողմանքն, սաստկութ̄ և մեծա՛ւ բարկութ̄ զայրացայլին և գազանացեալ զօրութ̄ յիրեարս արձակէին. և ամբոխ աղաղակին յերկոցունց կողմանցն՝ իբրև 'ի մէջ ամպոց շ[illegible]թելոց ճայթմունս գործէր. և Հնչմունք ձայնիցն զքարանձաւս լերանցն շարժէր. 'ի բազմութենէ սաղաւարտիցն և 'ի փայլուն պատենազէն վառելոց՝ իբրև նշոյլք ճառագայթից արեգական Հատանէին. նաև 'ի բազում շողալ սուսերացն և 'ի ճօճել բազմախուռն նիզակացն՝ իբրև յերկնուստ ահագին Հրձգութիւնք յեռային։ Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծ տագնապ ահագին ձայնիցն։ Ոչ կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն՝ զլսելիս ամ̄ն առՀասարակ խլացուցանէին։ Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զաղէտս անբա՛ւ

տարա

տարակուսանայն երկոցունց կողմանցն, առ՝ի յանդուգն յարձակմանն՝ զմիմեանս բախելով։ Քանզի Թանձրամիտքն յիմարէին. և վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին. և նահատակքն գոչէին՝ և խումբ արարեալ ըստ բազմութեն, զգետն ՚ի մէ՛ջ փակէին. և զանգիտեալ գունդն պարսից ՚ի դժուարութէ գետոյն զտեղեաւն զեռեալ սկսան։ Իսկ գունդն Հայոց՝ հասեալ անցանէին մեծաւ զօրութեամբ սաստկապէս բախեալ ընդ միմեանս յերկոցունց կողմանցն, բազում վիրաւորս յերկիր անկեալ դիաթաւալ խաղային։ Յայնմ մեծի տագնապի ՚ի վեր հայեցեալ քաջն Վարդան, տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակացն պարսից զօրուն զի զձախակողմն շարժիցին զհայոց գնդին։ մեծաւ ուժով յարձակէր ՚ի տեղին և զաջ թեւն զգնդին պարսից՝ բեկեալ արկանէր զազանօքն. և շրջան առեալ կոտորէր մինչև ՚ի նոյն տեղի. և այնպէս շտապ տագնապի ՚ի վե՛ր հասուցանէր։ Մինչև գունդն մատեան, քակտեալ բաժանեցան ՚ի մեծամուր պարսատունէն։ Դիւրև քաջ քաջի փախուստ դառնային, այլ՝ դէտակն ՚ի վեր ամբառնայր մուշկան Նիւսալաւուրտ, քակեալ զոմանս տեսանէր ՚ի գնդին Հայոց. և զկնի մնայեալ՝ ՚ի հովիտս լերանցն։ Վասնորոյ և զաղաղակ բարձեալ քաջալերէր շուրջ զիւրև զզօրսն արեայ, որք զտեղի առել՝ կային է դէմ գնդին Վարդանայ

Եւ անդէն ՚ի տեղւոջն երկոքին կողմանքն զպարտութի՛ խոստովանէին և առ յոյժ թանձր անկեալ դիականցն իբրև զքարակոյտս դեզբեկայ երևէին։ Զայն իբրև ետես Մուշկան Նիւսալաւուրտ մնայր գազանայն արտաշիրի որ նստէր ՚ի բարձր և յամուր քաղաքի և ՚ի ձայն մեծ գալ փողոյն զլուր գունդն ստիպէր և յառաջամարտիկ զօրովքն զնա ՚ի մէջ փակէր։ Իսկ կորովին Վարդան իւրով քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ՚ի տեղւոջն գործէր յորում տեղւոջ և ինքն արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութիւն։ Եւ յերկարել գործոյ պատերազմին օրն տարաժամէր և մօտ առ երեկս կարճատէր։ Բազմաց օրահասք մահու մանաւանդ ՚ի թանձրութէ՛ անկեալ դիականցն մօտ առ մօտ խառնեալ իբրև ըզ փայտահարս մայրաւորայ։ Ընդ էր տեսանել զբեկումն նիզակայն և խորտակումն աղեղանցն վասն այնորիկ և ոչ կարէին իսկ կալ ճշմարտիւ ՚ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն և սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոց։ Եւ որք մնացեալքն էին վատնեալք և ցրուեալք լինէին ՚ի լեռնադաշտսն ամուր ձորոյն։ Եւ յորժամ պատահէին միմեանց դարձեալ միւսանգամ զմիմեանս սատակէին. և մինչև ցմուտս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն։ Եւ քանզի գարնանային էր ժամանակն՝ ծաղ-

կալից

կալից դաշտաքն դառնային 'ի յորդահոսանս արեանց բազմաց. Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց սիրտն բեկանէր և աչիքն գալարէին լսել զմռնչիւն խոցելոցն. զմռնչիւն բեկելոցն. զթաւալգլոր խաղալ վիրաւորելոցն զարտաթափումըն զանարի արեանցն. զճչիւն կանանցեայն. զողբս 'ի վերայ սիրելեացն. զաշխարանս մերձաւորացն. զվայ աւաղ բարեկամացն: Քանզի ոչ եթէ կողմէր որ յաղթեաց, և կամ կողմէր որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ երկոքեանն կողմանքն 'ի պարտութիւն մատնեցան. Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց 'ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետև 'ի միջի գլխաւոր, յոր յեցեալ ժողովէին զունդք մնացելոցն: Թէպէտ և բազումայն էր որ ապրեցանն քան որ եթէ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան և հատեալ անկանէին 'ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին. և բռնանային 'ի վր բազում գաւառաց և բերդաց. զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր:

Եւ ոյք էն անուանք տասն նահապետացն որ անկան 'ի
պատերազմին Վարդանեան.

Յազգէն Մամիկոնէից քաջն Վարդան հարիւր երեսուն և երեք արամբք յազգէն խորխոռունեաց Խորէնն կորովի տասան ելին

և յիսն արամբք. յազգէն Պալունեայ արին Արտակ յիսուն և եօթն արամբք. յազգէն Գընթունեայ զարմանալին Տաճատ տասն և յիսն արամբք. յազգէն Դիմաքսենից իմաստունն Հմայեակ քսան և երկու արամբք յազգէն Քաջբերունեաց հրաշակերտն Ներսեհ եօթն արամբք յազգէն Գնունեայ մանուկն Վահան երեք արամբք. յազգէն Ընծայնոյ արդարն Արսէն եօթն արամբք. յազգէն Սրուանձտայ առաջադէմն Գարեգին երկու հարազատօքն տասն և ութն արամբք. Այս երկու հարիւր ութսուն և հինգ նահատակք ընդ ինն մեծամեծ նախարարսն որ անդէն ի տեղւոջն կատարեցան. Եւ յարքունի տանէն Արծրունեայ և իւրաքանչիւր յայլոց նախարարաց տանէն թող զայս երկու հարիւր ութսուն և հնգենս այլ ևս 700 քառասուն այր. որք զանուանս իւրաքանչիւր 'ի դպրութիւն կենաց գրեցին։ 'Ի նմին աւուր 'ի մեծ պատերազմին և միահամուր լինին ամենեքեան հազար երեսուն և վեց. Իսկ 'ի կողմանէ ուրացելոյն անկանէր յայնմ աւուր երեք հազար 500 քառասուն և չորք արք. Իսկ այր 'ի նոյանէ 'ի մեծ պատուաւորաց էր վասն որոյ և կարի յոյժ 'ի խոր խոցեցաւ Մուշկաննիսալաւուրան։ Մանաւանդ իբրև ետես զանհնարին հարուածսն եօթնապատիկ զիւրոյ գնդին քան զ հայոց, բեկաւ անկաւ զօրութիւն ուժոյ իւրոյ. և ոչ հանդարտէր

դարտէր կալ՛ի վր̅ խորհրդոյ միայն. քան-
զի ոչ ո̅ք կարծէր զ պատերազմն կատարե-
յան: Մանաւանդ իբրև հայեր տեսանէր ըզ
բազմութիւն անկելոց իւրոյ կողմանն, և թիւ
համարոյ ևս առնէր իբրև այնչափ յոլով գը-
տանէր զիւր անկեալս քան զհայոց գնդին ևս
առաւել վասն երևելի արանց զոր յականէ
անուանէ գիտէր Թագաւորն, ՝ի մեծ տագ-
նապի լինէր այրն յանձն իւր: Արդարութ̅ք
զիրսն գրել և ցուցանել ՝ի Թագաւորէն եր-
կնչէր: Դարձեալ և թագուցանել ևս ոչ կա-
րէր. քանզի ոչ ծածկէր. այնպիսի մեծ կռիւ:
Եւ մինչ դեռ յայսմ միայ խորհրդի էր յանձն
իւր և նեղէր ՝ի միտս իւր ուրացեալն վասակ
որ զանձն իւր ՝ի մէջ դաղանայն թաքուցել
ապրեցոյց, մխիթար մատուցանել միայն լքե-
լոյ և ուսուցանէր նմա հնարս նենգութեամբ,
որպէս կարասցէ մարտնչել ընդ ամուրսն խա-
բէութեամբ: Երդմունս կնքէր արքունի հը-
րամանաւ՝ վկայութ̅ք անձին իւրոյ. և խաբե-
բայ երիցամքն՝ որ ընդ նմա էին, պատգամա-
ւորս առնէր զնա և երևեցուցանէր զթողութ̅ի
ապստամբութե̅ն՝ առ իշխանութ̅ի եկեղեցւոյ
շնորհել անդրէն. և զամենայն կարգս անդ-
րէն յարմարել ըստ առաջին սովորութեանն:
Թէպէտ և հրաման Թագաւորին հաստատու-
թեամբ էր տուեալ վասն զի յոյժ բեկաւ զօ-
րութիւն նորա որպէս զի երկոքին կողմանք

նորա

նորա հարան սակայն զօրքն Հայոց վասն նեն-
գութեան Վասակայ որ բազում անգամ հասեալ
էին 'ի վր ստութե նր վասն այնորիկ և հրա-
մանի թագաւորին վաղվաղակի ոչ կարէին
հաւատալ :

---

## Գլուխ Ի.

Եօթն երրորդ յեղանակ կարգագրի դարձեալ առաքինու-
թեան Հայոց և վրացւոց. և երկու անօրէնութեանն Վասա-
կայ չարին :

Յառաջնոյս գլխոյս պատմէ թէ որոշեալ առաքք հասին
իբերաց յայս և յայս տեղիս :

Արդ դարձեալ յայնժամ ուրացեալն Վա-
սակ դրդեաց զմուշկաննիւսալաւուրտ
և զամենայն աւագանին արեաց առնել ըդ
զօրսն հասանէր 'ի վերայ ամրին յոր անկեալ
էին գունդն մի 'ի զօրացն Հայոց հանդերձ սբ̃
քահանայիւքն և մարտ եդեալ կռուէին շուրջ
զբերդաւն : Իբրև ոչ ինչ կարացին առնել
նոցա դարձեալ յերդմունս ապաստան եղեալ
զի ուխտիւ իջուսցեն զնոսա առանց դաւ ինչ
գործելոյ և երկիցս անգամ ետուն տանել զա
ւետարանն : Թէպէտ և քահանայքն յանձն
առնուին զիջանել կալ առաջի բազումք 'ի
զօրականացն ոչ կարէին հաւատալ սուտ ուխ-
տին Վասակայ : Մի ոմն 'ի քաջ զօրականէն
Հայոց որ անկեալ էր 'ի բերթն փախստեամբ

Բակ

Բայց անուն եղեալ 'ի պարիսպն Թշնամանս դը
նէր անօրինին եւ յուսանէր առաջի պարսից
զօրագլխին Չարխին զնմ զոր անյուսեալ էր նա
ընդ աշխարհն Հայոց· Որոյ բազում վկայութ̃
լուեալ արդարայուսանէին զամբաստանութ̃ն
ոչ միայն 'ի Հայոց կողմանէն այլ եւ առաւել
եւ զօրքն պարսկաց Սոյն այրս այս 'ի նմին
գիշերի եօթն հարիւր արամբ եւ գնաց 'ի
բերդէ անտի եւ ոչ կարացին 'ի նա ձեռն ար-
կանել իսկ որ 'ի ներքս յամրին մնային Թէ-
պէտ եւ գիտէին Ճշմարտու զխաբեբայ երդ-
մունս նց̃ ոչ ունէին համբար 'ի ներքս իբրեւ
ոչ կամաւ իջեալ կային առաջի հրամայեաց
սպանանել 'ի նոցանէ երկու հարիւր տասն ե-
րեք այր Աղուանկեցին ամենեքեան եւ ասեն գո
հանամք զքէն Ա̃ծ մեր մինչդեռ չէին ե-
կեղեցիք եւ անքակ տաճարք վկայից եւ միաբան
սուրբ ուխտ եկեղեցւոյ առաքինացեալ ար-
ժանի արարեր զմեզ կոչմանդ երկնաւորի։
Հաւատարեսցի մահս մեր ընդ մահ քաջ նա-
հատակայն· եւ խառնեսցի արիւն մեր ընդ
անկեալ վիրաւորայն· եւ հաճեսցի Տ̃ր կամա-
ւոր ընդ եկեղեցիս իւր՝ բազմութ̃բ կամաւոր
զոհաբերակայս՝ որ եղանեն 'ի վերայ սր̃ սեղա-
նոյս։ Զայս ասելով 'ի տեղւոջն կատարեցան
երկու հարիւր տասն երեքն։

Իսկ սր̃ քահանայքն որ անդ դիպեցան յա-
մուրսն, ( երանելիքս այս՝ Յովսէփ եւ Ղեւոնդ

բազում

քաղում ընկերակցօքն իւրեանց՝ ) մատուցին և նոքա զպարանոյս իւրեանց՝ առաջի սրոյ դահճապետին ասելով զնոյն բանս՝ զոր խօսեցան երկու հարիւր տասն երեքն։ Քանզի ոչ եթէ ակնկալութիւն ինչ էր երանելեացն ըստ մարմնաւոր կենացս այլ իմաստութեամբ հնարս խնդրէին լինել փոխանակ ամենայն աշխարհի շինութեան։ Վասնորոյ և բողոք ՚ի դուռն կարդային և զամենայն ամբաստանութիւնն արկանէին զանօրէնն Վասակայ։ Զայս իբրև լուաւ Մուշկաննիսալաւուրտ ոչ յիշխեաց ՚ի նոսա ձեռնարկանել մահուամբ այլ զՅովսէփ և զՂևոնդ գանհարեալ հրամայեցին պահել զգուշութեամբ քանզի բողոք ՚ի դուռն կարդային։ Իսկ զայլ քահանայսն արձակեցին յիւրաքանչիւր տեղիս հրաման տուեալ վասն շինութեան և խաղաղութեան աշխարհի։

Այլ մարդիկն Հայոց որ հասեալ էին ՚ի լեռ յեղյեղուկ հրամանաց Թագաւորին և ուրացեալ ՚ի չարիմացն Վասակայ ոչ ինչ հաւատային սուտ թողութեանն այլ քաջալերէին զմիմեանս և ասէին զի պիտոյ է մեզ ըստ կենաց անցաւոր աշխարհիս և կամ ընդէր տեսանեմք զարև յետ մերոյ սիրելեացն։ Զի եթէ քաջ նահատակքն մեր անկան ՚ի մեծ պատերազմին և բազում վիրաւորք տապալեցան յարիւն յապաժուժ ՚ի մէջ դաշտին, և ամենայն մարմինքն եղեն դէշ Թռչնոց և կերակուր գազանաց և պա-

տուա

տոհմական նախարարքն մեր հասին յանարգութիւն թշուառութեան, քին զիւրաքանչիւր իշխանութ̃ի և են 'ի հալածանս նեղութե և ա̃մ փափկութ̃ին հայոց եհաս 'ի վիշտս վտանգիւ յանհնարին յապականութ̃ի ոչ անսամք խաբեբայ հրամանացդ։ Թողլին այնուհետև զիւրաքանչիւր զգեւղս և զաւանս և զագարակս ելին հարստունք յառագաստաց և փեսայք, 'ի սենեկաց անկան ծերք յաթոռոց և տղայք 'ի գրկաց երթային երիտասարդք և կուսանք և ա̃մ բուլմութիւնք արանց և կանանց հասեալ ունէին զամուրս յանապատին և զանխառ տեղիս բազում լերանց։ Նաև համարէին զպատուանաբար բնակութիւնն ա̃ծ պաշտութեամբ 'ի քարանձաւս կելոյ քան ուրացութեամբ փափկանալ յիւրաքանչիւր շինուածս։ Արանց տրտնջելոյ համբերէին խստաբուստ կերակրոյն և ոչ յիշէին զտովլրական խորտիկսն։ Համարեալ էին նոցա պարափոքն իբրև զհարկս բարձր շինուածոյ և գետնանկողինքն իբրև զնկարեալ պատշգամբ։ Սաղմոսք էին նց̃ մրմնջունք եւ գոյ և ընթերցուածք ս̃բ գրոց կատարեալ օրհնութիւնք Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր նոյն ինքն քահանայ մարմինք իւրաքանչիւր ս̃բ սեղան և ոգիք նոցուն պատարագ ընդունելի քանզի ոչ ոք 'ի նոցանէ ողբայր յասահատութեամբ զանկեալսն 'իւրոյ և ոչ հեծեծելով հառաչէր 'ի վերայ մերձաւոր սիրելաց

ընկերայ իւրոյ։ Խնդութեամբ ընկալան ըզ
յափշտակութիւն ընչից բազմաց և ոչ քրչէին ա-
մենևին եթէ եղեալ իցեն նոցա ստացուածք․
Համբերութեամբ ձգնէին և մեծաւ առաքի-
նութեամբ տանէին զքաջ նահատակութիւնն․
Զի եթէ ոչ բայց աչօք տեսանէին զյոյսն
խնդալից և ոչ կարէին իսկ գործել զայնպիսի
մեծ առաքինութիւն քանզի բազումք յազգէ
Ռոմ նախարարայն էին եղբարք և որդիք և
դստերք հանդերձ ամենայն սիրելեօքն իւ-
րեանց 'ի մէջ ամրական վայրենեաց։ Ոմանք
յանլոյս երկիրն խաղտեալ և այլք բազումք 'ի
կողմանս հարաւոյ յանմատոյց ամուրան տմորէից
և կեսք թանձրախիտ մայրիսն արձակեալ և այլ
ոմանք ոմանք անդէն 'ի միջոցի աշխարհին բըռ-
նայան 'ի վերայ բազում ամրոցայն։ Եւ այնքն
մեծաւ համբերութբ տանէին բազում նեղութեն
Ի յուսոյն Աստուծոյ աղաչելով զայս միայն
խնդրէին յԱստուծոյ մի տեսանել նոց զաւեր
սուրբ եկեղեցեայն։

Այլ որպէս ցուցաք բազում անգամ զամբարշ-
տին չարութին յորդորէր և ըստիպէր զզօրսն
պարսից 'ի մօտաւոր կողմանց աշխարհին, զի
հրամանաւ արքունի զօր եկեսցէ յօգնակա-
նութինց։ Եւ հասեալ բազում այրուձի յա-
ռելոյր 'ի թիւ անկելոյն և լինէր գունդն բազ-
մութբ իբրև զառաջինն և յառաջ խաղային 'ի
միջոց աշխարհին մարտ եդին կռուէին ըն մեծ

ամուրս

ամուրս կապոյտ լերինն. Իսկ որք 'ի ներքին էին քաջութբ մարտուցեալ հարկանէին զբազումս 'ի գնդէն պարսից և զմնացեալսն փախստական 'ի բանակն արկանէին. Իսկ նոքա դարձեալ յողոքանս մատուցեալ նմաձել խաբէութբ կամէին. Իբր ոչ ոք հաւատայ իջանել առ նն զի մի մատնեսցին չարաչար 'ի ձեռս թշնամեաց սակայն վասն երդմանցն Հարկ եղև քահանայիցն իջանել առ նն. Որում անուն էր Արշէն խօսէր ընդ նն յաղերս լինանութե և ցուցանէր զանվնաս փախուստ անմեղացն. Արկանէր գութ առաջի ուրացելոյն վասակայ և պաղատելով յիշեցուցանէր նմա զառաջին կարգ ուխտին քրիստոնէութե զի թերևս սակաւիկ մի քաղցրացի յանհնարին դառնութե. Այլ նա ոչ ինչ լուաւ և անսայ բազում բանից նր կապեալ և խաղացոյց զերանելին և որք ընդ նմա իջէլ էին. Մանաւանդ իբրև ետես եթէ երթայ զօրավարն զհետ խրատու կամաց նորա սկսայնուհետև 'ի բազում տեղիս արձակել զառպատակաւորսն և զոր արտաքոյ քան զամուրսն գտանէին զբազմութի մարդկանն վարեցին 'ի գերութի և զամբար 'ի ձեռին առեալ հրձիգ առնէին զբազում տեղիս. Իսկ որք էին յամուրսն ամրեայ իբրև լուան զայս ամ չարիս զոր արարին զօրքն արքունի ոչ ինչ շահ օգտի համարէին զկալն և զկեալն 'ի մէջ ամբականացն, Քաջութբ ելեալ յարձակեցան օգ

նակա

նականութիւն ամբականայն և հասեալ ՚ի մեծա-
մոր աշխարհն պարսկայ յանխնայ կոտորելով
նախճիրս արեան գործէին և զմնացեալսն գե
րի առեալ տանէին և անդրէն յամուրս անկա-
նէին և զչինոմանս ծին ղամբար ՚ի ձեռն ա-
ռեալ հրոյ ճարակ տային։ Դարձեալ և որք էին
՚ի լեռնին խաղացեալ իբրև տեսին թէ յանդգ-
նաբար զօրքն պարսկայ յաներկիւղս իջանեն
յամուրս աշխարհին հայոց յարձակեցան և
նոքա մեծաւ զօրութբ ՚ի ձորագաւառն տայոց
և գտին անդ գունդ բազում ՚ի զօրայն ար
քունի որ գերի առնուլ կամէին զամբականսն
ծին։ Դարձեալ և կարծէին եթէ գանձ նա
խարարայն անդ կյեն վն այնորիկ և անխնայ յու-
ղէին զվայրսն։ Նա և տեսին ևս անդ ՚ի գեւղս
երկուս զեկեղեցեան այրեցեալ էին առա-
ջել վան այնր ՚ի նախանձ բարկութե բռնեցան
յարձակեցան հարան ՚ի դիմի միմեանց և կամա
կորուբ յաղթել բեկին արկին զզօրուն զըն-
դին պարսից և կոտորեցին զբազումս ՚ի նոցա
նէ և զմնացեալսն փախստական յանին յծեն։
Եւ յայնչափ յանդուգն յարձակմանէն միայն
երանելին Հմայեակ եղբայր սպարապետին հայ
ոց յանխնայ քաջութբ մարտուցեալ կատարե-
ցաւ նահատակութբ ՚ի վերայ սուրբ ուխտին
միաբանութե և այլքն ընդ ողջանդամք ապրել
երթային զհետ փախստականացն։ Եւ իբրև
այս այսպէս կատարեցաւ դարձարեցին զօրք
Թագա

Թագաւորին խառնմուխ լինել յամ՟ տեղիս ան
խտրութե՟ և ևս առաւել ձեռնապահ լինել
եկեղեցեաց։ Դարձեալ միւսանգամ անդրէն
հարցանել սկսան յարքունիս։ Նաև որ յար-
ձախս մայրիան անկեալք էին փախստականք ոչ
ինչ լուեալ դադարեցին խաղաղութ՟ այլ հա-
նապազ յղէին յաշխարհն հոնաց շարժէին և
յորդորէին զգունդս հոնաց և յիշեցուցանէին
նոցա զուխտ զոր եդեալ էր Է հայս և ան-
տուա երդմամբ հաստատեալ Հաձոյ Թուէր
բազմաց ՚ի նոցանէ լսել զբանսն քաղցրութե՟։
Նաև մեղադիր ևս յոյժ լինէին նմ՟ եթէ ՚ի
կռիւն՟ Է էր ոչ եկեալք պատրաստութե՟։ Եւ ի
րև յառաջնումն ինչ ոչ հնարէին զմիմեանս
հաւանեցուցանել գունդ բազում գումարէին և
անդէն յարձակել հասանէին ՚ի սահմանս տէ-
րութեն պարսից և զբազում գաւառս հարել
բազմագոյն ևս գերի առեալ տանէին յՃՆխու-
րեւաց և յայտնի ցուցանէին Թագաւորին ըղ-
միաբանութի զոր ունէին Է գնդին հայոց՝ Իսկ
իբրև այս ամ՟ ազդումն հասանէր առ զօրա-
վարն պարսից արտմտեալ զայրանայր և մեծ
բարկութի կոտէր ՚ի վր՟ անօրինին վասակայ.
իբրև թէ նա իսկ սկիզբն և առաջնորդ ամ՟
չարեաց որ գործեցան։ Եւ անդէն չու արա
րեալ խաղայր գնայր հասանէր յաշխարհն պար
սից՝ Գրէր և ցուցանէր յարքունիս զամ՟ սատու-
դուշ՟ և վնաս գործոյն արկանէր զուրացելովն։

Առ

Աստ պատմէ ըստ չնորհ խոչեցան հռովմայեցւոցն յոր թողէն 'ի ձեռս շամբապատնեցոյն ար 'ի Վշխանաջոյս ներ-քին եւ իւր ներհանչին.

Իբրեւ լուաւ Թագաւորն զա̃մ աւեր աշխարհին եւ ստուգեաց զիրս մեծի պատերազմին, բեկանէր անկանէր 'ի մեծ խորոխտալոյն եւ լռեալ դադարէր 'ի հանապազորդ եւ 'ի խաբեբայ խորհրդոյն. Յուզէր եւ քննէր զվրիպումն անհանճար գործոյն եւ կամէր տեսանել սակաւ ո՞ք իցէ որ զիս ճշմարտութ̃ 'ի վերայ իրացդ հաստատէ: Իսկ որ գիտակ էր անօրէն գործոյն անդէն 'ի դրանն արքունի նոյն հազարապետն Միհներսեհ յառաջ մատուցեալ ասէ ցԹագաւորն զայդ ես ասեմ քեզ արքայ քաջ. եթէ կամիս ստուգութ̃ լսել զարդարն որք գլխաւորք քրիստոնէիցն են 'ի Հայս տուր կոչել եւ գան յօժարութ̃ եւ ասեն քեզ զա̃մ արդարութ̃: Յայնժամ զմի ոմն յասադ նախարարացն Ատրորմիզդ անուն որոյ. իշխանութ̃ իսկ խառնեալ էր ը̃ Հայոց Տէին եւ գործակից էր զօրավարին 'ի նմին պատերազմին. գրէր եւ յանձնէր նմա զաշխարհն Հայոց մարզպանութեամբ. Եւ Մուշկան Նիւսալաւուրս հանդերձ ա̃մ միաբանեալ զօրուն գումարեր յաշխարհն Աղուանից եւ Լփնաց եւ Ճղբաց եւ Հեճմատակաց եւ 'ի Թօսպարաց եւ 'ի Խիբիոնվան եւ յա̃մ ամրականս զորս աւերեալ էր գըն-

դին

ցին ճռնայ վ̅ն ուխտին Հայոց․ Որպէս և յոյժ խակ տրտմեալ էր Թագաւորն ոչ միայն ը̅ աւեր աշխարհացն և ը̅ ակնկանել զօրացն այլ ևս առաւել վ̅ն պահակին զոր 'ի բազում ժամանակաց հազի՛ւ ուրեմն կարացին շինել և յայժմ ժամանակի առեալ քանդեցաւ որում՝ չէր ակնկալութի խակ շինութե․ խակ զվասակ հանդերձ գլխաւոր քրիստոնէիւքն 'ի դուռն հրամայեաց կոչել Արդ եկեալ եմուտ մարզպանն Ատրորմիզդ յաշխարհն Հայոց սիրով խաղաղութբ̅ հրամանաւ արքունի կոչեաց առ ինքն զՍահակ եպիսկոպոսն ըռշտունեաց ուսանել 'ի նմանէ զիրացն ամբաստանութի Բայց Ներթէպէտ և աւերեալ էր ատրուշան մի և բազում չարչարանօք հարեալ էր զպաշտօնեայսն կրակին ոչ ինչ զանգիտեաց գալ յատեան հրապարակին․ Դարձեալ և 'ի տանէն արծրունեաց բարեպաշտ երէց մի Մուշէ անուն որ առաջնորդ էր արծրունեաց աշխարհին աւերեալ էր նորա զկրակատուն մի կապանօք տանջանօք բազում՝ չարչրնս անցուցեալ էր ը̅ մոգսն և սա ոչ ինչ զանգիտեաց այլ կամաւ եկն և յանդիման եղև մարզպանին․ Երկու ևս այլ քահանայք երանելիք որոց անուանք են Սամուէլ և Աբրահամ քանդեալ էր և նց̅ զատրուշանս յարտաշատ և յառաջագոյն ըմբռնեալ էին 'ի կապանս յուրայեալն վաստակաւ ածին և զնոսա առ առաջինի ընկերսն․ Եւ ժողովե-

ցին

ցին եւ 'ի նոյն տեղին զմեծն Յովսէփ, և Ղեւոնդ և զՔաջայ և Արշէն։ Իսկ մարզպանն իբրև ուսաւ և տեղեկացաւ յամենայն գրեալ և եցոյց յարքունիս զամենայն ճշմարտութիւն ծածկ զխարդ լուաւ 'ի բերանոյ նորա։ Բայց վասակ թէպէտ և յառաջագոյն հաւանեալ էր 'ի նոցունց ըստ կամաց իւրոց զամենայն այլ և այլոց երթեալ պաշտամէր ստութեամբ սակայն 'ի միւս թագաւորին ոչ կարէր զանձն արդարացուցանել։ Պատասխանի արար նմա և ասէ յորժամ քրիստոնեայքն եւ եկեսցեն հասարակաց լուայց յատենին. Իսկ նոքա քահանայսն վասն զի կալանօք տանէին յետ երկու ամաց և քսան աւուր հասանէին 'ի ձմերոցն արքունի. Իբրև լուաւ մեծ հազարապետն եթէ ածին զնոսա 'ի քաղաքն ինքնին իսկ ականատես լինէր նոցա։ Բայց թէպէտ և տեղեկութիւն լսէր 'ի նոցանէ զամենայն ոչ կարէր ձեռն արկանել և չարչարել զնոսա քանզի բազումք 'ի նախարարացն Հայոց դեռ եւ բռնացեալ ունէին զամուրս աշխարհին. և դեռ ևս մարզպանն յերկիւղի էր վասն ազգութեանն. Հրամայէր պահել զծերսն և զնոսն սիրով հրամայէր նուաճել վասն որոյ և ինքն իսկ շրջէր և ժողովէր և շինէր ուխտին հաստատութեամբ և եպիսկոպոսաց հրամանս տայր ունել զիւրաքանչիւր իշխանութին ըստ առաջին սովորութեան պաշտել յայտնութեամբ և համարձակութեամբ եւ գալ 'ի Հրապարակ նաև ընծայից և

պատա

պատարագաց արժանի առնէր Թողուլ զպատա
ջեան։ Եւ քանզի բազում դաւանաւս աւելալ
և աւերեալ էր զօրականին Թողուլ. Հրամայ-
էր զՀայկս աշխարհին և զպարսկին եւ զար
քունի Թեթեւացոյց առ ժամանակ մի։ Եւ մի-
այնակեայք որ եղեալ և կորուսեալ էին Հրա-
մայեաց գալ և ունել զիւրաքանչիւր տեղիս և
զամ կարգ ածպաշտութեան ում զիարդ և ու-
նէին յառաջ ժամանակաւ առ նախնեօքն այն-
պէս առէ և այժմ կալցին։ Եւ եթէ ոք ՚ի Հե-
ռի Ծ ուրեք գնացեալ իցէ ունիմ իշխանութ
յարքունուստ առէ մարզպանն եթէ յագատաց
իցէ և եթէ յեկեղեցւոյ զինչ կեանս և Թո-
ղեալ իցէ եկեսցեն և կալցին զիւրաքանչիւր
արարս։ Երդմունս կնքէր և առաքէր ՚ի կող-
մանս կողմանս որ և բազումք եկին ժողովեցան
և կալան զիւրաքանչիւր կալուածս։ Նաև որ
մեծն էր քան զամ որ ՚ի բռնութինէ ոք ակա-
մայ զմոգութի կալեալ էր Հրովարտակ առա
քէր յարքունուստ անդրէն ունել զքրիստոնէ
ութին։ Եւ յանդիման խօսէր Թագաւորն որք
էին ՚ի դրանն արքունի եթէ որք ոչ սիրով
ունէին զդենիմազդէն այնպիսեացն և ածքն էն
չասացեալ և ես ոչ ինչ եմ շնորհակալ։ Եւ
այսօր զնոյն Հրամանն տամ ամյն ՚ի կամս մար
դոյն Թողեալ եմ իւրաքանչիւր մտաց որպէս
զինչ կամի պաշտել պաշտեսցէ ամքն իմ ծա
ռայք են։ Զայս առնէր և գրով Հրամանն տայր
ամ

ծմ աշխարհի։ Իբրև զայս լուան և տեսին
բազումք որ էին ցանեալք և ցրուեալք ՚ի հե
ռաւոր տեղիս գային և ունէին զիւրաքան-
չիւր արարս։ Իսկ նախարարքն որ էին յամուրս
աշխարհին և կամ ՚ի հեռի յօտարութե իբրև
տեսին զշինութի երկրին մանաւանդ զեկե-
ղեցեայն հաստատութի քաջալերեցան համար
ձակեցան և նք յանդիման լինել արքային։ Այլ
և սպատգամաւորս յղեցին առ մարզպան Տին
զի ՚ի դուռն ցուցցէ զբանս նախարարացն։
Իսկ նա վաղվաղակի յարքունուստ գիր ող-
քանայ և ուխտ հաստատութեն տայր տանել
առ նս։ Բայց նք թէպէտ գիտէին զղառ-
նութի տէրութեն թէ սուտ են յամի կամեցան
չարչարակից լինել սոցին զի եթէ մահ ես
առաջի կայցէ ոչ ինչ զանգիտեցին երկիւղի։
Եւ զայս լուեալ թագաւորն ոչ կապանօք, այլ
արձակ ոտիւք և ձեռօք հրամայեաց առ ինքն
կոչել։ Ածին վաղվաղակի զկին և զորդիս և
զինչս իւրաքանչիւր առն ՚ի ձեռս մարզպա-
նին և ինքեանք փութապէս գնային ՚ի ձմե-
րոյն արքունի։ Եւ մինչդեռ անդէն ՚ի ձմե-
րոցի էր թագաւորն առեալ հարցափորձի ՚ի
մէջ նոցա հրամայէր առնել։ Եւ նստաւ հա-
զարապետն զի լուիցէ կողմանցն երկոցունց։
Եւ իբրև երկարեցաւ ամբաստանութին զա-
ւուրս բազումս պարտաւորեցաւ կողմն ու-
րացելոյն քզի ցուցանէին զթուղթս զոր տր-
ւեալ

ծեալ էր վասակայ և ամ՟ն որ ը՟ նմա էին զի
միաբանք իցեն ը՟ նմա յուխտ ապստամբութե՟ն
Թուղթ մի 'ի Վրաց ծէն Թուղթ մի յաղուա-
նից աշխարհէն սոյնպէս և Թուղթ մի յաղձնիս
և Հրովարտակ մի առ Թագաւորն յունաց և
Թուղթ մի առ մեծն սպարապետն անտիոք.
և 'ի բոլորեսին յայն Թուղթս վավերական մա-
տանին վասակայ եդեալ էր. Այնպ՟ և 'ի մահ
մոգայն խառն էր նա 'ի զարեհ անանի. Իբ՟
զբազում բերդս զոր հանին 'ի պարսկայն յայտ
առնէին զնորա Թուղթս և զհրամանս քանզի
նա էր մարզպան 'ի ժամանակին. Որպէս և
հրեշտակութե՟ իսկ զոր յղեալ էր նորա առ
յոյնսն նախարար մի որում անուն էր Ատոմ
յազգէն գնունեաց. Սա մատուցեալ յանդիմա-
նէր զնա առաջի մեծ ատենին հրովարտակա՟ն
իսկ զոր տուեալն էր նորա իւրով մատանեաւ.
Նաև 'ի մէջ իսկ բերէր զամբաստանութի՟ նորա
Մուշկաննիսալաւուրտ և յայտ առնէր պատե
րազմակից ընկերօքն իւրովք որ յետ վճարելոյ
պատերազմին բազում արիւնս ետ հեղուլ
Վասակ. Որպ՟ սուտ երդմամբ խաբէր և իջուցա
նէր յամրոցաց անտի. Էր զոր կոտորէր և էր
զոր գերի վարէր զծառայս և զաղախնեայս ար
քունի. Իբ՟ 'ի վ՟ր այսր ամ՟ի ՟միասուն և գող ևս
գտանէր հարկի ծին որ յարքունիս երթայր.
Նաև յարուցեալ ընկերաց նո՟ բազումք էին որ
յայտ արարին զ չարիս նորա զոր գործեալ էր

ընդ

է աշխարհն Հայոց։ Եւ իմացեալ մոգացն և ըշ-
տիպանացն որ 'ի կապանս ապրեալք էին և ա-
պա ածին յարքունիս Հարցին և ցնոսա վասն
նորա և ասեն դուք զինչ տեղեակ էք վասն
չարութե դորա։ Ետուն պատասխանի և ասեն
ած անցք չարչարանաց որ անցին է մեզ և բա
զում Հարուածքն որ եղեն 'ի զօրս արքունի
և աւեր և գերութի աշխարհին Հայոց և կո-
րուստ Հարկացն արքունի սկ'զբն և առաջնորդ-

չարեաց այրդ այդ եղև։

Եւ մինչդեռ այս ած ամբաստանութիս զնր
մանէ էր զայնչափ բազում աւուրս յառաջ մա
տեան և իւր ազգականքն որ ևս յառաջագոյն
դատապարտեալ էին զնմանէ արքայի սկսան
կարգաւ ցուցանել և յայտ առնել որպէս զի
բարեկամացեալ էր նորա է Հեռանայ Հոնի
միաբանութե քաղաքական արքայի 'ի ժամա-
նակի զի կոտորեաց Հեռանն այն զզօրս պար-
սից յաղթանս և ասպատակաւ եհաս յերկիրն
յունաց և բազում գերի և աւար խաղացոյց 'ի
Հոռոմոց և 'ի Հայոց 'ի վրաց և յաղթանաց։
Ապ զի 'ի վերայ եհաս խորհրդոյն ինքն թա-
գաւորն և սպան զքաղաքական արքայ։ և վա-
սակ մարզպան էր Հայոց ժամանակին և թըշ-
նամեաց արքունի խորհրդակից գտաւ։ Ցու-
ցին և յայտ արարին ազգականքն նորա։ որպէս
հմուտ և տեղեակ իսկ էին ած չար խորհըր-
դոց նր զամ ցուցանէին և յայտ առնէին ա-
ռաջի

ռաջի Թագաւորին Եզայլ եւս բազմագոյն խառդախութիւնս որ ստութեամբ վարէր զկեանս իւր ոչ միայն առ ընկերս այլ եւ առ Թագաւորս ինքնին գլխովին զի ոչ երբեք արդարութեամբ վատակեալ էր ՚ի մանկութենէ.

Յայնմ ժամանակի Հրաման ետ Հազարապետն եւ ասէ ածէք այսր և ՚ի կապելոյն որ են ՚ի բանտի անդ. Լուծին եւ ածին յերանելեայն ըզ Սահակ եպիսկոպոս ըռշտունեաց եւ ըզ սբն Յովսէփ եւ զՂեւոնդ երէց. Եւ իբրեւ մերկացան ամ՛ բանք ատեանին առաջի նց եւ պատասխանի Սահակ եպիսկոպոսն եւ ասէ որ յայտնի ուրացեալ են ՚ի Ճշմարտէն այ ոչ գիտեն զինչ գործեն եւ կամ զինչ խօսին քանզի խաւարային են խորհուրդք նոցա. Զտեարս պաշտեն սուտ պատճառանօք եւ ընդ ընկերս մտանեն յուխտ ստութեան եւ են նոքա դարանք սատանայի. զի նոքօք կատարէ զդառնութիւն կամաց իւրոց. որպէս երբեմն իսկ ՚ի դոյն յայդ վասակ. Քանզի մինչ ունէր զանուն քրիստոնէութեան վերին երեսօք կարծէր ծածկել եւ թաքուցանել զամ՛ չարութիւն իւր առաջի ձերոյ անգէտ տէրութեան եւ զամ՛ նենգութիւն իւր քրիստոնէութեան ծածկէր. Ուստի եւ ձեր իսկ կարծեցեալ մեծապէս պատուեցէք զդա առաւել քան զարժանն իւր հաւատացէք դմա զաշխարհն վրաց հարցէք յաշխարհն եթէ գոհ լիցին զդմանէ. Ետուք դմա զտէրութիւն

սիւ

սփռնեալ լուսաւորութք յազգականաց անտի դորա զինչ պատմեն զդմանէ։ Արարէք զդա մարզպան Հայոց զոր նախնեայն ձերոյ մեծաւ աշխատութբ գտեալ էր դա 'ի միում ամի կորոյս զերկիրն ամ Տեսեր իբրև բարձաւ 'ի դմանէ պատուական անունն Աստուծոյ զոր ունէր սութբ մերկ երևեցաւ ամ չարագործութն դորա։ Զի եթէ աւ Ածն իւր սուտ գտաւ աւ ո՞ ոք 'ի մահկանացուաց աստի դա արդար գոյի։ Արդ ամ ամբաստանութն որ յայժմ յայտնի եղև զդմանէ ոչ ահա յառաջագոյն լուեալ էր ձեր։ Բայց յոր դէմս ծանիցէքն դուք ձեզէն քաջ գիտէք եւ ինձ այսպէս թուի եթէ ուսայ յուսալ դա 'զմեզ խնդալոյց։ Այլ ոչ դուք եւ ոչ նա եւ ոչ զկնի ձեր գալոցն է զայն 'ի մեզ ոչ կարէ տեսանել։ Արդ արարէք որպէս եւ կամիք ցմեզ զի հարցանէք։ Զարմացաւ մեծ հազարապետն ընդ միտս իւր եւ 'ի խորհուրդս իւր քննէր զամ բանս ատենին քանզի հաւանեալ էր 'ի վր եթէ իրաւի դատապարտեցաւ այրն ըստ արժան գործոց իւրոց։ Եմուտ եւ եցոյց զամ բանս ատենին յարքունիս։

Պատմէ ապա թէ [illegible] 'ի դուռն [illegible]
[illegible]։

Իբրև լուաւ թագաւորն եւ ստուգեաց 'ի հազարապետէն զառնն պարտաւորութիւն բարկացաւ յոյժ եւ 'ի խոր խոցեցաւ։

Բայց

քայց երկայնամտութեամբ կամեցաւ հաստուցանել զնա ՚ի մեծ անարգութիւն։ Լուր եկաց աւուրս տասն երկու մինչև ՚ի գլուխ չորգան փուրշին ամբաստանութե։ Եւ եղև յաւուր միում մեծի զամ երևելի պատուականացն հրամայէր յընթրիս կոչել. Կոչեցին և զուղարկեալն և նա ՚ի առաջին կարգի օրինայն արքունի արկանէր զպատուական հանդերձն զոր ունէր ՚ի թագաւորէն։ Կապէր զպատուրուրն և զխոյրն ոսկեղէն դնէր ՚ի վերայ և զկուանակութ ձոյլ ոսկի կամարն ընդ եղուղեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր զգինդս յականջս և զգումարտակն ՚ի պարանոցի և զսամոյրն զթիկամբքն և զամենայն օրէն պատուոյն զանձամբ արկեալ երթայր յարքունիս շքեղ և երևելի քան զամենայն երևէր ամ բազմութեանն։ Իսկ նախարարքն որ կամօք իւրեանց ՚ի Հայոց չոգան անձամբ տուել զանձինս ՚ի փորձութիւն, և նոքքն որ յառաջագոյն հասեալ էին կապանօք ունէին զամենայն առ կրանի արքունի իբրև տեսին զնա զարդարեալ և շքեղացեալ և բազմամբոխ գնդաւ գայր յարքունիս ՚ի միտս իւրեանց սկսան այպանել զնա և ասել, ով անմիտ վաճառական դանման և զանանց պատիւն եւտուր և զանյաւորդ գնեցեր զոր և պայդ եւս ընդ մօտ աւուրս կորուսելոց ես։ Եհաս և նստաւ ՚ի ներքին դահլիճն որ էր հրապարակ մեծամեծացն։

Արդ

Արդ եկն եւ սենեկապետն յարքունուստ հար-
ցանէր զնա եւ ասէր արքայ յղեաց առ քեզ
յումմէ գտեալ է քո դայդ մեծ պատուական
պատիւդ. ասա ինձ փողփողակի փառն որ արդի
վաստակոց Ե՛ յուշ առնել նմա զմեծ բանս
ատենին յորում դատապարտեցաւն նա եւ զոր
ոչ ես անդ խօսեցայ զայն ես յայտնէր նմա։
Զի ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւն Ծին
սիւնեաց այլ նենգութբ եւ քսութբ եւ սպա-
նանել զհօր եղբայրն իւր զՎաղինակ եւ յինքն
տարաւ զտէրութիւն. Իբրեւ զքրտիկար յար-
քունիս նաեւ այլ ես բազում բանիւք դատա-
պարտեցին զնա որում եւ մեծ աղագանին վկայ
գային. Պապանձեցաւ ամենեւին եւ չգտաւ բան
Ճշմարիտ ՚ի բերան նորա Իբրեւ կրկնեցին եւ
երեքկնեցին ցուցանելով ՚ի ներքս յարքունիս,
հատաւ վՃիռ մահու ՚ի վերայ նորա. Եկն
եւ դահՃապետն եւ առաջի մեծ մեծամեծացն
մերկացոյց ՚ի նմանէ փողփողակի զպատիւն ար-
քունի եզգեցոյց նմա հանդերձ մահապարտի
կապեցին զոտս եւ զձեռս եւ կանանցաբարնըս
տուցին ՚ի ձի մատակի տարան ետուն յայն զըն-
դան ուր կային մահապարտքն։
Իսկ նախարարքն հայոց եւ սուրբ եպիսկոպոսք
հանդերձ երիցամբքն թէպէտ եւ էին ՚ի մե-
ծի պատուհասի ոչ ինչ յիշէին զնեղութիւն
որ անցեալ էր ընդ նոսա եւ կամ որ այլ ես
ակնկալութիւն էր գալ ՚ի վերայ այլ զարմացեալ-
էին

նոր ընդ մեծ յայտնութի՟ն որ եղեւ յայս։ Մխի
թարէին զմիմեանս եւ ասէին քաջութբ՟ պատե
րազմեցայք առաւել եւս համբերութբ՟ ձգնես
ցուք։ Լուեալ է մեր 'ի սուրբ հարցն մերոց
եթէ գլուխ ա՟մ առաքինութե՟ համբերութի՟ն
է եւ իմաստութիւն երկնաւոր կատարեալ ա՟ծ
պաշտութիւն եւ զայս ոչ ոք կարէ գտանել
առանց չարչարանաց։ Իսկ չարչարանքն յոր-
ժամ ընդ յերկարեսցին 'ի վերայ յայնժամ բազ
մանայ վարձ հատուցման պարգեւին։ Ապա ե
թէ այդ այդպէս է զայս միայն աղաչեսցուք
զա՟ծ զի համբերել կարասցուք ա՟մ փորձութեց
եւ Տր՟ ինքնին արասցէ հնարս մերում փրկութե
Լուեալ է մեր զդատաստան քառասուն զի՟ն
ուորայն Քի՟ն որ էին 'ի հարուածս տանջա-
նաց Մինն 'ի նոցանէ փութացաւ վրիպեալ 'ի
սուրբ պսակէն իսկ երեսուն եւ ինն համբե-
րութեամբ կատարեցան եւ հասին այնմ աւե-
տեաց որում ցանկացեալն էին։ Իսկ մեր ընկե
րակիցն աւանիկ որ յառաջագոյն որոշեցաւ 'ի
մէնջ ահա եղեւ գործակից սատանայի։ Մինչ
դեռ ոգին 'ի մարմնի է ընկալաւ զառհաւատ
չեայ գեհենին տանջանաց որ ոչ միայն սրբոյն
է ողբալի այլ եւ ա՟մ գազանաբարոյ մարդկան։
Զայս ասէին եւ բազում արտասուս 'ի վերայ
կորուսելոյն հեղուին։ Եւ անդէն երգս հո-
գեւորս 'ի բերան առեալ ասէին, Բարի է յու-
սալ 'ի Տր՟ քան յուսալ 'ի մարդիկ բարի է յու-
սալ

սալ 'ի Տր̄ քան յուսալ յիշխանս. Ամենայն ա-
զինք շրջեցան զինև. և անուամբ Տն̄ յաղթե-
ցի նց̄. Քաջալերեցին զմիմեանս և առեին զայս
գիտելով եղբարք մի երկիցուք յանաստուած
ազգէն հեթանոսաց որ քան զմեղուս վաթա-
րագոյն են և են 'ի զայրանալն իւրեանց զի և նոցա
ցասումն 'ի սատակումն անձանց իւրեանց լինի
այլ մեք զանուն Տեառն կարդասցուք և վա-
նեսցուք զամենեսեան.

Իսկ ուրացեալն վասակ հայեր 'ի միաբանու̃
ե̄ն կապելոցն որք մեծաւ խնդութե̄ ը̄ունէ-
ին զ չարչարանս և զուարթագոյն և պայծառք
երևէին. Որպէս յառաջ յարքունիսն հայեր
և կարօտէր և ոչ ոք խառնեաց զնա 'ի նն̄ այլ
ուրոյն նոյին կայանօքն պահէին և օր ը̄ օրէ
բերէին և իբրև զգէշ ընկենուին 'ի մեծ հր-
րապարակին. Զաղէին և այպանէին և 'ի տեսիլ
ամ̄ կարաւանին հանին և ոչ թողին զոր ը̄ իւրն
ունէր. Այնպէս ձաղեցին աղքատութեամբն
մինչև հայ մուրանային և բերէին նմա ծա-
ռայքն իւր. Եւ այսպէս սաստիկ արկին ըզ-
պարաս հարկայ աշխարհին 'ի վերայ տան նր̄
մինչև զհարց և զհաւուց և զիւր արարս և ըզ-
գարդս կանանց ևս եդ 'ի վերայ և ետ և տու-
ժեցաւ և ոչ կարաց հատուցանել զպարտսն
արքունի. Եւ յայն տեղիս հասուցին մինչև
հարցանել նմա եթէ կայցէ ինչ գանձ 'ի
գերեզմանս նախնեացն մերոց. Եւ եթէ գտեալ

էր

էր նորա հանէր և տայր ընդ իւր և է ընտա
նեայն տուգանս որպէս զի բազում մարդիկ
իսկ չոգան ՚ի տուժին Եւ իբրև այսպէս յամ
կողմանց հարէր վատթարեցաւ անկաւ յախտս
դժնդակս և անդէն ՚ի կապանսն ջեռաւ փոր
նորա և հարան և որորեցան գոգք նորա և
քամեալ մզեցաւ թանձրամածութիւն նորա․ Եռա
ցին որդունք ընդ աչս նորա և ՚ի վայր սորե-
ցին ընդ ռնգունս նր։ Խցան լսելիք նորա
և ծակոտեցան չարաչար շրթունք նորա։ Լու-
ծան ջիլք բազկաց նորա և յետ կոյս կորացան
կրունկք ոտից նորա։ Բղխեաց ՚ի նմանէ հոտ
մահու և փախստական եղեն ՚ի նմանէ ձեռնա-
սուն ծառայք նորա։ Լեզուն միայն կայր կեն-
դանի ՚ի բերան նորա և ոչ գտաւ խոստովա-
նութիւն ՚ի շրթունս նորա։ Ճաշակեաց զմահ
հեղձամղձուկ և էջ ՚ի դժոխս անհնարին
դառնութեամբ։ Ոտն հարէին նմա ամենայն
սիրելիք նորա և ոչ յագեցան սաստիկ հա-
րուածովքն ամենայն թշնամիքն նորա։ Եւ
այն որ կամէր թագաւոր լինել մեղօք աշ-
խարհին հայոց ոչ երևեցաւ տեղի գերեզ-
մանի նորա քանզի իբրև զշուն մեռաւ և
իբրև զէշ քարշեցաւ։ Ոչ յիշեցաւ անուն
նորա ՚ի մէջ սրբոց և ոչ մատեաւ յիշատակ
նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջ։
Ոչ ինչ եթող չար ինչ զոր ոչ գործեաց
՚ի կեանս իւր և ոչ ինչ մնաց ՚ի մեծամեծ չա-
րեաց

քեայ որ ոչ անցին ընդ նա 'ի մահուանն նորա։ Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա առ 'ի կշտամբութն յանդիմանութեան մեղաց նորա զի ամ որ զայս լուեալ գիտասցէ նզովս 'ի հետ արկցէ և մի լիցի յանկայօղ գործոյ նորա։

Արտաքոյ եօթն եղանակին Ռ[illegible] դարձեալ վասն Նորին [illegible]։

Յ[illegible] 'ի [illegible] [illegible] 'ի [illegible]։

Արդ 'ի վեշտասան երրորդի ամի տէրութեան նորին Թագաւորի դարձեալ անդրէն խաղայր գնայր յաշխարհն քուշանաց մեծաւ սպատմութբ 'ի գործ պատերազմի և գնայէր 'ի վրկանէ և ելեալ յապար Ծ։ Նոքին կապանօք զնախարարարսն և զքահանայսն հրամայեաց պահել 'ի դղեակ քաղաքին 'ի Նիւշապուհ և երկուս յերանելի կապելոյն ը՟ իւր խաղայսյ։ Ա'հ արկանէր ամ քրիստոնէութեն ընդ որ անցանէր։ Իբրև զայն տեսանէր հոն մի որ էր յազգէ Թագաւորայն 'ի խաղանդրայ ծոյ աշխարհէն Բէլ անուն և 'ի ծածուկ խոնարհէր առ քրիստոնեայս և սիրով յօժարութբ ուսանէր 'ի նոցանէն զՃշմարտութին և կամօք իւրովք նուաճեալ էր ընդ Թագաւորին

իշխա

իշխանութեամբն և կարի յոյժ դառնանայր 'ի միտս իւր յորժամ տեսանէր չարչարեալ զք̃բսն Եւ իբրև այլ ինչ ոչ էր ձեռնհաս փախըստական անկանէր առ արքայն քուշանայ եղբայր և պատմէր նմա զամ̃ անցս չարչարանաց զոր անցոյց Թագաւորն ընդ աշխարհն Հայոց Տեղեակ ևս առնէր զնա վասն հրամանատուութեանն պահակին հոնաց։ Ցուցանէր և զերկպառակութիւն զօրացն որ բազում ազգք բաժանեցան 'ի սիրոյ Թագաւորին։ Ազդէր նմա և զտրտունջ զայրեաց աշխարհին։

Զայս իբրև լսէր Թագաւորն քուշանայ ոչ ինչ երկմտութեամբ թերանայր յառնէն և ոչ կարծիք լռեսի անկանէին 'ի միտս նորա։ Քանզի սակաւ մի յառաջագոյն լուեալ էր և նորա դարձեալ իբրև ստուգեաց 'ի բերայն զայն ևս եթէ խաղացեալ գայ 'ի վերայ աշխարհին քուշանայ փութացաւ վաղվաղակի զօր ժողովէր գունդ կազմէր ելանել նմա ընդ առաջ հզօր ձեռամբ։ Զի թէպէտ և ոչ կարէր յանդիման տալ պատերազմ ընդդէմ նորա վերջի թևոյն անկեալ բազում հարուածս հասուցանէր 'ի վերայ զօրացն արքունի և այսպէս նեղեալ շտապէր։ Զի անձուկ լաշկարաւ վատախտարակ արարեալ այարէն դարձուցանէր և ինքն ապաստակաւ ըզ հետ մտեալ աւերէր զբազում գաւառս արքունի և ինքն ողջանդամ անդրէն յերկիր իւր

դառ

դաւանայր։ Եւ իբրև ետես Թագաւորն ե-
թէ անարգեցաւ և վատթարութբ դարձաւ 'ի
պատերազմէն զիջաւ փոքր մի 'ի հպարտութե
և գիտաց եթէ յերկպառակութենէ զօրացն
եղեն չարիքն ամ։ Եւ առ մղկել սրտին
չգիտէր թէ յո՛ թափեսցէ զթոյնս դառնու-
թեանն։ Իսկ մեծ հազարապետն յոյժ էր յեր-
կիւղի, քանզի ինքն էր պատճառ ամ չարեացն
Սկսաւ բանս 'ի բերան դնել մոգպետին և մո-
գացն որք մատուցեալ յանդիման առէին ցԹա-
գաւորն արքայ քաջ մեք 'ի դենէ գիտեմք զի ոչ
ոք 'ի մարդկանէ կարէ կալ առաջի քոյոյ մե-
ծի զօրութեանդ այլ վասն քրիստոնէիցն որ
են ընդդէմ օրինաց մերոց բարկացեալ են մեզ
ածքն զի մինչև ցայսօր կենդանի պահեցեր
զնոսա։ Եւ յիշեցուցանէին նմա եթէ որպէս
նոքա 'ի բանտի անդ անիծանէին զքեզ և բա-
զումս այլևս հայհոյութիւնս խօսէին զորս
զօրհանապազ զնոսա յաչաց հանէին և զմիտս
Թագաւորին ածէին 'ի ցասումն բարկութեան
մինչև փութայր վաղվաղակի հեղուլ զարիւն
անմեղացն Ետ հրաման վասն երկուցն որ ան-
դէն 'ի կարաւանին առ խուրն էին Սամուէլ
և Աբրահամ զի գաղտ կորուսցեն զնոսա։
Իսկ որք էին 'ի դղեակ քաղաքին հեռի էին
'ի կարաւանէն իբրև օթիւք հնգետասան հր-
ամայեաց ամբարակապետին որում անուն էր
Դենշապուհ զի յառաջ քան զնա երթիցէ 'ի
քաղաքն

քաղաքն և չարաչար տանջանօք իշխեսցէ դատել և հարցանել և սրով վախճանել․ Այլ զնոսա մոգպետին յառաջագոյն յանձն արարեալ էր որ բազում անգամ քան զհրամանն արքունի աւելի չարչարեալ էր․ քանզի իշխան դենպետ էր այսր աշխարհի և առաւել ջերմագոյն էր ի մոգութեանն քան զբազում գիտունս և տեղեակս զրադեշտական օրինացն․ Նաև զոր մեծ պարծանս համարէին ըստ իւրեանց մոլորութեանն կարգի համակդէն անուն էր Գիտէր և զանպարտ քաջն․ Ուսեալ էր և զպահլոնիկն և զպարսկադենն․ Քանզի այս հինգ կէշք են որ գրաւեալ ունին զա̃մ օրէնս մոգութեն․ Բայց արտաքոյ սոցա՝ է և միւս ևս այլ վեցերորդ՝ զոր պետմոգն ասեն․ Թուէր իմն անձինն եթէ կատարեալ իցէ ա̃մ գիտու̃թ․ և հայէր ընդ երանելիսն եթէ առ տգիտու̃թ մոլորեալ են ի մեծ գիտութենէս մերմէ․ Եդ անուանի կարծիս ի մտի՝ և անդադար լինէր ի չարչարել զն̃ս՝ զի թերևս առ ի չժուժել մարմնոյն նեղութեանց՝ լուծայց ինչ ի նոցանէ բանս ողոքանաց․ Վ̃սնորոյ զատ որոշեալ ի նախարարացն զքահանայսն, և հեռացուցեալ ի նոցանէ բացագոյն, և էարկ զն̃ս ի ներքնատուն մի գէջ խաւարչտին․ Եւ հրամայէր վէց առն երկու քաշկէնս ժամէ ի ժամ և դորակ և կէս ջուր․ Եւ ամենևին ոչ թողոյր զոք մօտ երթալ ի դուրս բանտին․

Եւ

Եւ՛ երբեւ յաւուրս քառասուն այսու նեղու-
թեամբ նեղէր զնոսա և ոչ լուաւ 'ի նոցանէ
բան թուլութեան այլ իմն էած զմտաւ եթէ
ոք յիւրոց ծառայիցն գաղտ եգիտ ինչ 'ի նոցա
նէ և 'ի ծածուկ տայէ նոցա կերակուր։ Եր-
թեալ ինքնին կնքէր զերդ և զդուրս բանտին
և զկարգեալ ռոճիկն տայր ցիւր հաւատա-
րիմն տանել նոցա։ Արար զայս յաւուրսն հըն
գետասան։ Սակայն և այնպէս երանելիքն ոչ
ինչ շտապեալ տագնապեցան այլ մեծաւ համ-
բերութեամբ տանէին զճգնութիւնն և անդա
դար սաղմոսիւք կային 'ի հանապազորդ պաշտ-
ման և 'ի կատարել աղօթիցն զուարթագին գո-
հանալով սակաւիկ մի հանգչէին 'ի գետնա-
խշտի անկողինսն Իսկ պահապանքն որ 'ի վե՛ր
կացելոցն կային յոյժ զարմացեալ էին ընդ
առողջութիւն անհիւանդութեան նոցա երբեւ
լսէին անդադար հնչումն ձայնիցն վայնայնո
րին պատմեցին յականջս մոգպետին և ասեն
ոչ են արքն այն լոկ առանց մեծի զօրութե՛
զի եթէ պղնձի մարմինք ունէին նոքա արդ
լուծեալ էր 'ի գէճ խոնաւոյ անտի։ Բազում
ժամանակք են մեր զի յանձն է մեզ պահպա-
նութիւն բանտիս ոչ յիշեմք եթէ 'ի կապե
լոց ոք ամսօրեայ մի ժամանակ կեցեալ է 'ի
տանդ յայդմիկ Արդ մեք ասեմք քեզ եթէ ա-
ուեր հրաման վասն մահու նոցա և սպանանես
զու դիտես ապա եթէ պահել յանձն արա-
րաւ

րա՜ւ քեզ և ոչ դատել զնոսա չարաչար վտանգ է կապելոյն։ Նաև մեք զա՛յն հարեալ եմք և յոյժ երկնչիմք յորժամ տեսանեմք զայնպիսի անհնարին նեղութիւնս.

Իբրև լուա՜ւ զայս մոգպետն յարուցեալ ինքնին երթայր ՚ի մէջ գիշերի յերդ բանտին և հայեցեալ ՚ի ներքս ՟Է մութ գիշերոյն այն ինչ լսէր նոցա ՚ի պաշտամանէ հանգչել և տեսանէր զանձն իւրաքանչիւր կապելոյն իբր զկանթեղ անշիջանելի վառեալ բոցբոքէր Զահի մեծի հարա՜ւ և ասէ ընդ միտս իւր զինչ իցեն այս մեծ սքանչելիքս ա՛ծքն մեր ուրեմն եկեալ իջեալ են ՚ի բանտս և նոցա փառաւորութիւնն լուցեալ բոցբոքի Ե՞ւ եթէ նոքա ՚ի սոսա ոչ մերձենան մարդոյ լոկոյ անհնարին է զայսպիսի պայծառութի լուսոյ զգենուլ Իմ այսպէս լուեալ էր վս կեշտիս այսորիկ եթէ առ յոյժ յիմարութեն մոլորել են և սուտ կերպարանին յաչս տգէտ մարդկան թերևս և այս տեսիլ այնպէս ինչ երևեցա՜ւ և ինձ Ե՞ւ ոչ կարէր համօրէն կալ ՚ի վերայ իրայն երևման։

Ե՞ւ մինչդեռ նա յայսր ՚ի մտաց խորհրդի էր դարձեալ սուրբքն յիւրաքանչիւր խշտեաց կանգնեցան և կացին ՚ի սովորական պաշտամանն Ցայնժամ Ճշմարտեալ գիտաց մոգպետն եթէ ոչ յայլոց տեսանէր ոչ երևեցաւն նմա այլ ՚ի նոցունց յանձանց փայլէր լուսաւորութիւնն Ցայնժամ կրկին անդամ զահի հարա՜ւ և ասէ

ո՞մ

ում ՚ի կապելոյն եղեւ այսպիսի յայտնութիւն
ես եւ ոչ զմի զոք ոչ գիտեմ եւ ոչ լուեալ է
ի մ՚ի հարցն առաջնոց.

Եւ քանզի անհնարին շարժեցաւ ՚ի մեծ սքան-
չելեացն եւ դողային ամենայն մարմինքն եւ թմ՚
բրեալ կիսամեռ լինէր ՚ի վերայ տանեացն մին
չեւ ցառաւօտն Եւ է ծագել լուսոյն իբրեւ
զբազմօրեայ հիւանդ յարուցեալ երթայր
՚ի վանս իւր եւ այլ ոչ ումեք իշխեաց ամենեւին
պատմել զոր ետեսն։ Կոչեաց առ իւր զպա-
հապանսն եւ ասէ ցնոսա. երթայք հանէք զկա-
պեալսն ՚ի վերնատուն մի ցամաքագոյն, եւ անդ.
պահեցէք զնոսա զգուշութբ ոպ եւ տայցէքն.
Մի ոմն ՚ի դահճաց անտի իբրեւ լուաւ զհրա-
մանսն մեծապետին, փութով ընթացեալ եր-
թայր իբրեւ մեծ իմն աւետիս տանէր նոցա.
Հրամայեաց ձեզ ասէ ելանել ՚ի ցամաք վերնա-
տուն մի արիք վաղվաղակի եւ մի հեղգայք
քանզի եւ մեք իսկ պաղատեցաք վասն ձերոյ
տառապանացդ. Իսկ սուրբն Յովսէփ հեզա-
բար սկսաւ խօսել ընդ դահճին եւ ասէ եթէ
ասա դու ցյիմար առաջնորդն ձեր չէ լու-
եալ քո վասն հանդերձեալ գալստեան Տն
մերոյ եւ կամ վասն հրաշակերտ շինուածոյն
որք մեզ կան պահին ՚ի սկզբնէ պատրաստութն
վասն որոյ եւ դիւրաւ համբերեմք մեծի նեղու-
թեանս առ սէր այն յուսոյ զոր տեսանեմք.
Դու բարւոք արարեր զի արդահատեցեր մե-
ծի

ծի։ Նեղութեանս մարմնոյ այլ ոչ ինչ եմք ձանձ-
րացեալ իբրեւ զանաստուած ոք որ չիք ինչ
այլ յոյս 'ի մտի նորա քան որ երեւինս։ Այլ
մեք առ ակըն վերին մերոյ ընդ այս յոյժ եմք
խնդացեալ և կատարեալ պարգևս զայս իսկ
համարիմք զի ժամանակեան վշտօքս զանժա-
մանակեան երանութիւն ժառանգեսցուք։ Եթէ
քննուածոց իցեմք ցանկացեալ ունիմք շինուա-
ծըս յերկինս առանց մարմնաւոր ձեռագործի
որ ոչ ինչ երեւին ձեր աչքունիքդ առ նոքօք։
Նոյնպէս և հանդերձից և փառաց և անախտ
կերակրոց զոր եթէ կամիցի ոք տալ ձեզ
չհանդարտէ լսել ձեր տկարութիւնդ. վասն
զի հնութեան կուրութեամբն չտեսանէք և
ոչ լսէք և ոչ իմանայք։ Յայն յաղագս զմեզ
զուր և անիրաւ առանց յանցանաց անողորմ
դատիք։ Այլ մեր Թագաւորն առատ է և բարե-
րար և բաց է դուռն արքայութ՟ն նր, եթէ ոք
կամի դիմել դիմեսցի համարձակ 'ի դարձելոց
յապաշխարութիւն չնախանձի և ոչ է ումեք։
Բայց վասն դիւրութեանս որ դու հրամայե-
ցեր մեզ առնել էր մեր իշխանութիւն անդ-
րէն յաշխարհին մերում չանկանել մեզ 'ի ձեռս
Թագաւորիդ որպէս և այլքն որ ապրեցան յայս-
պիսի փորձանաց։ Այլ որպէս կամօք և յօ-
ժարութեամբ եկաք իբրև գիտացաք զվշտ
վտանգիս ոչ ինչ զանգիտացաք. յայսպիսի
Ճգանաց սոյնպէս կամիմք զի այլ ևս ծանրա-

ցուս

ցուցանես 'ի վերայ մեր մինչև քո շնորհութիւն կամայդ յադեսցի 'ի մեզ: Զի եթէ Ած̃ մեր որ արարիչ է երկնի և երկրի և ամենայն երևելեաց և աներևութից և առ սէր իւրոյ բարերարութեանն խոնարհեցաւ առ ազգս մարդկան և զգեցաւ մարմին չարչարելի և անց ընդ ամենայն հանդէս առաքինութեան և կատարեաց զամենայն գործ տնտեսութեան 'ի կամս իւր մատնեցաւ 'ի ձեռս խաչահանուացն միհու մեռաւ և եդաւ 'ի գերեզմանի և զօրութ̃ Աստուածութեան իւրոյ յարուցեալ երևեցաւ աշակերտացն և այլոց բազմացն վերացաւ առ Հայր յերկինս և նստաւ ընդ աջմէ հայրենի աթոռոյն և շնորհեաց մեզ զօրութիւն երկնաւոր զի լցաք նորա անմահ բնութեամբն և մեք մերով մահկանացու մարմնովս կարիցեմք չարչարակից լինել անմահ Աստուածութեանն և նա ոչ ևս իբրև զմահկանացուս համարի ըզ մեր մահն այլ իբրև անմահից հատուցանէ մեզ զվարձս վաստակոց մերոց արդ փոքր համարիմք մեք զչարչարանս զայս առ սէր փոխարինին զոր էարկ առ ազգս մարդկան: Իբրև լուաւ զայս ամ̃ բանս Մոգպետն 'ի դահճապետէ անտի խռովեցաւ և պղտորեցաւ 'ի միտս իւր և հատաւ քուն յաչաց նր̃ զբազում գիշերս: Իսկ յաւուր միոջ յերեկոյն պահուն' յարուցեալ երթայր առ նոսա միայնիկ ծածկի և ոչ զոք առնոյր ընդ իւր 'ի սպասաւորացն

նորայն։ Եւ իբրեւ եհաս ՚ի դուռն տանն, հայէր ընդ ծակ մի ՚ի ներքս եւ տեսանէր ըստ առաջին տեսլեանն· բայց նոքա ՚ի քուն կային խաղաղիկ։ Հեզաբար կարդայ յանուանէ զերկոսին· զի քաջ խօս գիտէր պարսկերէն։ Եկն ՚ի դուռն եւ հարցանէր, ո՞վ ես դու։ Ես ինքնին խակ եմ սա է մոգպետն, կամիմ ՚ի ներքս մտանել եւ տեսանել զձեզ։ Եւ իբրեւ եմուտ ՚ի մէջ նոցին ոչ եւս երեւէր նման նշանին· այլ պատմեաց նմ̃ զերկիցս երեւումն զարմանչելեացն։ Եւ պատասխանի Ղեւոնդ երէց եւ ասէ, Ա̃ծ որ ասաց ՚ի խաւարի լոյս ծագել, որ եւ ծագեաց եւ լուսաւորեաց զաներեւոյթ արարածս, նոյն զօրութի եւ այսօր ծագեաց ՚ի խաւար մտաց քոց· եւ բազում կուրացեալ աչք ոգւոյդ եւ տեսեր զանշիջանելի լոյս շնորհացն Աստուծոյ։ Փութա՛ մի՛ հեղգար, դուցէ դարձեալ կուրասցես ՚ի խաւար պնդագոյն։ Եւ զայս իբրեւ ասաց, յոտն կային ամ̃քն ասելով ՚ի սաղմոսէն ՚ի քառասուն երկու երորդէ, առաքեա՛ զլոյս քո եւ զճշմարտութի քո, զի նոքա առաջնորդեսցեն եւ ածցեն զմեզ ՚ի լեառն սբ եւ ՚ի յարկս քո։ Արդարեւ Ճշմարտիւ։ Տէր առաջնորդեցեր եւ ածեր զմոլորեալս զայս յանանց ուրախութիւն եւ յանմերձելի հանգիստ։ Ահա նմանեալ է օրս այս սբ չարչարանաց քոց· որ ապրեցուցեր զմահապարտ աւազակն ՚ի մահուանէ, եւ նոյնժամ բացեր զաղխեալ դրունս Եդենայ այգւոյ։

թյոպես զտեր և զայս կործանեալ այրս, որ էր պատճառք մահու բազմաց. և արարեր զսա՝ պատճառս կենաց և մեզ և անձին մերում։ Գոհանամք զքեն Աստուած գոհանամք և ձայնակիցք լինիմք սուրբ մարգարէին։ Մի մեզ Տէր մի մեզ այլ անուան քում տուր զփառս վասն ողորմութեան և ճշմարտութեան քո զի մի երբեք ասասցեն ՚ի հեթանոսս թէ ուր է ած նոցա։ Ող և այսօր իսկ յայտնի եղև զօրութիւն քո մեծ ՚ի մէջ ապաշխարանի խաւարագդեաց ազգիս։ Իսկ որ ձրին եգիտ զածատուր շնորհան սկսաւ և նա ասել առանձինն Տէր լոյս իմ և կեանք իմ ես յումմէ երկեայց Տէր ապաւէն կենաց իմոց ես յումմէ դողացայց։ Քանզի գիտեմ ճշմարտիւ եթէ բազումեն այսուհետև թշնամիք իմ և կամին մերձենալ և ուտել զմարմին իմ։ Ա՛լ դու Տէր ամենայնի որ եկիր վասն ամենեցուն կենաց զի դարձցին և կեցցեն առաջի քոյոյ մարդասիրութեանդ մի որոշեր զիս ՚ի սուրբ դասանցս յոր խառնեցայ զի մի ըստ քո փարախդ արտաքս ելեալ չար գազանն բեկանեսցէ զիս։ Մի հայիր Տէր ՚ի բազմամեայ ամբարշտութիւնս իմ զի մի մոլորեալ ՚ի ճշմարիտ կենացդ զբազումս անդրէն ՚ի կորուստ աշակերտեցի այլ որոց եղէն պատճառ մահու նոյին եղէց պատճառք կենաց Սատանայ որ ինև խորխոտեալ պարծէր ՚ի մէջ մեծի կոտստակմանցս ինև կորացեալ

ցնծալ ամենեցունց ՚ի մէջ լուսոյ աշակերտացն։ Եւ զայս իբրեւ ասացին նմին իսկ ետուն կատարել զաղօթսն եւ դադարեցին նովաւ հանդերձ մինչեւ ՚ի պահն երրորդ։ Եւ այնպէս խաղաղեալ կային ՚ի քուն ամենեքեան մինչեւ ՚ի ժամ առաւօտուն իսկ նորա յոտն կացեալ եւ ՚ի քուն ոչ մտեալ այլ զձեռսն ՚ի վեր ամբարձեալ կայր յաղօթս։ Եւ մինչ դեռ ընդ երդն սկսուցեալ հայէր յերկինս տունն յանկարծ ծակն լի եղեւ լուսոյ եւ երեւեցաւ նմա սանդուխտք լուսեղէնք որ կանգնեալ էր յերկրէ յերկինս եւ դունդք դունդք զօրաց ելանէին ՚ի վեր եւ էր ամենեցուն տեսիլն նոր եւ չքնաղ աչաւոր եւ սքանչելի իբրեւ զտեսիլ հրեշտակաց։ Ունէր եւ զԹիւ համարոյ ՚ի միտս իւր զիւրաքանչիւր գնդին զոր տեսանէր էր որ զ հազարի էր որ զերեսուն եւ զերից, էր որ եւ զերկերիւրոց եւ զերեքտասանից։ Եւ այսպէս մօտագոյնս մերձենայր մինչ ճանաչել նմա զերեսն ՚ի նոցանէ զՎարդան եւ զԱրտակ եւ զԽորէնն։ Եւ ունէին ինն սպասկ ՚ի ձեռին խօսէին ընդ միմեանս եւ ասէին ահա եկն էհաս ժամ զի եւ սոքա խառնեսցին ՚ի գունդս մեր վ.անզի եւ մեք սոցա իսկ մնայաք եւ զառհաւատչեայ պատիւս սոցա բերաք։ Եւ որում ոչ եւս մնայաք եկն երեւեցաւ եւ խառնեցաւ եւ եղեւ իբրեւ զմի ՚ի զինուորաց Քրիստոսի։ Այս երիցս անգամ երեւեցաւ չք-

նաղ

Նաւ տեսիլս առնն երանելւոյ Զարթոյց ընդ սուրբսն ՚ի քնոյ անտի և պատմեաց նոցա զամ տեսիլն կարգաւ. խակ նոցա յարուցեալ կային յաղօթս և ասէին Տէր Տէր մեր զի սքանչելի անուն քո Համբարձաւ մեծ վայելչութիւն քո ՚ի վերոյ քան զերկինս ՚ի բերանոյ մանկանց տղայոց հաստատեցեր զօրհնութիւն. զի եղծցի թշնամին և հակառակորդ. Զի ոչ եւս այսուհետև է ասել թէ, տեսից զերկինս ըզ գործս մատանց քոց. այլ՝ զի տեսից զքեզ Տր երկնի և երկրի. որք երևեցար խակ այսօր ՚ի ձեռն սրբ զօրականայն քոյ՝ հեռաւոր օտարիս, որ անցեալ էր ըստ ակնկալութե կենաց իւրոց. Ահա դու Տէր ողորմութբ քով պսակեցեր զսիրելիս քո. և գթութբ քով ելեր ՚ի խնդիր կորուսելոյս. դարձուցեր և խառնեցեր ՚ի դասս սրբց քոց. Ո՛չ միայն ետես սա զերկինս զգործս մատանց քոց, այլ ետես զերկինս և զընակիչս նոցա. Եւ մինչդեռ է յերկրի խառնեցաւ ՚ի բանակս բիւրաւոր հրեշտակաց քոց. Ետես և զհոգիս արդարոց կատարելոց. ետես և զնմանութի փառաց աներևոյթ պատրաստութեցն. ետես և ՚ի ձեռն նոցա՝ զանջուշտ ուարունեան, որ հանդերձեալ պահի ՚ի ձեռս Ճարտարապետին. Երանի սմա վն սրբ տեսլեանս. և երանի մեզ վն սորա մերձաւորութեն առ մեզ. Քանզի հաստատեաց գիտացաք ասլաւ եթէ՝ ( որում այսպիսի սքան-

չելիք

չէ լիք յայտնին) մեծ մասն ընկալաւ սա յանըն-
պատ քոյ բարութեն։ Ընտրեալ են պարգևք-
քո. և առանց խնդրելոյ տաս, ում և կամիս՝
քոյով յորդ և աննախանձ առատութեամբ։ Եւ
եթէ որ ոչ խնդրեն՝ չարգելուս ՚ի սոցանէ,
բայց մեզ Տէր զդուռն ողորմութեն. որ ՚ի ման
կութէ մերմէ յանկայեալ եմք բարեմասնութե
ամբ քոյ Ջնորագիւտ դաստակերտս քո բարե
խօս առնեմք զն անձանց մերոց մի ընկղմեսցի
նաւ հաւատոց մերոց ՚ի մէջ ալեկոծեալ ծո
վուս մեղաց Եւ այսպէս կատարելով յերկար
զաղօթսն յորդ և առատ արտասուս հեղլին
՚ի վր անձանց իւրեանց Գութս ողորմանաց առ
կանէին առաջի բարերարին զի լսելի լիցի
ձայն պաղատանաց նց և հառաչանս կայցեն
՚ի վերջուս Զգանայն զի մի զրկեսցին ՚ի յանկա
լի պսակացն զոր ունէին ձեռքն ՚ի ձեռս իւ-
րեանց Ոչ և ազդեցաւ նոյա ՚ի Հոգւոյն սրբոյ
զի մերձեցեալ էր ժամանակ կոչմանն նց ոչ զի
երթիցեն և աներկիւղ դադարեսցեն ՚ի կա-
կածելի յակնկալութեն որում համբերեին բա-
ղում տառապանօք զի առ հաւատչեին փոքու
հասցեն երկնաւոր մեծութե որում և ՚ի վաղն
ջույց խակ էին յանկայեալք.

Այս պատճառ էր յընկալուլ Մովսէսն ՚ի հասատա
կոչին սուրբէն շնորհաւորութեան շնորհ ընծայաբերա-
ւորն պատճէ չնորհ.

Եւ

Եւ քանզի ինքն Մոգպետն իշխան էր ծնի՛ նմա յանձն արարեալ էր զկապեալս քաղաքին վրկ և համարձակութբ ը առաւօտուն հանեալ տանէր զկապեալսն յապարանս իւր լուանայր և սրբէր զնո ՚ի չարչարանաց բանտին առնոյր զ ջուր լուացմանն սբյն և արկանէր զիւրով մարմնովն։ Ուղղէր ՚ի տան իւրում աւազան և ընդունէր ՚ի նմանէ զօբ մկրտութեն Հաղորդէր ՚ի կենդանի Մարմին և ՚ի քաւիչ Արեան Տն մերոյ Յի Քի։ Բարձր բարբառով աղաղակէր և ասէր մկրտութիւս այս լիցի ինձ ՚ի լուացումն մեղաց իմոց ՚ի ծնունդ նորոգութե վերստին ՚ի Հոգւոյն սբ և ճաշակումն անմահ խորհրդիս ՚ի ժառանգութի երկնաւոր որդեգրութեն։ Դնէր և ըս մարմնոյ առաջի նոցա սեղան կերակրոց և մխիթարութե բաժակ մատուցանէր նոցա և միաբանէր ը նս ՚ի հայցին օրհնութեն։ Այլ թէպէտ և ինքն եհաս յերկնաւոր բարիսն և աներկիւղ էր ՚ի մարդկան հարուածոց սակայն վս ընտանեացն յոյժ ունէր կասկած զի մի իբրև չարակամք մատնիցեն յիւր արքունի։ Վասնորոյ ծածուկ կոչէր ՚ի գիշերի զնախարարսն որ ՚ի նմին քաղաքին էին ՚ի կապանս և առնէր ծախս մեծամս։ Եւ էին ոմանք ՚ի մեծի խնդութե վս նոր սքանչելեացն որ երևեցան նոց։ Զյիշէին ամենեին եթէ վիշտք ինչ անցեալ էին ը նոսա։ Բաց ՚ի բազմա

կանայն

կանայն կարծիք իմն եղեն 'ի միտս սրտին վասն
երիցու միոյ որ էր ընդ՛ 'ի սէր կապեալ զի 'ի մէջ
շինական մարդկան կեցեալ էր և աղքատագոյն
և էր 'ի գրոց մխիթարութե՛ հրամայեցին նմա
ունել զգլուխ բազմականին։ Եւ պատասխա-
նի երանելին և ասէ զինչ է այդ զոր դուքդ
գործէք և կամ՝ յինէն զի թագուցանէք զծա-
ծուկս խորհրդոյդ եւ քան զկրսեր ձեր խո-
նարհագոյն եմ և քան զևս փոքունս յաշակեր-
տայն ձերոյ աղքատագոյն եմ զի արդ կարա-
ցից այդմ տանել։ Այս խակ մեծ էր ինձ զի սէ՞
կապանայդ ձերոյ հաղորդէլ եմ և այսօր ե-
թէ արժանի համարիք զիս ձերում սեղանոյդ
կալայք դուք զիւրաքանչիւր տեղիս բազմա-
կանիդ և հրամայեցէք ինձ զիմ տեղին։ Եւ
բռնադատեալ սէ՞ Եպիսկոպոսն միաբանութ՞
ամ՛ սէ՞յն և 'ի վերոյ քան զամենեսին բազմեցուցին
զնա։ Եւ իբրև բոլորեցաւ ակումբ բազմա-
կանին և հաղորդեցան ամքն 'ի կերակուրն զո-
ճարթութ՞ յոտն եկաց սուրբն Յովսէփ և
սկսաւ զուրախութե՛ նշան մատուցանել և
ասել այսպէս։ Ուրախ լերուք ամքն 'ի վ՞
քանզի վաղի՛ յայս ժամ իցէ ահա մեռուցեալ
իցէ մեր զամ՛ նեղութիս և զ չարչարանս զոր
կրեցաք։ Եւ փոխանակ սակաւ աշխատութեա
մեր բազմապատիկ հանգիստ ունելոց եմք։ Եւ
փոխանակ խաւարային արգելանաց բանտի մտա-
նելոց եմք յերկնից քաղաքն լուսաւոր որոյ
քաղաքի

քաղաքի քաղաքապետ ինքն է Քրիստոս։ Հան-
դիսապետ յորում ատենապալիսի նախ ինքն առա-
ջինացաւ առնելով զնշան յաղթութե̅։ Եւ
այսօր նոյն Տր̅ է որ յաջողէ մեզ զնոյն նշան
առնելոյ՝ ի փրկութի̅ անձանց և ՝ի պարծանս
մեծափառ մե̅ եկեղեցւոյ։ Եւ զօրօրինակ նո-
րէք դուք զեղբայրս զայս զգլուխ բազմակա-
նիս մերոյ սոյնպէս նախ սա առնելոց է վաղիւ
զպսակն ՝ի ձեռն կատարմանն մերոյ զի ահա-
ւասիկ եկն եհաս և մերձեցաւ առ մեզ թըշ-
նամին կենաց մերոյ և ապականիչ լու̅ չարչարա-
նաց ծառայից Քի̅։ Զայս՛ իբրև ասաց լուաւ
՝ի նմանէ բանս պնդութե̅ որով յոյժ մխիթա-
րեցան ամենքն։ ՝ի մե̅ աղօթից ձերոյ այսու̅ աղա-
չէ ինձ Քրիստոս ասէ և կատարեսցէ զելս
վախճանի իմոյ յոյժս ըստ բանի քում։ Ահա ե̅
ասելդ քո աղօթումն եղև հոգւոյս իմոյ և յի-
շեցի ես զմարդասիրութի̅ն Քի̅ որոյ և զա-
լուստն իսկ նր̅ յաշխարհս վս̅ մեր մեղաւորացս
եղև։ Գթասցէ յիս որդ̅ և յանապակն ՝ի ժամ
խաչին։ Որ̅ նովաւ զդրունս փակեալ դրախտին
եբաց և առաջնոյաւ լինել կարապետ այնոցիկ
որ անդրէն ՝ի նոյն տեղի դառնալոց էին յու-
րախութի̅ արասցէ և զիս այսօր Տր̅ Քս̅ ապաւա-
ւոր մեծաշուք գընդին ձերոյ Ամենիկ վասն
միոյ մեղաւորի որ դառնայ յապաշխարութի̅ ան-
վախճան ՝լինի ուրախութի̅ յերկինս որպէս զի
դիտեն իսկ զկամս Տն̅ հարեանց։ Քանզի վասն

միոյ

միոյ մեղաւորի եւ կորուսելոյ ոչխարհի եւս
'ի խնդիր վասն այնորիկ եւ նք խնդակից լինին
վասն միոյ դարձելոյ յապաշխարութի։ Թերեւս
վասն իմ իսկ եկեալ էր մեծ զօրավարն Հայոց`
բազում սբ ընկերակցօքն իւրովք։ Զպսակն
վասն ձեր բերեալ էր, այլ զուրախութե անե
տին` հասարակաց տայր։ Եւ առաւել եւս
ընդէր էին զարմացեալ, զի ոչ ճանաչէին զիս
'ի կեանս իւրեանց, անհա՛ 'ի սբ մահուն իւրեանց`
կամին զի եւ ես մասն ընկալայց ընդ երանելիսն։
Աղաչեմ զձեզ տեարք իմ եւ հարք։ աղօթս ա-
րարէք 'ի վր անարժանութես իմոյ։ զի արժանի
եղէց մեծի աւետեացն հասանել, որ 'ի յանսուտ
բերանոյդ ձերոյ բարբառեցաւ 'ի լսելիս իմ։
Արդ` փութամ տեսանել զօրն եւ յաւուր արդ
զժամն եկեալ հասեալ 'ի վր մեր․ Եւ երբ իցէ զի
ելից 'ի Թանձրադանդաղ ձանձրալի մարմնոյս։
Երբ իցէ զի տեսից զքեզ Տր Քս։ Երբ իցէ
զի աներկիւղ եղէց 'ի մահուանէ։ Երբ իցէ զի
ազատութիւս իմ հասցէ 'ի կատարել ազատութի։
Օգնեա ինձ Տր օգնեա ինձ եւ կարկառեա
զամենազօր աջդ յօգնականութի զի խոստման
բանիցս իմոյ եւ գործք արդեամբ կատարեսցին 'ի
վր մեր եւ փառաւոր լիցի յիս 'ի մեղաւորս
անուն Տն մերոյ Յի Քի։ Զայս իբրեւ ասաց
երանելին յոտն կայիր 'ի բազմականացն անդ
գոհանային ասելով` փառք քեզ Տէր փառք
քեզ Թագաւոր զի ետուր մեզ կերակուր յու-
րախու

րախութի լցի զմեզ հոգևորովք սրբով զի զօրացուց առաջի քո հաճոյս և մի անարժանեսցուք զի դու հաստատեսցես իւրաքանչիւր ըստ գործս իւր․ ՚ի նմին ժամու եղև խորհուրդ մեծ ՚ի միջի նոցա եթէ զինչ օրինակաւ կարասցեն ամրեցուցանել զԱստուածն զի մի լուծել յաւէտ քունոյս իբրև զհուր բորբոքեսցի բարկութիւն իւր մնացելոցն․ Իբրև ոչ ինչ կարացին ՚ի ժամուն վճարել միաբանութեամբ աղօթս առաքել յԱստուած ապաստան առնէին զկեանս առն հանգստացելոյն․ Իսկ նախարարքն հրաժարեցին ՚ի մեծն յորդառատ արտասուօքն և ողբալից ուրախութեամբ անկեալ յոտս նորա աղաչէին մեծաւ պաղատանօք յանձն առնել զնոսա Հոգւոյն սրբոյ զի մի ոք ՚ի միջոյ սոցին թուլասցի և ելցէ արտաքս ՚ի հաւատոյ միաբանութենէս կերակուր լիցի չարաբարոյ գազանին․ Իսկ երանելին միաբան քաջալերէին զնոսա և ասէին զօրացարուք եղբարք ՚ի տր̄ և մխիթարեցարուք ՚ի մարդասիրութիւն Աստուծոյ որ ոչ թողու զմեզ որբս և ոչ ՚ի բաց առնէ զողորմութիւն իւր ՚ի մէնջ․ Հաստատուք ՚ի Քս̄ բազում բարեխօսիւք զոր ունիմք առ նմա որ չիջանի վառումն կանթեղաց ձեռոց և ոչ ուրախ լինի խաւարասէր թշնամին կենաց ձերոց․ Այլ նոյն Տր̄ է որ զօրացոյց զառաջին նահատակսն խառնելով զնոսա ՚ի գունդ հրեշտակաց իւրոց․ Նոյն սբ̄ ոգիք և մեզ դասք արդարոց հասանեն ձեզ յօգնականութիւն համբե

համբերութեն զի է նորին նոյուն պատկային արժանի լինիք: Զայս խօսեցին ը̄ նմ̄ ազգի-չերն ամ̄ սաղմոսիւք 'ի գլուխ տանէին. իսկ 'ի ժամ առաւօտուն ասէին ամ̄քն Ծագեա առ ողորմութիւն քո ոյք ճանաչեն զքեզ զարդարութիւն քո ոյք ուղիղ են սրտիւք. Մի եկեսցէ 'ի վր̄ մեր ոտն ամբարտաւանից և ձեռք մեղաւորաց մի դողացուսցեն զմեզ: Անդ անկցին ամ̄քն որ գործեն զանօրէնութի մերժեսցին և այլ մի կարասցեն հաստատիլ. Եւ անդէն վաղվաղակի հատին դահճիքն 'ի դուռն բանտին մտին 'ի ներքս և տեսին որ յառաջ մոգպետն էր և նմա իսկ յանձն արարեալ էր պահել զնս̄ նստէր 'ի մէջ նց̄ և լսէր նց̄ նա և քաջալերէր ևս զնոսա չերկնչել 'ի մահուանէ: Իբրև տեսին զմեծ սքանչելիսն դահճիքն յոյժ զարմացան ը̄ իրսն այլ ոչ ինչ իշխեցին հարցանել յնս̄ այլ չոգան և պատմեցին դենշապհոյ որում յանձն արարեալ էր զչարչարանս սրբոյն. իսկ նա իբրև լուաւ 'ի դահճացն արքունի զահի մեծի հարաւ 'ի միտս իւր եթէ գուցէ և ինքն ը̄ նոսա 'ի ներքս լինիցի. զի անգլի ծանօթագոյն էր առ նն̄ հրամայեաց հանել 'ի բանտէ անտի զնոսին կապանօք և հեռացուցանել 'ի քաղաքէ անտի երկոտասան պարսիկ հրամանաւ և 'ի ծածուկ խօսէր ը̄ Մոգպետին եթէ զինչ պատճառք իցեն կապանացն նց̄. Եւ պատասխանի այլն և ասէ մի խօսիր ը̄ իս

'ի

ցի ծածուկ և մի լսեր զխորհուրդս լուսոյ ՚ի մէջ խաւարի զի բաց են աչք իմ Արդ քանզի տե սի զլոյսն երկնաւոր եթէ կամիս լինիլ խոր հրդակից կենաց հարց ցիս յանդիման հրա_ պարակաւ և պատմեմ քեզ զոր տեսի զմեծա_ մեծս Ա՟յ։ Եւ իբրև լուաւ ՚ի նմանէ զա՟մ և ստուգեց ես վս՟ իւրոյ միաբանութե՟ն եթէ ոչ քակտի ՚ի սո՟յն համանուէ ոչ իշխեաց ձեռն արկանել ՚ի նա թէպէտ ունէր հրաման յար քունուստ այլ փութայաւ և ինքն երթալ սպառ մել թագաւորին ՚ի ծածուկ զա՟մ ո՟վ զի արդ և լուաւ ՚ի նմանէ։ Եւ պատասխանի թագա ւորն և ասէ ցՊենչապուհ մի որք ամենեւին լուիցէ զայդ ՚ի քէն մանաւանդ վասն տեսլե՟ն մեծի որ երևեալ է նմա զի մի տգէտ մարդիկ երկմտեալ բաժանեսցին ՚ի մեր հաստատուն օրինացս։ Մինչև մեք զայլս կամէաք հնա_ զանդել թերևս զօգիս գտցեն իբրև նո՟ց ոչ ինչ կարասցուք առնել մեր որ վարդապետք օ- րինացդ էին զկնի նո՟ց մոլորութե՟ն հետևե- ցան։ Նաև այն ևս չար է մեզ քան զա՟մ զի ոչ դուզնաքեա ինչ որք խոտորեցաւ ՚ի նո՟ց օ- րէնսն այլ այր մի համակդեն երևելի ը՟ ա՟մ վերին Դռ՟։ Եթէ փայկարիմք ը՟ նմա նա տե ղեկագոյն է քան զա՟մ վարդապետս Դ՟իս գու ցէ ՚ի հիմանէ խարխալե՟ալ աւերէ զօրէնս մեր։ Եւ եթէ դատիմք զնա ը՟ այլ չարագործսն նա և այնո՟վ հուչակեալ ելանէ համբաւ քրիստո նէութե՟

նէութեն նր և մեծ անարգանք զմնի դենիս ձը-
գին։ Եւ եթէ սրով ևս փախձանեսցի բաղում
են քրիստոնեայք ՝ի կարաւանիս և ամ երկիր
յանէլ յրուէն զոսկերսն նր։ Սակաւ ինչ էին
մեզ անարգանք առ ամ մարդիկս ուր մեծա-
րել պատուէին ոսկերքդ նածարայէոյ։ Իսկ
եթէ մոգայդ և մոգպետաց զնոյն պատիւ կը-
րեսցեն մեք մեզոյն լինիմք քանի չօրինայս մե-
րոյ։ Այլ այժմ իմ երդումն տուեալ քեզ յան-
մահ դխն նախ զդառնայել ծերն կոչեա ա-
ռաջի քո եթէ հաճանեսցի սիրով և զղջայել
ապաշխարեսցէ զկախարդութենց մեծարես-
ցիր զնա պատուովն ը առաջին կարգին և ոք
մի գիտասցէ զթշնամանս նր։ Ապա թէ ոչ
հաճանի և ոչ կամի անսալ բանից քոց յարուս-
ջիր ՝ի վր նր բաղում ամբաստանս ճէ անոփ
զի միասակար գոյի յարքունի իրս։ Եւ ճաւ-
փուրջիւ ՝ի վր յարուսջիր յանկոյս քան զկռու-
րան և զմակուրան և անդ ընկեցէլ զնա ՝ի վր
րաց մի և ընկալցի զմահ թշուառութեն։ Եւ
զայլակ դէնան փութանակի կարծեա՝ի կենայ
ճիս զի մի դղրդեսցեն զօրէնս ճիս մերոյ։
Զի եթէ զծարտար Մոգպետն այնց երաք
աշակերտեցին ոդէս մարդիկ զիարդ կարաս-
ցեն կալ առաջի նոցա պատիր խաբէութեն։
Արդ եւ նստաւ Դենշապուհ արտաքոյ բանա-
կին յատենի ոմ ասացաք հեռի երկոտասան
հրասահաւ հարցանէր ց Մոգպետն և ասէր
իշխանութի

իշխանութիւն առի վասն քո ոչ միայն բանիւք հարցանել այլ եւ իմ հարուածովք տանջանաց. Մինչչեւ ձեռն արկեալ եմ ՚ի քեզ ընկալ զմեծարանս եւ արհամարհեա զանարգանս եւ խնայեա ՚ի պատուական այրդ. Թող անդր ՚ի բաց զքրիստոնէութիւն զոր ոչ ունէիր ՚ի բնէ եւ դարձիր անդրէն ՚ի մոգութիւն որպէս զի վարդապետ իսկ էիր բազմաց. Եւ պատասխանի երանելին եւ ասէ աղաչեմ զքեզ որ յառաջ իբրեւ ըզ հարազատ եղբայր համարեալ էիր յաչս իմ եւ այսօր թշնամի կատարեալ մի ընդ առաջին սիրոյն գթար դու յիս այլ կատարեա ՚ի վերայ զկամն չարութեան թագաւորին ձերոյ եւ որպէս առեր իշխանութիւն ՚ի վերայ իմ դատեա զիս. Յայնմ ժամանակի իբրեւ ետես Դենշապուհ եթէ առ ոչ ինչ զսպառնալիսն արքունի համարեցաւ եւ ոչ ողոքանացն երեսս ինչ արար եւ քան ՚ի ծածուկ յայտնի եւս կամէր եթէ խօսեսցի կատարեաց ՚ի վերայ նորա ընդ խրատուն արքունի. Եւ գաղտ գողայի ընկեցաւ ՚ի հեռաւոր օտարութիւն որպէս զիարդ եւ ուսաւ ՚ի վարդապետէն, եւ արար. Եւ հրամայեաց եւս դենշապուհոյ երկու ընկերակիցս օգնականս յաւագ գործակալացն զՋնիկանն որ էր մարզպետ արքունի եւ զՄոլան անդերձապետն ՚ի ձեռանէ մովպետան մովպետի. Արդ երեքեան սոքա իւրաքանչիւր պաշտաւորք առին զսուրբն յանապատէ, եւ փոխեցան նոյն չափ եւս հեռագոյն ՚ի միւս եւս դժնդակ տեղի ՚ի նմին

գիշերի

դիշերի։ Եւ զոք ՚ի կարաւանէն անդր ոչ թո-
ղին տեսանել ոչ ՚ի հայոց և ոչ յամ քրիստո-
նէից և ոչ բնաւ յարտաքին հեթանոսաց։ Եւ
սպասաւորքն որ էին ՚ի կապելոյն անդէն ՚ի
քաղաքին հռոմայեցին պահել զգուշութե զի
զհետ նոցա մի՛ ոք գիտասցէ, ընդ որ տա-
նիցին ՚ի մահուն տեղի. մի՛ նք և մի ամենևին
ոք ՚ի մարդկանէ։ Բայց՝ այր մի խուժիկ ՚ի
զօրացն արքունի՝ որ ՚ի ծածուկ ունէր զքրիս-
տոնէութին և վճակեալ էր ՚ի դասս դահճացն
և կայր ՚ի սպասու օրապահացն հանդերձ գոր-
ծիական տանջանարանօքն, եկն եմուտ ՚ի գի-
շերին և խառնեցաւ ՚ի դասս նախարարացն։
Առաջին դասն ՚ի միջնոյն կարծէր զնա. և մի-
ջինն երրորդին. և երեքեան ՚ի միմեանց հա-
մարէին, և ոչ ոք ՚ի նոցանէ եհարց թէ դու
ո՞վ ես ընդ մեզ. ոչ ՚ի տէրանցն, և ոչ ՚ի սպա-
սաւորացն։ Իբրև հասին ՚ի տեղի անապատին՝
(որ ամենևին անբոյս էր ՚ի դալարաբերբան-
ջարոց. և այնպէս առապար դժնեայ էր, զի
և ոչ նստելոյ անգամ տեղի անդ գտաւ նոցա։)
իջին հեռագոյն՝ նախարարքն երեքեան, և
հռոմայեցին դահճացն խուրեանց կապել զոտս
և զձեռս նոցա։ Եւ արկին պարանս երկայնս
զոտից նոցա, և երկու երկու լծեցան և առին ՚ի
քարշ. և այնպէս ձգեցին ձողքեցին ընդ սպա-
ռած տեղիսն քարշելով, զի ամենևին խայծ ոչ
մնաց ՚ի մարմինս երանելեացն. և պատ լուծին և

անին

անձին 'ի մի տեղի. Թուէր ինձ նոցա այսպէս,
եթէ կոկղեցաք զխստութիւն նոցա. և հնազան-
դեցուցաք զբիրտ ապստամբութիւն. և արդ՝
զինչ որ խօսիմք, անսայեն բանից մերոց և
առնիցեն զկամս թագաւորին, և ապրեալ լի-
ցին յանհնարին տանջանացն: Եւ զայն ոչ կա-
րացին քաջ իմանալ. եթէ իբրև զքաջ զինո-
ւորս վառեցին զնոսա և 'ի հրահանգս կրթութե
վարժեցին զնոսա. և իբրև զգազանս վայ-
րենիս՝ արիւնախանձս ուսուցին զնոսա: Եւ
եթէ ունէին ինչ սակաւիկ մի կասկած յառա-
ջագոյն, հայեցեալ նոցա 'ի չարաչար վէրս մար-
մնոց իւրեանց, զառաջին երկիւղն 'ի բաց մեր-
ժեցին. Սկսան իբրև արբեալք անզգայք, ըղ-
միմեամբք եղանել 'ի բանից պատասխանիս. և
փութային իբրև ծարաւիք յաղբեւր, եթէ ո՞
նախ վաղ զլուր արիւնն հեղցէ յերկիր.

---

Այս պատմէ, թէ որպէս՝ յապստամբելոցն իշխանաց
զօրին՝ չէրչաւեալ զօրավարն էին յեղծանեցան առանձինն
նոյին զարզանին. որոց և հրամանն առեալ վճարէ.

Ի՜ մինչդեռ յայսմ պատրաստութեան էին
սոքա, խօսել սկսաւ ընդ նոսա Դեն-
շապուհ և ասէ. արքայ յղեաց զիս առ ձեզ.
ամ՛ աւեր աշխարհին հայոց (ասէ) և կատա-
րուածք զօրայն՝ որ հասին 'ի վերայ 'ի ձեռնս եղեն
զինաքն ամ՛. և բազում նախարարք՝ որ այժմ
կան

կան կապանօք չարչարեալ վասն ձերոյ յամա-
ռութ՟դ եղեւ այդ ամ՟։ Այլ արդ՝ եթէ կա-
միք ինձ լսել ասեմ ձեզ. որ՟պ ամ՟ չարչարանաց
մահուն պատճառք եղէք, այսօր լերուք պատ-
ճառք անձանց ձերոց։ Եւ նախարարքն որ կան
՚ի կապանս, ՚ի ձեռս ձեր է իշխանութի՟ արձա-
կել զնոսա. եւ աւեր Տ՟ն ձերոյ՝ ձեօք շինի.
եւ բազումք որ վարե՟լ են ՚ի գերութի՟, դարձան
անդրէն։ Ահա դուք աչօք ձերովք տեսէք
այսօր զորպիսի այր տոհմիկ, զոր Թագաւորն
ինքնին յակամնէ յանուանէ ճանաչէր վս՟ մեծի
գիտութ՟ե օրինաց մերոց, եւ կատարեալ էր յամ՟
դենիս, եւ մեծամեծաց ամ՟ սիրելի, եւ գրէ
թէ բոլոր Տս՟ կալեալ էր զնմանէ, եւ վասն զի
անարգ՟էց զդենիմազդէն եւ պատրեցաւ ՚ի ձեր
տխմարգիտութ՟եդ ոչ ինչ անխայեաց Թագա-
ւորն՝ ՚ի մեծ պատուէ ն՟ր. Այլ իբրեւ զգերի մի
զանաշխարհիկ շկօթակ արարի զնա. այնչափ
յօտարութի՟ հեռաւորն, զի ՟Է՟ երթալն իսկ ոչ
ժամանէ ՚ի տեղի պատուհասին իւրոյ։ Արդ՝
եթէ ՚ի բուն դայեկութ՟ն՝ վասն պատուականն
օրինացն ոչ խնայեաց ՚ի նա, որչափ եւս ՚ի ձեզ
յօտար Տէկս, որ մահապարտ իսկ էք յիւր ար-
քունի. Եւ չիք ինչ այլ ձեզ հնարք կենաց,
բայց եթէ երկիրպագանիցէք արեգական. եւ
կատարէք զկամս Թագաւորին, որ՟պ եւ ուսոյցն
զմեզ մեծն Զրադեշտ։ Եւ եթէ զայդ առնէք,
ոչ միայն արձակիք ՚ի կապանաց եւ ապրիք ՚ի մա-
հուանէ

հոմանէ, այլ և մեծամեծ պարգևօք ուղարկէք յՏն ձեր։ Յառաջ մատեան Ղևոնդ երէց և կայոյց Թարգման զՍահակ եպիսկոպոս Ջիմարդ ըունկյուք ասէ երկդիմի հրամանայդ քոյ. ահա զերկրպագութիւն ետուր Նախ՝ արեգականն, և զկատարումն երկրպագութեան՝ 'ի կամս Թագաւորին ձգեցեր։ Մեծարեցեր զարեգակն յառաջ ձայնելով զանուանն իւր. և մեծացուցեր ըզ Թագաւորդ աւելի քան զարեգակն յայս արարեր եթէ առանց կամաց խորոց սպասաւորէ արարածոցս արեգակն։ Իսկ Թագաւորդ 'ի կամս ազատութեան խորոյ զոր կամի մեծացուցանէ և զոր կամի ծառայեցուցանէ, և ինքն 'ի Ճշմարտութեան վր չէ է հասեալ։ Մի խօսիր ընդ մեզ իբրև ընդ տղայս զի հասակաւ կատարեալ եմք և գիտութեամբ ոչ եմք անտեղեակ ուստի սկսար դու, անտի տաց քեզ պատասխանի։ Արդ քէն զմեզ եդեր պատճառս աւերածոյ Ցին մերոյ և հարուածոյ զօրացն արքունի մեզ մեր օրէնքն այդպ ոչ ուսուցանեն այլ յոյժ պատուել հրամայեն զերկրաւոր Թագաւորս և սիրել զնս յամ զօրութիւն մերմէ. ոչ իբրև զմարդ ոք դուզնաքեայ 'ի մարդկանէ, այլ իբրև Աստուծոյ Ճշմարտի կալ 'ի ծառայութեան։ Իսկ եթէ զրկիմք ինչ 'ի նոցանէ, փոխանակ ընդ երկրաւորիս, զերկնիցն խոստացաւ մեզ զարքայութիւն։ Իսկ ոչ միայն զարքանեկութ հպատակութեան պարտիմք արկանել նոցա, այլ և

մահու

մահուամբ չափ զանձինս 'ի վե՛ր դնել սիրոյ Թագաւորին։ Եւ ո՞չ յերկրիս չունիմք իշխանութիւն փոխանակել զնա ընդ այլում ումն սոյնպէս և յերկինս չունիմք իշխանութիւն փոխանակել Ճշմարիտ Աստուածն մեր ընդ այլում որ չիք այլ աստուած բաց 'ի նմանէ։ Բայց զայս ասեմ քեզ որում տակաւին մի տեղեկագոյն ես։ Ով 'ի քաջ զօրականէ մտանիցէ 'ի պատերազմ յառաջ. և եթէ զայն արասցէ, ոչ քաջ անուանի նա. այլ յոյժ վատ։ Եւ կամ ո՞ յիմաստուն վաճառականաց զպատուական մարգարիտն փոխանակիցէ ընդ անարգ թրուշայի. բայց եթէ յիմարեալ իցէ տգիտութեամբ, որպէս և ձեր մոլորութեան առաջնորդքդ։ Միայն գտեր զմեզ 'ի բազում առաքինեայն մերոյ, և կամիս գողութեամբ աւերել զամուրս խորհրդոյ մերոյ. Չեմք մեք միայն որպէս և դուդ կարծես. Չիք տեղի ուրոյն՝ ուր ոչ իցէ Թագաւորն մեր Քս։ Բայց միայն այնոքիկ են Թափուր 'ի նմանէ, որ իբրև զքեզ են չարադեւ իշխան ոք, որք ուրացեալ էք 'ի նմանէ. Զի եթէ զինուորք Ցին մերոյ՝ (որ աշակերտեալ էին մեօք 'ի Քս.) առ ոտն հարին զահագին հրամանս Թագաւորին ձերոյ, և զմեծամեծ պարգևս նր առ ոչինչ համարեցան, և զհայրենի տէրութիւն 'ի բաց կողոպտեցին, չխնայեցին 'ի կին և յորդիս և 'ի զանձս մարմնաւոր կենաց Ցիս, նաև ոչ զարիւնն իւրեանց ածին ինչ զմտաւ վասն սիրոյն Քի։

Այլ

Այլ՝ զերկրպագուս արեգականդ՝ ( որ ձեր վարդապետքն էին ) չարաչար հարուածովք սատակեցին զնոսա, և մեծամեծ չարիս հասուցին՝ ի վերայ զօրաց ձերոյ, և բազումք ՝ի նոցանէ անկանէին միայն՝ ի պատերազմի, և այլքն մանեայն՝ ի պէս պէս փորձութիւնս, և կէսքն անկան ՝ի հեռաւոր օտարութիւն, և ևս բազմագոյնք վարեցան ՝ի գերութիւն, և ամ̃քն ն̃ք յառաջեցին քան զմեզ յարքայութիւն։ Աստուծոյ. խառնեալ ՝ի գունդ վերին հրեշտակացն և ընծայն ՝ի պատրաստեալ ուրախութիւն. յոր հասեալ խառնեալ երանելի այնոր, զորմէ դու ասես չիօթակ աւարի։ Երանի տամ նմա, և երկրին՝ ընդ որ նա անցանիցէ. և տեղեայն՝ ուր վախճանիցի նա։ Ոչ միայն զարքունեօքն ձերովք անցանէ պատուականութբ̃, այլ և զերկնից լուսաւորօքդ, որում դուքդ երկիրպագանէք։ Եւ պատասխանի մովան անդերձապետն և ասէ, տեսք բարերար էն և երկայնմտութբ̃ ջանան ընդ ազգի մարդկան, զի գիտասցեն և ծանիցեն զիւրեանց փոքրութիւն և զնոյն մեծութիւն, և վայելեսցեն ՝ի պարգևս նորա՝ զոր տուեալ է յիշխանութի ՝ի ձեռս թագաւորի. և ՝ի բերանոյ նորա ելանէ հրաման կենաց և մահու. Եւ ձեզ ոչ է այդմ իշխանութի ընդդիմանալ կամաց նորա. այլ առնուլ յանձն զերկրպագութի արեգական, որ ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ զտիեզերս ամ̃ և ջերմութբ̃ն իւրով հասուցանէ

ըզ

զկերակուրս մարդկան և անասնոյ։ Եւ՛ վասն հասարակաբաշխ առատութեն և անսպառ մատակարարութեն՝ անուանեցաւ միհր ջծ. զի չիք՝ ի նմա անիմաստութի և նենգութի։ վորոյ և մեք երկայնամիտ լինիմք՝ ի մէջ տգիտութեդ ձերոյ։ Քանզի չեմք մարդատեայք իբրև ըզ գազանս շաղղակերս և արիւնարբուս։ Խնայեցեք յանձինս ձեր․ և մի խառնէք զմեզ ակամայ յարիւնս ձեր։ Թողէք անդր զառաջին յանցանսն ձեր, և զառաջի կայ իբրս ուղղեցէք․ զի և այսօրուն՝ վասն ձեր լիցի ողորմութի՝ ի մեծ Թագաւորէն։ Ետ պատասխանի Սահակ եպիսկոպոսն և ասէ․ իբրև ուսեալ և յոյժ խրատեալ՝ զգեղեցիկ հոգւոյ յանձին ունիս չինութե ծի և փառաց Թագաւորին․ բայց զայս տգիտաբար ասացեալ կարի յոյժ․ զի ա՛ծս բազումս խոստովանիս, և զմի կամս ոչ ասես ա՛մյն։ Եթէ վիշապքն առ միմեանս մատուցեալ են, մեք խոնարհագոյնք քան զնոսա զիարդ կարասցուք հաւանիլ բանից քոց միաբանել զ ջուր և զկրակ զի ուսցուք՝ ի նմանէն զ խաղաղութի։ Կոչեա զարեգակն՝ ի տուն որպէս և զ կրակ և եթէ նմա ոչ մարթի գալ զի մի աշխարհ՝ ի խաւար մնասցէ, յղեա զդա առ նա զի ուսցի՝ ի նմանէ զանկարօտութի։ Եթէ մի է բնութի աստուծոց քոց, համատարեսցեն առ միմեանս զուգութե. լիցի անկերակուր կրակ՝ իբրև զարեգակն․ մի՝ խափանեսցին ծառայքն արքունի՝ ի ծախս ուռճ-

կայ

կայ սր․ Որդ՝ մինդ անյագ ուտէ, և հանապազ
մեռանի․ և մինն որ չուտէ, առանց օդոյ նու-
աղի՝ լոյս ճառագայթից իւրոյ։ Ցրտանայ ի
ձմերայնի և սառուցանէ զամ դալարաբոյս
խոտոյն․ տօթանայ յամարայնի և հրկիզանէ
զամ կենդանիս։ Եւ որ ինքն յար ի փոփոխման
կայ, ո՞չ կարէ հաստատուն կեանս ումեք շնոր-
հել։ Եւ քեզ ո՞չ կարեմ մեղադիր լինել․ որոյ
ոչ տեսանել է զմեծ թագաւորն, պատուաւորա-
յն մատուցանէ զերկրպագութի․ Իսկ եթէ զայս
՚ի հնում դիմանոյն արասցէ, վաղվաղակի մա՞հ
՚ի վր հրամայէն։ Այլ վս արեգական եթէ կա-
մեսցիս ուսանել, զճշմարիտն ասացից քեզ․
Մա՛ն է նա աշխարհիս արարածոյ․ ՚ի բազում
մասանց մի մա՛ն որոշեալ է․ Կեանքն ՚ի վերոյ
են քան զնա, և կեանքն ՚ի ներքոյ նր․ Ո՛չ է նա
առանձին սր՝ յստակ լուսով․ այլ ՚ի ձեռն
օդոյ հրամանաւ Աստուծոյ տարածանէ զճառա
գայթս իւր և հրային մասամբ ջեռուցանէ զամ
գոյացեալս ՚ի ներքոյ իւրոյ կայանին․ Իսկ վերինք
ոչ ինչ մասն ունին ՚ի նորա ճառագայթիցն․
քանզի իբրև յաման արկեալ է զ լոյսն ՚ի պտուղ
նր, և ՚ի վայր կոյս հեղու բերանայեալ ՚ի պէտս
ներքնոյս վայելչութե։ Եւ զորօրինակ նաւ մի՝
թուցեալ ՚ի վր ծովային ջուրցն բազմութե,
անգիտութն գնայ զուղևորութն ՚ի ձեռն հմուտ
ճարտար նաւապետին։ Այսպէս՝ արեգակն ՚ի
ձեռն կառավարին իւրոյ՝ ունի զփոփոխմունս
շրջանին

շրջանին իւրոյ տարեւոր ժամանակին։ Եւ ոչ այլ մասունք ծխս հաստատեալ են վասն մեր կենաց, և զնա իբրև զմիայլոյ մասայն տուեալ է մեզ յառաջնորդութե լուսոյ, որպ զլուսին և զաստեղս և զօդս յարարածուս, և զամպս անձրևաբերս։ Սոյնպէս և երկիրս մասանց. զծով և զգետս և զաղբիւրս և զամ պիտանացու ջուրս։ Նոյնպս և զցամաքայինս ամ պիտոյիւք իւրովք. և զմի ոք՝ ի սոցանէ չէ արժան աստուած անուանել։ Եւ եթէ ժպրհեսցի ոք ասել, զանձն տգիտաբար կորուսանէ. և աստուած անուամբ մեծարելով զնա նք ոչ ինչ օգտեցան։ Միոյ իշխանութ՝ երկու թագաւորք ոչ լինին։ Եւ թէ մարդ քեզ զայդ յանձն ոչ առնու, քանի՞ ևս հեռի է՝ ի յԱստուծոյ բնութենէն։ Այդպիսի կարգ՝ չիոթեա՛լ է։ Արդ՝ եթէ կամիս ուսանիլ զճշմարիտն, քաղցրայո զդառնութ սրտիդ. և բա՛ց զաչս մտացդ. և մի՝ յարթնութ՝ կուրութե ընդ խաւար գնար։ Որ անկեալդ ես ՝ի խորխորատ, և զամմին կամիս առ քեզ ձգել։ Եւ եթէ քոյքն գան զկնի մոլար վարդապետութեդ, որ ոչ տեսանեն և ոչ իմանան, մի՝ զմեզ կարծեր դոյն օրինակ. քանզի բա՛ց են աչք մտաց մերոց. և զրատեսիլ եմք մարմնով աչօք։ Զարարածս տեսանեմք, և իմանամք զսա՝ յայլմէ արարեալ. և ամքն ընդ ապականութե։ Իսկ՝ արարիչն ամյն՝ աներևոյթ է ՝ի մարմնաւոր աչացս. այլ՝ մտաց իմանի զօրութի նորա։

Եւ

Եւ՜ վասն զի ետես զմեզ 'ի մեծ տգիտութեան, ողորմեցաւ մերում անուսումնութես։ Յորում և մեք իբրև զձեզ՝ երբեմն զերևելիս կարծեաք արարիչս, և գործեաք զա՟մ անառակութիւնս։ Վասն որոյ առ սէր իւր՝ եկն մարմնացաւ 'ի մարդկանէ, և ուսոյց մեզ զաներևոյթ Ածութն իւր։ Այն՝ զի բարձրացոյց զինքն 'ի խաչ կախաղանին, և զի մարդիկ զհետ լուսաւորացդ մոլորեալ էին, մերկեաց յարեգականէ զլոյս ճառագայթից իւրոց, զի եղիցի խաւար սպասաւոր մարդկութեն նր. զի որ իբրև զձեզ անարժանք էիցեն, մի՝ տեսցեն զկեանս իւրեանց, և 'ի մեծի անարգութե եղիցին։ Որպէս և այսօր որ ոչ խոստովանին զխաչելեալն Ած, նոյն խաւար մածեալ է զոգւով և զմարմնով նր. Որպէս և դուք իսկ այսօր 'ի նմին խաւարի կաք, և դեռ ևս զմեզ չարչարես։ Մեք պատրաստ եմք ընդ օրինակի Տեառն մերոյ. որպէս զի տրդ և կամիս, կատարեա զկամս դառնութեան քո։ Յայնժամ իբրև հայեցաւ 'ի նա անօրէնն Դուկն շապուհ, և ետես 'ի մեծի ուրախութե զօ՜արթագին զնմին, գիտաց եթէ ոչ ինչ դնան առ նա բանք սպառնալեացն։ և ողոքանայն Հրամայեաց զմի ոմն 'ի կրսերագունիցն յառաջ մատուցանել երէց մի Որշէն անուն, վաղ յառաջ կասկած իսկ եղևսէյն։ Կապեցին զոտսն և մեծաւ ուժով պնդեցին զձեռսն, մինչև ճարճատուն հատաւ նմ ջղացն։ Եւ այնպէս կայր

ցմեծ

ցանձ ժամս յանհնարին պրկոցան։ Երբայ մէն զբերանն իւր և ասէ, ահա շրջեցան զինև շունք բազում։ և ժողովք չարաց պաշարեցին զիս։ Ծակեցին զձեռս և զոտս իմ։ և փոխանակ բերրնոյ իմոյ աղաղակեցին ամ̃ ոսկերք իմ։ Լուր ինձ տր̃ և լո՛ւր ձայնի իմում և ընկալ զոգի իմ ՚ի ձեռս սբ̃ զօրականին քո, որ երևեցան նորահերա ղասատակերտին քո Ես որ կրսեր էի յամենն, ողորմութ̃ քո գԹայեալ՝ յառաջեցոյց զիս։ Եւ զայս իբրև ասաց, ոչ ևս կարէր բնաւ զբերանն յանհնարին ցաւոյն։ Եւ անդէն դահիճքն վաղվաղակի հրամանն առեալ յերից նախարարացն՝ սրով հատանել զպարանոց երանելւոյն։ Եւ ընկեցին զմարմինն ՚ի խորխորատ մի ցամաք։

---

Պատմէ տառ. ԲԵ. Վա՛րք Ռշնամանեցառ իշխանն անօրէն
՚ի Բանից տէրոյն։

Եւ անդէն ՚ի տեղւոջն սկսաւ խօսել Դենշապուհ ընդ Եզնային և ասէ. յորժամ եկի ես յաշխարհն հայոց, տարի մի և վեց ամիս՝ եհաս ինձ շրջել անդ։ Ո՛չ յիշեմ ես ամենևին եթէ բան մի տրտունջ յումեքէ լուայ վն̃ քո։ այնց̃ և առաւել ևս վն̃ Յովսեփայ զի դա խակ էր իշխան ամ̃ քրիստոնէից. և համարէի յամ̃ իրս արքունի։ Նաև որ մարզպան աշխարհին լեալ էր յառաջ քան զիմ երթալն, մեծապ̃ գոհ էր զառնէս զայսմանէ

Եւ

Ե՞ւ եթ յինձէն իսկ աչօք իմովք տեսանել, զի իբրեւ հայր հաստատուն էր համարեալ ամ̄ աշխարհին. եւ անաշառութ̄ սիրէր զմեծամեծս եւ զփոքունս: Արդ փոխանակ ը̄ ձեր եւ աղաչեմ զձեզ. խնայեցէք 'ի պատուական անձինս ձեր. եւ մի՛ մատնիք 'ի մահ չարչարանաց ըստ առաջնոյն կարգի, զոր տեսէք աչօք ձերովք: Քանզի եթէ 'ի դոյն միտս յամառութե կայք, եւ իմ եղեալ է 'ի միտ իմում՝ բազում չարչարանօք կորուսել զձեզ 'ի կենաց ձերոց: Ես գիտեմ 'ի հրապոյս առնդ այդորիկ եղեալ էք դուք. քանզի ինքն ախտացեալ է մարմնով, եւ ձեռնարկութ̄ բժշկաց չիք գտեալ առողջութի, եւ հիւանդոտ կենօք ձանձրացեալ է, փափագի 'ի մահ, քան 'ի կեանս: Առայս ես պատասխանի ետ̄ Յովսէփ եւ ասէ. գովութի̄ն զոր ետուր նախ եպիսկոպդ եւ այդ ինձ, յիրաւի արարեր. ըստ կարգի պատուեցեր վասն ալեւորդ. այդպէս իսկ արժան է: Այլ՝ Ճշմարիտ ծառայից Աստուծոյ՝ որ չէ օրէն զխնդարձ լինել երկրաւոր իշխանացս եւ ոչ զոք 'ի ժողովրդոց տրտունջ առնել վ̄ը մարմնաւոր զօշաքաղուե: Այլ ցածութ̄ եւ հեզութ̄ ուսուցանել զպատուիրանս Աստուծոյ. եւ առանց խարդախ իմաստութե՛ խաղաղասէր լինել առ ամենեսին. եւ անաչառ վարդապետութ̄՝ առ մի Տն̄ արարածոց առաջնորդել՝ բոլորեցունց: Այլ վասն առնս այսորիկ հրկապաշտաց զոր ասացեր,

եւ

և զայդ ոչ ստեցեր, այլ՝ կարի զճշմարիտն ասա-
ցեր. զի ոչ իբրև զօտար ոք հրապուրէ զմեզ.
և ոչ իբրև զպատրօղ ոք խաբեբայ մոլորե-
ցուցանէ զմեզ. այլ՝ յոյժ սիրէ զմեզ. Վասնզի
մի է մայր մեր Եկեղեցի՝ որ երկնեաց զմեզ.
և մի է հայր մեր ս̃բ Հոգին՝ որ ծնաւն զմեզ.
զի ա՛րդ համահաւրք միամօր որդիք՝ երկպա-
ռակք լինիցին և ոչ միաբանք։ Որ քեզ թուին
եթէ հրապոյրք իցեն, մեր 'ի տուէ և 'ի գիշերի
դոյն խորհուրդ էր, զի անքակ ունիցիմք զկե-
նաց միաբանութիւն։ Իսկ եթէ սա ձանձրացեալ
իցէ ելանել յախտալից մարմնոյս, առաւել ևս
մեք ամենեքեան. զի չիք ոք ամենևին որ ունիցի
զմարմին առանց ցաւոց չարչարանաց.

Եւ պատասխանի Դենշապուհ և ասէ. զայդ
ոչ գիտէք, որչափ երկայնամիտ լինիմ ես 'ի
վ̃ր ձեր. այս ոչ հրամանաւ արքունի է այս-
չափ երկայնաբան լինել ը̃ ձեզ պայքարաւ.
Այլ յիմմէ՝ քաղցրութ̃է թողացուցի ձեզ. զի
չեմ անագորոյն իբրև զձեզ. զի անձանց ատելի
էք, և այլոց թշնամի։ Իմ զի աղ և հաց կերեալ
է յաշխարհին ձերում, գութ և սէր ունիմ առ
աշխարհն։ Եւ պատասխանի Ղևոնդ երէց և
ասէ. որ առ արտաքինսն գութ և սէր ունի,
զպատուիրեալսն Աստուծոյ կատարէ. այլ պարտի՝
յիւրոցն խնայել. զի չեմք անձանց ատեարք.
այլ՝ է որ համարս խնդրէ 'ի մէնջ և վ̃ս ար-
տաքնոց և վ̃ս ներքնոց։ Այլ զոր ասացերդ,
եթէ

եթէ յինէն ասամ ձեզ և ո՛չ է հրամանաւ Թագաւորին. Եթէ դուք սովոր էք անսանել զՔ. հրամանաւ Թագաւորին ձեր, զայդ բարիոք առնէք, զի աւերիչ աշխարհի է, և սատակիչ անմեղ մարդկան. բարեկամ սատանայի, և թշնամի Աստուծոյ։ Այլ մեք ո՛չ կարեմք անսանել զհրամանաւ մերոյ Թագաւորին. և ո՛չ զանանց կեանսն մեր փոխանակել կարեմք ընդ ապականացու պատրանս աշխարհիս։ Այլ վ̃ն իմ զի ասացեր չգտեալ զառողջութի՛ ՚ի բժշկայ, սիրէ զմահ քան զկեանս. այդ բանք՝ ո՛չ այնոցիկ են որ տեսանեն զա̃մ չարչարանս աշխարհիս։ Աղէ յածո՛ զքեզ սակաւիկ մի ՚ի զայրագին տրտմութենէ, և եկ զհետ Ճշմարիտ բանից իմոց. և հայեա՛ կարգաւ զՔ. իրս Տիս. Ո՞ր ՚ի մահկանացուաց ունիցի կեանս անտրտմումս. ո՞չ ահաւոր են ա̃մ ախտիւք. է՝ որ ներքոյ՝ և է՝ որ արտաքոյ. ցուրտ և տօթ. քաղց և ծարաւ. և ա̃մ աղքատութիւք կարօտութեց. Արտաքոյ՝ անիրաւութի, յափշտակութի, գէճ պղծութի անառակ յարձակմամբ. ՚ի ներքոյ՝ ամբարշտութի, ուրացութի, տգիտութի ՚ի կամաւոր ազատութէն։ Բայց դու որ զբժիշկս խոտեալ անարգեցեր, թէ չիք իմ ՚ի նոցանէ գտեալ զառողջութի, չեն ինչ զարմանք. վ̃ն զի մարդիկ են ն̃ք։ Ե՛կ յա՛յժմ՝ առ իմ գտցես հնարս առողջութե, և է՝ որ ապաստամբէ՝ ՚ի հնարից ն̃ց. վ̃ն զի ա̃մքն եմք մահկանացու. այն՝ որ բժշկեն, և որ

բժշկին

բժշկին։ Այլ՝ երանի, թէ և դուք ընդ բժշկա-
կան արուեստին բերէիք զնմանութի. զի ոչ
փոքր է Ճշմարտութի նց բժշկութեն։ Վասնզի
յորժամ տեսանեն նոքա զոք հիւանդացեալ
ոչ յապաղեն երթալ առ նոսա. այլ՝ փութա-
ցեալ հնարին մատուցանել զառողջութին։ Մա-
նաւանդ եթէ յուքունիս մի ոք 'ի սիրելեաց
թագաւորին ախտանայցէ, և հասեալ 'ի մեծ
հրապարակն՝ տեսանիցէ զբազմութի պատու-
ւորաց, և զառողջութի գեղեցիկ երիտա-
սարդաց. և ևս մատուցեալ 'ի պալահան արքունի՝
և անդ տեսանիցէ զամենայն զսպասաւորսն
պշրեալ և զզարմանալի տեսիլսն, ոչ ինչ զար-
մանայր ընդ հրաշալեացն տեսիլն։ Նաև եթէ՝
գահոյք ականակապք իցեն և համակ ոսկեղէնք
( որոյ վերայ հիւանդն անկեալ դնիցի ) չէ ինչ
նմա փոյթ պայծառութե։ Այլ 'ի բաց հրամայէ
առնուլ զոսկեհուռ վերարկուն, և ձեռն 'ի
ներքս տարեալ՝ զննէ զերակ մարմնոյն, եթէ ջե՞րմ
իցէ բնութին. և եթէ սիրտն 'ի տեղւոջն հան-
դարտ կայցէ՞. և կամ եթէ լեարդն կակո՞ւղ
իցէ. և եթէ շուրք երակացն յարմար իցեն. և
ըստ նմին զդարման բժշկութեն առնիցէ, շնոր-
հելով նմա զառողջութի։ Իսկ արդ՝ եթէ մարդ-
կային բժշկութեն՝ այսպիսի գիտէ քննահել
զանձին, և միայն զիւր արուեստն յառաջ մա-
տուցել՝ զգործն կատարէ ո՞րչափ ևս առաւել
ձեզ արժան էր ( որ զբոլոր [illegible] ունիք յիշ-

խանութե

խանութեան ) մեծ հոգւյանձին տանիլ. նախ զհոգիս բժշկել յա՟մ ախտից մոլորութեց աշխարհիս, և մարմնով կային իսկ ձեզ ա՟մէն ի ծառայութի։ Արդ այժմ զի դուք տգիտացարուք և զանձանհ հոգւոց մահկանացու արարիք յանշէջ հուր գեհենին։ Մարմնովդ՝ եթէ կամիք և եթէ ոչ կամիք, ախտացեալ էք յախտաւորութ՟ե անառողջութեան, և զմեզ նախատէք մարմնոյ ցաւովք, որ ո՛չ ՚ի կամս մերոյ ազատութե՟ է. այլ՝ ո՛վ և դիպեցաւ ՚ի բնութես մարմնոյ իւրաքանչիւր մարդոյ։ Եւ Ք՟ս Ճշմարիտ Ա՟ծ կենդանի և կենդանարար՝ ՚ի կամս իւրոյ բարերարութե՟ն՝ եղև բժիշկ հոգւոց և մարմնոց. և նա ինքն ՚ի ցաւս չարչարանացն իւրոց՝ բժշկեաց զա՟մ ազգս մարդկան։ Եւ ես խանդաղատագոյն գթացեալ՝ վերստին ծննդեամբ ծնեալ զմեզ յառողջութի անցաւս և անվէրս, և ՚ի ծածուկ հարուածոց զհին ծակոտուածս վիշապին ողջացոյց, և արար զմեզ անախտս և անարատս հոգւով և մարմնով զի իցեմք բնակակիցք հրեշտակաց և զօրաց երկնաւոր Թագաւորին մերոյ։ Եւ քո զայս ո՛չ գիտացեալ և ո՛չ վայելեալ յանապականն պարգևսն Աստուծոյ, և ո՛չ կամիս ուսանել ես ՚ի մէնջ, այլ և զմեզ ես վրիպեցուցանել կամիս, որում չիք հնար. և մի՝ այլ լիցի. այլ և ո՛չ կարես առնել իսկ։ Այլ վասն իմոյ ախտալից մարմնոյս ասացից ձեզ կարճառօտս։ Խնդամ և ուրախ եմ յորժամ տեսա

նեմ

Նեմ զմարմինս չարչարեալ. գիտեմ զի զօրանայ յիս առողջութի Հոգւոյս իմոյ։ Մանաւանդ զի ունիմ գրաւական զմեծ վարդապետն Հեթանոսաց. որ 'ի յաւէս մարմնոյ անձինն մխիթարէր. և 'ի կռփումն սատանայական մարմնոյ պարծէր և ասէր. զի եթէ ոնկակից եղաք նմանութե մահու-նր, որչափ և առաւել լիցուք Հաղորդ յարութե նր. Այլ դու՝ որ ունիս իշխանութի 'ի վր մեր, դատեա զմեզ ըստ կամաց չարութե քո։ Զեմք ինչ զանգիտելոց յաՀագին սպառնալեացդ քոց. և ոչ երկնչիմք 'ի դառն մահուանէդ՝ զոր ածելոց ես 'ի վր մեր։

Յայնժամ մեկուսացոյց սակաւիկ մի զերանելին 'ի միմեանց, և միայն ասէ ցսրբ Եպիսկոպն. գոլլումն՝ զոր ետու քեզ յառաջ. ոչ իմացար զպատիւ անձին քո. յիշեցուցանեմ քեզ զչարիսն զոր գործեցեր դու, զի անձամբ զանձն քո արասցես մահապարտ։ Արդարև դու աւերեցեր զատրուշանսն յուշտունիս. և կամ զկրակն դու սպաներ. նաև որպէս լուայ և ստուգեցի եթէ և զմոգսն դու չարչարեցեր. և սպա պաշտամանն դու տարար։ Արդ եթէ արդարև դու առեր, պատմեա ինձ։ Եպս պատասխանի ետ և ասէ. ո՞րդ կամիս ուսանել զայդ յինէն; եթէ յառաջագոյն գիտեիր։ Դենշապուհ ասէ. ո՞չ է համբաւն, և ո՞չ է ճշմարտութի. Եպիսկն ասէ. ո՞չ կարծես ասա՛ ինձ։ Դենշապուհ ասէ, իմ լուեալ է. եթէ զամ վնս յու-

ուրշտունիս՝ դու արարեր։ Եպիսկոպոսն ասէ. և զի այդպէս հաւատեաւ հասեր 'ի վերայ կրկին զի՞ հարցանես։ Դենշապուհ ասէ. զճշմարիտն 'ի քէն կամիմ ուսանիլ։ Եպիսկոպոսն ասէ. ո՛չ զօգուտ կենաց քոյ կամիս ուսանիլ յինէն. այլ՝ արեանս խմոււմ ցանկան միտք քո։ Դենշապուհ ասէ՝ չեմ գաղան արիւնախանձ. այլ վրէժ խնդիր եմ՝ ձեռոյն անարգութե։ Եպիսկոպոսն ասէ. զտարերս համերս՝ աստուած անուանես և զմարդիկ պատկերակից քո՝ խողխողել կամիս. տալո՞ց ես հատուցանելո՞ց ես վրէժս թագաւորաւն քով յանկաշառ ատենին Աստուծոյ։ Եւ զոր քո չար կամքդ կամին, զայդ ես ասեմ քեզ. զտունն արդարև ես աւերեցի. և զմոգսն ես չարչարեցի գանիւ. և զկահ պղծութե որ 'ի տանն էր. 'ի ծովն ընկեցի. այլ զկրակ՝ ո՞ կարէ սպանանել։ Քանզի ամենիմաստ արարչին արարածոց հոգ խնամոյ տարեալ, յառաջագոյն անմահս հաստատեաց զբնութի չորից նիւթոյս։ Ասէ սպան դու զօդ, եթէ կարես. և կամ ապականեա զհող, զի մի՛ բուսուսցէ զդալարի. փողոտեա զգետ զի մեռցի։ Եթէ զայդ երեքեան կարես առնել, ապա և զկրակ կարես սպանանել։ Ապա եթէ Ճարտարապետն մեր միաբանեաց զչորից տարերցդ զանքակութի և ահա գտանի բնութի հրոյ 'ի քարինս և յերկաթս և յամենայն տարերս զննելիս, ընդէ՞ր սուտ զրպարտես զիս, եթէ

դու

դու զկրակ սպաներ։ Աղէ դու սպան զջերմութիւն արեգական, զի ունի նա մասն հրոյ. և կամ՝ տուր հրաման, զի մի՛ Թափեսցի հուր յերկայծոյ։ Մեռանի այն՝ որ շնչէ, և շարժի, և գնայ, ուտէ և ըմպէ։ Ե՞րբ տեսեր դու զկրակ գնայուն կամ խօսուն կամ գիտուն։ Արդ՝ զոր կենդանի չէ, քո տեսանել մեռեալ խոստովանիս. Քանզի անթողլի է ամբարշտութիւն ձեր քան զնոյն հեթանոսաց, որ գիտնագոյն են քան զձեզ. Թէպէտ և 'ի ճշմարտէն Աստուծոյ մոլորեալ են, զանխօս տարերս՝ աստուած ո՛չ խոստովանին. Արդ՝ եթէ դու անգիտութեան կորնչելի ասես զբնութիւն հրոյ, ո՛չ առնուն քեզ յանձին արարածքս. քանզի խառն է դա ամենայնի։ Դենշապուհ ասէ. ոչ ինչ մտանեմ ես 'ի պայքար քննութեան ընդ քեզ վասն բնութեան արարածոցս. այլ խոստովանեա ինձ եթէ դու անյուսես զկրակն եթէ ոչ։ Պատասխանի ետ երանելին և ասէ. որովհետև ո՛չ կամեցար աշակերտ լինել ճշմարտութեան, ասացից զկամս հօրն քո սատանայի։ Ես ինձէն մտի իսկ 'ի կրակատունն ձեր, և տեսի զի կային պաշտօնեայք ամբարշտութեան՝ մնացի կարծեայն ձերոյ. և կրակարանն լի հրով՝ առաջի նոցա բորբոքեալ այրէր։ Հարցի ցնոսա բանիւք և ո՛չ գանիւ, եթէ զի՞նչ համարիք՝ 'ի միտս ձեր զկրակ պաշտամանս այսորիկ։ Իտուն պատասխանի և ասեն, մեք ոչ ինչ գիտեմք, բայց այսչափ իմանամք զի սովորութիւն է նախնեաց, և հրաման բռնոյն Թագաւորին։

Ըսեմ դարձեալ ցնոսա, զի՞նչ իմանայք զբնութի կրակիդ. արարի՞չ կարծէք եթէ արարած. Ասեն ամենեքեան միաբան. մեք արարիչ զդա ոչ գիտեմք. նաեւ ո՛չ հանգուցիչ աշխատելոյ. Ձեռք մեր փապարեալ են ՚ի կայծնի, եւ ոտունք մեր տոռուեալ են ՚ի փայտակրի. աչք մեր դի-ձայնեալ են արտասուօք ՚ի կծուէ ծխոյ դորա, եւ երեսք մեր մրոտեալ են ՚ի խոնաւութե թանձրութե նորին ծխոյ. Եթէ շատ մատուցանեմք նմա զկերակուրն, յոյժ քաղցնու. եւ եթէ բնաւ չտամք, բնաւ անցանէ եւ սպառի. եւ եթէ մօտ երթամք եւ երկիրպագանեմք, կիզու զմեզ եւ եթէ ոչ երթամք մօտ, ամենեւին մոլոր զաւնայ. Մեր այդպէս համեալ է ՚ի վր բնութեդ դորա. Ասեմ դարձեալ ցնս. իսկ եթէ լուեալ է ձեր, ո՞յր ուսուցեալ է ձեզ զայդպիսի մոլորութի. Ետուն պատասխանի եւ ասեն. զի՞ ի լսելոյ հարցմանս զմեզ. այլ հայեա՛ց ը առաջի կայ իրս. Օրէնսդիրքն մեր՝ ոգւովք մեայ միայն են կուրացեալ. այլ՝ Թագաւորն մեր՝ մարմնոյ միով ակամբն կոյր է, այլ՝ հոգւովն բնաւ չէք իսկ աչք. Վնայնորիկ՝ եւ ես իբրեւ լուայ զայս ՚ի մոգացն, յոյժ ողորմեցայ. զի տգիտութե զարդարն խօսեցան. Սակաւիկ մի չարչարեցի զնս զանիւ՜, եւ նոյնչափ իսկ ետու ըզկրակն ՚ի ջուրն ընկենուլ. եւ այսպէս ասացի. Աստուածք՝ որ զերկինս եւ զերկիր ո՛չ արարին, կորիցեն ՚ի ներքոյ երկնից. եւ ՚այս զմոգսն ՚ի բաց արձակեցի.

Առաքինոյ սկսանի, թէ ո՛րչափ չարչարեցան սուրբքն ՚ի ձեռն Ապստամբոյ. և որչափ նշանք եղեն ՚ի ձեռն նոցա.

Յայս ամ իբրև լուաւ Դենշապուհ ՚ի բերանոյ սբ̅ Եպիսկոպին, անհնարին զահի հարաւ ՚ի թշնամանաց թագաւորին, և յանարգանաց դենին։ Վասնորոյ՝ և երկեաւ իսկ մատուցանել զնա ՚ի տանջանս հարուածոյ, եթէ գուցէ այլ ևս մեծ անարգանս զթագաւորէն տայցէ ասել յատենին։ Եւ ՚ի նմա ձգէին կարծիք թշնամանացն, զի երկայնմտութբ̅ պայքարեալ ընդ նոսա։ Եւ քանզի սուսեր ընդմէջ ածեալ նստէր յատենին՝ ահս արկանելով սրբյն, գոչեաց իբրև զառիւծ զայրագին, և հանեալ զսուսերն՝ գազանաբար յարձակեցաւ ՚ի վր̅ երանելէյն, և եհար զեպիսկոպոսին զաջ ուսն, և թիկամբն հետ զձեռն ՚ի վայր ընկէց։ Եւ նր̅ ահեակ կողմ յերկիր անկեալ՝ դարձեալ անդրէն պատսպարէր, առնոյր զաջ ձեռն ՚ի վեր։ Աղաղակէր մեծաձայն և ասէ. ընկա՛լ տր̅ զկամաւոր պատարագս, որ ինձէն զիս քեզ մատուցի բոլորովին. և խառնեա զիս ՚ի գունդ սբ̅ զինուորայն քոյ։ Դարձեալ քաջալերէր զընկերակիցսն և ասէր. հայալ՝ առաքինիք. եհաս ժամ պսակման մերոյ. խնդէք զաչս մարմնոյդ վայր մի և այժմ տեսանէք ըզ լոյսն մեր Քս̅ի. Եւ թաւալելով իւր արեան անձին իւրոյ

իւրոյ ասէր. օրհնեցից զՏր յամ ժամ: Հանա-
պազ օրհնութինր 'ի բերան իմ: 'ի Տր պարծեսցի
անձն իմ: լուիցեն հեզքն և ուրախ եղիցին:
Եւ ասելով զսաղմոսս զայս, կատարէր մինչև
յայս տեղի. բազում նեղութիւնք են արդարոց,
յամէ փրկէ զնս Տէր և պահէ զամ ոսկերս
նց: Մինչդեռ կայր յուժի մարմնոյն սակաւ մի
խորով աչօք իւր նայեցեալ տեսանէր, որ եկեալ
իջանէր յերկնից գունդ բազում հրեշտակաց.
և վեց պսակ իձեռն հրեշտակապետին. Դար-
ձեալ և լսէր ես բարբառ 'ի վերուստ, քաջալե-
րացարուք սիրելիք իմ. զի ահա մօտայայք
զվշտալից զկեանսդ, և հասիք երանելի պսա-
կացդ, զոր ձերով ճգնութեդ կազմեցիք: Առէք
դիք յիւրաքանչիւր գլուխ. զի նիւթ պատրա-
կան՝ 'ի ձէնջ գործեալ հիւթեցաւ. իսկ ճա-
տարուն գործոյդ՝ յամենայն ձեռայն Քի
կազմեցաւ. զոր և 'ի սպաւորայ այսր իսկ ըն-
կալեալ՝ ը սոփիաննոսի լինիք պսակակից:
Նաև զայն ևս քաջանք տեսանէր, զի դեռևս
շողայր սուրն 'ի վերայ պարանոցի երանելեացն:
Զոր իբրև ետես սրբն Ղևոնդ եթէ ոչ ևս ըղ-
մի մի կամին հարցանել և դատել, այլ միանգա-
մայն հրաման եղև մահու, ասէ ցերանելին
Յովսէփ. մատի'ր յառաջեայ դու ընդ դէմ
սրոյն. քանզի դու աստիճանաւ 'ի վեր ես քան
զամենեսեան: Եւ զայս իբրև ասաց, կարգեցան
կային մի ը մինչէ. և առ ճեպ տագնապին
ստիպե

ստիպելոյ դաՀճացն, միանգամայն Հատին և ընկեցին զպարանոյս երանելեացն առաջի մեծ եպսին. Եւ նորա ընդ Հանել ոգւոյն աղաղակէց և ասէ. Տէր Յ̄ս ընկալ զՀոգիս մեր ա̄մյն, և խառնեա զմեզ 'ի գունդ սիրելեացն քոց. Եւ միանգամայն կատարեցան ամ̄քն 'ի նմին տեղւոջ. Եւ եթէ զՄոգպետն ևս (որ Համատայ 'ի Քս̄) կամիցիս 'ի Համարակալել ընդ նո̄, թուով եօթն են. Թող զերկուսն ևս՝ որ 'ի վատ գետուն կատարեցան. և միւս Եպիսկոպոսն Թաթիկ անուն 'ի յասորեստանի. Բայց անդէն 'ի տեղւոջն վեցս՝ որոց անուանքն այսոքիկ. Սահակ եպիս յռշտունեաց. սուրբն Յովսէփ 'ի վայոյ ձորոյ 'ի գեղջէ Հողոցմանց. Ղևոնդ երէց 'ի վանանդայ 'ի գեղջէ իջաւանից. Մուշէ երէց աղբակոյ. Արշէն երէց ի բագրաւանդայ 'ի գեղջէ յեղեգեկէ. Քաջաջ սարկաւագ ուստի եպիսն էր յռշտունեաց. իսկ երանելի Մոգպետն 'ի նիւշապուՀ քաղաքէ. Սամուէլ երէց յայրարատոյ 'ի գեղջէ յարածոյ. Աբրահամ սարկաւագ 'ի նմին գեղջէ. Արդ՝ զվէց մեծս զայսոսիկ յանապատին՝ ուր կատարեցին, ԴենշապուՀ և Մոգպետն և Ջնիկան և Մայպետն՝ անդէն 'ի տեղւոջն պաՀապանս ընտրեցին յիւրաքանչիւր ըստպասաւորաց, և պաՀել Հրամայեցին զմարմինս երանելեացն ցաւուրս տասն և կամ ևս աւելի, մինչև կարաւանն արքունի անցցէ գնասցէ. Ջի մի՛ ուրէն

Համակ

Համակդենքն եկեալ բառնայցեն զոսկերս դոյա և բաշխեալ սփռիցեն ընդ աշխարհս ամ. յոր մարդիկ ևս առաւել յորդորեալ մոլորիցին զկնի նազովրայեցւոյ աղանդին. Իսկ Խուժիկն՝ ( զոր յառաջագոյն ասացաք. ) զկինու հանդերձ մնայր անդէն ընդ պահապանսն իբրև զմի 'ի նոցանէ. Այր լի՛ իմաստութբ և կատարեալ յամենայն գիտութեն սպասէր և դէտակն ունէր եթէ որո՞վ օրինակաւ հնարս գտցէ զոսկերս սրբոյն գողանալ 'ի նոցանէ. Իբրև աւուրք երեք անցանէին 'ի վր. արհաւիրք մեծ անկանէին 'ի վր. ամենեցուն. իբրև թըմբրեալք և կիսամեռք անյարիրք անկեալ դնէին զերիս աւուրսն. Իսկ 'ի չորրորդումն աւուր՝ եր կուք 'ի պահապանացն չարաչար ըղկեցան 'ի դիւէ Դարձեալ հասարակ գիշերաւ չափ՝ ձայնք ահեղք՝ հնչիւնք և թնդիւնք և ոտնաձայնք. 'Ի ներքուստ իբրև զդղրդումն գետնաշարժի՝ երկիրն դողայր 'ի ներքոյ նց. Եւ շողիւքն սուսերայ՝ փայլատակմունս արձակէին շուրջ զնոքօք. Եւ զամենեան զդիակունս՝ կանգնել տեսանէին, և զնոյն բանս ասէին, ահագինս բարբառէին 'ի լսելիս նց. Մինչև խուճապել նոցա ընդ միմեանս, դեռ ևս զիրեարս սատակէին, Եւ այսպէս տագնապեալք և չնորճլք, մինչև այր զընկերի փախուստ չգիտէր ընդ որ երթայր. Եւ եկեալ պատմէին մեծաւ զարմացմամբ զամ անցս չարչարանացն՝ զոր կրեցին

նոքա

նոքա ՝ի խորհուրդ մտին նախարարքն երե֊
քեանն, սկսան զարմանալով յմիմեանս ասել.
զի՞նչ գործեսցուք՝ զի՞նչ արասցուք վ̃ն ան֊
քննին աղանդոյն քրիստոնէից։ Վասնզի մինչ֊
դեռ կենդանի են, զարմանալի են կեանք իւ֊
րեանց. ընչատեացք են իբրեւ զանկարօտս.
սրբասէրք են իբրեւ զանմարմինս անաչառք են
իբրեւ զարդարադատս, աներկիւղ են իբրեւ
զանմահս։ Եւ եթէ զայն ա̃ծ ասեմք իբրեւ
զտգիտաց իբրեւ զանդգնելոց, իսկ զայն զի՞
առնիցեմք. զի յաւէտ ա̃ծ ՝ի կարաւանի աստ՝
նոքօք առողջանան։ Եւ կամ որ մեծս է քան
զա՛մ. ո՞յր ուրուք դի կանգնեալ երեւեցաւ կեն֊
դանեաց. կամ՝ բարբառ բանից լուաւ ոք՝ի նմանէ
զի սուտ չէին մեր սպասաւորքս. մեր մեզէն իսկ
հասեալ է՝ի փո̃ր ստուգութե̃ն սոյա։ Եւ եթէ
կամեցեալ էր դոյա կամաւոր ինչ ագահու̃թն
՝ի ներքս խառնել սակաւ մի ակնարկէին
քրիստոնէից ՝ի կարաւանիս, զկշիռ իւրաքան֊
չիւր մարմնոյ նոյա՝ ոսկի առնուին։ Դարձեալ
եւ արքդ որ՝ի դիւէ չարչարեցան, զի յայլ ժամ
յաւէտ չէին մեք գիտեմք. յայտ է թէ այ֊
սօր նշան մեծ երեւեցաւ։ Եթէ լուռ լինիմք
այսպէս, մեզ եւ անձանց մերոց իսկ կասկած է.
եւ եթէ տանիմք զդոսա առաջի թագաւորին,
լսելով նորա ՝ի դոցանէ զայդ ա̃ծ մեծամեծ
սքանչելիս, գուցէ եւ օրինաց մերոց քակտումն
ինչ հասանիցէ։ Եւ պատասխանի մոգպետն եւ

ասէ

սանէ կնա̄․ ո՞չ զիս ոստիկան արարին՝ ի վերայ ձեր երկոցուն․ զի՞ այդ չափ նեղէլ տագնապիք յանձինս ձեր․ դուք․ զգործ ձեր կատարեցէք․ և զհրաման արքունի՝ ի գլուխ տարէք։ Արդ եթէ բանքդ այդ յայտնեսցին, և հարցափորձ ինչ լինիցին առաջի արքայի, այդ խնդիր մեր մոգայց է․ դուք անհոգ լերուք և մի՛ ինչ անէք զմտաւ։ Եւ եթէ զարհուրեցայք ինչ յոգիս ձեր, վաղագոյն առաւօտուն ՚ի դարբ-թին եկայք․ զի վաղիւ անդր մովպետան մով-պետ ուստ մզդ է, և նոյն հաճեալ հաւանե-ցուցանէ զմիտս ձեր։ Իսկ խուժիկն իբրև լուաւ զայս ա̄մ, և գիտաց եթէ փոյթ ինչ ոչ է նոցա յայնմ հետէ զա̄ սպանելոյն, փութա-ցաւ վաղվաղակի էառ տասն այր՝ (զորոց զչափ գիտէր քրիստոնէութեն․) և հասեալ՚ի տեղին, չէն եգիտ զա̄մսն։ Եւ քանզի կասկած ունէր տակաւին՚ի նոցունց՚ի դահճացն, դար-ձեալ փոխեցին անտի զա̄սն յայլ տեղիս բա-ցագոյն իբրև երկու հրասահօք։ Եւ իբրև յանհոգս եղին, սրբեցին՝ կազմեցին զոսկերս երանելեացն, բերին՚ի բանակն և ունէին՚ի ծածուկ։ Եւ առ սակաւ սակաւ յայտնեցին․ նախ՝ զօրականին հայոց, և ապա բազում քրիս-տոնէից, որ էին ՚ի կարաւանին։ Եւ զառա-ջին սպտուղ ընծային՝ մատուցանէին կապեալ նախարարացն․ և անդէն վաղվաղակի արձակե-ցան նոքա՚ի կապանաց իւրեանց․ և ըսպառնալիք

մահո

մահուանն անցին զնոքօք։ Եւ հրովարտակք թողութեան տուաքեցան յաշխարհն հայոց։ Այս երանելի խուժիկս՝ (որ արժանի եղեւ՚ի ծածուկ լապաստաւոր լինել սրբոցն) որ ինչ՚ի մահուանն է եւ այսր աստեան դատակնիք վճռիս այսորիկ, սա երկրորդեաց մեզ զնոյն կարգաւ։ Եւ զչարաչար քարշումնն, եւ զհարց եւ փորձ դատաւորաց, եւ զիւրաքանչիւր անձանց սրբոցն պատասխանիս, եւ զկատարումն մահուան նոցա, եւ զանհագին արհաւիրսն՝ որ ՚ի վերայ պահապանացն անկան, եւ զհեծեծումն քննման նախարարացն երեցունց, եւ զանփոփումն սրբոց ոսկերաց նոցա՝ ոչ խառն ՚ի խուռն ՚ի մի վայր ժողովելով, այլ զմի մի ՚ի նոցանէ ուրոյն ուրոյն ՚ի վերայ տապանակս ժողովեալ էր. եւ զանուանս իւրաքանչիւր ուրեք՝ ՚ի վերայ տապանակացն նշանակեալ էր։ Իսկ զկապանս երկաթիս՝ ընդ իւրաքանչիւր ոսկերս եդեալ էր, քանզի դահճացն ՚ի բաց եդեալ էր. որպէս զհանդերձսն զիւրաքանչիւր տապանի նշանակել էր։ Եւ կատարեցան սոքա վեցեքեան՝ սրբ եւ ցանկալի մահուամբն իւրեանց. որ օր քսան հինգ էր հրոտից ամսոյ, ՚ի մեծ անապատին յապար Ծիր, ՚ի սահմանս նուշապուհ քաղաքի։

Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն։

Դաւրշէալ վն խոստովանողաց ալաքսեդրացւոյ նոյին.

Իսկ

Իսկ՝ աշակերտք երանելեայն 'ի կապանս
կային ի ներքոյ քաղաքին. եկն դահճա-
պետ մի արքունի, և ե՛հան զն՟ս 'ի քաղաքէ անտի
արտաքս. Եհան 'ի նմին քաղաքէ ասորի քրիս-
տոնեայս արս հինգ. քանզի և նոքա 'ի կա-
պանս էին վ՟ս անուանն Ք՟ի. Եհարց ցն՟ս
թանիւք, և ո՛չ հաւանեցան երկիրպագանել արե-
գական. այլ և առաւել 'ի նոյն միտս պնդեցին.
Չարչարեաց զն՟ս գանիւ. կտրեաց զն՟ց ունչս
և զականջս, և ետ տանել յասորեստան, զի
կացցեն 'ի մշակութ՟ արքունի. Ենք՟ երթային
մեծաւ զօրութ՟բ. իբրև այն թէ մեծ պարգևս
գտեալ 'ի թագաւորէն. Արդ՝ եկն դարձեալ
նոյն դահճապետն առ աշակերտս սուրբ սպա-
նելոյն. ընտրեաց 'ի նոցանէ երկու՝ որ համես-
տագոյնքն էին. առեալ մեկուսի յայլոյն և
ասէ ցնոսա. զի՞նչ անուանք են ձեր. Պատաս-
խանի ետ մինն և ասէ. առ 'ի ծնողաց ինձ
խորեն, և դմա Աբրահամ. իսկ ըստ շնորհա-
տուր կարգիս՝ ծառայք Ք՟ի եմք և աշա-
կերտք երանելեայն՝ զոր սպանէք. Ետ պա-
տասխանի դահճապետն և ասէ ցն՟ս. իսկ արդ՝
զի՞նչ գործ է ձեր. և կամ ընաւ՟ ո՞յր իսկ ա-
ծեալ է զձեզ այսր. Պատասխանի ետ առ այս
ոքն Աբրահամ և ասէ. զայդ 'ի վարդապետաց
մերոց արժան էր ուսանիլ ձեզ զի ո՛չ դուզ-
նաքեայ ոք էին նոքա. Այլ ունէին զատայր
ուածս

մանս հայրենիս ըստ արժան բանականին,
ըստ նմին եւ սպասաւորս. Որ՝ որ իբրեւ զմեզ
են՝ որ լաւագոյն քան զմեզ. որոց ծնուցեալ
եւ սնուցեալ եմք, ը̃ նոսա եմք եկեալ. վասնզի
եւ պատուէր իսկ ունիմք յԱծատուր օրինացն
մերոց՝ սիրել զնոսա իբրեւ զմր̃ ծնօղս, եւ
սպաս տանել նց̃ իբրեւ հոգեւոր տէրանց. Յա-
ւեան դահճապետն եւ ասէ. իբրեւ զանխրատ
եւ զաներկիւղ ստամբակս խօսիս. Մինչդեռ
'ի խաղաղութեան եւ յԹի էիք, բարիոք էր. յորժամ
գրուած եղեն նոքա յիրս արքունի եւ մահա-
պարտ դատան ը̃ գործոյ իւրեանց, ձեզ չէր
արժան ամենեւին մօտ երթալ առ նոսա. Ո՞չ
տեսանէք 'ի մեծ կարաւանիս. յորժամ ոք 'ի
սպասաւորացն 'ի դիպահոջ արքունի լինիցի,
ագոյ հանդերձ ազանի եւ զատեալ եւ որոշեալ՝ 'ի
բացեայ նստի միայնիկ, եւ ամենեքին հուպ ոք ո՛չ
իշխէ երթալ առ նա. Եւ դու այդպէս իբրեւ
զանյանցի աշակերտ՝ պարծանօք խօսիս. Պա-
տասխանի ետ առ այս Խորէն եւ ասէ. ո՛չ ձեր
կարգդ անիրաւ է, եւ ո՛չ մերս ստութիւն. Նա-
խարարն յանցաւոր ուսանի զպարգեւն գտեալ,
այնպէս պարտէր նմա հպատակ լինիլ զի 'ի
պատուոյն վերայ եւ այլ եւս պարգեւս մեծա-
մեծս 'ի նմանէ գտանէր. Արդ՝ փոխանակ զի
զայն ոչ արար, ձախողակի յետս ը̃ դէմքն
պատահեաց նմա. Եւ մեր վարդապետքն ե-
թէ առ Այ̃ յանցուցեալ էին, եւ կամ առ թա-
գաւորն

ղանորն մեղուցեալ լինչ էին, նոյն օրինակ և մեք առ նա առնէաք. ոչ յայնի մօտ երթայաք, և ոչ 'ի տար աշխարհ այլ զհետ նր գնայաք։ Արդ՝ քանզի առ երկոքեան կողմանս արդարութ կեցեալ են, և դուք զուր՝ տարապարտուց ապանէք զնս, մեք այժմ ևս առաւել ապաւանորեմք ի թ ոսկերաց Նոյա։ Դարձեալ դահճապետն ասէ. ես յառաջագոյն իսկ ասացի եթէ կարի ստամբակ ոմն ես դու. ահա յայտ եղև անաղիկ եթէ յամ մնաս նոյա խառն էք դուք Աբրահամ ասէ. յո՞ր մնաս։ Դահճապետն ասէ. առաջին՝ 'ի մահ մոգուցն, և ապա՝ յայլսն ամ։ Աբրահամ ասէ. այդ ոչ միայն 'ի մէնջ է, այլ բազ կարգի և ձերոց օրինացդ. Թագաւորք հրաման տան ձեզ, և դուք 'ի ձեռն ձերոց բռնաւորաց գործէք։ Դահճապետն ասէ. 'ի մերհ ձեռն երդնուլ իմ խստագոյն ես խօսիս քան զվարդապետսն քո, յայտ է թէ և մնասկարագոյնք ևս էք դուք։ Արդ ոչ է հնարաւոր ել ձեզ 'ի մահուանէ. բայց եթէ երկիր պագանէք արեգական, և կատարէք զկամս օրինաց մերոց։ Խորէն ասէ. չայժմ իբրև զմարդ չարախօսէիր, և արդ իբրև զշուն անպիտան ընդ վայր հաչես։ Եթէ գոյր արեգականն ակամբ, դու տայիր նմա թշնամանս դնել։ Արդ՝ նա բնութ անզգայ է, և դու չարութ անզգայագոյն ևս քան զնա։ Իբր տեսեր զմեզ պակասագոյն քան զհարսն մեր։ Մի բանիւք

զփորձ

զփորձ առնուլ կամիր զմեր․ այլ՝ հանդէպ արարքում չարութեդ և մերում բարութեանս, և ամմ չեկեալ գտանի հայրն քո սատանայ․ ո՛չ միայն 'ի մէնջ՝ որ կատարելագոյնք եմք, այլ և որ կարի փոքրիկն թուիցի քեզ նա դիցէ վէրս սաստիկս յոգի և 'ի մարմին քո։ Զայս իբրև լուաւ դահճապետն, սրտմտեալ բարկացաւ 'ի վր̃ նոցա․ եւ քարշել չարագոյն քան զառաջինն։ Եւ այնչափ սաստիկ քարշեցին, մինչև կարծիք եղեն եթէ մեռան։ Իսկ իբրև ժամք երեք 'ի վերայ անցին, դարձեալ խօսել սկսան երկոքեանն և ասեն. փոքր համարիմք զանարգնս զայս․ և առ ոչինչ զցաւս մարմնոյս առ մեծ ահերն Աստուծոյ, որով կատարեցան հարքն մեր հոգևորք։ Յապայ մի՛ գլար և դադարեր․ այլ զոր ինչ առնոյն արարեր, զնոյն և առ մեզ կատարեա՛։ Եթէ չարագոյն թուին քեզ գործք նոցա, կրկին և զմերս համարեսջիր․ զի նք̃ բնիւք հրամայեցին, և մեք գործովք զարգելանն կատարեաք։ Յայնժամ ևս առաւել զայրագնեցաւ 'ի վր̃ նոցա, և հրամայեաց զմահու գանս հարկանել։ Եւ առ մի մի 'ի նոցանէ վեց վեց այր փոխեցաւ 'ի դահճացն։ Եւ մինչդեռ կիսամեռք յերկիր անկեալ դնէին, հրամայեաց զերկոսեանս ականջսն մօտ կտրել։ Եւ ա՛յնպէս բրեցին՝ ոչ թէ չիցէ լեալ 'ի տեղւոջն։ Զարթեան ոչ̃ 'ի քնոյ 'ի սաստիկ հարուածոյն. սկսան պաղատանս մատուցանել և ասեն. աղա-

չեմք

չեմք զքեզ քաջ զինուոր թագաւորիդ. կամ
կատարեա՛ զմեզ իբրեւ զհարսն մեր մահուամբ,
եւ կամ արա զպատուհասդ ըստ օրինակի վերջ-
նոյս։ Զի այս լսելիք մեր առողջական զան-
ախտաւորութիւն երկնաւոր, հոտոտելիք մեր
դեռեւս սատէն 'ի տեղւոջ կան յանյս չարչարա
նաց. մի՛ կիսապարգեւ առներ զմեզ յերկնից
բարութէն։ Որբեցեր զմարմինս մեր քարշելով,
եւ զլսելիս մեր կտրելով, որբեա եւ զհոտոտելիս
մեր հատանելով. քանզի որչափ տգեղս առնես
զմեզ երկրաւորաւս, գեղեցկագոյնս առնես
երկնաւորաւն։ Եւ պատասխանի դահճապետն
հեզութեամբ եւ ասէ. Թէ եւ այլ յամեմ ես մօտ
կալով առ ձեզ, կարծեմ թէ եւ աշակերտէք
զիս 'ի ձեր յամառութիւնդ։ Զի ահա արդ եւ
զխորհուրդս արքունի 'ի վեր հանեմ ձեզ. զայդ
վայր եղեւ հրաման պատուհասիդ ձերոյ. եւ 'ի
վր̄ դորին պատուհասի՝ երթալ ձեզ յասո-
րեստան, եւ լինել ձեզ մշակ յարքունիս. զի որ
'ի ձեզ հայեսցին, մի՛ 'ի դմին յամառութեան
պնդեսցին ընդ դէմ հրամանաց թագաւորին։
Ասեն ցնա երանելիքն. դու զմեր երկիրս կի-
սագործ թողեր, մեք յարքունի երկիրն՝ կէս
մարմնով մերով ո՛չ վաստակիմք։ Զայս իբրեւ
լուաւ դահճապետն, աղաչեաց զզինուորսն
որ տանէին զնոսա եւ ասէ. միայն աստի դուք
առէք գնացէք, եւ հասեալ յասորեստան՝ ուր
կամ իւրեանց է եւ շրջեսցին։ Այս են խոստո-
վանողք

վանօղք Հայոց կատարեալք, որ զխեղութիւն և զչարչարանսն խնդութ ընկալան յանձինս իւրեանց։ Եւ վս զի վրիպեցին 'ի մարտ մահուանէն, ազով և տրտմութբ երթային զերկայնութի ճանապարհին։ Ոչ ծանր թուէին նոցա կապանք ձեռացն և ոտիցն իբրև զայն, եթէ ընդէր չեղաք արժանի հաւասարել ընդ քաջ նահատակսն։ Եւ իբրև տարան հասուցին զնոսա յերկիրն բաբելացւոց 'ի գաւառ մի զոր Հահուղն անւանեն, թէպտ և էին յարքունի պատուհասի, սակայն յայտնի և գաղտ՝ մեծապէս ընկալեալ եղեն՝ի բնակչաց տին։ Սակայն երանելիքն և յայնմ յոյժ տրտմէին իբրև այն, եթէ սակաւ վաստակեցաք, և մեծապէս հանգչիմք և հանապազ 'ի նմին զղջման կային։ Եւ անդէն թւակոխէին տեսանել զոք կապանս նախարարացն, և լինիլ սպասաւոր պիտոյից նց։ Իմացուցին զայս մեծամեծաց և փոքունց՝ ազդաւնել 'ի վր ամ երկրին, զի հաճոյ թուեսցի ամցուն 'ի ձեռն մարմնաւոր պիտոյիցն կցորդ լինել սբ կապելոցն 'ի հեռաւոր օտարութեն։ Եւ այնպէս՝ ամ յամէ ժողովէին ըստ իւրաքանչիւր կարի մարդկանն, ումն սակաւ և ումն շատ ուր զինչ և 'ի ձեռս պատրաստ լինէր, եթէ դրամոց և եթէ դահեկանաց, ժողովէին՝ կազմէին՝ տային յերանելիսն՝ տանել նց։ Եւ այսպէս յարբանեկութէն կային, մինչև տասն ամն լցաւ սպասաւորութեանն։ Եւ վս զի յոյժ

խստագոյնս պահէին 'ի ջերմոջ աշխարհին, և անդադար էին 'ի ճանապարհորդութեան ընդ նոյն շահուղ· ընդ մեշոն և ընդ քաշկար և ընդ ամ՝ սարեստան և խուժաստան, սաստիկ տապով հարեալ 'ի խորշակէ՝ մեռանէր սրբն Խորեն. և աւանդեալ լինէր 'ի բնակչացն ծին ՟Է սրբ վկայսն. Իսկ երանելին Աբրահամ կայր 'ի սմին առաքինութեան անդադար. և զամ տուըս հաւատացելոյն շրջէր ժողովէր և տանէր 'ի մեծ հեռաստանն, և ինքնին սատակարէր ըստ իւրաքանչիւր կարօտութեան. Եւ այնպէս՝ յերկարեցաւ մինչև 'ի տասն երկու ամ պատժաւորացն, մինչև աղաչել զնա միաբան ամ՝ն, զի հաւանեսցի երթալ յաշխարհն հայոց. զի 'ի մտանելն ն՟ր առ նոսա, 'ի նմին տեսցեն և զսբ կապանսն շարչարանաց. Եւ յորժամ մարտիրոսք և խոստովանօղք և կապեալք՝ նովաւ տեսանին, նովաւ օրհնի աշխարհն ամ. նովաւ օրհնին տղայք նոցա յանձուսն: նովաւ զգաստանան երիտասարդք նոցա 'ի պարբութի. նովաւ համեստանան ծերք նոցա յիմաստութի. նովաւ ուսանին իշխանք նոց զմարդասիրութի. նովաւ գութ անկանի յԱստուծոյ 'ի սիրտ թագաւորին՝ շինել և խաղաղութի առնել բոլոր աշխարհին, նովաւ Եկեղեցիքն պարծին իբրև կատարեալ և քաջ զինուորաւ. նովաւ վկայարանքն զարդարին. նովաւ և վկայքն ցնծացեալ բերկրին. նովաւ դաշտ և այգի՝ պայծառացեալ ծաղ-

կալից

կոլից լինին. ո՛չ յանձրևաբեր ամպոց, այլ ՚ի մէջ և յարինաբուղխ վտակաց. ցանելք և ցրուելք սպիտակութի մէ ոսկերայն. Յորժամ կոխեսցեն ամենավալսատակ ոտք լեռնատվանողին զկայնատարած տեղիս պատերազմին, ( Թէպէտ և երկիր ըստ բնութ ) յորժամ կենդանի մարտիրոս ընդնա շրջիցի, կենդանի առ կենդանիս երթալ, ամ ծին կրկին լինի ուրախութի. Գիտեմք ( ասեն ) յորժամ տեսցեն զամ միայնակեացք ծին հայոց, տվա՛ն յիշեսցեն զհօգևոր գունդն պատերազմողաց, որ փոխանակ մեր ( ասեն ) ետուն զանձինս ՚ի մահ, և հեղին զարիւնս իւրեանց ՚ի հաշտութի պատարագ Աստուծոյ. Սովա՛ն յիշեն զմէ քահանայսն՝ որ խողխողեցան յօտարութեան, և ցածուցին զարտմնութի բարկութե Թագաւորին. Սովա՛ն Թերևս և զմեր կապանս յիշեսցեն, և աղօթս առնելով խնդրեսցեն յԱստուծոյ զի գերեդարձ լիցի մեզ անդրէն ՚ի հայրենի երկիրն. Քա՛ զի յոյժ անձկացեալ եմք. ոչ միայն ըստ մարմնոյ կարօտութեն, այլ առաւել տեսանել զմէ եկեղեցիան մեր և զսրբասէր պաշտօնէյսն մեր, զոր ՚ի նմա կարգեալ հաստատեցաք. Եւ. եթէ մերովս յաջողեսցէ մեզ Այ՛ երթալ և լինել զկարօտութի հնայելոյն. Գիտեմք զի և մեզ բանայ Այ զդուռն ողորմութե իւրոյ ընդ նոյն Ճանապարհ երթալ, է որ ոտք սրբյս կարապետեն. Զայս խորհուրդ խորհելով նմա-

շնորհ

շնորհ նախարարայն՝ մեծաւ թախանձանօք ածին զխոստովանօղն ՚ի հաւատութի։ Եւ վասն զի ոչ էր սովորութի երբէք սրբյս՝ բարւոյն ընդդէմ դառնալ՝ ըստ առաջին սովորութեն և յայսմ վայրի փութայաւ վաղվաղակի կատարել զհրամանն զմիաբան հաւատայելոյն յածային առաքինութին. եկն եմուտ յաշխարհն հայոց մեծայ։ փութայան ևելին ընդ առաջ նոր վաղվաղակի արք և կանայք մեծամեծք և փոքունք և ամ բազմութի աղաղակաց և շինականաց անկանէին առաջին փարէին զոտիւք և ձեռօք սրբյն և ասէին. օրհնեալ է Տր Ած ՚ի բարձունս՝ որ առաքեաց մեզ զհրեշտակ յերկնից՝ բերել մեզ զաւետիս յարուե, զի լինիցիմք ժառանգորքայուե։ Զի ահա՛ ՚ի քեզ կերպարանեալ տեսանեմք զամն զհրաժարեալն՝ յուսալ յարութ. և զկապեալն՝ անկապութ արձակելով։ ՚ի քեզ տեսանեմք և զաշխարհին շինուի խաղաղուե։ Քև եկեղեցիք մեր յնծայել բերկրեսցին։ Քև և սր վկայարանքն մեր՝ անյադա՛ր լիցին մեզ ՚ի բարեխօսութ առ Ած։ Օրհնեա՛ զմեզ սր հայր մեր դու ես բերան հանդուցելոյն, խօսեա՛ց ընդ մեզ յայտնի օրհնութ, զի յոգիս մեր լուաւիցուք ՚ի ծածուկ զօրհնուիս սրբյն։ Հորդեցեր ճանապրհ այնոցիկ՝ որ անձկացել էին գալ յերկիր խուենց. խնդրեա՛ յԱստուծոյ զի ստէպ եկեսցեն զհետ սր կարապետիդ։ Եւ որպ հորդեցեր ճարգելեալ ճանապարհ

ճանապարհ երկրի, բա՛ց և յերկինս զդուռն աղօթից մերոց. զի և մեր մեղաւորացս միայն պաղատանք առաջի Աստուծոյ՝ ի բարեխօսութե̃ն նոցունց կալելոյ: Եւ մինչ դեռ եմք յելանելն մարմնիս որպէս տեսաք զքո զերանելի սրբուհիդ, տեսցուք և զսիրելի անձկալւոյն մեր որ ՚ի բազում ժամանակաց հարեալ և պաշարեալ եմք յոգի և ՚ի մարմինս մեր: Արդ հաւատամք յանսուտ յոյսն մեր, զի որպէս լցեալ կատարեցաւ ՚ի քեզ մեծ տեսիլս ՚ի սուրբ սէր քո, այսպէս և ը̃ մօտս ունիմք տեսանել զճշմարիտ վկայն Քի̃ որ հանապազ խանդաղակաթ եմք ՚ի տեսիլս երկնաւոր գեղոյ նորա: Բայց երանելի խոստովանողն՝ թէպէտ և այսպէս սիրով ընդկալեալ եղև յամ̃ աշխարհէն, ոչ ինչ կամեցաւ ամենևին մերձենալ առ ոք ըստ մարմնոյ կարօտուէ̃: Այլ խնդրեաց իւր տեղի մի զատ յամենայն բազմամբոխ ժողովրդոյ. և առաքինի եղբարբք երիւք՝ կատարեաց զկենս իւր մեծաւ ճգնութ̃: Զոր եթէ կամեսցի ոք ՚ի գիր արկանել դժուարաւ կարասցէ աւել զվարս սր̃բ առաքինուէ̃ նր̃: Զի եթէ զարթնութի̃ն ասիցես, իբրև զկանթեղ անշէջ կայր զամ̃ գիշերս: Եւ եթէ զսակաւապիտութի̃ կերակրոյն, համարեայ եթէ զանկերակուր հրեշտակաց բերէր զնմանութի̃: Եւ եթէ զհեզութի̃ ցածուէ̃ն, ոչ զոք ՚ի կենդանեաց կարիցես գտանել նման նմա. Եւ եթէ զանընչասիրութի̃ն կամիցիս ասել,

զոր

զօր օրինակ՝ չպատրի մռեալն 'ի կարասւոյ, զնոյն օրինակ Աշխարհութե և առ երանելին իմաստչը։ Անյապական ձայնիւն հանապազոր-դնելներ՝ ի պաշտաման և անհատաղօթիւք միշտ զԱստուծոյ 'ի բարձունս խօսէր։ Աղեղա-նա անհամեմերոյ, և խթան ընդոստուցիչ նմ հեղգացելոյ։ Դարմեցաւ նովաւ ագահութի և կարի՝ յոյժ ամաչէր նովաւ շռայլութի որկո-րամոլութե։ Առողջութի եղև նա յոգիս հայոց. և բազում վիրաւորք 'ի ծածուկ նովաւ գտին զառողջութի։ Եղև նա վարդապետ կատարեալ՝ վրդպտաց իւրոց. և մե հայր խրատու՝ հա-րանց իւրոց։ 'Ի լուր համբաւոյն որա՝ իմաստնա-յան տղէոք. և 'ի տեսիլ մերձաւորութե նր՝ զգաստացան լկտիք։ Բնակեալ էր ըստ մարմնոյ 'ի նեղ խցկանն, և ահ սրբութե նր՝ անկեալ էր զհեռաւորօք և զմերձաւորօք։ Զարհուրեցն դևք և փախեան 'ի նմանէ։ Իջին հրեշտակք և բնակեալ էին ընովաւ։ Ցոյցք երանի եւոնն վն նր աշխարհիս հայոց. և բազում բարբա-րոսք փութային տեսանել զնա մարմնով։ Սի-րելի եղև նա՝ սիրելեաց Աստուծոյ. և զբա-զումս 'ի թշնամեաց Աշխարհութե՝ էած 'ի հաւա-նութի մե սիրոյ։ Սկիզբն արար առաքինութե՝ անդստին 'ի տղայութեոյ իւրոյ. և նովին առաքի-նութբ կատարեցաւ' 'ի վախճան կենաց իւրոց։ Որպ ոչ խառնեցաւ 'ի կարգ մե ամուսնութե աշխարհիս, այսպէս չեմուտ ընդ մարմնաւոր

պղծոյ

պիտոյից ժամ ապականութեան իւրոյ աշխարհին։ Եւ եթէ՝ պա՛րտ է պարզաբար ասել. որպ փոխանակեալ զպէտս մարմնոյ՝ ընդ պիտանութ հոգւոյ իւրոյ. այսպ փոխադրեալ եղեւ յերկրէ յերկինս առ Ք̃ս Ա̃ծ ևնմա փառք յաւիտեանս ամէն։

---

*( Անուանք նախարարացն որք կամօք և յօժարութեամբ վասն սիրոյն Ք̃ի՝ ետուն զանձինս իւրեանց ՚ի կապանս արքունիս։ )*

*Յորոց նախ ասպետն, որ ծանուցեալ արքային զքաջութ հաստատութեանցն մինչ կամէր արձակել զնոսա, հասանէ ՚ի ճենաց. և թագաւորեալ որդի նորա՝ պատուէ զնոսա լուծեալ ՚ի կապանաց։*

Յազգէն սիւնեաց՝ երկու եղբարք, Բաբգէն և Բակուր. յազգէն արծրունեաց՝ Մերշապուհ և Շաւասպ և Շնդին և Մեհրուժան և Պարգև և Տաճատ. յազգէն մամիկոնէից՝ Համազասպեան և Համազասպ և Արտաւազդ և Մուշեղ. յազգէն կամսարականայն՝ Արշաւիր, Վարձ և Թաթ, Ներսեհ և Արշամ. յազգէն ամատունեաց՝ Վահան և Առանձար և Սունակ. յազգէն գնունեաց՝ Ատոմ. յազգէն դիմաքսենից՝ Թաթուլ և Սատոյ՝ երկու ևս այլովք ընկերովք. յազգէն անձաւացեաց՝ Շմաւօն և զուարէն և Առաւան

ժան. յազգէն առաւելենից՝ Փապակ և Վա-
րազդէն և Դաւլ. յարծրունեայ տոհմէն՝
Արբամ. ՚ի տոհմէն մանդակունեայ՝ Սահակ
և Փարսման. յազգէն տաշրունեայ՝ Վրէն
յառափոնեան տանէն՝ Բաբիկ և Յոհան.
Այս 35 արք՝ էն որ յառաջ նախարարայնի, և
էն որ ՚ի կրսերագունիցն. Սակայն ամէքն ըստ
մարմնոյ էն նախարարազունք իսկ՝ ըստ հոգւոր
առաքինութե ամէքն երկնային քաղաքայիք. Եւ
բազում ևս այլ ազատ մարդիկ՝ էն որ յարքունի
տանէ, և էն որ ՚ի տանէ նախարարայնի, նոյուն
իսկ նիզակակիցք քաջ նահատակայն. Եւ ամէքն
սոքա՝ կամօք մատնեցան ՚ի սաստ կապանս չարչա-
րանայն վասն Քի. Այլ մեք այժմ ոչ է այս
եմք զարմացեալ միայն, զի կամօք չոգան մտին
՚ի փորձութիւն այլ՝ առաւել ընդ այն եմք
սքանչացեալ, զի մարդիկ փափուկ՝ իբրև զնա
ընդ արձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց,
եղէն բնակիչք խորշակաբեր դաշտաց. Որք
զօրէն ազատ երէց շրջէին ՚ի մէջ ծաղկաբեր
լերանցն, ընկեցան ՚ի բոցակէզ Նն արեւելից՝
կապեալ ոտիւք և ձեռօք. Հայ նեղութե. և
ջուր կարօտանայ. խաւարարգել ՚ի տունէ, և
անլոյս ՚ի գիշերի. Անվերարկուք և անանկո-
ղինք՝ գազանաբար գետնախշտիք լինէին ինն
ամ և վեց ամիս. Այնպէս մեծաւ խնդութե
տանէին զնեղութիւնն, զի ամենևին ոչ ոք տըր-
տունջ հայհոյութե ՚ի բերանոյ նոցա լուաւ.

այլ յորդառատ գոհացողութե՜ ըստ նմանութե՜ բարեկեցիկ մարդկանց՝ որ են յանձնապաշտութե՜. Եւ մինչդեռ էին յայնպիսի նեղութե՜, կարծիք եղեն 'ի միտս Թագաւորին, եթէ առ յոյժ վշտոին՝ ձանձրացեալ են դառնութե՜ կենօքն իւրեանց. Յղեաց առ նա զմեծ հազարապետն և ասէ գոնեայ յայսմհետէ զգաստացարուք յանձինս ձեր և մի՝ կայք 'ի նոյն յամառութե՜. Պագէք երկիր արեգական, և արձակիք 'ի չարաչար կապանացդ և ունիք անդրէն զիւրաքանչիւր հայրենի կեանս ձեր. Եւ տուեալ պատասխանի երանելիքն և ասեն. առ փո՞րձ ինչ ակեալ հարցանեմ ցմեզ, եթէ արդարև Թագաւորն իսկ յղեաց զքեզ. Երդուաւ նա հազարապետն և ասէ. չէ՞ք այդր բան աւելի կամ պակաս՝ որ ոչ 'ի բերանոյ նորա ելեալ է. Ասեն ցնա անդրէն. որք միանգամ աշակերտեալք են ճշմարտութե՜, ո՛չ երբէք փոփոխին 'ի նմանէ. այլ որ ենն, նոյն կան. Մի թէ յայնժամ առ չիմանալ ինչ պր-դեցաք այսօր նեղութիւս իմաստնացոյց ինչ զմեզ. այլ ո՛չ է այնպէս. այլ՝ զղջումն մտաց մերոց այս է, թէ ընդէ՞ր Է առաջինման չկատարեցաք զկեանս մեր. Բայց արդ՝ աղաչեմք զքեզ, և զքև՝ զԹագաւորն ձեր. մի՝ այլ վասն այդպիսի իրաց հարցանէք ցմեզ. այլ՝ զինչ եդեալ է 'ի մտի ձերում վասն մեր, կատարեցէք. Իբրև լուաւ զայս մեծ հազարապետն, յոյժ դովեաց 'ի միտս իւր զպնդութիւն հաստատութե՜

նոցա։ Եւ յայնժամ հետէ սկսաւ արկանել սէր ընդ նոսա իբրև ընդ սիրելիս իւր։ Եւ բազում բանիւք ողոքանօք անէր զԹագաւորն ՚ի հաւանութիւն զի Թողուլ արասցէ նոցա ՚ի կապանաց իւրեանց։ Զի Թէպէտ և փոխեցաւ նա ՚ի գործոց հալածապետութեան արքունի, և ՚ի բազում իրս գտաւ վնասակար, ինքնին յանձնիւր կրէր զանել ծին հայոց։ վասնորոյ և մեծաւ անարգանօք յուղարկեցաւ ՚ի տուն իւր։ Սակայն զկապելոյն ոչ երբէք չարախօս կամէր լինել մինչև յօր վախճանի կենաց իւրոց։ Իսկ յերանելւոյն բազումք ՚ի նոցանէ որ մանկագոյնքն էին, ուսան զդպրութիւն հայրենի աշխարհին իւրեանց. և եղև նոցա այն հոգևոր կերակուր, որով զանձինս քաջալերէին և զընկերան մխիթարէին։ Եւ այնպէս զմայլեցան ՚ի միտս և յոգիս իւրեանց զի և որ ծերագոյնքն էին ՚ի նոցանէ, փափկացան մատաղացան մանկացան։ Զի Թէպէտ դպրութեան ժամանակն անցեալ էին, սակայն բազում սաղմոս ՚ի բերան առեալ հոգևոր երգակից լինէին մատաղերամ բազմութեան մանկտւոյն։ Եւ այնպէս բարձրացուցանէին զպաշտօն սրբութեան, մինչև ամենեքին ՚ի դատուն դահճացն՝ մեծապէս քաղցրութիւն անկանէր ընդ լսելիս նոցա՝ և որչափ ՚ի ձեռս իւրեանց էր, արտաքոյ արքունի հրամանին՝ դիւրութիւն առնէին նոցա. և սէր խնամոյ ունէին առ ամենեսեան։ Եւ բազում անգամ զմարմնաւոր պէտս նոցա լնուին նոքա։ Մանաւանդ

զի

զի նշանք բժշկութեան յԱստուծոյ յաջողեալ
լինէր ի ձեռս նորա․ որպէս զի բազումք ՚ի դիւա-
հարաց՝ սրբեցան ՚ի նմին քաղաքէ ուր կալեալք
կային․ Իբրեւ ոչ գոյր առ նոսա քահանայ,
դիմէին առ նա հիւանդք եւ ախտաժէտք քա-
ղաքին, եւ ընդունէին ՚ի նորանէ զիւրաքանչիւր
ցաւոց զառողջութիւն․ Նա եւ որ մեծ իշխանն էր
աշխարհին, ( զոր եւ Հարեւշղումշապուհ անուա-
նեն․ եւ նմա իսկ յանձն էին ամենայն պատժա-
ւորքն․ ) մեծապէս գութ սիրոյ էարկ առ ամենե-
սեան, Զձերս ՚ի նորանէ առ հարս Է ունէր․ եւ
զմանկագոյնսն իբրեւ զսիրելի որդիս գգուէր․
Բազում անգամ գրեաց եւ եցոյց յարքունիս
զվիշտս նեղութեան կապելոյն․ եւ զառն առն
իւրաքանչիւր զբարս ազնուականութեան ցուցա-
նէր նորա՝ առաջի մեծամեծացն․․ Տառապէր
ջանայր ազգի ազգի հնարիւք, մինչեւ բազում
բարեխօսիւք ածին ՚ի հաւան զթագաւորն․
Հրամայեաց լուծանել զկապանս նր․ եւ բառ-
նալ ՚ի նորանէ զուռգ պատուհասին․ եւ ագա-
նել նորա հանդերձ՝ զօրէն նախարարութեան․
Կարգեաց նր ռոճիկ․ զպատրաստութիւն սպասա-
ւորութեան հրամայեաց յարքունուստ․ Գրեաց եւ
յանձն արար մեծ սպարապետին, զի Է զօրս
արքունի երթիցեն ՚ի գործ պատերազմի․ Իբրեւ
այսպէս կարգեցաւ եւ կազմեցաւ նոր հրամանն
թագաւորին ՚ի բազում տեղիս՝ ուր եւ հասին,
առաւելէին գտան ՚ի գործ արութեան, մինչեւ գովու-

թե

թն հրովարտակ վասն նոցա 'ի դուռն տային. Որպ զի քաղցրացաւ իսկ մտաց Թագաւորին, հրամայեաց զամենեսեան ածել զառաջեաւ. Եկին և յանդիման եղեն Յազկերտի արքայից արքային։ Ետես զնոսա զուարթութբ. խօսեցաւ ընդ նոսա բանիւք խաղաղութե. և խոստացաւ տալ նոցա զիւրաքանչիւր իշխանութի ըստ հայրենի պատուոյն. և արձակել զնս յաշխարհն օրինօք քրիստոնէութե՝ յորոյ վերայ և մեծապէս էին չարչարեալ։ Եւ մինչդեռ անդէն մեծաւ խնդութբ շրջէին 'ի կարաւանին առաջի Թագաւորին, 'ի նմին ժամանակի հասանէր վախճան կենաց Թագաւորին՝ յինն և տասն երորդ ամի Թագաւորութեն իւրոյ։ Եւ ընդ հակառակս լեալ՝ երկու որդիք նր 'ի վերայ տէրութեանն, կռուէին։ Սաստկանայր գործ պատերազմին դառնութե զերկուս ամս։ Եւ մինչդեռ նք յայնմ խռովութե էին, ապստամբեաց և աղուանից արքայ։ Վս զի քեռորդի էր նոցա. և ըստ կարգի հայրենի հաւատոյն՝ քրիստոնեայ էր յառաջ, և Յազկերտ արքայից արքայ՝ բունի մոգ արար զնա։ Եւ նորա գտեալ զժամանակն անձին պարապոյ, հարկեցաւ զանձն 'ի մահ դնել. Լաւ համարեցաւ մեռանել 'ի պատերազմի, քան ուրացութբ ունել զԹագաւորութին. Վս այսր ամենայնի՝ յապաղումն եղև արձակելոյ նց յաշխարհն. իսկ կրտսեր որդւոյն յազկերտի՝ դայեակն Ռահամանուն 'ի մեհրան տոհմէ՝

Թէպէտ

Թէպէտ և ետես զգունդն արեայ ընդ երկուս բաժանեալ, սակայն կիսովն զազանաբար յարձակեցաւ 'ի վր երեց որդւոյ Թագաւորին. Եհար սաստկեայ զգունդն, և ձերբակալ արարեալ զորդի Թագաւորին՝ անդէն 'ի տեղւոջն հրամայեր սպանանել։ Եւ զմնացեալ զօրսն ածեր հաւանեցուցանէր և առնէր միաբանութի ամենայն արեայ գնդին, և Թագաւորեցուցանէր զիւր սանն՝ որում անուն էր Պերող։ Զի Թէպէտ և արեայ աշխարհին առնէր մեծապէս խաղաղութի, սակայն աղուանից արքայ ոչ կամէր նուաճիլ անդրէն 'ի ծառայութի։ Այլ խրամատեալ զպահակն Ճորայ, և անցոյց յայս կոյս զօրսն մասքթաց։ Միաբանեալ զմետասան Թագաւորս զլեռնորդեայսն, և ընդդէմ եկաց պատերազմաւ արեայ գնդին. և բազում վնաս արար զօրացն արքունի։ Թէպէտ և երկիցս և երիցս ետուն հրովարտակս աղաչանաց, ոչ ինչ կարացին ածել զայրն 'ի հաւանութի. այլ գրով և պատգամով յանդիմանէր զնս վս զուր աւերածի աշխարհին հայոց։ Յիշեցուցանէր նց զմահ նախարարացն և զչարչարանս կապելոյն։ 'ի վերայ անչափ սիրոյ և վաստակոյ՝ փոխանակ կեանս առնելոյ զարև հատուց անէր։ Լա՛ւ իցէ ինձ տալ զնոյա չարչարանսն յանձն իմ առնուլ, քան Թողուլ զքրիստոնէութի։ Եւ իբրև տեսին եթէ ոչ բռնութե և ոչ սիրով կարացին ածել 'ի հաւանութի, գանձ

սասանիկ

սաստկին եւտուն տանել յաշխարհն խաղաղանդը-ցւոյ: Բայցին զդրունս ալանայ եւ հանին գունդ բազում 'ի հոնաց, եւ կռուեցան տարի մի է աղուանից արքայի: Թէպէտ եւ թօթափեցան եւ ցրուեցան զօրքն իւր 'ի մանէ, սակայն զնա ոչ կարացին հնազանդել: Այլեւ հարուանք եւ մեծամեծք հասին 'ի վերայ նոցա. էր՝ որ կռուեալ. եւ էր՝ որ ախտին արշարանօք: Եւ յայնչափ ժամանակս է յերկարել պաշարմանն մեծ կէս աշխարհին աւերեցաւ, այլ ոչ ոք 'ի նոցանէ երկմտեալ բաժանեցաւ: Յղեաց առ նա դարձել Թագաւորն պարսից. զքոյրդ իմ առ եւ զքեռ որդիդ 'ի բանտաց ածել, (զի 'ի բնէ մոգք էին եւ դու քրիստոնեայ արարեր.) եւ աշխարհդ քո՝ քեզ լիցի: Իսկ՝ սքանչելի այրն ոչ 'ի տէրութենէ վերանէր, այլ յածապաշտութենէ: Զմայրն եւ զկին եւս տանել, եւ զաշխարհն բովանդակ 'ի բաց եթող, եւ ինքն զանհատարանն էառ եւ յաշխարհն 'ի բաց կամէր գնալ: Զայս իբրեւ լուաւ Թագաւորն, զեղջ եւ ապաշաւան կարի անկանէ 'ի միտս նորա. եւ զամենայն իրայն զհարբերոյալ արկանէր. Ընտուս երդումն կնքէր եւ տայր տանիլ առ նա, եթէ յետ եդ միայն լի՝ գնար, եւ զինչ ես ասեմ, առնեմ: Խնդրեաց զմանկութ սեպհականն՝ զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա 'ի տղայութենէ հազար երդ: Նազայն 'ի թագաւորէն եւ նստաւ 'ի նմա միայնա-

կեցք

կեցօք համբերձ. Եւ այնպէս հնազանդեցայ զինքն յանձային պաշտամամբն, զի և չլինէր ամենևին թէ և թագաւորեալ իցէ յառաջ. Եւ այս ամենայն երկար խռովութիք որ եղեն մինչև ՚ի հինգերորդ ամն Պերոզի արքայից արքայի, պատճառք եղեն չարձակելոյ նախարարացն Հայոց. Այլ ուխտական և ՚ի տաճար մտանել յարքունիս՝ մեծապէս առաւատագոյն քան զամ սովորութիւն, Եւ ՚ի նմին հինգերորդ ամին՝ զբաղցյ նոցա զկեանսն անդրէն շնորհեաց. և այլոց՝ առ ՚ի յոյսն խոստացաւ յամն վեցերորդ միանգամայն արձակել զամենեսեան կենց և պատուով. և Քի̃ անմահ թագաւորին փառք յաւիտեանս. ամէն.

---

Խոյս ՚ի տեղի այլ ինչ՝ պարծեւ գալ ընթեր.

Ասա շինանաց ծարեպաղայցն վիպէ.

Իսկ՝ կանայք երանելեաց և առաքինի կապելոյն և անկելոյն ՚ի պատերազմի՝ ընդ տնայն աշխարհն Հայոց՝ համօրէն համարել է ոչ կարեմ. զի բազում այն են՝ զոր ոչ գիտեմք, քան եթէ գիտիցեմ. Զի հինգ հարիւրվ չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ որ փայն աւագագոյնքն էին, այլ բազումս ՚ի կրտսերագունից անտի. Ամենեքեան միահամուռ զերկնային նախանձ բերելով ոչ ինչ ընդհատ երեւեցան յայնցանէ՝ որ ոչ ճաշակեցին

ձին զԾ։ Վասնզի եթէ աստուածագոյնքն էին և եթէ մանկագոյնք, զմի առաքինութի հաւատոյ զգեցան։ Ոչ ինչ յիշէին ամենևին զանուն փափկութեն մայրենի ազատութե. այլ իբրև մարդիկ որ վիշտամբերք լեալ իցեն անդստին ՚ի շինական սովորութեց տանջելով վարեալ զկեանս աշխատանօք, անդրագոյնք ևս քան զՆ՟ յանձն առին զհամբերութի վտանգի։ Ոչ միայն յոգնան մխիթարեալ կային առ աներևոյթ զօրութի յուսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նե- ղութենմբք առաւել ևս բարձին զբեռն ծան- րութե։ Զի թէպէտ և ունէին զիւրաքանչիւր ձեռասուն սպասաւորս, ոչ ինչ երևէր ՚ի նոսա եթէ՝ ո՞ր տիկինն իցէ և կամ նաժիշտ։ Մի համդերձ էր հասարակաց. և միապէս գետ- նախշտիք երկոքեանն։ Ոչ ումեք ոք անկողնարկ լինէր. քանզի չճանաչէին իսկ զխոտեղէնսն ընտրել ՚ի միմեանց վասն միագոյն սնուե անարի բարձից։ Ոչ գոյր նց խախամորթ անուշաւորք առանձինն. և ո՛չ հայցարարք որոշեալք ՚ի պէտս սպասու է ազատաց կարգի. Այլ հասա- րակաց էր շաբաթամուտն ըստ կարգի միայնա- կեցաց որ յանապատս բնակեալ են. Ո՛չ ոք ումեք ջուր ՚ի ձեռս արկանէր. և ո՛չ կրտսերք՝ աւա- գաց դաստառակս մատուցանէին։ Ձանկաւ օշ- նան ՚ի ձեռս փափկասուն կանանց. և ո՛չ մատու- ցաւ եւղ ՚ի զուարթութի խրախուե Ջեռան ա- ռաջի ամ ըսկտեղք. և ո՛չ անկան բաժակակալք

յուրա

յուրախութի՛ւ. Չեկայ ուրուք նմխիթարակ՝ նոյա
առ դուրս. և ո՛չ կոչեցան պատուականք յա-
րանց ՚ի տաճարս նց. Չյիշեցան նց եթէ գո-
յէ ոք ամենևին ՚ի բնակաւնունդ դայեկայ, և
կամ՝ բնաւ՝ ՚ի խնդրելի հարազատայ. Փոշոտեցն
և ծխոտեցան սրահակք և սրակապանք նորեկ
հարսանց. և սարդխոստայնք ձգեցան ՚ի սենեկս
առագաստայ նոյա. Կործանեցան բարձրագահք
տաճարայ նոյա. և խանգարեցան սպասք եկա-
խանայ նոյա. Ընկան կործանեցան ապա-
րանք նոյա. և տապալեցաւ աւերեցան ամուրք
ապաստանի նոյա. Ձորացան ազազեցան բու-
րաստանք ծաղկոցաց նոյա. և դաշտախիլ եղեն
որթք գինեայգեաց նոյա. Աչօք իւրեանց
տեսին զյափշտակութի արարոց իւրեանց. և
ականջօք իւրեանց լուան զկիշտս չարչարանաց
սիրելեաց իւրեանց. Առան գանձք իւրենց յար-
քունիս. և ո՛չ մնացին ամենևին զարդք երեսաց
իւրեանց. Տիկնայք փափկասունք հայոց Ցին՝
որ գրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր
պատուովն և ՚ի գահաւորակս, համապազ
բոկ և հետի երթային ՚ի տուն աղօթից ան-
ձանձրոյթ խնդրել ուխտիւք, զի համբերել
կարասցեն մեծի նեղութեան. Որ ՚ի մանկութէ
իւրեանց սնեալ էին եղովք զուարակաց և ամ-
ձուլք երէց խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս
ընդունէին զկերակուրս մեծաւ խնդութե. և
ո՛չ յիշէին ամենևին զառլորական փափկութի.

Սա

Սեւացեալ ներկան մորթք մարմնոյ նշ·վն զի չե-
րեկ արեւակեզք էին, և զտիւ գիշերուն գեր-
նարենք. Սաղմոսք էին մշտնջենաւորք մրմունջ
՚ի բերանս նոցա. և մխիթարութիւնք կատարեալ
ընթերցուածք մարգարէից։ Միաբանեցին
երկու երկու իբրև ամոլք հաւանք և հաւա-
սարք՝ ուղիղ առնելով զակոսն յարքայութին՝ զի
առանց վրիպելոյ հասցեն ՚ի նաւահանգիստն
խաղաղութեան։ Մտաւորական զկանացի տկարութին. և
եղեն արուք առաքինիք ՚ի հոգևոր պատերազ-
մին։ Մարտ եդեալ կռուեցան ընդ մեղսն
կարևորս. հատին կտրեցին և ընկեցին զմահա-
բեր արմատս նց։ Միամտութբ յաղթեցին
խորամանկութեն և սբ սիրով լուացին զկապու-
տակ ներկուածս նախանձուն։ Հատին զարմատս
ագահութեան. և չորացան պտուղք մահաբեր
ծառոյ նոցա։ Խոնարհութբ կռուեցին զամբար-
տաւանութի. և նովին խոնարհութբ հասին երկ-
նաւոր բարձրութն։ Աղօթիւք բացին զփա-
կեալ դրունս երկնից. և սբ խնդրուածովք
իջուցին զհրեշտակս ՚ի փրկութիւն։ Լուան
աւետիս ՚ի հեռաստանէ, և փառաւորեցին
զԱծ ՚ի բարձունս։ Այրիք՝ որ ՚ի նոսա էին.
եղեն մերատին հարստունք առաքինութե, և բար-
ձին յանձանց զնախատինս այրութեն։ Իսկ
կանայք կայսերոյն կամօք կապեցին զմարմնա-
ւոր ցանկութիս, և եղեն կցորդ չարչարանաց
սբ կապելոյն, ՚ի կեանս իւրեանց նմանեցան

քաջ

քաջ նահատակացն մահուամբ. Եւ 'ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանտարգելելոյն. Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան. զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա. Ընարին ձիպուայ նմանեցին, որ երգոյն քաղցրութ՝ առանց կերակրանաց կեան և կենդանի են միայն զօդն ծծելով զանմարմնոյն բերեն նմանութ. Բազում ձմերաց հալեցան սառնամանիք, եհաս գարուն և եկին նորեկ ծիծառունք, տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալին իւրեանց: Ծաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի դէմ երեսաց նոցա. Սպառացան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց. Բնադրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ածին զն̃ս 'ի հեռաստանէ 'ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին. և յամենայն յատենս յիշեցին զանուանս նոցա. Բազում արձան կանգնեալ էին յանուն նոցա. և անուանք իւրաքանչիւր՝ նշանակէր 'ի նոսա. Իսկ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն. Արտաքնոյն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք

և

և մխիթարեալք երկնաւոր սիրովն։ Ո՛չ ևս տալոցեսցին հարցանել զեկեալոք ՚ի հեռաստանէ, եթէ ե՛րբ լինիցի մեզ տեսանել զսիրելին մեր։ Այլ այն էին խնձք աղօթից նոցա առ Ած, եթէ որ սկսան քաջութբ ՚ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրովն։ Եւ մեք և նք առ հասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեայ։ և փառս հանցուք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և յաւէտ միշտ և յաւիտեանս յաւիտենից Ամէն։

Համառօտ Ցոյց Սուրբ Գրոց Գլխոց՝ հատուածոծոյքն համարէից։

## Գլուխ Ա։

Յսկզբան առաջնում գլխոյ ցուցանէ, թէ որպ նշանագրելոց է զպատմութիւ. և թէ զինչ շահելոց են ընթերցօղքն զսա։

Երես 1

Թէ երբ սկսաւ տիրել հայոց՝ ա. քայն շապուհ և յարձակիլ ՚ի վր աշխարհայն հայոց և յունաց. Երես 4

Թէ ո՞րի կեղծաւորական հրովարտակով ժողովեաց արքայն զհաւատացեալս յանդիման իւր։ և զի՞նչ ընկալաւ զմահ սրբն Գարեգին։ Երես 8

## Գլուխ Բ։

( Երկրորդ՝ զիրայն պատահումն յիշխանեն արևելից։

Թէ մինչ զգայ արքայն զլայտնիլն ախտիցն խորոց՝ պատուէր տայր հաւատացելոցն երկրպագանել արեգական, և ունել զաւանդն մոգութե̄. Երէ. 13

Թէ զիմրդ մոգուցն խրատիւք բարկացեալ թագաւորն զոմանս ՚ի հաւատացելոցն տանջէր, և զոմանս շողոքորթէր. Երէ. 18

Թէ ո՛պի հարկապահանջութե̄ աշխարհագիր առնար թագաւորն է ամ երկիրն հայոց. Երէ. 22

Թէ ո՛պի նամակ յղեալ է երկիրն հայոց հարկե զնո̄ ընկալնուլ զաղանդն մազդեզանց. Երէ. 24

Թէ ո՛յք և ո՛ւր և ո՛րպի պատասխանական նամակաւ արհամարհեալ զհեթանոսութի նց՝ կշտամբեցին զնո̄. Երէ. 27

Թէ ՚ի հասանիլ պատասխանական նամակին հաւատացելոց, գրգռեալ թագաւորն ՚ի մոգպետէն՝ ըսպառնալեօք կոչէց զնո̄ յերկրպագութի արեգական Երէ. 41

Թէ զորպիսի բանս ՚ի մէջ բերեալ հաւատացելոյն յարգելումն չարին կամաց, չզանգիտելով բնաւ զնմանէ. Երէ. 45

Թէ մինչ զգայլին զներքին խորհուրդս չարին, յուսալով յա̃ծ որ զծածուկս գիտէ, առաւելութե̄ն վախճան՝ ո՛պ թէ կատարեն ոմանք զկամս

զկամս նորին յերեւոյթս. Ուստի պարտեալ չարին հեղղը առաջի նոցա զպարգեւս, եւ հրամանս տայր մոգուց շրջել զՔրիստոնէութիւն յաղանդն իւրեանց. Երես 50

Գլուխ Գ.

( Երրորդ՝ վն միաբանութե մբ ուխտին Եկեղեցւոյ. )

Թէ հաճատայեալքն այլք՝ 'ի լուել զչար յանձնառութին ումանց քրիստոնէից եկեալ յանդիմանեցին զնոսա զանազան բանիւք. Երես 55

Թէ արդ մամբ զգուժէն դեսպանին հաճատայելոյ՝ ժողովեալք գունդն հայոց 'ի ձեռն միաբանութեան եւ աղօթից յաղթեցին չարաց. Երես 59

Թէ տագնապեալ մոգպետն 'ի զլինու որպէս, Վբն առ 'ի բաց թողուլ զվէճն ընդ քրիստոնեայս՝ հայթայթէ զբանս առ մարզպանն, որ ոչ անսացեալ նմա՝ յամառի 'ի նոյն. Երես 61

Թէ մինչ սկսան սերմանել զչարութիւն յեկեղեցիս հաճատայեալքն, քաջալերեալք՝ միաբանութբ եւ աղօթիւք յաղթեցին չարացն, առնլով զաւարս 'ի սպաս մբ Եկեղեցւոյն. Երես 67

Թէ վերստին 'ի խափանել չարացն՝ ազդ արարին հաճատայեալքն առ կայսրն Թէոդոս զի արա-

ցէ

ցէ ձեռընտուութի. յորոյ յանձնելըն հատանել 'ի կենաց՝ թագաւորէ անօրէնն Մարկիանոս. Իսկ նոքա ունելով միայն զաղօթսն նպաստ, եւ յաղթօղք գտան: Երես 74. մինչ 76

Թէ լուեալ հայոց զեղեռնութի վասակայ, տանեն 'ի վր նր բազում հարուածս. եւ առաքեն զոմն 'ի կապելոյն առ արքայն 'ի նահանջումն յանխրատութեն. Երես 84

Թէ կորայեալ արքայն չար 'ի վր հաւելոյն վշտաց, պատրուակի գոլ գդշայն ու զի՛ այնու որսայցէ զնս 'ի ձեռ. ախորժմանն զորոց 'ի գիտելն զխորձն յինքենէ՝ դարձեալ կատաղի. Երես 89

Գլուխ Դ.

( Չորրորդ՝ վս երկպառակութե իշխանին սիւնեաց եւ ընկերաց նորա. ) Երես 96

Գլուխ Ե.

( Հինգերորդ՝ յարձակմանն յարեւելից. )

Թէ զօրան զետեղեալ կորովին Վարդան, համոզէ զնս առ յուսոյն վախճան. Երես 105

Թէ յապաստակեալ չարայն զօրաց՝ ինքեանք պարտեցան. իսկ սբն Ղեւոնդ 'ի հանդէս հայոց՝ զանազան օրինակս եւ վայելչագեղ քաջալերս 'ի մէջ գրոց ներածէ 'ի կատարած գործոյն հանատոյ. Երես 114

Գլուխ

Գլուխ Զ.

(Վեց երրորդ՝ կրկին անգամ ընդդէմկալ
Հայոց պատերազմաւ՝ Թագաւորին պարսից. )
Թէ ո՛յք և որքան անկան յերկոցունց կողմանց
մարտամուխ եղով. Երես՝ 124. մինչև 130.

Գլուխ Է.

( Յօթն երրորդ յեղանակ կարգադրի դարձեալ
աւագինուն Հայոց. և չարագոյն ևս երևի ան-
օրէնութիւն Վասակայ չարին. ) Թէ որպէս աղէտք
հասին խրերայ՝ յայլ և այլ տեղիս. Երես 133.

Թէ զիարդ կոչեցան հաւատացեալքն յարքայէն
'ի դատ զամբաստանելոյն՝ որ 'ի մէջ Վասակայ
չարին և իւր ներհակին. Երես 141.

Թէ անխնեալ վասակն 'ի դատին պարտաւոր՝
որպէս պատժեցաւ. Երես 149.

(Արտաքոյ եօթն եղանակին՝ Ութ երրորդ՝ դար-
ձեալ վս̄ նորին պատերազմին և չար չարնաց սր̄-
բահնայից. ) Թէ 'ի վերջ տագնիւ արքային յնաջող
գործոյն՝ հրապուրմամբ արբանեկայն չարին 'ի
տանջելն զհաւատացեալս զոմանս մոգպետաւ՝
յայտնինաքան չանք նմին չահականք. Երես 155.

Թէ յընկալնուլ Մոգպետն 'ի հաւատս՝ խօսին
սր̄քն զքաջալերականս. զորոց լուեալ Թագա-
ւորին՝ տանջէ զնս̄. Երես 169.

Թէ սր̄քն յապաւնալեալն իշխանաց չարին՝
չերկուցեալ զ... ածայն աղանդոյ

Гос. библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

տոյին բարբառելին. որոյ և կրտսերն արեամբ վկայէ։ Երես 179։

Թէ զի՞արդ թշնամանեցաւ իշխանն անօրէն ՚ի բանից սբյն։ Երես 188։

Թէ ով կատարեցան սրբքն ՚ի փառս Աստուծոյ. և որպիսի նշանք եղեն ՚ի ձեռն նց։ Երես 198։

( Դարձնել վս խոստովանօղ աշակերտաց նո-յին։ ) Երես 205։

( Ընտրեանք նախարարայն, որք կամք և յօժա-րութք վս սիրոյն ՔՍի ետուն զանձինս ի սրեանց ՚ի կապանս արքունիս։ ) Թէ ծանեալ արքայն զՂ-քաշունի հաւատայելոյն՝ մինչ կամէր արձակել զնս հատանի ՚ի կենաց. և Թագաւորել որդին իր պատուէ զնս լուծել ՚ի կապանաց։ Երես 216։

Ըստ զկանանց բարեպաշտին վկայէ։ Երես 203։

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՍՈՐԱ ԳՐՈՑ՝ ԱՌ ԲԱՐԵՊԱՇՏ ԸՆԹԵՐՑՕՂՍ։

Յա՛յտ լիցի քննասիրացդ, զի ՚ի սրբագր-րութեան սբ գրքոյս թէպէտ տեսի զոմանս ՚ի բառից և ձևոց բանից այլա-զան ՚ի Հասարակաց՝ մանաւանդ ՚ի նորոյս օրինա-կաց, բայց կնճել մեր գտանին ՚ի յայլոց նախ-նեաց նոյնքն և կամ նոյին նմանիքն։ Որպիսիք են՝ խօսել. ուսանիլ. լինել. ՚ի տեղի խօսիլոյ՝ խօսիլ. ուսանիլ. լինիլ։ Եւ գրեալ կան էանցն

10р

Mi 7.